Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1816
1817
1818
1819
41

84
7 - 31

84-31
2-

ՎԷՊ
ՀԱՃԻ-ՍԱՖԷՐ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ
Ի ԳԱՂԼԻԱԿԱՆ ԼԵԶՈՒԷ

Ի ՎԱՆԱՀԱՅՐՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ԽՈՐԷՆ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ



ՑԵՐՄԱՆ
Ի ՎԱՆՈՄ ՏՊՐՈՒԹԻՒՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ
1876

734

6813-52-Ք

ՀԱՅԻ

ՍԱՖԻՐ

Աշխարհագիրք Թուրքաստան կանուանեն այն ընդարձակ դաշտն՝ որ Ազալչկի և Կասպից ծովուն, և Երիվանլերանց, Հիմալայայ, Հինաստքուշի և Խորասանի լերանց մէջ տեղը կը դանուի։ Սակայն Թուրքաստանի վրայ մանրամասն հետազօտութիւն ընողները կը տատանին՝ թէ նոյն երկրի մէջ բնակող ժողովուրդները թէ՛ կերպարանքով թէ՛ ցեղով և թէ՛ բնաւորութեամբ բոլորովին իրարմէ կը տարբերին։ Հարաւային կողմանը Թիւրքմէնները կովկասեան ցեղին կը պատկանին, իսկ Հիւսիսային Թիւրքմէնները, Խըրղըզներն, Ջօղպէքներն և Քիրկաքները՝ Մոնղոլեան ցեղին։ Պարթիներն ամեն ցեղերու խառնուրդ մը կը կազմեն. իսկ այն խումբերն որ ուրիշ ցեղի հետ չեն խառնուած՝ հասարակ, անդամ, բարեկազմ և մեծաւ մասամբ Թափառական են։ Պարթիները անակնկալ, երկչոտ, առեւտրոյ պատրաստ և քաղաքակրթութեան ընդունակ ցեղ մ՚են,

Թուրքաստան անչափաւոր ժամանակներէ՚ի վեր մահմետական կրօնի կեդրոն մ՚եղած է, սակայն Խըրղըզք՝

Պուտտեան աղանդոյն կը հետեւին և Հնդիկք Պրահմանական կրօնին. կը ընդունուին նաև կրակապաշտ Պարսիկները։ Մի միայն քրիստոնէութիւնը հալածուած է միշտ Թուրքաստանի մէջ։ Բայց տասը տարիէ հետէ չնորհիւ Ռուսիոյ հաւասարութեան հզօր ազդեցութեան, յարաբերութիւնք աւելի դիւրացած են և եւրոպական վաճառականութիւնն ու դիւտութիւնն աղատապէս մուտ գտած են այս անծանօթ գաւառներուն մէջ։ Գրեթէ անվրդովանդ կերպով բազմաթիւ կարաւաններու երկայն չղթայ մը կը ձգուի այսօր այս չոր, աւազուտ դաշտերուն վրայ, ղրս իր հզօր պաշտպանութեան ներքև առած է ռուսական արծուեդրօշը մինչև այն ձորաբարձ ղեկն՝ որ սոյն մեծազօր կայսրութեան սահմանագլուխը կ'որոշէ,

Ամէն ամիս և օրէ օր այս ղեկն իր տեղը կը վոխէ, և այսօր Խոքանտի նախկին խանութիւնն և Պուխարայի էմիրին երկիրները բնակողներուն մեծ մասը Ռուսիոյ կայսեր գլխաւորութիւնը կըճանչնան.

Թաշքանտ քաղաքն՝ որ 100,000ի մօտ բնակիչ ունի, և առեն մը պէյի մը մայրաքաղաքն և Խոքանտի խանին ալ հարկատու էր, հիմա Ասիոյ այս մասին մէջ ռուսական կալուածոյ զինուորական և վարչական կեդրոնատեղի է։ Թաշքանտի ընդհանուր կառավարիչն՝ երկրին դերագոյն աէրն է և կենաց և մահու իշխանութիւն ունի. զինուոր, պաշտօնական, բնիկ և դաղթական, ամենքն ալ իրեն հպատակ են. քաղաքական, զինուորական և կրօնական հեղինակութիւնն ամբողջապէս իր ձեռքն է։

Ռուսիոյ կառավարութիւնն իրրև ռուսական երկիր չըճանչնար զԹուրքաստան՝ որ Բեթրոպաւրիկն խիստ հեռի է, և բոլորովին կայսրութեան հետ չէ միացած։ Թաշքանտի ընդհանուր կառավարիչն իր կամաց, անձնական հաճոյից, տեղեաց և պիտոյից համեմատ կը կառավարէ գաւառն, առանց վարչական և եկեմտական

պատասխանատուութիւն մը յանձն առնելու։ Մերձաւոր էմիրներուն, Խիվայի խանին և Աֆղանայ իշխաններուն դեսպաններ կը դրկէ, ինք զինք հաւասար կը համարի Երկնից Որդւոյն (Կայսր Ջինաց) հետ, որուն կայսերութիւնը Ռուսիոյ նոր կալուածոյ սահմանակից է։

Ռուսական տէրութեան Թուրքաստանի մէջ գրաւած երկիրը Գաղղիոյ և Գերմանիոյ երկրին մեծութիւնն ունի. ուստի ընդհանուր կառավարիչն սահպատած է իւր դերագոյն իրաւունքներն ուրիշ պաշտօնակալներու ալ յանձնել, որոնց լիազօր իշխանութիւնն սակայն՝ զանոնք կեդրոնատեղիէն հեռի գտնուած գաւառներու վրայ կառավարիչ կ'անուանէ, որպէս զի նոյն գաւառներն ալ ուղղակի իւր իշխանութեամբ կառավարուած ըլլան։

Եթէ ռուսական կառավարութեան մշտայաղթ բանակները Պուխարայի մէկ գաւառին տիրեն, Թաշքանտի ընդհանուր կառավարիչն անվիջապէս նոր հրամանագիր կը դրկէ, որով կը ծանուցանէ թէ նուաճեալ երկիրը Ռուսիոյ կալուածոյ մասն է. գաւառին ամենէն բազմամարդ քաղաքը՝ վարչական կեդրոնատեղի, եւ յաղթական բանակին զինուորական գլուխն՝ երկրին դերագոյն իշխանն է։

Ս յոպէս ահա Սմրղանտ (1) այս վերջին տասնեակ տարիներս ռուսական գաւառի մը մայրաքաղաքն եղաւ։

---

(1) Սմրղանտ կամ Սամարղանտ Պուխարայի խանին ամենքոյն էր, Չերաֆչանայ բարերը հովտին մէջ. անուանի են անոր պարտէզներն ու հոյակապ արանց դերեզմանները։ Երբ Լենկթիմուր Ասիոյ չատ քաղաքները նուաճեց՝ անոնց մէջ գանուած ճարտար մարդիկները հան տարաւ բնակեցուց. կըսուի թէ մեր Հայոց աշխարհէն ևս ուրիշ կողմերէ ալ բնակիչ մասնանոներ հոն տարաւ և աշտարակի մը մէջ ծածկեց։ 150,000 հն աւելի բնակիչ ունի. հին տասնը Սմրղանտ Մարաղանդ կը կոչուէր։

ԳԼՈՒԽ Ա.

ԹԻՒՐՔՄԷՆ ԿԻՆԸ

Թիմուրին հին պալատն՝ որ ընդարձակ պարտէզ-
ներու մէջ աստ և անդ ցրուած և ամուր պարսպով
շրջապատեալ շինուածներու կոյտ մ՚է, երկրին ըղծայ
ընդհանուր հրամանատարին բնակարանն եղած է։

Հրամանատարը կը բնակի ընդարձակ և առ հասա-
րակ բուժածելի ճերմակ որմով շրջապատեալ տան մէջ.
իսկ երեն ընտանիքը կը բնակին պարսպին ներքը դան-
ուած ուրիշ պալատներու մէջ՝ որոնք երբեմն (Մէյ-
ըէմ) կանանոց և կամ Պուխարայի էմիրներուն առան-
ներն էին։ Պարտիզին մէջ ցրուած սպիտակ շինքերն
անտառուտ կանանչագեղ ծառերէն վեր բարձրացած,
շարունակ արեւելեան ճաճանչագեղ նշոյլներով կըզգե-
շուին։

Թիմուրի պալատին դիմաւոր միջավայրին մէջ եւրո-
պական ձեւով նորոգ զարդարուած ընդարձակ սրահ մը
կայ, փոքրիկ պատուհաններու և կամարաձև դուռներու
առջև մետի կապտակտոյն թաւշեայ վարագոյրներ
ձգուած են. իսկ սահմանակամածը պարսկասանի

թանձր դորգերով ծածկեալ է, շէնքին մէջ շատ մեծ
համեմատութեամբ կարգաւորեալ են Եւրոպացւոց
օթոցի դիւանաւոր գործարաններէն եկած քանի մը կահ
կարասիները։ Երկու պատուհաններու մէջ սեղ դաշ-
նակ մը դրուած է, սահիճանաւոր դարաններու մէջ
զետեղուած են ուսերէն և դաղղիերէն փառակաղմ
գրքերը, իսկ չինական ղոյդ մը յախճապակեայ սման-
ներու մէջ ոսկի ամիոռներու վրայ կանգնեալ են կայ-
սեր և կայսրուհւոյն պատկերները։

Նոյն տեղւոյն ամենէն մեծին անկիւնը՝ դոնդոյն
վայրէն դորգով մը ծածկեալ հաւկիթաձև սեղանի մը
առջև երկայն նստարան մը կար, որուն վրայ կին մը
պառկած էր, վրան մարդարտաղարդ վերարկու մ՚ա-
ռած՝ որուն հակառակ կողմը մանուշակագոյն էր. գը-
լուխը կարմիր գլխանոց, և ոտքը մանուշակագոյն հո-
ղաթափ մը հագած՝ ղոր կանոնաւոր չարժումով մը
անդադար կ՚երերցնէր։ Ոսկեթել մաղերու հիւսքը
խառնափնդոր կերպով մը գլխանոցին ներքևէն դուրս
կուգային, որոց խարտեաշ ցոլացումն երկայն նստարա-
նին վրայ ձգուած թաւշէին կապուտակագոյն ցոլայ-
մանց հետ կը խառնուէր։ Աչքը սև ու խոր էր. երբ
իւր երկայն արտեւանունքներն աչքին վրայ կուգային՝
հպարտ հայեցուած մը կառնոյր, և երբ անոնցմէ կեր-
պով մը կը բացուէին՝ այն ատեն գաժան և խիստ կեր-
պարանք մը կունենար։ Սակայն և այնպէս իւր աչքը
միշտ յստակ, պայծառ, գուռզ և խրոխտ էր. քիմն
ուղիղ, բերանը պղտիկ, շրթունքները կարմիր, տա-
մակ և քիչ մը նուրբ. ատամունքներն սպիտակ, ուռ
և սեղմեալ։ Վերջապէս կինը խիստ սքանչելի դեղեց-
կութիւն մ՚ունէր. ոչ ոք այս չնորհալից, նազելի և
պայծառ կերպարանաց վրայ կրնար ամենագոյն պա-
կասութիւն և անկատարութիւն նշմարել։ Առաջին հայե-
ցուածով այս դեղեցիկ արարածն սքանչելի զարմացու-
մըն կը ներշնչէր. բայց երթէ լաւ մը քննելու ըլլայինք՝

պիտի տեսնէինք՝ որ իւր դիմաց դիծերը, նոյն իսկ իւրեանց կանոնաւոր համեմատութեան մէջ, խիստ և դաժան էին, իւր աչքը չունէր այն թափանցիկ և զմայլեցուցիչ քաղցրութիւնն՝ որ ամենէն տգէղ իդեական դէմքը կը դեղեցկացնէ. մէկ բառով, իւր դէմքը զարմանալի հետ երկիւղ կ'ազդէր: Այս կէտին դէմքը բարկութենէն բոլորովին այլադունած, և մատանիներով զարդարեալ ձեռքն՝ որուն վրայ յեցուցած էր իւր ծնօտը, ջղային թեթեւ դողմամբ կը շարժէր:

Ուրիշ կին մ'ալ կար, դրեթէ ասոր չափ դեղեցիկ, բայց բոլորովին տարբեր կազմուածքեամբ. երկայն նրբատարանէն քանի մը քայլ անդին դորդին վրայ ծունկ չոքած էր: Կովկասեան ցեղերու յատուկ հասակն ու վարուկ կերպարանքն ունէր, դէմքն անհամեմատ կանոնաւոր. սև մազերուն երկու հիւսուածքները մինչև աղդրերը կ'իջնային: Ըսեբէն մինչև մէջքը դեղին ժապաւէնով սեղմեալ կարմիր մետաքսեայ շապիկ հագած էր:

— Ջեմ ուղեր որ դու ինձմէ ո՛չ նեղուին խնդրես և ո՛չ ալ պատճառանք ցոյց առաս, կըսէր տիկինը, զայրագին և ահաւոր ձայնով: Կը փափաքիմ որ ինձի պատասխանես՝ թէ ինչո՞ւ իմ արդելմանս հակառակ այս պալատին պարապին դուրս ելար:

Մանկահասակ աղջիկը ծունկի վրայ կեցած առանց պատասխանելու ժպտեցաւ.

— Մտիկ ըրէ, Լմինէ՛, ըսաւ տիկինը. և իւր ձայնը հետզհետէ աւելի ահաւոր կըլլար. դուն գիտես որ հոս ամեն բան կամացս համեմատ կըլլայ, և ոպտակ չեմ սիրեր: Այսօր ես ինքնիրենս անկողնէն ելայ և հագուեցայ..... դուն հոս չէիր: Սակայն պարարգէ ե, և գիտե՞ս, ո՛րչափ կը սիրեմ երբ կը տեսնեմ՝ թէ այս ծառայութիւնները կը կատարես, թէպետ և քեզի պէտքէդ չեն երևիր: Այս առաւօտ այդ ծառայութիւններէն զրկուեցայ. վասն

չունի. պատասխանէ՛ ինձ՝ և այս անգամ ալ կը ներեմ:

Օ՛ն ուրեմն, խօսէ, մի վախնար:

Թիւրքմենուհին արհամարհօտ կերպով դարձեալ ժպտեցաւ, առանց պատասխանելու:

— Լմինէ՛, դուէց աիկինը, մինչև ցարդ քեզի գըթացի: Դու քու երկրիդ Էմիրին աղջիկն ես, և երբեք ուսերուդ դաւաղան գտած չէ..... Սակայն, զգուշացի՛ր, համբերութիւնս չափ ունի, զգուշացի՛ր:

Լմինէ ուսերը թոթուեց, առաջին անգամ չրթունքները բացուեցան և դարձեալ թեթև հեգնական ժպտիմ մ'արձակեց:

Տիկնոջ կերպարանքը բարկութենէն դեղնեցաւ, ձեռքն երկնցուց և դրասեղանին վրայ եղած զանգակն հնչեցուց:

Թիւրքմենուհին զարհուրեցաւ, բայց չրթանց վրայ բռնի ծիծաղ կամ Սարգսեան ժպիտ մ'երևեցաւ:

Երբոր վերջին անգամ զանգակին ձայնը հնչուեցաւ, քանի մը վարկեան տխուր լռութիւն պատեց ընդարձակ սրահին մէջ: Երկու կիները՝ կապուտցած, դէմքերնին բարկութեամբ և տաելութեամբ այլայլեալ, իրարու վրայ կը նայէին:

Սպասաւոր մ'իրեն ծառայութեան զգեստները հագած ներս մտաւ:

— Անմիջապէս, պահապան զօրաց պաշտօնակալին փոխանորդը հոս կանչեցէք, հրամայեց տիկինը.

Երբոր սպասաւորը մեկնեցաւ՝

— Ցակաւին ժամանակ կայ, ըսաւ Լմինէին, արդարացո՛ւր ինք զինքդ, խօսէ՛, ներուին խնդրէ՛ ինձմէ.

Մանկահաս աղջիկը չկրնալու զարկաւ, իւր այլայլեալ դէմքը մեղմացաւ, և մտաց ընդարձակ հայեցուածով մը՝ կարծես թէ անծանօթ աշխարհներու մէջ թափառական կը չրջէր:

— Բեղի կըսեմ, խօսէ՛..... միայն բառ մ'արտասանէ, լռութիւնդ գիս կը բարկացնէ, մտիկ ըրէ՛,

կ'աղաչեմ . . . . . չուտով խօսէ՛, դոչեց յանկարծակի իւր պառկած տեղէն վար ցատկելով և մանկահաս աղջկան գիմացը գալով ։

Թիւրքմէնուհին չարունակ ծունկի եկած , իւր տիկնոջ վրայ կը նայէր , որուն աչք բիբերէն լոյս կը ցոլար ։

— Ո՞չքերդ խոնարհեցո՛ւր , դե՛րի , դոչեց տիկինը , եթէ ոչ՝ դահճին ձեռքով փորել կուտամ ։

Լ՛վինէ երկայն , հենդնական և բարձրահասյն քրքիջ մ՛արձակեց ։

Տիկինը բարկութեամբ լցուած մնասակ առիւծի մը նման յառաջ նետուեցաւ . սակայն յանկարծակի վիտքը փոխուեցաւ , նա դարձաւ և դէպ՝ ի դրասեղանը վազելով՝ երեք չորս անգամ զանգակը հնչեցուց ։ Մի եւ նոյն ատեառորը խառնիճաղ դիմօք ներս մտաւ ։

— Ինչո՞ւ համար այդ պաշտօնակալին վոհանորդը գալու կ'ուշանայ ։

— Նորին վսեմութենէն պաշտօնալ տեղ պրկուեցաւ , եթէ վերադառնայ՝ անմիջապէս տիկնոջ հրամաններդը պիտի կատարէ ։

— Ո՞ւրկին տեղեկին մէջ երբէք զատ ուրիշ մէկը չըկա՞յ . թող ուրիշ մը դրկէ ։

— Օդնական – զօրապետը ։

— Թող այն գայ ։

Եւ որովհետև ատառաւորը դիւշ մը վարանեցաւ և կանգ առաւ .

— Շուտով դնա՛ , դոչեց , կատաղի բարկութեամբ լցուած . կը տեսնեմ որ այսօր ամէն մարդ իմ դէմ կը խրոխտայ .

Լ՛վինէ վեհանձն և դանդաղ չարժմամբ ելաւ եւ իւր բարձր հասակը ցցուց . Տիկինը զարհուրած զանդակին մնաւցաւ ։

— Որովհետև դերիներդ կրնան դիս խօսելու բռնադատել , ըսաւ Թիւրքմէնուհին , խոր և կոկորդային ձայնով մը , իրենց և քու առջև այն խոնարհ դիրքը կը պահեմ՝ որուն դատապարտած է դիս քու անամօթութիւնդ ։ Հիմա հոս լինէ և քեզ հաւասար մէկը պիտի մնայէ . պէտք չէ և չըվայլեր այլ ևս լինէ կամաւ ծունկի վրայ կենալ ։

— Լռէ՛ , հիմա ուշադիր պէտ դիս կ'արհամարհես , յանդգնութեանդ համար պիտի պատժուիս ։

Դրան վարագոյրը վերցուելով պաշտօնակալ մը ներս մտաւ , որ գրեթէ երեսուն տարեկան էր , բարձրահասակ , պղնձագոյն դիմօք և հսկայ իրանաւ ։ Երկայն սև մօրուքն իւր փայլուն և սպիտակ վոտաւորին վրայ կ'իջնար , ոսկի ուսադիրներէն կ'իմացուեր թէ զօրապետ է ։

Տիկինը զինքը տեսած ատեն , թեթև դժգոհութիւն մը ցցուց իւր դիմաց վրայ , խոժոռեցաւ և վարանելու ձեւ մը բռնեց . սակայն վարանումն երկայն չըտեւեց ։

— Ուրեմ՛ք զօրապետ , ըսաւ տիկինը , մատով զինուին ցոյց տալով . այս աղջիկն ինձ սիրելի չեղաւ . կը հրամայեմ քեզ որ իրեն դատաղանի յիսուն հարուած տաք ։

Զօրապետը բոլոր մարմնով դողաց և քայլ մը յառաջ երթալով .

— Թերևս լաւ չհասկցայ , թոթովեց ։

— Ինչո՞ւ կ'ատիպէք դիս հրամաններս կրկնել , պօռաց տիկինը ։

Զօրապետը կանգուն կեցած .

— Չեմ կրնար ձեր այդ հրամանը կատարել , այս տեսակ յանձնարարութեան համար դահիճ կանչել կուտան ։

Բեռոյ տիկնոջ մօտենալով ՝

— Մարթա՛ , ըսաւ , գաղղիերէն լեզուաւ , աղէկ չէք ըներ , ծայրայեղ հաճոյիդ պատճառաւ կրնայ ըլլալ որ պարկեշտ մարդիկ ղձեղ այլ ևս չյարգեն , և ո՞վ դիտէ , անոնց անձնուիրութիւնը՝ որոնք , ինձի պէս . . . . . ։

Տիկինն խոժոռ հայեցուած մ՚ արձակելով՝

— Ի՞նչ ըսիք, ըսաւ նոյնպէս դաղտիերէն լեզուաւ, խօսքն ընդմիջելով։

— Անկարելի է՝ որ ձեզ չը սիրեմ։

— Հրամաններս պիտի կատարէ՞ք։

— Ո՛չ, չեմ կրնար։

— Եւ որովհետեւ հանարձակեցաք ըսածներս առ ոչ ինչ համարել, հիմա ծունկի վրայ պիտի դաք, եւ հանդերձիս ծայրը պիտի պագնէք ներումն խնդրելով։

Տիկինն սպիտակ մատով տախտակամածը կը ցոյցընէր, եւ իւր սքօղեալ աչքն պաշտօնակալին մադնիսական զօրութիւն մը կը հաղորդէր։

Զօրապետը վայրկեան մը լռութեամբ զտիկինը դիտեց, ժպտեցաւ, եւ դանդաղ եւ խիստ դանդաղ կերպով՝ ի ծունր իջաւ եւ շրթունքները դողշադոյն մարդարտեայ վերարկուին մօտեցուց։

—Ռըլիեֆ, կատարեալ խենդ ես դու, ըսաւ տիկինը փաղաքշական հայեցուած մ՚ արձակելով պաշտօնակալին վրայ։

— Լա՛ւ, լա՛ւ, ի՞նչ է այդ, յանկարծակի ձայն մ՚ եկաւ իրենց եռեւէն, որ կէս մը զուարճալի եւ կէս մ՚ալ սպառնալից էր։ Ռըլիեֆ կնոջ ուսքը կնայ։ ի՞նչ կընշանակէ այս։

Սմրզանտի ընդհանուր կառավարիչն յառաջ եկաւ կէս հարցական եւ կէս սպառնալից կերպով մը։ Ցիտուն տարեկան հակայ եւ դէր մարդ մ՚էր, եւ քաղցր ու պարզ դէմք մ՚ունէր։

Օդնական— զօրապետը չուարած յանկարծակի ելաւ եւ եա քաշուեցաւ երեսին չառադունութիւնը ծածկելու համար։

—Սիրելի՛ս, ըսաւ տիկինը հանդարտութեամբ, զօրապետն ինձմէ ներումն կրնդրէր եւ լաւ կընէր, որովհետեւ արդէն ձեզ կանչել կուգէի։ Հոս բերել տուի զինքը՝ որպէս զի ծառայութիւնս չկատարող այս աղջիկը

պատժէ. բայց կ՚երեւի՝ թէ իմ յանձնարարութիւնս պարոնին ճաշակին յարմար չեկաւ, որովհետեւ անկրթութեամբ եւ պակաս մեծարանօք մերժեց իմ խօսքս։ Կուզէի որ ձեր միջոցաւ կատարել տայի, բայց հիմա զօրապետին խելքը գլուխն եկաւ եւ ճանչցաւ յանցանքը։

Զօրապետը գլխմինէ տեսած տունն՝ զոր առաջի բերան տեսած չէր, յանկարծակի դէմքը փոխեց, եւ իւր կնոջ վրայ նայելով՝ կրքով զգածեալ սիրահար արջու մը կերպարանք առաւ. իրեն մօտեցաւ եւ ձեռքէն բռնելով համբուրեց զայն։

— Ո՛վ որ քեզի պարտապաշտաճ յարգանք չտայ, ըսաւ զօրապետը, խստիւ պիտի պատժեմ, որովհետեւ այս տեսակ յանցանքներն ըստ իս աններելի են։

Եւ խոժոռած դէպ՚ի պաշտօնակալը դառնալով՝

— Կնոջս հրամաններն, ըսաւ, Սմրզանտի մէջ իմ հրամաններուս պէս խոհոյն պիտի կատարուին առանց վարանման եւ առանց քրթմնջանաց. ես արդէն այսպէս պատուիրած եմ. Հիմա դուն զօրապե՛տ, ամէն եւ հինգ օր սենեկիդ մէջ փակեալ պիտի մնաս՚ի պատիժ։

— Սիրելի՛դ իմ, ըսաւ տիկինը, այս անգամ ալ չեմ ուզեր՝ որ այդչափ խստութեամբ վարուիս, զօրապետն իւր յանցանքը ճանչցաւ . . . . . ։

— Ո՛չ այդպէս տիկի՛ն, ըսաւ Ռըլիեֆ, որովհետեւ նորին բարձրութիւնը դիս պատժոյ արժան կը դատէ, կը փափաքիմ որ պատժուիմ։

— Ուրեմն կուզե՞ք, հարցուց տիկինը ցրտութեամբ՝ որ ձեզի տալիք պատժոյս հնազանդիք. լա՛ւ, հիմա պարզապէս կուզեմ՝ որ այս աղջկան համար տուած հրամանս կատարէք։

Էմինէ՝ որ միշտ հեղնութեամբ կը ժպտէր, յանկարծակի իւր դեղեցիկ աչքերը պաշտօնակալին դարձուց, եւ զօրապետն հասկցաւ՝ թէ այս հայեցուածն աղաչողական էր։ Մինչեւ նոյն տեսն զօրապետը մանկա-

հաս աղջիկը լաւ դիտած չէր, անոր դէղեցկութիւնն աչքին զարկաւ ու խակոյն համակրութեամբ լեսրտալ ըսաւ.

— Սպարապե՛տս, տիկնոջ հնազանդել չուզեցի, կարծելով՝ թէ Ռուսիոյ մէջ նէհթական պատիժն խստաբնաջինջ եղած է։ Հիմա կըվախնամ՝ որ մի՛ դուցե այսպիսի բան մը դէշ տպաւորութիւն ընէ հպատակացդ վրայ, և . . . .

Սպարապետն անհամբերութեամբ վառուած, յանկարծակի խօսքն ընդմիջելով ըսաւ.

— Ռուսաստանի մէջ կընենն ի՛նչ որ կուզեն. հոս ես միայնակ տէր եմ, և ինչպէս որ կուզեմ այնպէս կը դատեմ. կամքս օրէնք է. Սրդէն ըսած եմ՝ թէ կնոջս հրամանները բարձր հրամաններ են. մի՛ տախտէք գիս որ դարձեալ կրկնեմ։ Տիկնոջ անհնազանդելը Սմրղանտի մէջ քրէական յանցա՞նք է, յանցա՞նք, կը լսե՞ք, պարո՞ն։

Սպարապետն իւր դորշ աչքերն օդնական-դատապետին վրայ դարձուց, բոլորովին դաժան կերպարանք մ՚առնելով. բայց Ռըլիեֆի անտարբեր կեցաւ. քայլ մը յառաջ դնաց և Յարթայեն առջև խոնարհելով,

— Հիմա տիկին, ըսաւ, ինձ համար ներում ուզեցի ծունկի վրայ եկած. կը խոստա՞նք որ երկրորդ անգամ ալ ծունկի վրայ դամ այս աղջկան համար ձեղնէ ներում խնդրելու։

— Ո՛չ, չեմ ուզեր որ այդ բանն ընես, դուշդ կըմինէ, չեմ ուզեր, ո՛վ գըեղ աղաչեց՝ որ ինձ համար մի՛ չամուտթիւն ընես, ըւռո՞ւս։ (1)

Ռըլիեֆի զարմացած լուեց, սպարապետն ալ ուսերը թոթուեց։ Մարթա եկաւ և դանդաղ կերպով մը իւր երկանը բազկին վրայ կոթնելով,

— Բոլոր այս վիճաբանութիւնները դիս յոգնեցուցին, ըսաւ, չեմ դիտեր՝ թէ արդեօք սենեակս երթալու զօրութիւն ունի՞մ։ Նաև ծխախոտիլ իւր երկանն եւ ըսաւ. Մօրթօֆ, ըսաւ, ի՞նչ լաւ կըլլայ՝ եթէ դիս մինչև սենեակս տանիք։

Կառավարիչն իւր հզօր բազկօք տկար արարածը բռնեց. կրծոց վրայ սեղմելով ուրախութեան վրնջմամբ և արագ քայլերով դէպ՝ ի դրան կողմը գնաց։

— Է՛հ, է՛հ, աղաղակեց տիկինը խնդալով, ոչ այդչափ արագ, ա՛լ աւելի կը յոգնեցունէք գիս։

Երբոր սպարապետն ուսերովը վայտոյրը վերցուց, տիկինը՝ մէկ ձեռքն երկանը վրան պատատած, միւսովն ալ ղէմինէ ցուցնելով՝ Ռըլիեֆին ըսաւ.

— Ցիսուն հարուած, այնպէս չէ՞.

Ռըլիեֆ թխըքմինութեան հետ ծառայութեան սենեակը գնաց. Հնդկաստանցի մը հոն դանուած նոտաբաններուն մէկուն վրայ նոտած էր. անմիջապէս բարեկամական մեծարանաց չարժմամբ ոտքի վրայ եկաւ, երբ Ռըլիեֆը տեսաւ։ Այս մարդը Հաճի—Սաֆիէրն էր՝ որ Սմրղանտ եկած էր Ամու — Տերեայէն անդին դանուած երկիրներէն. Սարթինեբուն վրայ մեծ ազդեցութիւն ունէր, հոդւով և մարմնով Յերմ մահմէտական, հինդ անգամ ուխտաւորութեամբ Մէքքէ ուղեւորած, կոստանդնուպոլիս, Զմիւռնիա և Դամասկոս տեսած էր, և եւրոպական քաղաքակրթութեան բոլորովին անտեղեակ չէր։ Բաւական տարեց վերջը խելոյսի խոնը դինքը դեսպանութեամբ Օրէնպուրկ ղրկած, յետոյ ա-ռանց որ և իցէ պատճառի, Հաճի—Սաֆիէր խակոյն դարձած կեանքը թողած Սմրղանտ քաշուած էր՝ որ նոյն տարեն Պուխարայի Էմիրին ձեռքն էր, Թէպէտ և տակաւին երիտասարդ, (Հաճի—Սաֆիէր տակաւին քառասուն տարեկան չկար) քիչ ժամանակի մէջ խիստ հարթաւաւոր եղաւ իւր նոր հայրենակցաց առջև։

Ընծեցած հմտութիւնը, (Ղուրանն՝ի քերան դիտէր)

(1) Հնդկաստանցիք Ռուսաց այս անունը կուտան։

հարստութիւնն ու բարեբարութիւնը դինքը (ֆէ—ֆա-էլ) սպիտակամօրուաց կազին արժանացուցին։

Ռուսաց Սմոլանա եկած առեն, Հաճի—Սաֆէր այս պատուոյ ասոհճանն ունէր. առաջին ինքն եղաւ՝ որ իրաց նոր կարգը ճանչցաւ և Ռուսիոյ կառավարութեան առջև հաւատարիմ և անձնանուէր ճանչցուեցաւ։ Ամեն դէպքերու մէջ իւր անհակառակելի ազդեցութիւնն՝ի գործ կը դնէր Սմոլանսկի բնակչաց վրայ. հնազանդութեամբ և առանց դժգոհութեան ընդունել տուաւ անոնց յաղթականներուն հաստատած նոր վարչական անօրէնութիւններն ու լուծը. Հաճի—Սաֆէր քրիստոնէից հետ ալ բարեկամ էր։

Հաճի—Սաֆէր խիստ վայելուչ հագուած. վերջաւորք զարդ արուած կարմիր մեռաքսէ հանդերձ մը՝ որ մէջքին վրայէն ոսկեպալար կապոյտ քաշմիր կամարով մը սեղմեալ էր. իւր կապտադոյն ապարօշը բարակ բուրդէ հիւսուած էր. գեղին կաշիէ չինուած կօշիկներն՝ որոնց քիթն երկրին անվոխելի տարազն համեմատ կորացեալ էին, վրանին աղնիւ քար ունեցող արծաթի դնդակներով զարդարուած էին։ Թէպէտ և բուն իսկ Մոնղոլեան ցեղէն էր, սակայն կերպարանքը խիստ դեղեցիկ և կանոնաւոր, միշտ սպիտակ ձեռքովը իւր ազնուամաղ մօրուքը կըշոյէր՝որուն մաքրութեան շատ մեծ խնամք կըտանէր։ Ոչխէֆ երեն մօտեցաւ և բարեկամաբար ձեռքը դէպ՝ի անոր երկնցնելով.

— Բարի ըլլս, Հաճի՛, ըսաւ, անշուշտ կը ցանկաս սպարապետը տեսնել։

— Այո՛, պատասխանեց Սաֆէր, կուգամ Նորին վսեմութեան խնացնել՝ որ քաղաքացիներս կատարեալ յանձն առած են իւր երկուան առաջարկած պայմանները։

— Ինչ բարի լուր կուտաս, Հաճի՛, ինչ բարի լուր թէ՛ մեզի և թէ՛ բոլոր Ռուսիոյ համար . . . . ։ Ո՛հ, ո՞ւր էր թէ բոլոր քաղաքացիներդ ալ քեզի նման ըլ-

լային։

Սակայն Էմինէ՝ որ երկու ձեռքերով դէմքը ծածկած էր, Սաֆէրի ձայնը լսելով սարսռաց, քանի մը քայլ յառաջ անցաւ, և լուսին դէմը դալով՝ անծանօթ լեզուով երեք բառ արտասանեց։

Հաճի—Սաֆէր ետ քաշուելով՝

— Ի՞նչ լսել է, ղօրապե՛տ, ըսաւ, որ Էմիլի մը աղջիկ հոս անհաւատի առջև բաց դէմքով կենայ։

— Էմիլի աղջի՞կ է աս։

— Էմիրներուն ամենէն մեծին և ղօրաւորին . . . բայց ի՞նչպէս հոս եկեր է։

— Ո՛նչ դիտեմ. հիմակու հիմա կառավարչին կը նայ դերին է, և անոր չը հնազանդելուն համար, ինձի յանձնուեցաւ՝ որ գաւազանի յիսուն հարուած տամ երեն։

— Գաւազանի հարուա՞ծ, (ԱԼԼԱՀ ՈՒ Է.ՔՊԼ.Ր) Ա.ստո՞ւած մեծ, կատակի՞ համար կըսես։

— Է՛հ, չէ՛, կեցի՛ր, միտքս բան մ՛ընկաւ. դու Ռուսները շատ կը սիրես, յանձն կառնո՞ւս այս յանձնարարութիւնը։ Ա.հաւասիկ ստորագրութեամբս տոմսակ մը, մեր բոլոր ղօրքերը դքեզ կըճանչնան, Էմիլիդ աղջիկը հետդ առնելով պահապան ղօրաց քով գնա՛, և հոն քիչ մը զուարճացիր՝ մինչև որ սպարապետն հրամայէ քեզ երեն ներկայանալու, և կարծեմ թէ ժամէ մը յառաջ անկարելի է որ երեն ներկայանաս։ Կուզե՞ս։

Հնդիկը ղօրաւարին մօտեցաւ և սպառնալից աչքերով հարցուց.

— Ինձի՞ կըսես։

— Է՛հ այո՛, որո՞ւ կուզես որ ըսեմ, քանի որ երկուքէս զատ մեկը չկայ հոս։

Սաֆէր ձեռքը դաշոյնին երկնցունելու վրայ էր, երբ Էմինէ նոյն անծանօթ լեզուով քանի մը բառ արտասանելով՝ իւր բարեխօսութիւնն հանդարտեցուց։

—Շա՜տ լաւ, ըսաւ Սաֆէր, կըհնազանդիմ քեզ, բըռ-

նաւո՛ր . բայց Աստուծոյ անէծքն իջնայ մինչեւ քու վերջ-
ջորդ սերնդեանդ վրայ :

Ռըլիէֆ ժպտելով ըսաւ .

— Ապերա՛խա , չեմ կրնար սակայն այդպիսի յանձ-
նարարութիւն մը չկատարել :

Ցետոյ ուսերը թոթուելով կառավարչին ապարանքը
մտաւ :

ԳԼՈՒԽ Բ.

ՌԸԼԻԷՖ ՁՕՐԱՊԵՏԸ

Աբեւուն մարը մտած առեն հորիզոնին վրայ թողած
աղօտ լոյսը Թիմուրի մայրաքաղաքին սպիտակ տուներ-
ը ծիրանեգոյն կըզգեցուցած , Նոյն առեն ամբողջ մահ-
մետական քաղաքը աղմկի մէջ կ'ըլլայ : Մէյ-մէկ ներսէն
միակերպ ձայները՝ որոնք Իւլաձէրն աղօթքի կը հրաւի-
րեն մզկիթներուն վրայէն՝ օդին մէջ խիստ աքանչելի ներ-
դաշնակութեամբ կը հնչեն , և բնակիչները իրենց խոր-
հըրդաւոր տուներէն իջնալով՝ բազմութեամբ նեղ և ան-
ձուկ փողոցներէն մզկիթ կըդիմեն :

Օրուան այս ժամուն Սմրղանտ թէ՛ հանդերձով
և թէ՛ սովորութեամբ բոլորովին իրարմէ տարբեր մարդ-
կան բազմութեամբ կը լեցուի : Սարթին՝ իր դիւերազ-
գեստով և Ռուս քահանայից նման քառակուսի գըլ-
խարկով , Էօզլեքը պատերազմական տարազի մէջ սրա-
ծայր գլխարկով , անապատական Թաթարն իր ցնցո-
տիներով և Հնդիկն իր մանուշակագոյն պարեգօտով
Ռուս զօրապետին առջևէն կ'անցնէին , որ ուսերուն
վրայ ոսկւով ժապաւէններ նետրը և սպիտակ շապիկ մը
հագած էր :

6813-57

Ռըլիեֆի մոակորհ դէպ ՚ի առուակի մը երկայնութիւնը կը քալէր պատնէշներուն ուղղութեամբ. խառնվեալ դէմքով ձեռքն եղած դաւազանով դնդին և կապոյտ ծաղիկներուն կը զարնէր, որոնք ափուդայներուն երեսքը թուսաներ ձևացուցած էին: Յարթի մը՝ որ ջուրի քով ծունկի եկած էր բան ուսլորութեան ալօթքի երթալէ յառաջ ապրիլ առնելու, զօրապետին դաւազանին ձայնը լսած տուն ետ դարձուցաւ բարկութեան և երկիւղի աղաղակ մ՚արձակելով: Սակայն Ռըլիեֆ ոչ ինչ կը տեսնէր և կըսէր. առանց խոտորելու իր ճամբան կըշարունակէր և մնաց խորհուրդներէն կընեղուէր:

Պատնէշներուն առջևն հասաւ. հոն փայտե նոր չնաւած գինուորաց խրճիթ մը կար, որ ժայռաձև բարձրը պատով մը չրջապատեալ էր: Խրճիթը՝ ուր դունով և կոշտ կերպով չինուած, շուրջն ալ բարձր և դեղեցիկ պատ մը, այնպէս որ դեղեցիկ կնոջ մը վզին վրայ գանուած գարշելի ոջլի մը կը նմանէր:

Դէպ ՚ի փողոցն երկնցած սարահարթ հողակոյտին վրայ երիտասարդ և տակաւին անմօրուս պաշտօնակալ մը կը շրջէր, և անհանգիստ դէմքով պահերը կ՚ոլորէր: Գորշագոյն կտաւէ շապիկներ հագած քանի մը գինուոր՝ որոնք դրան առջև ժողվուած և իրարու վրայ կըռթնած էին՝ հետաքրքրութեամբ փողոցին մէջ աստ և անդ կը նայէին: Պաշտօնակալը Ռըլիեֆը տեսնելով ուղղակի անոր ազաղակաւ կանչեց: Զօրապետը մօտենալով.

— Ա՜հ, դուք էք, Պասալոքի՛. ուրեմն պահապան գինուորաց կարգին էք, հարցուց:

— կը կարծէք՝ թէ հաճոյքս համարի այս տեղ եմ. Ցիրաւի ըրածնիդ ապեկ չէ. դուք որ ասկէ շատ հեռուն չէք բնակիր, պէտք չէ՞ որ երբեմն երբեմն տեղեկանայիք՝ թէ պահապան զօրքերն որո՞նք են. թերևս ձեր բարեկամներէն մէկն ալ բաղդը բերելով հոս եկած ըլլայ: Լաւ չէ ըրածնիդ, սիրելի՛ս, իրարու օգնութեան հասնիլ պէտք է:

— Դժբաղդ օրերու մէջ եմ, կամ ինչպէս որ կ՚ըսէք, փոփոխութիւն մը կը կրեմ և արջու բնութիւն կ՚առնեմ:

— Պահ, ուրեմն պալատէն չէ՞ք գար:

— Ո՛չ ուղղակի, երկու ժամէ ՚ի վեր քալաքէն մէջ կը պտըտիմ:

— Ուրեմն նոր լուրը չէք լսացած:

— Ո չ:

— Առաջակայ չաբթուն ընդհանուր կառավարիչը հոս պիտի ըլլայ: Ցլօդ ինձ հրաման բերաւ՝ որ զօրքերը չսացընեմ, և պատնէշներէն դուրս միչտ չրջադարձնք. կերևի թէ ապստամբները խրամներուն և պարիսպներուն վրայ լաւ հսկողութիւն կը պահանջէ:

— Ա՛հ, Քօֆման ապստամբները պիտի գայ:

— Եւ շատ ծանր գործ պիտի ունենանք: Դուք երջանիկ էք, ըսա որում մեղի պէս պահապան զօրք չէք, այլ միչտ պատերազմ կը կենաք:

— Ա՛յո՛, ըսաւ Ռըլիեֆ ծխծաղելով, և պալատին մէջ կառավարչին կինը կը տեսնեմ, որուն պատերազմի զօրապետը սիրահար է խենթևնալու աստիճան:

Երիտասարդ պաշտօնակալին դէմքը չատապունեցաւ.

— Ընտանեկան է, ըսաւ, գիտէք որ ըսածնիդ ճիշդ չէ:

— Ա՛յո՛, ճիշդ է:

— Կերդնում:

— Մի՛ երդնուք, որովհետև ատած պիտի ըլլաք, ինչո՞ւ համար ծածկել կ՚ուզէք, ի՞նչ չարիք կը ծնանի ասկից: Կինը գեղեցիկ և դուք ալ երիտասարդ էք. այս երկրին մէջ ուրիշ զբաղումն չկայ. Սիրեցէ՛ք զիրար, ապրեցաք, չատ լաւ կ՚ընէք:

— Ի՞նչ խղճով կը գրուցէք այդ խօսքերը, իրաւունք չունիք. որովհետև ատոր է թէ երջանկութեանդ կը

նախանձիմ, սակայն և այնպէս քու բռնած ճամբայնե-
րըդ չեմ երթար ։

— Ճամբայնե՞րս, աղաղակեց Ռըլիէֆ բարկութեամբ։
Ճամբայնե՞րս ըսիր, զօրապե՞տ, ըսած խօսքերնուդ ծան-
րութիւնը կը կշռէ՞ք ։

Երիտասարդը զարհուրած պատասխանեց ։

— Ցիրաւի, անկարելի է ձեզ հետ խօսիլ, խակին
կը բարկանաք ։

— Ճշմարիտ է, բարկանալու իրաւունք չունիմ,
բայց գիտե՞ք թէ ո՛րչափ կը ձանձրանամ և կը նեղուիմ.
. . . Մարթա Նիքօլաեէվնայէն համար չեմ ըսեր, ես
երբէք երեսն սիրահար չեմ, բայց դուք, Պասալըքի՛,
ուրիշ էք. երբոր ձեռքը պադնելու համար քեզի եր-
կընցնէ, տասն և հինգ օր երջանիկ կ'ըլլաք. միւս ե-
րիտասարդներուն ալ մի և նոյնը կը պատահի ։ Ինք
դիտէ և կանոնաւորապէս ամէն տասն և հինգ օր ձեռ-
քը քանի մը պաշտօնակալներու կուտայ՝ որպէս զի ա-
մէնքն ալ տարակուսութեան մէջ ձգէ ։ Խիստ լաւ կ'ը-
նէք թէ՛ դուք Պասալըքի, և թէ՛ միւս պաշտօնակալ
ները. կինը գեղեցիկ է, դուք ալ անզբաղ էք ։ Ես
ձեր հետ գործ չունիմ և ո՛չ ալ իւր երեսին եմ։

— Լռէ՛, Ռըլիէ՛ֆ, ըսաւ Պասալըքի յանդիմանա-
կան ձեւով ։

— Ի՛նչ, մի՞թէ ըսածներս ճշմարիտ չե՞ն. դուք
Պասալըքի, դուք որ ուղիղ սիրտ և եռանդուն հոգի
ունիք, թողէ՛ք որ ձեզի խորհուրդ մը տամ. կոնսուէլոյին
հետ նազեցէ՛ք, բայց երբոր երեսէ մեկնիք, մոռցէք
այս կինը և իւր յիշատակը մոքերնեէդ հեռացուցէ՛ք ։

— Ձեզի՛ն ըսելով կը խենդենամ ։

— Աւա՛ղ, ո՛չ թէ հիմա սիրոյ խենդենամ, այլ ար-
դէն եղած եմ, եթէ դիտնայիք . . . . ։

Ռըլիէֆ խօսքն ընդ միջոց երբ վախ — պաշտօնա-
կալ մը ձեռքը դէմքնայնին դրած և հետն չորս զինուոր
առած Պասալըքիին մօտենալով ըսաւ .

— Պահապան զօրքերը ղրկադրելու պատրաստ են,
զօրապե՞տ ։

— Ինչ ձանձրութիւն. ինձ ընկերանալ կուզէ՞ք,
Ռըլիէֆ ։

— Խիստ յօժարութեամբ ։

Երկու պաշտօնակալները պահապան զօրաց հետ քա-
ղաքին դռները դուրս եկան ։

Գիշերը ցով և պայծառ էր ։ Դեռ նոր երկնից կա-
մարին վրայ քանի մը աստղեր կրկայլէին ։ Կաղամախ-
ներուն տերեւները անապատին չնչած հողմէն կ'երե-
րային, դաշտին քաղցր օդն օրուան ձանձրացուցիչ ջեր-
մութենէն թուլցած զգայարանքները կը զօրացնէր ։ Սը-
մըրտանա իրենց ձախ կողմն էր՝ ամէն դմբէթներով և
անթիւ մզկիթներով. իրեն չուրջը կային պարտէզներ,
հարիւրաւոր ծառոց կանաչութեան մէջ ծաղկուած և
կաղամախի անթիւ անտառներով չրջապատուած ապա-
տակ տուներ. աւելի հեռուն Բօհան լերին ձիւնապատ
դադաթը կերեւնուէր ։ Երկայն ատեն երկու պաշտօնա-
կալք լռութեամբ քալեցին ։ Պասալըքի տեսնելով՝ որ
իւր ընկերը խորհրդածութեանց մէջ ընկղմեալ էր, չէր
համարձակեր հետը խօսիլ ։ Ռըլիէֆ՝ որ կարծես թէ իւր
բարեկամին ներկայութիւնը մոռցած էր, յանկարծակի
Պասալըքիին ձեռքէն բռնեց և ուժով սեղմելով ըսաւ՝

— Գիտե՞ք թէ ի՛նչ տեսակ կինն է այդ, ըսաւ. հո-
գի, սիրտ, ապիք չունեցող էակ մ'է ։ Գիտե՞ք՝ որ ար-
դէն մեր հայրենեաց մէջ (Ռըլիէֆ ձեռքը դէպ 'ի արև-
մուտք կ'երկնցնէր) Մոսկուայի կառավարութեան մէջ,
ուր իւր հօրը հետ կ'ապրէր, դիւղի իւր ազգականնե-
րէն մէկը և թերևս իւր հօր եղբօրորդին, երեն տասիկ
և յետոյն տասիճան սիրահարած էր, գիտե՞ք՝ որ այս
սէրն իրենց տղայութենէն սկիզբն առած էր և երկու-
քին վիճակն ալ իրարմէ տարբերութիւն չունէր, իրենց
ընտանիքն ալ դարերէ հետէ իրարու հետ բարեկամե-
լեն ։ Գիտե՞ք որ առնախօսութիւնը տեղի ունեցած էր,

հարսանիքն ալ երկու ամիսն վերջը պիտի կատարուէր, և խօսնայրը Բեդրոսպուրկ և փարիզ ուղևորեցան. հարսանեաց հանդերձները չմնալ տալու։

— Շատ լաւ . . . չեմ հասկնար։

— Այն առեն մօտակայ քաղաքին մէջ բնակող ղօրայ դնդապետը յանցանք գործեց, և կայսրն իւր թիկնապահ ղօրայ սպարապետ Մօլթօֆի կոմսը հան ղրկեց, որպէս զի հարցուփորձ և քննութիւն ընէ։ Երբոր խօսնայրը փարիզէն վերադարձաւ, իմացաւ՝ թէ Մարթա, յն Մօլթօֆի կոմսին հետ ամուսնութիւնն առաջակայ կիւրակէին տեղի պիտի ունենար։ Ուղղակի Մարթային քով դնաց դողալով և զարհուրելով, մանր՝ հոգւոյն, սպառնալիքը բերանէն և սպասնքն ալ սրտին մէջ։ Գիտէ՞ք թէ կինն իրեն ինչ պատասխանեց. «Նա, ըսաւ, սիրել կըսիրեմ, և սպարապետը ձեր բնաւ լինձ չկրցած տուածը կուտայ, այսինքն մեր ամբողջ կառավարութեան պես մեծամեծ գաւառներու վրայ բացարձակ իշխանութիւնը. գերի ժողովուրդներ ծունկի վրայ եկած երեսնին ալ դեռևին ծռած կամայս պիտի լսեն. դուք լինձ ի՞նչ կրնայիք տալ. հարուստ գաւառաբնակ կնոջ մը առանձնակեաց և ուրիշէն կախեալ կեանք։

— "Սակայն դիս սիրել կը ձևացընէիք։

— «Ցիրաւի, զձեզ սպարապետէն աւելի կըսիրեմ և յանհունս լինձ հաճելի էք, ասիկա բան մ'ըսել չէ. պէտք չէ որ բոլոր կեանց բախտը միայն մէկ հաճոյից վրայ կայանայ»։

Այն առեն կնոջ ոտքն ինկաւ, աղաչեց և կրկին աղաչեց, արտասուօք դորդը թրջեց, և երբ իւր ամէն ըրածին հակառակ անիծեալ ամուսնութիւնը կատարուեցաւ, վոխանակ իւր սրտէն այս դժոխային սէրը խլելու, վառ իւր առաջին ունեցած կեանքը թողուց, ծառայութեան մնաս, քաղաքէ քաղաք, օթևանէ օթևան միշտ կնոջ հետէն կ'երթար, որուն երբեմն կըրպաղելէ չէր կրնար հրաժարիլ. կուղէր որ հայեցուած մարձակէ նա իւր վրայ՝ զոր աչխարհի մէջ ունեցած միակ բարիքը կըհամարէր։ Համեստութիւնն ու պարկեշտութիւնը կըհրամայէր՝ որ կինը զինքն իւր քովէն մերժէր, կամ երկանը դանդաղեր. սակայն բնաւ այդպիսի բան մը չըրաւ, այլ ընդհակառակն իրեն նման մարդու մը վրայ աղդեցութիւն ունենալուն համար երջանիկ կըհամարէր ինք զինքը, մանաւանդ թէ մարդն իւր անարժան սէրէն զատ պատուաւոր և աշնուական ալ էր. կինը մերթ զինքը կը քաջալերէր, մերթ կը սաստէր, բայց միշտ իւր քով կը պահէր։ Ո՜հ, որչափ անարդանք, ցաւ ու թիւն, և որչափ ամօթ զգաց այս մարդը, մինչդեռ կինը բոլորովին անտարբեր կը կենար և բնաւ իւր կամայ չէր զինջաներ։

— Այո՛, թերևս դուք ալ բաւական նեղութիւն կրած էք։

— Ե՞ս, ըսաւ Ռըլիեֆ իւր բարեկամին վրայ նայելով. ըսածներուս մէջ լինձ համար բան մ'ըսի՞, զորա՞ պե՞ս։

— Բայց կըկարծէի . . . այնպէս կ'ենթադրէի . . վերջապէս, սիրելի՛ս, ըսաւ Պասալըքի համբերութիւնը հատած, այդ բոլորը լինձ պատմած մանրամասն բաներն ուսկից իմացած էք.

— Ի Բեդրոպուրկ . . . դիտեք որ մեծ քաղաք է։ Կոմսն ամուսնութենէն վերջն իւր կինն ապարանքը բերաւ. այն առեն ես Բեդրոսպուրկ էի. հոն, ինչպէս հոս և ինչպէս ամէն տեղ, կոմսուհւոյն սքանչելի դիրեկութիւնն հռչակուեցաւ, ամբողջ չաբաթներ Մարթա նկատելիօրէն բոլոր քաղաքին խօսակցութեան նիւթ եղաւ, ամէն տեղ իւր պատմութիւնը կընէին, և . . .։

— Ներեցէ՛ք լինձ Ռըլիեֆ, ըսածնիդ ճիշդ չէ. ձեր սկզբանց համեմատ չէք վարուիր և ձեզի վայելուչ խօսքեր չէք խօսիր . . . թերևս կինն մը կըզրպարտէք։

— Ո՞չ ապաքէն երեք տարիէ հետէ իւր էրկանը հետ կ'ապրիմ. ո՞չ ապաքէն իւր միշտ և երբեմն ա-

ըլլնալեանն հաճոյից ակնառութ կ'ըլլար։ Նոյն իսկ այսօր ալ չուզէր պիս սակայն՝ որ Թիւրքմէնուհի դերի մը հարուածեմ, հաւանականաբար իւր կօշիկներուն խրաշքը լաւ կապած չըլլալուն համար։

— Ո՞չ։

— Ա,յո՛, առաջին անգամ մերժեցի. վերջը ծունկի վրայ եկայ և իրմէ ներում խնդրեցի։

— Եւ կ'ըսէք թէ ես իրեն սիրահար չեմ.

— Սիրահա՞ր, ե՞ս, ո՞չ, ո՛չ, երկայն առենէ 'ի վեր և ո՛չ մէկուն սիրահար եմ... Սակայն կինը խիստ դեղեցիկ էր ինձ ըսած առեն՝ թէ ծունկի վրայ պիտի դաք և ինձմէ ներում պիտի խնդրէք։ Հնազանդեցայ իրեն, և ինչո՞ւ համար. որովհետև բնութեան այս չքնաղ կառուցուածքին առջև խոնարհիլն ինձ անչքնչելի հաճոյական զգացում մը կ'ազդէր. հիմա լմնցաւ. այլ ևս նոյն առենուան պէս դեղեցիկ պիտի չըլլայ բնաւ. այլ ևս ինձ հաճելի չէ, ո՛չ գինքն և ո՛չ ուրիշ մէկը կը սիրեմ. կը հասկնա՞ք։

Ջօրապետը Պասալաքիին ձեռքը սաստիկ սեղմած էր։

— Հանդարտ կեցէ՛ք, սիրելի՛ս, ըսաւ Պասալաքի.

— Այսօր սակրատեցայ իրեն չհնազանդելու. Հաճի Սաֆէրին ըսի՝ որ Թիւրքմէնուհին հարուածէ. ինք Սարթիններուն պէս անբան և անխելք չէ, կը յուսամ որ հասկցած է՝ թէ աղջիկն ազատել կ'ուզէի։

— Այս բանն ընելու ինչպէս համարձակեցար. եթէ սպարապետը իմանայ ի՞նչ կ'ըսէ.

— Սպարապետը սիար և վատ ըլլալուն համար հանդուրժեց՝ որ կինը պաշտօնակալի մը այսպիսի հրամաններ ասայ, բայց ես յանձն չառի, և սպարապետը կը յուսայ՝ թէ իւր հնոյ աղախինը պիտի չարչարեմ, բաւական է որ սորտապրութիւնս տուի։ Ծառայութեան սենեակը պինուոր չկար, Թիւրքմէնն իւր անձնանուիրութեամբ կայսեր ծանօթ է. զարմանալի՞ է որ աղջիկը

ծեծել տալու սոսկալի գինքը։ եթէ հրամանս կատարեց կամ ոչ՝ ամենևին հոգս չէ։

— Երբեմն անհասկնալի կ'ըլլաք։

— Պահ՛, և դիտէ՞ք այդպէս ըլլալուս պատճառը. որովհետև անարդարութեան դէմ կըմաքառիմ. բայց բաւական դաղտնի. կարծեմ թէ ձեզ հետ իրրև բարեկամ վարուած եղայ մեքիս խորհուրդները ձեզ հաղորդելովս, և երբէք նախանձու կրքով չեմ խօսիր. կըվստահացնեմ ձեզ՝ թէ կըխաբուիք եթէ այսպէս մտածելու ըլլաք. խօսքերէս օգուտ քաղեցէք կամ մի՛ քաղէք, ձեր գիտնալու բանն է և..... ա՛լ ուրիշ բանի վրայ խօսինք։

Երկու պաշտօնակալք իրարու հետ խօսելով՝ քաղաքին դէպ 'ի հիւսիսային դուռը տանող կաղամախի ծառուց պողոտային եկան։ Շրջադայող գինուորները տեսնելով որ իրենց գլուխները վտանգուն խնամակցութեան մը բռնուած էին, քաղաքը մտան՝ որուն դռները բացուած էին։ Պաշտօնակալք մինակ մնացին ճամբուն մէջ խրամը ներկին հարիւր քայլ հեռի։ Կին մը և այր մարդ մը՝ որ կողմնակի ճամբէ մը դուրս կ'ելլէին, անակնունելի կերպով իրենց դիմացն եկան։ Մարդը Թիւրքմէնաց ճանապարհորդելու և պատերազմելու առեն հագած զգեստները նման զգեստ հագած էր. կինն ալ յոտից ցգլուխ կապոյտ կտաւէ չապիկով մը ծածկուած էր։

— Հաճի Սաֆէ՛ր, աղաղակեց Ռըլիեֆ։

— Ձքեզ չէի վնտռեր, պատասխանեց Սաֆէր, բայց որովհետև իրարու հանդիպեցանք, ըսելիքս ըսեմ։

— Ի՞նչ կ'ուզես ինձմէ, Հաճի՛,

— Հրամաններդ կատարելի։

— Իմիրիդ աղջիկը դաւաղանով հարուածե՞լ տուիր։

— Ուղածէդ ալ աւելի. դահիճն իրեն պաշտօնը կատարելու համար հրաման խնդրեցի. Հանգիստ ալ աղաչեց գիս՝ որ հրաման առնեմ։

— Ինչո՞ւ համար, խենդեցա՞ր։

— Մտիկ ըրէ՛, երբ առաջինն անդամ հոս եկաք, արդէն գձեզ կը ճանչնայի, ձեր քաղաքները, քաղաքակրթութիւններն ու ձեր ժողովրդեան բարեկեցութիւնը տեսած էի. ձեր դիրքերը կարդացած, օրէնքներն ալ սորված էի. դրքերնիդ կրթիչ և օրէնքներնիդ ալ լաւ էին։ Մտածեցի այն աւեն որ Աստուած գձեզ իմ աղքատ և թշուառ երկրիս բարւոյն համար հոս ղրկած էր։ Ա՛յն օրէն՝ի վեր, ինչպէս դիտէք ամէնքնիդ ալ, Հաճի Սաֆիէր ձեր ամենէն հաւատարիմ բարեկամն և անձնանուէրն եղած էր։

— Ճշմարի՞տ է, Հաճի՛։

— Սակայն այսօր, երբ խնացայ, Ուռո՛ւսք, թէ դուք ալ մեր էմիրներուն պէս չար և անդութ էք, թէ ձեր բռնութիւնը մեր նախկին դլխաւորայ բռնութեան նման ատելի և արհամարհելի է, թէ մեր բաղդը միշտ չարչարիլ և միշտ բարբարոս տիրոջ մը հաճոյից հնազանդիլ է, միտքս փոխեցի։ Աւելի լաւ է ճշմարիտ Աստուծոյ ծառայից՝ քան անհաւատներուն օրինայ ներքև ապրիլ, որովհետև թէ՛ անոնց և թէ՛ ասոնց բռնաւորութիւնն իրարմէ տարբերութիւն չունի։ Հապա ուրեմն ծեզի այս կինը՝ ղոր դարձեալ կը տիրեմ և կը յարգեմ, ես անձամբ հարուածեցի, նախ՝ որ չըլլայ թէ դահիճն արիւն թափէր. և երկրորդ թէ՛ քեզի և թէ՛ քուկիններուդ բնաւ ներելու ղգացում չունենալս համար. հիմայ, ձեր դէմ պատերազմ կը հրատարակեմ, չո՛ւն անհաւատները, և պիտի իմանաք թէ ինչպէս վրէժ պիտի խնդրեմ։

Մինչդեռ Սաֆիէր պաշտօնակալները կը ղարհուրեցնէր՝ անոնց պատերազմի հրաւէր կարդալով, էմինէ կաղամախի ծառոց երկայն ճամբուն վրայ կը նայէր։

Քանի մը վայրկենէ՝ի վեր ճամբուն ծայրը երկու սև բան նշմարած էր, ասոնք արագութեամբ իրարու կը մօտենային, և երբ Թիւրքմէնին խօսքերուն վերջին

վանկն հնչեց օդին մէջ, երկու ուղտ՝ որոնց երկաթ չը կեցած ոտքերն անձայն սև և խոր աւազին մէջ կ՚ընկղմէին՝ էմինէին քով կանգ առին։ Թաթար ուղտապան մը այս ուղտերուն մէկուն վրայ հեծած և միւսն ալ լարէ սանձով մը բռնած էր, որ հազիւ թէ կայնեցաւ, յանկարծակի ծունկի վրայ ինկաւ։ Էմինէ մատուր Սաֆիէրին դարձաւ. Հաճին՝ փայլակի արագութեամբ դէմինէ իւր հզօր և ջղային բազկօք բռնելով ուղտին վրայ ցատկեց, եւ խոր ու սուր ձայնով սուլելով ուղտն և լաւ և տեղի պէս մեկնեցաւ։

— Անիծեա՛լ ըլլաք ամէնքնիդ ալ, Ուռո՛ւսք, բռնաւո՛րք, անհաւա՛տք և աւազա՛կք, աղաղակեց Սաֆիէր։

— Կեցի՛ր անգամ մը, աւազա՛կ, աղաղակեց Պասալքի, վրան ունեցած եօթնհարուածեանը վախստանկին եաւէն չակելով, կեցի՛ր որ քեզ բարի ճանապարհորդութիւն մաղթեմ։

Ատրճանակն արձակուեցաւ, սակայն դնդակը Սաֆիէրին չը հասաւ, այլ կաղամախի մը տերևոց մէջ կորսուեցաւ, որովհետև սաստիկ արագութեամբ Ռըլիէֆ իւր բաղկաւ ատրճանակը վերցուց։ Թիւրքմէնը խթեց ուղտերն և քրքիջ մ՚արձակելով բոլորովին հեռացաւ անոնցմէ, այնպէս որ ա՛լ հրացան չէր հասներ։

— Ի՞նչ ըրիք, դոչեց Պասալքի հայհոյելով, ի՞նչ անպիտանութիւն էր ըրածնիդ։

Ռըլիէֆ երկու ուղտերը ցցուց՝ որ հեռուէն ամպի պէս կ՚երևէին։

—Նայեցէ՛ք, տեսէ՛ք թէ ո՞րչափ պզտիկ են ուղտերը, մինչդեռ ընդհակառակն Ռուսաստան ո՞րչափ մեծ է. ի՞նչ կրնան ընել մեզի։

— Ատիկա պատճառ չէ. յանդգնութիւնն պատժոյ կ՚արժանանայր. . . . տեսա՞ք թէ՝ Սաֆիէր ձեռասակար թշնամի մ՚ է եղեր։

Ռըլիէֆ մտախորհ էր։

— Ո՛չ, ըսաւ, այսպէս ըլլալն աւելի լաւ էր։ Ա՛յս

առաւօտ ակամայ ղինքը թշնամանեցի, ղինքը սպաննե-
լը վատութիւն պիտի համարուէր, բայց և այնպէս
դարձեալ կրնամ ինքզինքս պաշտպանել։

Ատրճանակին ձայնն հնչած տեղն՝ քանի մը ղի-
նուոր եկան և հետաքրքրութեամբ պաշտօնականներուն
շուրջը կեցան։

— Ջօրապետն ատրճանակ արձակեց, ըսաւ իրենց
Ռըլիէֆ։

Եւ իր բարեկամին ձեռքէն բռնելով՝

— երթա՞նք, ալ քաղաք մտնելու ժամանակն է. ես
ալ ձեզ հետ գալ կ՚ուզեմ. մեր ընկերներէն քանի մը
հոգի ալ կանչենք և թուղթ խաղանք եթէ կ՚ուզէք։

Առաւօտեան ժամը հինգն էր. չորս մոմ սպառած
էին պղնձէ աշտանակներու մէջ և իրենց աղօտ լոյսը
զինուորանոցի հին ու ճեղքեալ սիւնակները կը լուսա-
ւորէր, վրանին տխուր և միանգամայն այլանդակ շուքեր
նկարելով։ Դրասեղանին վրայ, աշտանակներուն մօտ
խւղայինն և պատռած խաղու թուղթեր դրուած էին։

Երկու մարդ նստած էին այս դրասեղանին մօտ,
Ռըլիէֆ և Պասալըքի. Ռըլիէֆ պանդխտի գորշագոյն,
կարմիր և մանուշակագոյն արժէթուղթեր ծրարելու
զբաղած էր։ Պասալըքի գլուխը ձեռքերուն վրայ յե-
ցուցած, հետաքրքիր աչքով իւր ընկերին շարժմունք-
ները կը դիտէր։

— Ի՛նչ յաջողութիւն, ըսաւ Ռըլիէֆ արժէթղթոց
վերջին ծրար մ՚ալ կապելով, չհաշծս քառասուն հա-
զար րուպլի է։

— Վեց հազարէն աւելի րուպլի ալ ես քեզի պարտք
ունիմ. պատասխանեց Պասալըքի սուր ձայնով։

— Շատ կորնցուցիք, այնպէս չէ՞։

— Երեսուն և եօթն հազար րուպլի։

— Հաւանական է որ չկրնաք վճարել վաղ առաւօտ։

— Ստակ կը գտնեմ։

— Կամ պիտի չկրնաք գտնել և պիտի անպա-

տուիք, որովհետև դիտէք՝ թէ հոս, այսպիսի գիւղ
տեղեր խաղու պարտքերուն հետ կատակ ընել չ՚ըլլար։

— Ո՛հ, ինչ և իցէ. որչափ ալ ըլլայ պիտի վճարեմ
հոգ չեմ ըներ։

— Եթէ վճարելիք դուարիդ երկու երրորդ մասը
չունիք, ուրկէ՞ց պիտի գտնէք այս մեր նոր դրաւած
երկիրներուն մէջ։

Պասալըքի դլուխը ծռեց։

Ռըլիէֆ անոր պանքայի արժէթղթեր երկնցուց։

— Ա՛ռ ասոնք։

Եւ որովհետև պաշտօնակալը չուարելով արժէթուղ-
թերն առնելու կը դանդաղեր։

— Առէ՛ք կ՚ըսեմ, ըսաւ Ռըլիէֆ։

— Ո՛հ չնորհակալ եմ, ինչ յաւիտենական երջանկու-
թիւն . . . . . .

— Շատ եղաւ ըսածդ, չնորհակալ եմ ըսիք, կը
բաւէ այս։

— Սակայն, հաւատացէ՛ք, սիրելի բարեկամս, թէ
բոլոր կեանքս . . . . .

— Բաւական է կ՚ըսեմ. . . . ։

— Ա՛ռ ձեզ ունեցած երախտագիտութիւնս. . . .

— Ալ շատ ըսիք, օր մը կ՚իմացնեմ ձեզի այս վո-
քըր ծառայութիւնն ընելուս բուն պատճառը։

Պասալըքի կատարելապէս ուրախացած լռեցաւ
կըսաւ։

— Ցեանենք, Ռըլիէ՛ֆ, պիտ մի՛ չուարեցուներք ձեր
սովորական ակնպատականութիւնով՝ որ քիչ մը կատակի
կըմօտենայ։

— Այլ ևս մի՛ խօսիք ասոր վրայ, կ՚ուզեմ որ դուք
ալ ինձ փոքր ծառայութիւն մ՚ընէք։ Գլուխս քիչ մը
ծանր է և պառկել չեմ ուզեր. հիմայ առաւօտ կ՚ըլ-
լայ և մէկ ժամէն վերջը քաղաքին դռները կըբացուին.
անմիջապէս ինձ համար բանալ տուէք դռներն և ձի
մը ու հրացան մը փոխ տուէք, որովհետև դաշտին մէջ

քիչ մը չրջագայիլ կ'ուզեմ։

Պասալըքի դրան կողմը վազեց և ղինուորին միսյն հրաման առաւ։

— Ուրեմն ամենևին չէք ընանար, հարցուց Ռըլֆին։

— Խիստ քիչ։

Երկու բարեկամները քանի մը վայրկեան ալ իրարու հետ խօսեցան. վերջը ղինուորն եկաւ և իմաց տուաւ թէ ամէն բան պատրաստ է։

Պասալըքի ղինուորաց խրճթին սեմին վրայ դալով սարահարթ հողակոյտին վրայ եղող պահանորդաց ըսաւ.

— Թողէ՛ք որ Նորին բարձրութեան օդնական — զօրապետը դառներէն դուրս ելնէ։

Իրենք ալ իրարու կրկնեցին.

— Թողէ՛ք որ անցնի։

ԳԼՈՒԽ Գ.

ԳԱՅԼԵՐԸ

Սմրղանի դէպ 'ի Պուխարա տանող ճամբուն երբքը դանուած անտառէն մէկմէկու հետէ հինգ-հայլ դուրս կ'ելնէին երիչտա քայլերով։ Անտառը՝ վարուն ճամբէն որոշող միջոցէն շատ մը կ'անցնին, վայրկեան մը հովտին մէջ կ'անհետանան, և մէկմէկու հետէ ճամբուն վրայ բարձրացած դառ 'ի վայրէն դէպ 'ի վեր կ'ելնեն։ Հոն կը դադրին, և դորշագոյն մարմիններն բլրոյն աւազի դունոյն հետ միանալով՝ անկարելի կ'ըլլայ իրարմէ զանազանել։ Ձիրանաւոր ոտքերնին վառելով՝ դրեթէ երկու հաւասար զուգահեռական գծեր կը կազմեն։ Խարտեաշ մազերնին կը սարսռի, և ցցուած ականջնին ջղաձգական շարժումներով կը թրթռուին։ Ակռայնին կը կրճտան զայրագին և սոված, և իրենց լուսածին բիբերը չարունակ ճամբուն վրայ կը բեւեռուին որ անդադար կոր գծով օձապտոյտ ձեւ մը կ'առնու կաղամախեաց փոքրիկ մէկ անտառէն դուրս երևիննալով։ Խիստ հեռուն ճամբուն վրայ երկու սեւ կէտեր արագութեամբ կը շարժին։

Այս ճամբան անապատին սահմանն է։ Սմրղանի թիկունքէն բարձրացած Շապրնադա լեռը՝ տակաւին հիւսիսոյ կողմն կ'ընայ նշմարուիլ, իսկ աջ կողմէն աչաց տեսութեան տակ չպարունակուող լայնա-

ծաւալ անապատները կըտեսնուին ։ Եղեդունք աստեղաց տակը լոյսէն փալփլելով կը շարժին , Ջերաֆչան դեռն աննշմարելի կերպով խոտոց մէջէն կըհոսի , և ինքզինքը կը յայտնէ սուր և քաղցրաձայն կարկաչով մը ։ Ձախ կողմէն՝ լոր , անեղը և մութ անտառը՝ կապարեայ մեծ ամպի մը նման՝ ղինքը շրջապատող վայրաց դեղնադոյն դծին մէջէն սևաթոյր դունով կըբարձրանայ ։ Հարաւոյ կողմէն՝ կապուտակ երկինքն երկրագնդիս հետ եղերած՝ թուխ դունով կ'երևի . եղեդանց մութ դեղին գոյնն ալ՝ կարծես թէ հորիզընին վրայ բաժանման դիծ մը կը ձևացնէ դադաթնակէտ եղող կապուտակ կամարին , և հեռուէն տեսնուած թուխ երկինքի մէջ տեղը ։ Այս մութ երկինքն , այս եղեդներն՝ որ մարդու ձեռօք անկուած ցիցերու կը նմանին , անապատին մուտքը կ'որոշեն ։

Այն սև կէտերը կը մեծնան , երկու ուղտեր դէպ 'ի անապատը կ'ուղղին ։ Դայլոց մին դադտագողի ճամբուն միւս կողմն անցնելով աւազին վրայ կը պառկի ղառ 'ի վայրին հակառակ կողմը . Ուղտերն արագութեամբ յառաջ կ'ուղղին . մեկուն վրայ Հաճի Սաֆէր՝ որ ղէմինէ բազկացք մէջէն առած էր , միւսին վրայ Թաթար ուղտապանն՝ որ Սաֆէրի հեծած ուղտին սանձէն կը քաշէր ։

Յանկարծ ուղտերը սարսուեցան , և քանիցս կանաչ ըրձունքներ ժայթքեցին ։ Ալ կողմի դայլն ոռնի եղաւ և իւր չորս ընկերներն ալ իւր ետևէն շարուելով՝ պոչերնին բարձրացուցին , լեզուներնին դուրս երկընցնելով՝ փախչող ուղտերուն ետևէն պնդեցան լուռ և արագ կերպով ։ Բլրին ետևի կողմը ճամբուն վրայ կաւակերտ և աւազին մէջ կորսուած խրճիթ մը կար ։ Ծերուկ Սարթի մը անոր մէջ թէյ և կարկանդակ կը ծախեր անցնող դարձող կարաւաններուն ։ Ան դիշերը Սարթին իւր խրճթին առջևն էր . տեսաւ որ այն հինդ չար և վնասակար որսորդք չան պէս այս լուռ և անձայն հեծե-

լոց ետևէն կը վազեն ։ Նոյնպէս նշմարեց որ ուղտապանին սրածայր գլխարկն օդին մէջ կը ծածանի իւր ուղտին ընդոստ ընթացքին պատճառաւ ։ Տեսաւ այն կըտաւէ պարկը՝ որ ղէմինէ ծածկելով՝ ղինքը դիակի մը կը նմանցնէր ։ Այս ամէնն իրեն ցնորք թուեցաւ անբաւ միայնութեան մէջ , և դետինը թաքնելով չուտ մը խրճիթը մտաւ ։

— Շէյխդ , ըսաւ բարձրաձայն , Աստուած անիծէ դինքը ։

Սարթիին ձայնէն ուղտապանն արթննալով՝ հետաքրքրութեամբ չուրջը նայեցաւ ։ Դայլերն իւր մտէն կ'երթային , և ուղտերու սրբակներէն բարձրացած թանձրամած փոշւոյն մէջ աչքերնին կրակարանէն վեր ելած կայծերու պէս կը վայլէին ։

— Լ՚հէ՛ , աղաղակեց ուղտապանը մատով Սաֆէրը խթելով և գայլերը ցոյց տալով ։

— Թո՛ղ վազեն , պատասխանեց Սաֆէր , պիտի չհամարձակին վրայնիս յարձակելու ։

Այսպիսի միայնութեանց մէջ մարդկային ձայնը խիստ անսովոր արձագանգներ ունի , ուր նոյն ձայնը խիստ քիչ անդամ կըլսուի , և կարծես թէ լսուածը վայրենի և անծանօթ դաղանի մ՚ աղաղակն է ու չէ թէ մարդու ձայն ։

Գայլերը հինդն ալ միատեղ կանկ առին , երկար չունչ մը քաշեցին , ականջնին անկած չուրջերնին թափանցիկ հայեցուած մ՚արձակելէ յետոյ՝ դարձեալ ըսկսան իրենց լուռ և սրարշաւ ընթացքը չարունակել ուղտերուն ետևէն՝ որ չարունակ կը փախչէին ։ Եղեդանց դեղին դծին վրայ եղած սև դիծը տակաւ առ տակաւ կ'անհետևութեանմբ և երկու դիծերը մի օրինակ դունոյ ատուերին հետ կը չփոթուէին ։ Ջերաֆչանի ձայնն որոշակի կը լսուէր , և նոյն գետոյն վրայ ձգուած հնդկեղեդէ կամուրջ մը որ պղտոտային անապատէն կը բաժնէր , կարծես թէ բարձր և խոչոր ցիցերու վրայ

հաստատուած էր։ Փախստականը այս կամուրջը կը տեսնէին, որով կընային վրկուիլ. գայլերն ալ տեսան զայն, և տխրագին ձայնով ոռնալով՝ յանկարծ ուղտերուն առջևը ցատկեցին։

— Է՜հ, ըսաւ ուղտապանն արհամարհանօք, վատերն անապատին մէջ կեանքերնին վտանգի մէջ դնելու պիտի չը համարձակին, և կը լսե՞ք ինչպէս կատաղութենէ կ'ոռնան։

Իսկոյն եղեգները ծռեցան, իբր թէ երկրի տակէ փչող սաստկաշունչ հովի մ'առջև. Ջերաֆշանէն եկած թեթեւ ձայնը մի եւ նոյն տեղի մէջ քանի մ' անդամ քանի մը տեղեր լսուեցաւ։ Ուղտերն սկսան դողալ և ծունկերնին ծռեցին, իբր թէ ծունկ չոքելու համար։ Գայլերն աներևոյթ եղան, ադիւնին իրենց սրունքից մէջ, ականջնին դէպ 'ի թիկունս ծռած, ճամբուն վրայ կը սողային այն տեղն՝ ուրկէց յառաջ ցատկելով անցած էին։

— Աւա՜հ. . . վա՜գր մը, աղաղակեց ուղտապանը։

Նոյն տեղն երկու անգամ սոսափող եղեղանց մէջ դեղին և խարտեաշ բան մ'երևցաւ. անմիջապէս ահեկուռ ձայնի մ' արձագանքը լսուեցաւ, օրհասական աղաղակ, խորտակեալ ոսկրներու ճարճատիւն։ Երկրորդ անգամ նուաղեալ ցատգին աղաղակ մը լսուեցաւ, վերջապէս զարհուրելի մռնչիւն մը՝ որ կատուի մլաւիւն կը նմանէր, ինչպէս որոտման ձայնը՝ ծխնելուղի չոր փայտի ճարճատման։

Անկա հազիւ թէ մէկ մանրերկրորդ տևեց. Սաֆիէր ուժգին հարուած մը զգաց, ևր ուղտը ցատգին հեծեծանք մ'արձակեց, յետս խրտչեցաւ, և հողմոյ արագութեամբ ճամբէն ետ քաշուեցաւ։

Սաֆիէր մարդկային զգացմամբ յուզեալ ուղտը կասեցուներ. բայց տեսաւ որ կապուած էր. թաթարն ինկած տեղը սանձը կտրած և ուղտին ռնգոց մէկ մասն ալ խլած էր, որ ցաւէն և վախէն խենդեցած այլ ևս Հաճիին ձեռաց չէր հնազանդեր։

Վագրն ուժգնակի կըմռնչէր, պղտիկ ոտուր ձայներ և սուր հառաչանքներ արձակելով, որ տակաւ առ տակաւ նուաղելով վերջը բոլորովին դադրեցան։

Սաֆիէր դլուխը դարձուց. հինգ գայլերն որպէս թէ երկրի տակէն դուրս ելած իրենց լուռ և յամառ որսորդութեան սկսան։ Հաճին գայլերէն մէկուն հրացայտ բիբերուն շեշտակի հայեցուած մը կշռեց, գայլը ոռնաց և իրեն եռևէն միւսներն ալ սկսան ուրախական և վայրենի ձայներ արձակել։ Կը կարծէին՝ թէ իրենք ալ վագրին պէս որսերնին պիտի կրնան ճարել։

Սաֆիէր խոհուեցաւ. Էմինէ՝որ այս ամէն դէպքերուն ականատես էր, առանց ճիկ մը հանելու և բառ մը արտասանելու աչքերը վերցուց։

— Հանը՛մ, ըսաւ Սաֆիէր, այս անիծեալ կենդանին խենդեցաւ, ալ չեմ կրնար կառավարել և կը վախնամ որ կորսունք։

— Ճաւուած մեծ է, պատասխանեց կինը։

Ընակատանեքն հետզհետէ աներևութացան, հորիզոնին վրայ սահման որոշող ցիցերու նման երկու կազմախի ծառեր երևցան, անոնցմէ վերջն ուրիշ ծառեր, և աւելի հեռուն՝ Սմրղանտի ոսկեայ պատերը։

— Ընդիծեալն զմեզ կրկին Սմրղանտ կը տանի, աղաղակեց Սաֆիէր, դարձեալ անհաւատներուն ձեռքը պիտի իյնանք։

— Ո՛հ, ո՛չ, պատասխանեց Էմինէ գողտրիկ և աղերսական ձայնով։ Երէկ առաւօտ, դու իմ հօրս ծառայ ըլլալով դիս հարուածեցիր և աչքերդ արտասուօք լի էին։ Պիտի չմոռնաս որ կրկին անոնց ձեռքն իյնամ, և դիս պիտի սպաննես, այնպէս չէ՞։

— Ա՛յո՛, Հանըմ,

Սաֆիէր գօսին խառնեց, կորաձև երախակալով դաշոյն մը հանեց պատեանէն և գոյն բերանն առաւ։ Էմինէ մթութեան մէջ չողացող պողպատիկը տեսնելով՝

ախրութեամբ ժպտեցաւ ։

— Ձեռքդ չդողայ , Սաֆիէ ։

— Ո՛չ ։

Սմրղանտ աւելի տեսանելի կ՚ըլլար ։ Սաֆիէ չորս դմբեթաձև հոյակապ շէնքերն և քաղաքին չինուածոց անբաւ բազմութիւնն արդէն կրնար զանազանել ։ Խարուկի մը պզտիկ բոյն արևելակողմեան հորիզոնը դոյնզդոյն զարդարեց և Սմրղանտէն տեսնուած բոլոր առարկաները վարդագոյն եղան ։ Յանկարծակի առաջին դայլը կանդնեցաւ և հիանալի ոռմամբ ուղտին դաւակին վրայ ցատկեց . իւր սուր ակռայներն ուղտին մսին մէջ ընկղմեց , սակայն անմիջապէս աւազին վրայ ինկաւ , ոչնայարը ջաղջախուած , աքացի հարուած մ՚ընդունելով ։ Միւս դայլերը հոտոտելին դինքն և իմանալով որ տակաւին չունչ կ՚առնոյր՝ իրենց ընթացքը շարունակեցին ։

Գրեթէ ցաւն ուղտին թև տուաւ և օդը կը պատռէր ։ Քաղաքը միայն հարիւր քայլ հեռու էր , և տակաւ առ տակաւ ամրոցին խոր խրամներուն կը մօտենային ։ Սաֆիէ խելքը գլուխը ժողովեց . . . ։ Գիմացը մա՛հ . . . ։ Ետքերուն ներքև մա՛հ . . . ։ Դաշոյնը բերնէն դուրս հանեց ։

Հրացանի հարուած մ՚արձակուեցաւ . դայլերը ցրտուրաց վախան իրենցմէ մին դետնին վրայ թողլով ։ Ուրիշ հարուած մ՚ալ յաջորդեց առաջինին , ուղտը սրտնանքէն վիրաւորուած դանդաղ կերպով դետին ինկաւ ։ Հաճի Սաֆիէ և իրեն հետ եղող կինն իրարմէ բաժնուելով՝ հեռուն դետին փռուեցան , մէկը ճամբուն այ կողմն և միւսն ալ ձախ կողմը ։

Կաղամախի ծառոց մէջ Ռուս պաշտօնակալ մը սև ձի հեծած՝ իւր լսնատիպ հրացանն արագութեամբ կը լեցնէր ։ Սաֆիէ ոռքի վրայ եղած և դաշոյնն՚ի ձեռին՝ Լմինէին կը մօտենայր ։

Պաշտօնակալը հրացանը Սաֆիէին վրայ չակելով ,

— կեցի՛ր , պոռաց , ապա թէ ոչ՝ մեռար ,

Ընշալոյն առարկայները լուսաւորելու սկսած էր , Հաճի ճանչցաւ ղՌիվիէֆ ։

— Ա՜հ , դա՛ձեալ դու ես , ըսաւ Հաճի Սաֆիէ ։ լա՛ւ , դարձդ լինցո՛ւր և ապաննէ գիս ։

Ռըլիէֆ հրացանն իւր մեհատղին փոկին մէջ դնելով ,

— կը խաբուիս , պատասխանեց , կեանքդ քեզմէ վերցունել չեմ ուզեր . մի՛ կարծեր ալ թէ դքեզ թշնամանած եմ ։ երէկ իրիկուն քեզի թէ՛ կեանք և թէ՛ ազատութիւն տուի , նոյնպէս հիմայ ալ . մեկնէ՛ ։

Հաճի արհամարհօք ժպտեցաւ ։

— Բոլոր քուկիններուդ պէս խաբեբայ և անզգամ ։ Յիմարութիւն կ՚ըլլայ ըրածս եթէ ոռքով անապատին մէջ կեանքս վտանգելու յանգդնիմ . և դիտես որ եթէ քաղաքը մտնեմ՝ անմիջապէս դիս պիտի բռնեն ։ Խնայէ՛ ուրեմն չողոքորթի խօսքերուդ ,

— Հաճի . . . ։

— Պատրաստ եմ մեռնելու . բայց այս կինն ալ կեն դանի պիտի չտեսնէք ։

Սաֆիէ դաշոյնը վերցուցած Լմինէին վրայ յարձակեցաւ . Սակայն Ռըլիէֆ անոր նպատակը նախատեսելով իւր ձին մտրակեց՝ որ լանջքովը երկրորդ անգամ թիւրըմկնը դետին ձգեց ։ Երկաթը հազիւ թէ հեռի էր երկտասարդուհւոյն կուրծքէն՝ որ քօղը մէկ կողմ ածած էր հարուածն ընդունելու համար ։ Սաֆիէ կատաղութենէն վրիժրալով , երկրորդ անգամ ոռքի վրայ եղաւ մանրերկրորդ մը վերջը . Ռըլիէֆ ձիէն դետինը ցատկած էր ։

— Իրաւո՞նք ունիս , ըսաւ զօրապետը , հրացանը հետին ձգելով ։

Եւ երբ Հաճի դաշոյնը չողացունելով՝ իր առջև կեցաւ , Ռըլիէֆ ձիոյն սանձն իրեն երկնցուց ըսելով ·

— Անասուիկ ձիս , ազա՛տ եղի՛ր ։

Սաֆիէին ձեռքէն դաշոյնը աւազին մէջ ինկաւ ։

Ա.յս վերհանձնութիւնը՝ թիւրքմէնին վայրենի բնութեան վրայ այնչափ ազդեցութիւն ըրաւ՝ որ քանի մը վայրկեան բերանաբաց անշարժ մնաց. սակայն այս ազդեցութիւնն երկայն չտեւեց։

— Կարելի չէ որ խաբուիմ, մտմնջաց, որովհետեւ լսիատ ուշ է. ինձ ըրած անարդանքդ շատ մեծ է, և հիմակուան ցոյցած մարդասիրութիւնդ զայն ինձ մոռցընել չտար։

—Ինչպէս որ կ'ուզես։

— Ինձ խնայելով, հայրենեացդ թշնամւոյն խնայած կ'ըլլաս, որովհետեւ թշնամի եմ և պիտի ըլլամ միշտ։ Միա դի'ր ինձ, ասուա'ւս, դիս սպաննէ՛. այս երկու քիս հաւատալ ալ աղեկ չէ. Լիվրին աղջիկը վրկէ՛, և եթէ ես մեռնիմ ալ կը նեղեմ քեզի։

— Լ'ո՛ չ, առանց քու օգնութեանդ կրնա՞մ վրկել զինքը։ Ձիս կրնաս առնել. հայրենեացս քեզի պէս մեծ զուարկ մը լո՞նչ կրնայ ընել. օ՛ն ի բաց դնա՛, ալ մի՛ խօսիր, որովհետեւ քեզի մտիկ ընելու ժամանակ չունիմ։

Զօրապետին ձայնը Յաֆէր զարհուրեցուց, որ տակաւին կզդանդաղէր. այն առեն Լիվինէ յառաջ գալով և ձեռքը Ռուս պաշտօնակալին ուսին վրայ դնելով,

— Ի՞նչ է անունդ, հարցուց, իւր փափուկ ձայնով։

Ռըլիէֆ վրան նայեցաւ զայրացած.

—Սարդիս Ռըլիէֆ՛, ըսաւ ծիծաղելով։

Լիվինէ քօղին ներքեւէն սարդիոնէ չքաղրամ մը հանեց, որուն վրայ արաբական տառերով տուն մը գըրուած էր Դուբանէն,

— Այսիկա իմ յիշատակիս համար պահէ՛, ըսաւ Լիվինէ։ Ա.յս հո՞գիւը հօրս Լը—Ռամըրա Լիվիրնն է, Ա.ստուած դիտէ թէ բաղդը քեզի ի՞նչ կը պատրաստէ, և այս հո՞գիւը թերեւս օր մը դքեզ փրկէ՛, ինչ պէս դու ինձ այսօր կը փրկես։

Լիվինէ ձեռքն անոր երկնցնելով,

— Մեծապէս շնորհակալ եմ քեզնէ որ ինձ ազատու-

թիւն կ'ուտաս՝ եղբա՛յր, ըսաւ։

Ռըլիէֆ Լիվինէին ձեռքին վրայ խոնարհելով,

— Տիկի՛ն, ըսաւ, ձեր յիշատակն երբէք պիտի չըմոռնամ. աճապարեցէ՛ք, որովհետեւ հիմայ դռները պիտի բացուին։

Երիտասարդուհին Յաֆէրին ստիպողական նշան մ' ըրաւ, և Հաճի լուռ ու մխուր ձին հեծաւ. Ռըլիէֆ Լիվինէին հեծնալուն օգնելով, վայելուչ քաղաքավարական շարժմամբ ձեռքը դլխարկին տարաւ, գաւազանով ալ ձիոյն գաւակին զարնելուն պէս սրարշաւ մեկնեցան։

Նոյն պահուն Յաֆէր ինք ալ ականջ կասկ ձեռքը ճակատին և կուրծքին տարած էր, որովհետեւ զինքն ողջունելու ձևն այս էր։

— Բոլոր այս Հնդկաստանցիք, Պարթիք, Լօղպէքք, Քիրչաքք կամ Թիւրքմէնք անբան և անասուն են, ըսաւ Ռըլիէֆ ուսերը թօթուելով։

ԳԼՈՒԽ Դ·

Ա.ՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ

Ընաւօտեան Թմբուկները զարնուելով զօրքերն արթընցան . պահապանները չարժուն կամուրջին վանդակը վերցուցին և Սմբղանայի դռները բացուեցան ։

Ռըլիէֆ կամարին տակէն անցած ատեն՝ հայեցուածը փողոցին վրայ անկաց , որ ծանր կերպով բեռնաւորուած ուղտերու երկայն շարքով մը գոցուած էր . իրենց ոտքերուն ներքև Սարթիներն անկրթութեամբ պառկած կը ծխէին . այս կարաւանը խոքանաէն Պուխարա կ'երթար , և իւր ճամբան չարունակելու համար քաղաքին դրանց բացուելուն կ'սպասէր ։

Ռըլիէֆ արմուկներովն ու դաւաղանով ուղտերուն և Սարթիներուն մէջէն ճամբայ բացաւ , և առաւօտեան ժամն եօթնին բնակարանը ՝մտաւ · Լուացուեցաւ ու փոխուելէն վերջը ՝ դրասեղանին մօտ նստաւ Ռուսաստան դիր դրելու նպատակաւ · Ջօրապետն ամբողջ երկու ժամու չափ մի եւ նոյն տեղը մնաց , դըլուխն երկու ձեռաց մէջ դրած և առջևն ալ թերթի մը սպիտակ թուղթ · Բանբերը զօրականին դուռը բանալը զօրապետը սարսեցուց , որ երբ հասը դարձաւ՝ դպաց որ արտասուաց երկու կաթիլներ իւր այտերը կը

թրջեին , ուստի խոհոյն ձեռաց հակառակ կողմովը աչքերը սրբեց ։

— Պասալըքի զօրապե՛տը , ըսաւ բանբերը ։

Պասալըքի զուարթ դիմօք զօրականին հասը կերցած էր ։

— Ստակնիպ կը բերեմ , սիրելի՛ս , ըսաւ Պասալըքի ։ Բնակարանս մնած ատեն ստակով հանդերձ նամակ մը դասյ · խիստ յարմար ժամանակ դուսրը ձեռքըս անցաւ , անմիջապէս հոս եկայ · բայց ասկա քեզի երախտապարտ ըլլալէս չարդելըր զիս · դիտէք Ռըլիէֆ , որ ձեր անձնուէր բարեկամն եմ ։

— Է՛հ , սիրելի՛ս , երկայն մի՛ ընէք , այս ստակը ձեզի տալով մեծ մի չէի կրեր · վատահ էի որ զայն ինձ պիտի վերադարձնէիք , և եթէ դէպքը բերէ և օր մը ձեղնէ ստակ ուզեմ , ամենևին պիտի չը մերժէք ։

— Հանկարծ , ըսաւ Պասալըքի ծիծաղելով · կատարեալ Սկեպտիկեան մ՚ էք դուք , ոչ մէնչ և ոչ ըսք կը սիրէք ։

— Թերևս ճշմարիտ է ըսածնիդ · բայց մէնչ որ ալ ըլլայ , երկուքիս միկզմիկու ըրած ծառայութեանց մէջ՝ ձերն աւելի մեծ է ։

— Մէթէ ես ծառայութիւն մ՚ըրի՞ ։

— Այո՛ · ձեր ձին ինձ փոխ տուիք , զոր ես ալ ասկէց վախչիլ ուզող մեկուն տուի ։

— Ի՞նչպէս , ո՞վ ։

— Ջեր ձին տուի , առանց ձեղնէ հրաման խնդրելու · կրառնէք՝ որ ձեր ինձ ըրած ծառայութեան փոխարէնը հատուցանել կ'ուզեմ։ Ո՞րչափ պարտք ունիմ ձեզի ։

— Ոչ մէնչ , սիրելի՛ս ։

— Ես այդպիսի խօսք չեմ հասկնար ։

— Շատ լաւ , տեղը ձեր ձիերէն մեկը կ'առնեմ ։

— Լաւ , ընտրեցէ՛ք ։

— Բացատրեցէ՛ք ինձ , ինչո՞ւ . . . ։

— Ժամանակ անցնելէն վերջը , երբոր վտիտրիկը

ճայթի ։

— Ինչ՞ փոթորիկ ։

Նոյն պահուն բանբերները զօրականը սենեկին դուռը կէս բացաւ ։

— Սպարապետին բանբերները մին եկած է. Ձեր Աչնուխթիւնը պալատը կ՚ուղուի ։

— Լա՛ւ, կ՚երթամ։

— Ձհաւասիկ սկսան փոյլակները, ըսաւ ծիծաղելով ։

Բաւական լուացած էր՝ երբ երկու կին առանց ոտնաձայն հանելու՝ տիկին կոմնուհի Մարթա Նիքօլաի-էվնա Մօլօթօֆին ննջարանը մտան. յարդանօք քնացողին ամէն կողմէ չրջապատող վարդադոյն բնհեղեայ վարագոյրը խառնեցին ։ Կոմնուհին աչքերը բացաւ և գրեթէ անմիջապէս փակելով,

— Ի՞նչ կուզէք, հարցուց ։

— Ձամն լինն է, տիկին կոմնուհի, պատասխանեց կիներէն մին ։

— Լա՛ւ, պէտք է որ եկեմ։

Առաջին սենեկապետ կինը յախճապակեայ կանթի մը մէջ Լիւպէնի ջուր թափեց և թափանցիկ անուշահոտ թիւն մը տարածուեցաւ սենեկին մէջ. Մարթա աչքերը բացաւ. մի և նոյն կինը դղրոյճէն դեղեցիկ և ըպիտակ վարշամակ մը հանելով՝ բազկաց մէջ տարածեց ։ Երկրորդ սենեկապետ կինը ծունկի գալով իր տիրուհւոյն ոտից ամաններն առաւ և այնպէս ծունկի վրայ եկած անկողնոյն մօտեցաւ ։ Կոմնուհին աչքերովը իր պատիկ չարժմունքները կը դիտէր. վերջն ա-հեղ ձայնով կանչեց. — Ձմինէ՛ ։

— Այս առաւօտ Ձմինէ չը պետանք, պատասխանեց առաջին սենեկապետ կինը ։

— Ցակաւի՛ն, աղաղակեց տիկինը, անկողնոյն մէջ նստելով. բայց ասիկա ապստամբութիւն է. կանչեցէք զինքը ։

— Ձմինէ երեցած չէ յորմէ հետէ Ձեր Բարձրութիւնը երեկ առաւօտ սրահը կանչել տուաւ ։

— Այս դիշեր պալատը չը պահակեցա՞ ։

— Ո՛չ տիկին ։ Կը կարծենք՝ թէ տիկնոջ հրամանն էր որ . . . . ։

— Ո՞վ քեզի կարծիք ընելու ներեց . . . . Ա՛հ, հոս չէ . . . . ։ Ա՛հ, Ա՛հ . . . ։

Ար համարհոտ ժպտուով մը չրթունքները խածաւ ։

— Զդեռանները հագնելու համար ինձ կրնայ օգնել Մարիամ, ըսաւ տիկինը, ծունկի եկած աղախնոյն ։ Գացէ՛ք կատարինէ՛, և ըսէք պահպանութեան վոխ—պաշտօնակալին որ դահլիճս պայ. հետը խօսելիքներ ունիմ։

Շտապաւ լսթերը հագաւ առանց իր անձին սովորական խնամքները տանելու, և հինգ վայրկեան անցած չէր՝ երբ իր դահլիճը մտաւ, ուր վոխ—պաշտնակալն արդէն իրեն կ՚սպասէր ։ Ձինուորականն ոչ բան մը սեռած և ոչ բան մը դիտցած կամ լսած էր ։ Պահապան զօրաց քով մարդ դրկեցին Ձմինէին վրայ լուր մ՚առնելու համար ։ Պատասխանը չուշացաւ. Նորին Բարձրութեան խորհրդարանէն եկած հրամանագրոյն համեմատ Ձմինէն դանած էին. վերջն իրեն հետ ընկերացած մարդուն յանձնած էին, որովհետև հրամանագրոյն մէջ գրուած չէր թէ Ձմինէն իրեւ գերի և արդելափակ համարուիլ պէտք է ։

— Իրեն հետ ընկերացած մարդո՞ն, աղաղակեց Մարթա. չատով Ռըլիեֆի զօրապետը հոս կանչեցէք ։

Փոխ — պաշտօնակալը մարդ դրկեց զօրապետը կանչելու համար. նոյն միջոցին պալատը տեղեկութիւն կը-տնէին, որովհետև կոմնուհին հրամայած էր, ինչ կերպով ալ որ ըլլայ, դանել և իրեն բերել իր թիւրքմէնուհի գերին ։ Իւրաքանչիւր վայրկեան սենեկապետ կիներէն մէկուն կը հրամայէր երթալ լուր բերել, և իւրաքանչիւր ժխտական պատասխանութեան կրթինամանները և կ՚անիծեր գթիւրքմէնուհին, և խրոխտ ու հպարտ

քայլերով դահլիճին մէջ կ'երթևեկէր։

Կէս ժամ ապարդիւն խոյզերը ըլլալէ վերջը կռմռուհոյն իմացուցին թէ Լիվինէ անդառնալի է։

Այս լուրն իրեն այնչափ ասստիկ և ցնորական կաղաղութիւն մը պատճառեց՝ մինչև ազախիններուն ղալուհուած դահլիճը մտնելու չէին համարձակեր։

Երբ փոխ — պաշտօնակալը զօրապետին դալն իմացընելու եկաւ, զարհուրելի կնոջ դիմացն ելլելու վախցաւ։ փոխ — պաշտօնակալին առաջին անդամ ըլած խօսքերուն, Մարթա դահլիճը սրահէն դառնալ վարդերին կողմը վազեց և յանկարծակի վերցուց դայն։ Ուլրիհ որպէս թէ ուշադրութեամբ կայսեր պատկերը քննելու կ'զբաղէր. քիչ մը մնխրադոյն էր, բայց ցուրտ և հեղգնական ժպիտ մը կար իւր շրթանց վրայ։ Կնոջ դէմքին ձայնն առնուլ, դլուխը վերցուց և շատ մը խորին մեծարանօք խոնարհելեալ զայն ողջունելու. կռմռուհին առանց ամենադոյն կերպով դլուխը ծռելու և անոր ողջունին պատասխանելու, առանց բարի եկիր ը՛ ըսելու՝ հպարտութեամբ հարցուց.

— Հրամաններդ կատարուա՞ծ են։

— Ի՞նչ հրաման։

Մարթա իւր ամենէն ահռելի ձայնով ըսաւ.

— Գաւազանի յիսուն հարուած տուուեցա՞ւ իմ դերեզմանին։

— կարծեմ թէ այդ անզթութիւնը կատարուած է։

— Ի՞նչպէս։

— Ո՛ենթադրեմ թէ այդ թշուառ աղջիկը հարուածեցին։

— Ո՛ենթադրե՞ք, աղաղակեց Մարթա բարկացած. Ո՛ենթադրե՞ք, Ա՜հ, խե՞նդ է՞ք,

Ուլրիհ իւր հանդարտ և հեղգնական հայեցուածով դիտեց։

— Գիտեմ որ հրամանատարը ստորադրեցի։ . . . . Երբե՞ք չէ՞ք երևակայեր, այնպէս չէ՞, որ վայրկեան մը այս աղջիկը չարչարելու նպատակ ունեցած եմ.

Կռմռուհին սպառնալից դէմք մ'առաւ։

— Չէ՞ք դիտեր ալ թէ հնազանդ ուր է, հարցուց ցինկինը։

— կը ներէք, շատ աղէկ դիտեմ։

Այս պատասխանութիւնն ձևը դրդռիչ էր. Մարթա դղաց որ կռիւ պիտի ծագի։

— Ա՜հ, ըսաւ Մարթա, կը յուսամ որ ինձի ի'ինազընէք։

— Հաւանականապար տեղ մը կը ձգտելէ անպատասխան մնչ, պուխարայի ճամբուն վրայ։

Մարթա հպարտ ծիծաղ մ'արձակեց։

— կատակներդ կարդէ դուրս են, Պարո՞ն։

— կատակ չեմ ըներ։

— ինձ հաւատացնե՞լ կ'ուզէք որ կին մը առանց պաշտպանութեան, առանց ստակի և առանց պաշարի Սիբղանակ դառներէն դուրս ելլելով, անապատին մէջ միայնակ կեանքը վտանգի դնելու համարձակած ըլլայ։

— Միանակ չէր.

— Իրեն ընկե՞ր ալ ունէր. իրեն վախճանեան մատնակից ալ կար։

— Այ՛։

— Եւ ո՞վ է այն, կը ճանչնա՞ք զինքը։

— Այ՛։

— Ո՞հ, անունը ինձ պիտի ըսէք, այնպէս չէ՞։

Մարթա սպառնալից կերպով զօրապետին կը մօտեցաւ։

— Եթէ կ'ուզէք։

— Ըսէ՛ք անունը. . . . ։

— Ե՛ս։

— Դո՛ւք . . . . աղաղակեց Մարթա եա քաշուելով։

— Ե՛ս,

— Այս անդամ ա՛լ չափն անցուցիք դոչեց կինը, օգնական—զօրապետին դրդռիչ պատասխաններէն սաս-

ակ զայրացած . ձեր յանդգնութիւնը պիտի պատժեմ։

Կինը սրահին մէկ անկիւնը դրասեղանի մը վրայ դրուած զանգակին կողմը վազեց ։ Բայց ճամբան երեն և զանգակին մէջ տեղ Ռըլիէֆ տակի վրայ կեցած դտաւ , և այնպէս ուժգնութեամբ կը դիտէր զինքն՝ որ վարանած կանգ առաւ ։

— Ձգուշացէ՛ք ինչ որ պիտի ընէք , Մարթա՛ ։

— Թողէ՛ք որ անցնիմ, եթէ ոչ՝ ապստամբութեան այս վայրկենին կեանքերնիդ կըտուժէք ։

— Քանի մը խօսք ունիմ ձեզի ըսելու, պատասխանեց Ռըլիէֆ , միշտ հանդարտ և ցուրտ կերպով . ապասէ՛ք որ ըսեմ ։ Հիմայ զանգակը պիտի զարնէք երիկնիդ կանչելու համար . դիտե՞ք թէ այն ատեն ինչ պիտի պատահի . կամ դիս պատժելէետ պիտի կենայ և դուք ՚ի շուր տեղերնիդ եկած պիտի ըլլաք , կամ բաւական տիար և վտտ պիտի ըլլայ ձեր հաճոյից դիջնելով , . . ։

— Ռըլիէֆ , ընդմիջեց աիկինը բարկութեան ատր ձայնով , մէկ կողմ կեցէ՛ր , այս ամենը քեզի դէշ պիտի ըլլայ ։

— Երբոր լմնցնեմ . . . . . լսեցէ՛ք և այնուհետև ինչպէս որ կ՚ուզէք , ըրէ՛ք . . . . . ։ Արդ , եթէ կայսրութեան և ոչ մէկ օրէնքը դերի չճանչցող կին մը ազատելուս համար պատժուիմ, արուած պատիժը շրջատր չկրնար ըլլալ , նա մանաւանդ անարդարութիւն կը համարուի ։

— Արդէն խօսքերնիդ ձեր դլխաւորներուն դէմ ապստամբութեան յայտնի նշաններ են ։

— Ձեմ կարծեր որ դուք դլխատրս ըլլաք ։ Ջօրապետի կամ դնդապետի հետ չեմ խօսիր ,

Կոմսուհին առքերը դետինը զարնելով յառաջ նետուեցաւ յուսալով որ օդնական — զօրապետը պիտի հարկադրուի երեն ճամբայ տալու ։

Բայց երբ Մարթա զօրապետին քերուելով միւս կողմն անցնելու մտեցաւ և տեսաւ որ Ռըլիէֆ միշտ կը ծիծաղէր և անշարժ էր , Մարթա չնչասպառ այս կրաւորական արդելման առջև կանգ առաւ , կատաղութենէ կապուտցած շրթունքներէն հեռաւեալ խօսքերն արտասանելով .

— Խօսքերնիդ չարունակեցէ՛ք , իմ կարգս ալ կուդայ , սակայն քիչ մը ուշ ։

— Ուրեմն հարկ կ՚ըլլայ , չարունակեց Ռըլիէֆ , որովհետեւ և ոչ մէկ պատճառ ունիմ անարդարութեան մը հանդուրժելու , որ պատիժս կրելէս վերջն անմիջապէս տեղեկագրեմ ուր որ անկ է ։ Ես այն կարդի անձերէն եմ՝ որոց տեղեկագիրները կը կարդացուին , ինչպէս դիտէք արդէն, տիկին . քննութիւններ պիտի ըլլան հարկաւ , և կը յուսամ որ Բեդրոպուրկ ձեր դործերն և կռնակն վաստութիւնը պիտի չդատապարտեն . կըկարծէ՞ք որ այս բարեկարդ և լուսաւորեալ դարուն դերութիւնը ընակչին ընդ կայսրութեան մէջ՝ կնոջ մը դանահածութիւը քան երկանդ դլխատրները չդժդոհացնէ ։ Աչքերդ դիս կայծակնատար ընել կուզեն , բայց Ռըլիէֆ ծիծաղով մը և մտաք Մարթայէն ճակատն բարձրութեանը հատատար վերցուներով . . . այդ աչքերէն երկիւղ չունիմ, ես այն մարդկներէն չեմ՝ զորոնք կ՚անհանդստութեան կամ կ՚սպառնեն առանց տուժելոյ ։ Ինչ որ ձեզի ըսելիք ունէի՝ հետեւեալ խօսքերուն մէջ կը բովանդակի . եթէ երկինքդ կանչէք , եթէ այս դայթակղեցուցիչ խօսքերուն արձագանդն այս սրահին պատերէն դուրս ելլէ , այն ատեն դիտցած ըլլաք որ Թիմուրի պալատին բոլոր դաղտնիքները հրապարակ պիտի հանեմ և պիտի յայտնեմ ընկերներուս , և Բեդրոպուրկ ալ պիտի տեղեկագրեմ՝ ասկէց հրաժարական տալէս վերջը . Հիմայ , ըսաւ զօրապետը ետ քաշուելով և խոնարհելով , զարկէ՛ք դանգակը , տիկին , ճամբան բաց է ։

Մարթա կատարեալապէս ընկճեալ , իր զդացմանց կատաղութենէն դիմաց դեղեցկութիւնը խաւիեցաւ և զայ-

բայեալ Թիւնաթոուի մը վրայ կ'նալով,

— Դուրս ելէ՛ք, և ալ ոտքերնիդ հոս մի՛ դնէք, ըսաւ։

— Երկու տարիէ ՚ի վեր ընելիքս այս էր, պատասխանեց Ռըլիեֆ. բայց այսօր, եթէ հոս չգամ, ինչպէս որ կը հրամայէ՛ք ըսէք ինձի, ախկին. ի՞նչպէս պիտի ծառայութիւն մատուցանեմ Նորին Բարձրութեան երկանդ։

Ռըլիեֆին պատասխանատուն հեգնութիւնը զայրացուց գիմոնուհին. ապառնալիք դէմքով տոքի վրայ ելաւ և զարհուրելի ձայնով,

— ելէ՛ք, աղաղակեց, ելէ՛ք։ Երկու սպասաւոր և սենեկապետ կին մը սենեակը մտան կնոջ աղաղակները լսելով։ Յետոյ Ռըլիեֆ որ կառավարչուհւոյն հրաժեշտի ողջոյն տալու ձև բռնած էր, խակ կինը գեղնած, հեւ բարձակ և խառնիճաղ Թիւնաթոուին վրայ տարածուած էր։

— Նորին Բարձրութիւնը ջազդարութեան բռնուած է, ըսաւ Ռըլիեֆ սպասաւորներուն։

Ճշմարիտ էր ըսածը. Մարթա ջազդարական քրքիջ մը բառնալէն վերջը սկսաւ լալ և գորգին վրայ կնկաւ՝ ջղային զարհուրելի հեւանգութեան մը որս եղած։

ԳԼՈՒԽ Ե.

ԳԱՅԹԱԿՂՈՒԹԻՒՆ

Այս դէպքէն ՚ի վեր ութ օր անցած էր, և Ռըլիեֆի տակաւին Մօլթօֆի քով իր նախկին օդնական-զօրապետի պաշտօն կը շարունակէր. ամեն առաւօտ կառավարչին սենեակը կ'երթար, բայց կոմսուհւոյն բնակարանէն կ'դուրս չանար. Մարթա ալ իրմէն խոյս կ'ուտար, և որպէս թէ մէկերնին պայման դրած ըլլային, զօրապետն ու կառավարչին կինն այս ութ աւուր մէջ գոնէ մի անգամ իրարու չհանդիպեցան։

Հաւանականապար Մօլթօֆի իւր կնոջ ու Ռըլիեֆին մէջ տեղի ունեցած դիպաց անդէպ էր, որովհետեւ Ռուսաց սպարապետներուն և օդնական-զօրապետաց մէջ սովորական եղած դուէլի ընտանութեամբ կ'ընդունէր զՌըլիեֆ։

Կոմսուհին Սմիզանա եկած օրէն ՚ի վեր շարունակ չարաճճի երեք անդամ պ ահպանութեան երեւելի պաշտօնակալները ընդունելու սովորութիւն ունէր։ Արժանաւորաց ցանկ մը չունենալ տուած էր և պարտք կը համարէր ճշդութեամբ իւր հրաւէրներն ընելու։ Ցանկին մէջ նշանակեալ պաշտօնակալները կատարելապէս ապա-

հովեալ էին՝ որ դոնէ ամեն տասնեւհինգ օրն անգամ մը պալատը պիտի հրաւիրուին Թէյ խմելու։

Միայն օդնական—զօրապետներն այս ընդհանուր կանոնէն դուրս էին, սակայն կոմսուհւոյն աւագորէրոյն ըրած բաղմամբոխ ակումբին հրաւիրուելու իրաւունք ունէին։ Ռըլլիէֆ ամենէն աւելի վարժուածն էր այն ակումբին ներկայ գտնուելու, սակայն Մարթայլին հետ ըրած կռուէն՝ ի վեր բոլորովին ետ կեցաւ հոն երթալէ։

Ռըլլիէֆ զօրապետն իւր ընկերներուն երբեմն մէկուն եւ երբեմն միւսոյն հետ զուարճանալով կ'անցուներ եւ գՊասալըքի ամեն օր կը տեսներ։ Երիտասարդ մարդը (Պասալըքի) կոմսուհւոյն վրայ աւելի սեր ձգած էր, այս վերջին առիթներս բացառութեամբ յաճախ հրաւիրուելուն համար։

Առանց ո՛ր եւ է երեւութական պատճառի, այս երկու բարեկամաց, այն է Ռըլլիէֆի և Պասալըքի յարաբերութեանց մէջ յայտնի ցրտութիւն մը կընշմարուէր, ասոնց մէջ հակառակութիւն մը տիրած էր, զոր երկու կողմանէ ջանք կ'ընէին բարեկամութեան արտաքին կերպարանաց ներքեւ ծածկել։

Սակայն օր մը Պասալըքի Մարթայլին վրայ խիստ բարձրը եւ դերազանց դովեստներ խօսած ատեն Ռըլլիէֆ չկրցաւ համբերել եւ ուսերը թօթուելով խօսակցութեան նիւթը փոխեց։ Պասալըքի իւր բարեկամին ոչ հաճութեան պատճառն հասկնալ կարծելով՝ հեգնական ծիծաղ մ' ըրաւ։ Նոյն օրն երկու բարեկամներն իրարմէ բաժնուեցան առանց իրարու ձեռք սեղմելու։

Նոյն օրերուն զօրապետն՝ որ շատ ատենէ՝ ի վեր իր ընկերաց շատերուն հիւրն եղած էր, փոխադարձաբար զանոնք իւր տունը հրաւիրեց, որ քաղաքին ամենէն աւելի դեղեցիկ տուներէն մին եւ էմիրին հարուստ գործակատարներէն մէկուն սեփականութիւնն էր։ Պալկան գլխաւոր սենեկին կահն ամբողջապէս նախնական ձեւն ունէր։ որմերը մերկ եւ կրով սպիտակացեալ,

չուրջանակի հաստատուն բազմոցներ, մէջ տեղը սպիտակ վայրէ դրասեղան մը եւ առաստաղէն կախուած պըղընձէ կանթեղ մը, քանի մը հատ ալ հարթէ ամուռներ, տախտակամածն ալ վսխաթոռով մը ծածկուած էր։

Առաւօտեան ժամը մէկն էր։ Խաղերը վերջացան՝ երբ ցերեկուան ճաշը պատրաստուեցաւ։ Հրաւիրեալ պաշտօնակալները զուարթ էին, որովհետեւ ոչ մէկն և ոչ միւսը շահած կամ կորնչուցած էին, ախորժանօք ճաշեցին խոզի ապուխտ, Զուիցերիոյ պանիր եւ ձկրձկիթ, որոնք սեղանին մէջ տեղ դրուած էին մեծ սկաւառակներով։ Իսկ դինւոյ բաղմաթիւ սրուակներ՝ որոնք Շամբանիայի եւ բուն գաւառին դինւոյ տեսակներուն կը վերաբերէին, սրահին մէկ անկիւնն օշարակով լեցուն բիւրեղեայ ամանի մը շուրջը կատարեալ չափակցութեամբ շարուած էին։

Քլօց, Մօլթօֆին երկրորդ օդնական-զօրապետը, նոր եկած էր հոն եւ տան տիրոջ հետ կը խօսակցէր։ Դասնդին մէջ նշանաւոր պաշտօնակալ մը չէր։ Ի դէպս կամ յանդիպաբար ամեն մարդ շողոքորթելու պակասութիւնն ունէր, այնպէս որ այս մարդուն համար շողոքորթութիւնը պէտք մը եւ սովորութիւն մ' էր։ բայց դժբաղդաբար իւր պակասութիւնն այնչափ ճանչցուած էր՝ որ իւր շողոքորթութիւններն ալ եւս աղդեցութիւն չէին ըներ, եւ բան մ' ալ ընելու չէր յաջողեր։ Այս մտութիւնն երեսն շատ ելլասներ տուած էր։ Գրեթէ երեսն բունի Սմրղանտ կենալը՝ այն սպարապետին հետ ունեցած դժգոհութիւնն էր, որուն երբեմն օդնական—զօրապետն էր, Մօլթօֆին օդնական—զօրապետն ըլլալէ յառաջ, երբ իւր պաշտօնին սկսաւ նախկին սպարապետին քով՝ որ բաւական խելացի էր, անոր աչքը մեռաւ եւ առջեւը չնորհ գտաւ, անոր բոլոր գործերը հաչակելով և մինչև անգամ անոր մտքին և անձնական կերպարանքին վրայ յանչախս զարմացումներ ցոյնելով։ Սպարապետը կատարեալ մոգեալ էր։ սա

կայն օր մը երբ ՚ի միասին կը նախաճաշէին՝ Զարին Պօ-
կուա հառնիլն իմացուց իրեն : Ռուսիոյ մէջ Զարն և
դևասուրները շողոքորթելու քաղաքականութիւն մը կայ :

— Ի՞նչ երջանկութիւն , դոչեց Բլօց :

Սպարապետն աչքերը սկաւառակին վրայէն վերցը-
նելով ,

— Ինչո՞ւ . . . .

— Մոսկուա մեր քաղաքին աւելի մօտ է քան Թէ
Բեդբսպուրկ :

— Լա՛ւ , վե՞րջը : Այլ ևս կայսրը պիտի չտեսնե՞նք :

— Ա՜հ , հոդ չէ , մենք միշտ աւելի մօտ պիտի ըլ-
լանք Նորին Վեհափառութեան :

Սպարապետը գինքը դիտեց , շրթունքները խածաւ ,
եւ այն վայրկեանէն լաւ իմանալով իրեն օգնական —
ղօրապետին ցցուցած զարմանալեաց արժէքը , արհա-
մարհեց և առեց գինքն , և իրեն ըրած քաղաքեանց
ու անարդարութեանց պատճառաւ , գինքն ուրիշ տեղ
մը երթալու պարտաւորեց : Բլօց , այս պատուհասին
հակառակ . տակաւին շողոքորթութիւնը կը շարունա-
կէր , այս համբաւը Սմոլեանսկի մէջ գինքն երևելի ըրած
էր , և ամէնքն ալ կառավարչին սկսեալ մինչև փոքրիկ
պաշտօնակալն արգահատութեամբ կը վարուէին հե-
տը , բայց և այնպէս ամենևին իրեն հոգը չէր :

— Վերջապէս , ի՞նչպէս . . . . սիրելի՛ս , կ՚ըսէր Բ-
լօց Ռըլիէֆին , դուք որ Մարթա Նիքօլաիէվնայեան ա-
կումբներուն հոգին էք , ի՞նչպէս դուք ալ ճիշդ ա-
նոր որոշած օրը կ՚ընտրէք բարեկամացդ ընդունելութ
համար :

— Բաղդն այնպէս կը բերէ , սիրելի՛ս :

— Կամ մանաւանդ սիրահարներու դժուարութիւնը :

— Ի՞նչ կ՚ըսէք . . . . վրայ բերաւ Ռըլիէֆ խոժո-
հայեցուածքով մը :

— Ըհ , ըհ , ըհ , մեր դիտցած Ռըլիէֆը կը բար-
կանայ և կը խոժոռի :

Ղօրապետը դժգոհ ակնարկ մը ձգեց վրան : Ետ
միջոցին դուռը բացուեցաւ և Պասալսքի մեծ համազ-
դեստը հաղած , դլխուն մազերն ու խոպոպիկները
ղարդարած՝ սենեակը մտաւ : Ռըլիէֆ անոր քով եր-
թալով ու ձեռքն երկնցնելով ,

— Ուշ եկաք , սիրելի՛ս , ըսաւ :

— Մարթա Նիքօլաիէվնա գիս երկայն ատեն իրեն
քով թողուց , ուղեց որ իրեն այցելութիւն մ՚ընեմ ,
խօսեցանք և խնդացինք . . . : Կը հասկնաք , սիրելի՛ս . . :

— Կը հասկնամ :

— Ո՛չ , բաւական չէք հասկնար : Ի՞նչ ալընիւ եւ
սիրուն անձ մ՚է , առանց ամենազօրին խառնութեան ,
դեղեցիկ , բարի և երևելի է , և ամենքնիս ալ իրեն
բարեկամ կը համարի :

— Այո՛ , այո՛ :

— Խոստովանեցէ՛ք , ուրեմն , Ռըլիէ՛ֆ Թէ Մարթա
Նիքօլաիէվնա աշխարհիս ամենէն գեղեցիկ արարածն է :

— Պասալսքի՛ , սիրելիդ իմ , անոր դիմաց գեղեց-
կութենէն խելքերնիդ կորսնցուցած էք . . . : Հրամ-
մեցէ՛ք , քիչ մը բան կերէ՛ք :

— Ո՛չ , ո՛չ , ձեզ հետ հաց և աղ պիտի չուտեմ ,
և ոչ ալ ձեր յարկին ներքև պիտի նստիմ , մինչև որ
ինձի հետ չը միանաք մեր կառավարչուհոյն ոտքերը
երդելու :

Ղօրապետին համբերութիւնը հատնելով ,

— Խիստ շուտ մտացեր էք , ըսաւ , սիրելի՛ս , ձեղի
տուած խորհուրդներս :

— Է՜հ , ի՞նչ , տակաւին հո՞ն ևս . է՜հ , չատ լաւ ,
պարծեցէ՛ք :

— Կատր մը խոզի ապուխտ աւէ՛ք :

— Ի՞նչպէս կը համարձակիք ինձ պատմած տատ-
թիւններդ վերատին ինձ յիշեցնելու :

— Ո՛չ , ո՛չ , երկիւղ ունեցողը դուք էք , որպէս զի
ձեր ըրպարտութիւններն երևան չելլեն . . . . : Պա-

բոննե՛ր, ամենքնիդ ալ լսեցե՛ք։

Պաշտօնականները հետաքրքրութեամբ լրաբու մօտեցան։ Ռըլիէֆի դունատեալ դիմաք սեղանոյն կռթընած էր։ Պասալըքի խմբին մէջ տեղ մնայ։

— Ի՞նչ կայ, հարցուցին քանի մը պաշտօնակալք։

— Պասալըքի դաւաթ մ'աւելի լամած է, ըսաւ Ռըլիէֆ քաղցր ծիծաղով մը, և որովհետև Հիւսիսային սիրուն աղնուականը մեր արեգական չէ վարժուած, ուստի դլուխը քիչ մը տաքցած է։

Ա.յս խօսքերն երիտասարդ պաշտօնակալը ղայրացուցին։

— Խմա՞ծ եմ..... հա՜հ, հա՜հ, հիմայ կը տեսնէք..... Ռըլիէֆ ինքզինք Մարթա Նիքօլաիէվնայի սիրահարը կը կարծէ։

— Լաւ թէ՛ւն, աղաղակեց Ռըլիէֆ, պաշտօնակալներուն, և ապա իրեն սովորական, հանդարտ և ծաղրական ձայնովը ու ձեւովը,

— Սիրելի՛դ իմ, Պարոն Պասալըքի, ըսաւ, տըխմար, պակասաւիւտ և վատ է..... ըսածնիդ ճշմարիտ չէ, ստեյի՛ք։

— Թչուառակա՛ն, դոչեց Պասալըքի, Ռըլիէֆին վրայ վազելով։

Պաշտօնականները միջամտեցին ուղեցին։

— Թողէ՛ք որ այս անզդամը պատժեմ, կ'աղաղակէր երիտասարդ մարդը, ասոր անոր ղարնուելով։

— Երբեք կատակ չեմ ըներ, ըսաւ Ռըլիէֆ, ցուրտ դէմքով, բայց ցած ձայնով։

— Ընդհակառակն լրկուն ինձ ըսածնիդ կրկնելու կը համարձակի՞ք։

— Սիրելի՛դ իմ Պասալըքի՛, հաւատացէ՛ք ինձ։

— Ձեմ վշտանար, որովհետև կատակ էր ըրածնիդ, ես ալ վայրկեան մը հաւատայի.....։

Տակաւ առ տակաւ Ռըլիէֆին դլուխը տաքնալով,

— Ա՜հ, այդպէ՞ս է, ըսաւ, Պասալըքին աչաց մէջ

նայելով, ի՞նչ խենդ խելառ բաներ կ'անցնին մտքէդ։ Բոլոր ձեղի ըսածներս ճշմարիտ են. կը յուսայի՝ թէ անդամ մ'ալ վրան պիտի չը խօսիք։ Պատ՞ոյս վրայ կ'երդնուս որ ըսածներս ճիշդ են։ Հիմայ կը հաւատա՞ք ինձ։

— Ո՛չ։

Ռըլիէֆի զայրացմամբ Պասալըքին բազուկը սեղմեցաւ, ըսաւ.

— Տանս մէջ ըլլալնուդ համար չնորհակալ եղի՛ք։

— Ձեղ տան տէրն ըլլալու պարտքէն բոլորովին ազատ կը ճանչնամ, պատասխանեց պաշտօնակալը ձայնը բարձրացնելով, որովհետև նոյն իսկ ձեր տանը մէջ չեմ կրնար զրպարտութիւններդ լսել։

Ռըլիէֆի ինքզինքը կը բռներ։

— Խե՛ղճ խենդ, ըսաւ Պասալըքի Ռըլիէֆին ականջին, կին մը զրպարտելով ինքզինքնիդ կը կորնչնէք։

— Պարոնա՛յք, նախ և առաջ ինքզինքս արդարացունել կ'ուզեմ, ըսաւ Ռըլիէֆ, բայց այս խենդը բըռնեցէ՛ք։

Պաշտօնականները Պասալըքին չուրջը կեցան, որ կատաղութենէ ոտքերը գետինը կը ջարներ.

— Վերջը, չարունակեց Ռըլիէֆ, Պասալըքի կողմը դառնալով, երբոր լմնցուներմ..... Ուրիշ նախատինքն և մեծամարտութիւնը բան մը չեն ապացուցաներ. ամբաստանութիւնը միշտ կը մնայ..... Պատրաստ եմ, պարո՛ն, ձեզի հետ մեծամարտելու, բայց յառաջ, պէտք է որ, որչափ կարելի է, ձեր անծայր յիմարութիւնը խայտառակեմ և պատիւս տեղը բերեմ։ Մոտիկ եղէ՛ք, ուրեմն, պարոնա՛յք, և գտեցէ՛ք գլուխ, ինքզինքս ձեր վճռոյն և որոշմանը կը յանձնեմ։

— Խօսեցէ՛ք, Ռըլիէ՛ֆ, ըսին պաշտօնակալները։

—Ա.հաւատի՛ք թէ ինչպէս բարեկամս անձնուէր է, ըսաւ Ռըլիէֆ ծիծաղելով։

Ա.յս խօսքերէն Պասալըքի չառագունեցաւ և իր

բարկութիւնը քիչ մը հանդարտեցաւ ։

— . . . . Կը կարծէ թէ կոմսուհւոյն սիրահարն ըլլալուս վրայ կըպարծենամ. ասիկա բոլորովին սուտ է, երբեք այդպիսի բան մ՚ըսած չեմ. . . . ։ Սակայն օր մը, որովհետեւ տեսայ որ Պարոնը միշտ Մարթային վրայ կը նայէր, և ուտել խմելը կը մոռնար, և միշտ ա՜նոր վրայ չափազանց եռանդեամբ կը խօսէր, կարծեցի՝ թէ այս կերպ ընթացքը բարեկամիս համար ծաղրելի և կոմսուհւոյն համար նախատական էր ։ Այն ատեն լաւ համարեցայ իրեն պատմութիւն մ՚ընել ։

Պատալաքի խօսքն ընդմիջելով,

— Ինձի՝ ձեր անոր հետ ունեցած յարաբերութեանց վրայ խօսեցաք, ըսաւ ։

— Ո՛չ, խոհիւ արդիլած եմ որ անձնականութիւն չխառնէք ձեր խօսքերուն մէջ ։

— Այո՛, բայց դժուար չէ դուշակելը՝ թէ . . . ։

— Այդպէ՞ս է, իմ վրայ կը խօսէի. ի՞նչ ըսի ձեզի ։ Չեզի ըսի՝ թէ կոմսուհւոյն խօսնայրն էի, ճշմարիտ էր թէ կոմսուհին ուրիշ մը հետ ամուսնացաւ՝ մինչդեռ Բարիզ էի. թէ ինձ ըրած խոստումներէնետ կեցաւ. թէ ասոր հակառակ ես իրեն վրայ ունեցած սէրս շարունակեցի և երմին ծիծաղ մը և միշտ նոր Թիւնը կը խնդրէի. Այո՛, այս ամենուն վրայ ձեզի խօսեցայ ։ Ուրիշ բան ըսի՞ ։

— Ո՛չ, բայց այդչափը բաւական է ։

— Ա՜հ, բաւակա՞ն է. խօսքերէս իմացա՞ք՝ թէ կոմսուհւոյն սիրահարն եղած եմ. Նոյն իսկ մը սիրահար եղող և անոր հետ ամուսնանալ ուզող ինձի պէս մարդ մ՚ամբողջ երկու տարի գինքը սիրելու հետամուտ կ՚ըլլայ, երջանիկ սիրահար մը կըհնծէ՞ և ծիծաղներ կը մուրայ ։ Եւ ուրիշ ձեզի ի՞նչ ըսի. ըսի՝ թէ կոմսուհին սիրտ և հոգի չունեցող նակ մ՚էր, դարձեալ հրապարակաւ նոյնը կրկնելու կ՚ատիպէք զիս ։ Ճշմարի՞տ է, բայց ձեզի ըսի՞ թէ կոմսուհին պարկեշտ կին չէր . . . ։ Պարոնա՛յք,

կ՚երդնում որ բնաւ Մարթա Նիքոլաիեվնայի մասերուն ծայրը պագած չեմ. կը հաւատա՞ք ։

— Այո՛, այո՛, աղաղակեցին միաբերան բոլոր պաշտօնակալները ։

— կը սիրեմ. . . Ներեցէ՛ք . . . յամենայն սրտէ կոմսուհին սիրած եմ. ուրիշ երիկ մ՚ընարեց ։ Ըսի պարոնին՝ թէ կոմսուհւոյն այս բանն ընել տուող չարժառիթը գուշակել չէ՜տայ . . . . նոյնը կը կրկնեմ ։ Ըսի իրեն և հիմայ ամենուդ առջև կը կրկնեմ՝ թէ վատ և անպատիւ մէկն եղած եմ, ուրիշի մը հետ ամուսնացած կնոջ եաւէն երթալուս և հիմակուան ունեցած պաշտօնս ընդունելուս համար. ուստի կը մեղադրեմ ինքզինքս ։

— Ծայրայեղութեան դնացէք, Ռըլիեֆ, աղաղակեցին պաշտօնակալները ։

— Ո՛չ, բարեկամնե՛րս, կ՚ուզեմ որ այս երիտասարդ խենդին իմ վրայ ըրած դըպաբտութիւնը դատապարտէք ։ Սիրելի ընկերներս, ձեղնէ պիտի բաժնուիմ, ո՜րովհետեւ եթէ կոմսուհւոյն հետ ունեցած և գաղտնի ընացած յարաբերութիւններս անձիս արժանապատուութեան նուաստութիւն կը բերեն, դարձեալ նոյն յարաբերութիւնները հոս իմ վիճակս անտանելի կ՚ընեն ։ Առաջին պատեհութեամբ Սմոլեան պիտի թողում, որովհետեւ անգամ մ՚ալ չսիրած կնոջս պատիւը վտանգի բերել չեմ ուզեր, և ոչ ալ անոր համբաւն աշխարհ չճանչցող երիտասարդ մարդոց յիմարութեանց խաղալիկ ընել ։ Հիմայ, պարոնա՛յք, ըսաւ Ռըլիեֆ, թեթեւ կերպով մը իւր մօտը կեցած ընկերներէն երկուքին ուսերուն դնելով, ինձ տեղ մ՚ընելու շնորհք ըրէ՛ք ։

Ռըլիեֆ պաշտօնակալաց մէջէն անցնելով, ժողովին մէջ դնաց ու Պատալաքիին քով նստելով,

— Ձիս պատժել ուզեցիք, ըսաւ, ահաւասիկ եմ ։

Երիտասարդ մարդը յուսահատութեան շարժմամբ մը գլխարկը բռնեց և յանկարծակի սենեակէն դուրս ելաւ ։

ԳԼՈՒԽ Զ·

ԿԱՅՍԵՐ ՓՈԽԱՆՈՐԴԸ

187 . . . . Մայիս 18 ին, ընդհանուր սպարապետը, Թուրքաստանի ընդհանուր կառավարիչը, Ռուսաստանի մէջ կայսեր, իսկ Թուրքաստանի մէջ ալ Աստուծոյ օգնական — զօրապետը Թիմուրի մայրաքաղաքը պիտի մտնէր։

Տուներուն վրայ ռուսական դրօշակներ պարզուած էին, ճամբաները մաքրուած և զօրաց խումբերը Նորին Բարձրութեան անցնելիք փողոցներուն մէջ շարուած էին։ Առաւօտուն խիտ կանուխ Սարթիները հետապընդիր իրենց նոր տէրը տեսնելու, փողոցին երկայնութեանը տուներուն միահարթ տանեաց վրայ խումբ խումբ շարուած էին։

Սրեգական շառաւիղները քաղաքին սպիտակ որմերուն վրայ կըցոլային և բեկբեկելով Սարթիներուն քառանկիւն գլխարկներուն վրայ կը վալվլէին և խուրձ խուրձ դրուած հրացաններուն սուիները կը շլշղացընէին։ Ժամը տասնեւմէկն էր։ Հեղձուցիչ ջերմութիւն մը կար, ղինուորները առաւսկին երկայնութիւնը կեցած՝ երբեմն երբեմն կըցածնային ջրով իրենց քրտնալեր ճակատները զովացնելու համար։ Սարթիները տանեաց վրայ, ղինուորներն ալ փողոցին մէջ իրարու հետ ցած ձայնով կըխօսէին։ Երբեմն հեծեալ մը արագութեամբ կ'անցնէր և դէպ 'ի պալատին կողմը կ'արշաւէր, որուն կը յաջորդէր երաժշտական քաղցր և ներդաշնակաւոր հնչիւնը։

Ժամը տասն և մէկ ու կէսի մօտ էր. հեռաւակաղօրայ վաշտ մը կանոնաւոր քայլով քաղաքին մէջէն անցաւ։ Ղինուորաց մխրճադոյն շապիկներն և պաշտօնակալաց վառակները փոշիէն սևցած էին։ Այս հեռաւակաղօրքերը խիտ երկայն ճամբորդութիւն մ'ընած էին։ Հեռաւակաղօրայ ետևէն թնդանօթաձիգ զօրաց խումբ մը կար. ղինուց շաչիւնը, թնդանօթներուն սայլերուն բաղխելու ձայնը, երիվարաց վրնջիւններն և անուոց շառաչիւնը պատերազմական երաժշտութիւն մը կը ձևացնէին, որ ամբողջ քառորդ մը բոլոր քաղաքին լռութիւնը խռովէց. որովհետև ամենն ալ սպարապետին դալուն կ'սպասէին։

Օգնական—զօրապետ մը չուտպաս անցնելով.

— Սպարապե՛տը, աղաղակեց ձիուն վրայէն։

Ղինուորները հրացաններն առնելու վազեցին և Սարթիները տանեաց եղերքը խմբուեցան. Գնդապետ մը համազգեստով հագուած, մօտակայ տուներուն մէկուն մէջէն դուրս ելլելով՝ 'ի կարգ հրաւիրեց ղինուորները, որոնք հրացաններն առած առին՝ ղինուց շաչիւն մը լսուեցաւ. վերջը խորին և մեծ լռութիւն մը տիրեց։

Փողոցին ծայրը սև ամպ մ' երևցաւ եւ վայրկեան մ' ամբողջին որմերուն տեսքը խաւխաներ։ Ուրալի յիսուն քոզաքներու անկանոն դումարտակ մը, կապոյտ դգեստներ հագած, դրուագեալ գլխարկներ դրած, պզտիկ ձիերու վրայ հեծած և ձեռքերնին ալ երկայն նիզակներ բռնած, բոլոր փողոցն անկարգութեամբ լեցուցին։ Գումարտակին մէջ տեղը ութ անուով կառք

մը կար, զոր չորս պատերազմական ձի կը տանէին։ Ին֊կարելի էր փուշէն պատճառաւ կառքին մէջ եղողները տեսնել։ Այս միջոցին դրօշակները ծռեցան, թմբուկ֊ներն պատերազմական եղանակներով հնչուեցան, և զօրքերը դինուք ողջունեցին։ Կառքին մէջ եղողն Ա֊տուծոյ օգնական—զօրապետն էր որ կ'անցնէր, և Սար֊թիներն՝ որոնք քօղաքներուն և փուշէն մէջէն չէին կըր֊ցած իւր դէսարկին ծայրն անգամ տեսնել, իրարու ը֊սին.

— Երկայնահասակ մէկն է։

Բօֆման ապարապետը լաւ բնաւորութեամբ մէկն էր։ Կ'երևէր թէ նոր յաղթուած երկիրն իւր իշխանու֊թիւնն առանց մրմնջելու կ'ընդունէր. կառքին մէջ Մօ֊լօթօֆին հետ կը խօսէր, որ դինքը դիմաւորելու դա֊ցած էր մարակոյներէն դուրս։

— Ա՛յ, ապարապե՛տ, կ'ըսէր Բօֆման Մօլօթօ֊ֆին, երկիրն ամէն կերպով լաւ դրից մէջ պիտի ըլլայ կարծեմ, եթէ այս Բիբլաքները չըլլան. վայրենիներն խիստ դարշելի են, և կարծեմ ասոնք բնաջինջ ընել պէտք է։ Արշաւանք մը ինձ անհրաժեշտ կը թուի։

— Ձեր վսեմութեան մեկնելէն անմիջապէս վերջը. ես ալ անձամբ պատերազմ կ'երթամ։

Փոխարքային խստութեամբ անոր նայելով,

— Դո՛ւք, ըսաւ. Ի՞նչ յիմարութիւն. Նորին կայ֊սերական վեհափառութեան ապարապետներէն մին, Ամրզանի կառավարիչը. այսպիսի հէներու դէմ կեան֊քը վտանգի՞ պիտի դնէ։ Ոմանադոյին կորուստ մը մեր իշխանութիւնն և Ռուս անունը կրնայ անպատիւ ընել։ Ո՛չ, ո՛չ, հրամանատար մը բաւական է. Ապարապե՛տ, ձեր բարձրաստիճան պաշտօնակալաց մէջ կայ հրամա֊նատար մը՝ որուն վրայ վստահութիւն ունենաք և ու֊րիշներէն վեր ելլէ։

— Ջկայ.... տէ՛ր իմ, բայց կ'աշխատիմ որ դըտ֊նեմ։

— Գիտէ՞ք.... Այս անիծեալները բնաջինջ ընող պաշտօնակալը պիտի վարձատրուի իբրև քաջութեան դործ կատարող։ Իմ թնդանօթաձիգ զօրքերէս մաս մը ձեղի կը թողում. այս յանդուգնները պէտք է սան֊ձել։

Սարթիներէն պատգամաւորութիւն մը կազմուած էր. պատգամաւորները կայսեր փոխանորդին անցնե֊լիք փողոցը շարուած կեցած էին։

Կառքը կանգ առաւ. պահանդի զօրքերը նշանի մը հնազանդելով, իրենց ճամբան կը շարունակէին, կողմնակի փողոց մը խոտորելով, և ուրիշ կիսուն վեր֊ջապահ քօղաք կառքին հետևի կողմը շարուեցան։

Ուրիշ փոքրիկ խումբ մ'ալ այս վերջապահ զօրայ հետևէն կ'ուղար, որ նոյնպէս ոտիպատեցաւ կանգ առ֊նուլ Սարթի պատգամաւորաց խօսելու միջոցին։

Այս խումբը վեց հեծեալներէ կազմուած էր։ Մօլօ֊թօֆին պահրօվօ և բլօց օգնական — զօրապետները, Բօֆման սպարապետին երկու օգնական–զօրապետները, ծերունի մը և տիկին մը։ Ծերը սպիտակ հանդերձ հագած և յարդէ մեծ գլխարկ մը դրած էր, գինո֊ւորական չէր երևեր. ձիով ճանապարհորդելուն դէմ սաստիկ կը հայհոյէր. իսկ ընդհակառակը տիկինն իւր ձին ամազոնական յաջողակութեամբ կը դործածէր։ Արեդական ջերմութիւնն անոր դունատ կերպարանքին այլ և այլ դոյներ տուած էր. դինոյ դիծերը կանոնա֊ւոր, նուրբ և դեղեցիկ էին։ Իւր փոքրիկ, ջղային և շուէտի մորթէ չինուած ձեռնոց անցուցած ձեռքով ձիոյն սանձը բռնած էր, որ անհամբերութենէն կը֊վրնջէր և բարկութենէն ինքզինքը կ'ուտէր։ Շնորհալի ամազոնը մօտ եղողներուն հետ կը խօսակցէր առանց ամենապոյն երկիւղ ղդալու կենդանւոյն կատաղու֊թենէն։

— Այս ճանապարհորդութիւնը զուարճալի է, կ'ը֊սէր կինը. իւրաքանչիւր քայլի՝ նոր տեսարան, ան֊

ծանօթ երկիր։ Ազատութիւն, արեգակ և միջոց, ա-
հաւասիկ երազած ղուարճութիւնս։

— Չիդ այդչափ մի՛ չարչարեր, Լի՛զ, ըսաւ ծերը
բարկութեամբ, թերևս դքեզ վար ձգէ։

— Կը կասկածիմ, հայր, աղաղակեց Լիզ, ղուարթ
դիմօք երիւարը գգուելով, բայց վտանգ մը չեմ տես-
ներ։ Սպօկարը ինձ կը հնազանդի որպէս թէ . . . . . ։

— Մարդ մ'ըլլար, ընդմիջեց Բլօց։ Ամբողջ Սմըր-
ղանա ձեղի ձեր ձիէն աւելի պիտի հնազանդի. ոչ ոք
ձեր ձիւն նման անհանդարտ և բարկասիրտ պիտի
ըլլայ։

— Ցիրաւի՛, պատասխանեց Լիզ. ղուարթ դէմքով։

— Ամէն կարելի ջանք ի դործ պիտի դնենք ձեղի
Սմրղանա կենալը սիրելի ընելու համար։ Սմրղանա
Թուրքաստանի բոլոր քաղաքներուն մէջ պատուաւոր
և հռչակաւոր պիտի ըլլայ. երկու աստղ պիտի վայելէ,
որոյմէ մին, աւաղ, թախտաւականն է.

— Եթէ այդ քիչ մը շողքորթիչ ձևն ինձ կը պատ-
շաճեցուներս, պատասխանեց Լիզ, ապահով եղիք, թէ-
րևս երկայն ատեն կենամ ձեղի ծանրութիւն ըլլալու
համար։

— Որչա՛փ երջանկութիւն բոլոր Սմրղանայի բնակ-
չայ համար։

— Ձկնարի՛ա է, Լօզպէքներն և Սարթինները իմ ի-
րենց մէջ կենալս կ'ուզե՞ն։

— Ա՛յս վայրենիներուն համար չեմ ըսեր, մեր Ռուս
պաշտօնակալաց համար կը խօսիմ։

— Սակայն բնաւ Ռուս պաշտօնակալներուդ հետ
ապրիլ չեմ ուզեր. ամէն տեղ ձեղնէ մարդ կը տեսնեմ
քննելու, ճանապարհորդելու. և տեղեկութիւն առնե-
լու եկած եմ, և ասիկա, յիրաւի, ձեր մէջ կենալէս
և միշտ մի և նոյն բանը լսելէս աւելի կ'զբօսցնէ զիս.

Ընդհանուր կառավարչին օդնական—զօրապետնե-
րէն մին ծիծաղելով ըսաւ.

— Եղիսաբէթ Գէկօրօվնա երկայն ատենէ ի վեր
զմեզ իւր խայթիչ և կսկծեցուցիչ խօսքերուն վարժե-
ցուցած է, պէտք է որ հիմայ ալ դուք վարժուիք և
համբերէք։

— Ո՛հ, ով երջանիկ պիտի չըլլայ սաստիկ վշտերու
համբերել, օրիորդին պէս պաշտելի անձէն ծիծաղ մը
ընդունելու համար, աղաղակեց Բլօց։

Լիզ խոժոռեցաւ. Բօֆմանին օդնական—զօրապե-
տին կողմը դառնալով՝

— Ասիկա դժդոհութեան նշան է, ըսաւ,

— Բա՜հ, կարևորութիւն մի՞ տաք. Բլօցն է . . . .
դիտէք որ Բլօցն է . . . . . ձարխն մարդը։

— Ա՜հ, այո՛ . . . . . հա՛, հա՛, հա՛ . . . ։

Պատդամաւորներն իրենց ըսելիքը լմնցուցած
էին։ Բօշաքները յառաջ խաղացին, խումբը չտապա-
ւանոց եաևէն դնաց և ամեն բան փողոցի մը ծայրն ա-
ներևութացաւ, վոշտոյ երկայն դիծ մը թողլով։

Սակայն Ռըլիէֆ կառավարչին իբրև առաջին օդ-
նական— զօրապետը պատասխան մնացած էր, և Մօլօթօ-
ֆէն կայսեր վոխանորդին տրուելիք ընդունելութեան
և կերակրոյ պատրաստութեանց կ'զբաղէր։ Իբեւելի
հիւրին բնակութեան համար որոշուած տեղերը քննե-
լէն վերջը, կերակրոյ սրահը մնաւ, ուր սեղանը դը-
րուած էր։ Տաճարապետը վերջին անդամ դինիներն և
չոր խորտիկները կը դիտեր։ Ուրչափ գարմացաւ զօրա-
պետն երբ տեսաւ դաւաթներն և սրուակներն, որոնք
սեղանին վրայ այնպիսի կարգաւորութեամբ չաթուած
էին՝ որ Բօֆման սպարապետին անուան տառերը կը
ներկայացնէին։

— Ի՞նչ է այս, հարցուց Ռըլիէֆ տաճարապետին։

— Բլօց պատուիրեց որ այսպէս ընեմ։

— Բայց այս կերպով մեկն ալ դաւաթ չվրնար առ-
նուլ, ի՞նչպէս պիտի խմեն։

— Պ. Բլօցին այդ դիտողութիւնն ըրի, բայց պա-

տասխանեց՝ թէ հոգ չէ. միայն թէ երկու սպարապետներն և սիկինը դաւաթներ ունենան լրնոց քով, բաւական է. միւսներուն համար ջնաս չունի։

Ռըլիէֆի խնդալէն կը մարէր։

— Շուտով վոխեցէ՛ք այդ ձէն ըսաւ, կամ ոչ... ժամացոյցը նայելով. սպարապետը քառորդէն հոս կ՚ըլլայ, հագուելու դացէ՛ք, ես կը չակեմ։

Ռըլիէֆի խնդալը չարունակելով, սկսաւ սրուակները և դաւաթները կարդադրել. այս դբաղումն արդիլեց ղինքն որ դրան անձայն բացուիլը չիմանայ։ Մարթա կապոյտ չուխայէ ղգեստ հագած՝ որով իւր հասակին և քայլերուն չքեղութիւնն ա՛լ աւելի կ՚երեւէր, կեղակոյ սրահը մտաւ ձեռնոցները կոճկելով։ Սպիտակ քօղով չրջապատուած քառակուսի կապոյտ գլխարկը իւր բարեձև գլուխը կը ծածկէր. այս կերպով զարդարուած պաշտելի անձ մը կ՚երեւէր. Մարթա Ռըլիէֆը տեսած ատեն խորհրդաւոր թեթեւ ժպիտ մ՚արձակեց, այս ժպիտն ո՛չ չար, ո՛չ թշնամական, բայց և այնպէս բարի ալ չէր։

Մարթա զօրապետին մօտենալու, որ սեղանոյ անօթները կը կարդաւորէր, և թեթեւ կերպով իւր ձեռնոցին ծայրով զօրապետին ուսին դպաւ։ Ռըլիէֆ յանկարծակի եւս դարձաւ և կառավարչուհին տեսնելով յարդանօք խոնարհեցաւ։

— Մարդի՛ս, բաւ կինն իւր քաղցր ձայնով և դողդոջալից հայեցուածով, իրարու թշնամի՞ եղանք։

— Ո՛հ, սիկի՛ն, այդ բառը ծանր է, պատասխանեց ցրտութեամբ, աւելի լաւ է ըսել անտարբեր։

— Ինչո՞ւ, անցած օրուան տեղի ունեցած կռուոյն պատճառաւ։ Ո՛հ, բոլոր սրտով կը ներեմ ձեզի. նոյնպէս կը ներեմ ձեզի իմ վրայ ունեցած՝ բայց գաղտնի չպահած չար կարծիքդ, որովհետև ամեն բան դիտեմ, պարո՛ն։

— Ո՛հ, ձեզի ըսուած է՝ թէ.....։

— Բնա՛ւ. գէշ կը դատէք զիս, Մարդի՛ս, և անիրաւ էք։

— Ա՛րդեօք ձեզի ըսի՞ն ալ թէ ձեր թշնամին չեմ. որովհետև Սմրղանտ թողլովս պիտի ապացուցանեմ։

— Ինչո՞ւ մեկնիլ կ՚ուզէք, ի՞նչ չիմարութիւն.

— Կըսեմ՝ թէ մեկնիլս թէ՛ ձեր և թէ՛ ինձ համար աղէկ է, մանաւանդ թէ հոս գործ չունիմ։

— Ուրեմն ձեզի կատարեալապէս անտարբե՞ր եղայ։

Մարթային այս խօսքը քիչ մը հարցական ձեւ ունէր. Ռըլիէֆ չուարելով չկրցաւ պատասխանել. բայց լռութեամբ այնպիսի չարժումմ՚ ըրաւ, որով Մարթային խօսքը հաստատական ընել կ՚ուզէր.

— Ա՛յդպէս յանկարծակի իրարու անտարբե՞ր եղանք, ըսաւ Մարթա տեսակ մը խորամանկութեամբ, լա՛ւ, ներեցէ՛ք ինձ, սիրելի՛ հօր եղբօրորդիս, սակայն դարձեալ չեմ հաւատար։

— Բայց ճշմարիտ է, այլևս ղձեղ չեմ սիրեր, Մարթա՛, և դառնապէս կը ղղջամ երբեմն ղձեղ սիրելուս վրայ։

Կինը Ռըլիէֆին այս խօսքերուն վրայ բարկութենէն չրթունքները խածաւ։

— Հիմայ ի՞նչ պիտի ընէք.

— Պիտի ուզեմ որ ես ալ արշաւանաց մէջ մտնեմ. որովհետև կը յուսամ թէ մեծամեծ քաջութիւններ պիտի գործեմ. ուստի թշնամւոյն երկիրն ասպատակող զօրաց մէկ դնդին հրամանատարութիւնն իմ վրայ պիտի առնում։

Ռըլիէֆի հանդարտ էր. բայց այս հանդարտութեան ներքև դառնութիւն կար. Մարթա զգաց զայն, որովհետև քաղցր հայեցուածով ձեռքը Ռըլիէֆին երկընցուց և,

— Մարդի՛ս, ըսաւ, չիմարութիւն մի՛ ընէք. կամաչա և հաճոյքս տեղը տոնող մէկն եմ, բայց բնականիս մէջ չար ըլլալ չկայ, միայն թէ ինձ հնազանդին.

խաղաղութիւն ընենք։

Ռըլիէֆ քայլ մը եաւ դնաց և առանց դէպ՝ի երեն երկնցուցած ձեռքը բռնելու,

— Ի՞նչ կ՚ուզէք, ըսաւ ասիկոնջ, խաղաղութիւն ընելու համար,

կինը սարսափած ետ քաշուելով,

— Չեմ հասկնար, ըսաւ, թէ ինչ ըսել կ՚ուզէք։

— Դուք ինձի պէտք ունիք, որովհետև այդ բարութիւնը ձեր բնութեան մէջ չկայ։ Այդ համարձակութեամբ ձեզի կը հարցնեմ՝ թէ խաղաղութիւն ընելու համար ի՞նչ պայման կը պահանջէք. հասկցա՞ք. հաւատացէ՛ք ինձ, Մարթա՛, թէ պատուոյս և արժանապատուութեանս յարմար բաներն ընելու համար զաղտագողի ճամբայներու, կեղծ և համոզիչ ձևերու պէտք չունիմ. ուրեմն ինչ որ ենք, նոյնը մնանք, ըսել կ՚ուզեմ թշնամի. խօսեցէ՛ք . . . . կ՚սպասեմ։

Կինն երբեմն իրեն այնչափ հպատակ գերույն արութեան ապստամբութեան չէր կրնար հաւատալ, և ժըպտելով, թէպետ և ժպիտը քիչ մը բռնաղբօսեալ էր,

— Այդ տեսակ խօսքեր մի՛ ըսէք, ըսաւ, և ձեռքերնիդ ինձ տուէք, թերևս առ ձեզ անիրաւ դանուած եմ, բայց եթէ . . . . .։

Կինը վարանման ձև բռնեց։

— Եթէ՛ . . . . . հարցուց Ռըլիէֆ։

— Եթէ զձեզ սիրեմ, ըսաւ կինը խոժոռելով։

— Առաջին անգամը չէ որ այդ խօսքը կ՚ըսէք ինձ։ Սակայն լաւ գիտէք որ այսօր ձեր սէրն ինձ անօգուտ է։ Միշտ զձեզ երբև ուրիշի մը կին պիտի յարգեմ և բնաւ զձեզ առնելու ամենադոյզն ղադափար մ՚անգամ սրտիս մէջ տեղի պիտի չունենայ. որովհետև մի՛ մոռնաք, Մարթա՛, թէ կը յուսայի ձեզի հետ ամուսնանալ. եթէ դիս կը սիրէք, կամ դոնէ, ըսաւ ծաղրական ձևով, եթէ դիս սիրելու նպատակ ունիք, ալ աւելի իրաւամբ պէտք է որ մեկնիմ։ Այդչն զձեզ սիրելէ դադրած եմ,

և չեմ ուզեր ալ որ զձեզ անարդելու դիջանիմ։

— Չէ՞ք հաւատար ինձ։

— Ո՛չ, և չեմ փափաքիր ալ հաւատալու։

— Սարգի՛ս, կեցէ՛ք, կ՚աղաչեմ։

— Մարթա՛, հաւատացէք որ եթէ մեկնիմ, թէ՛ ձեզ և թէ՛ ինձ համար աղէկ է։

Մարթա իւր ձեռնոցներէն մին պատուեց և աչքերէն սկսաւ հուր ցայտիլ։

— Եթէ ձեզի ըսեմ, ըսաւ Մարթա Ռըլիէֆին, որ նոյն իսկ ձեր ապստամբութիւնը զձեզ իմ առջև աւելի բարձրացուց, եթէ ձեզի ըսեմ՝ թէ սկսայ դիտալ որ հպարտութիւնն երջանկութեան չենպատտեր, վերջապէս եթէ ըսեմ ձեզի թէ կը հաւատամ որ մեծերուն մէջ մեծ և ազնուագնեալն մէջ ալ ազնուագոյն էք . . . . .։

— Սպասապե՞տը, սպասապե՞տը, աղաղակեց ոգեսպառ դինուոր մը, սրահը մտնելով։

Մարթա հայելիին մէջ նայեցաւ, իւր դէմքին ներքին դուրս ցցուած մազերուն խոպոպիքը չտկեց և դուրս ելաւ Ռըլիէֆին ըսելով.

— Ինչ կենաք, այնպես չէ՞։

Զօրապետը դլուխը շարժեց, մէկ ձեռքը ճակտին վրայ դրաւ և Մարթային եաւէն դնաց խորին հառաչանք մ՚արձակելով։

Թալարի—թիմուրը (1)նեղ հրապարակ մ՚է, հըրաչակաւոր կէօր Նաշը՝ զոր թիմուր իւր գահոյն պատուանդանն ըրած է, կառավարչին պալատը մտնելու դրան դիմաց կը գտնուի։ Եթէ աւանդութեան հաւատալ պէտք է, կ՚ըսուի թէ այս մեծ քարը Պրուսայէն հոն փոխադրուած է. Պատին վրայ, քարին եաև, Մահմուտ և Ալափուլ — Մէճլիս սուլթաններէն ստորագրեալ երկու Ճէրճան կայ, որոց մէջ Էմիրներուն ուրբաթ օրերն

(1) Թիմուրին ժողովոց սրահը։

աղօթք ընելու հրաման տրուած է : Պղնձէ թիթեղան մը վրայ հին արաբական տառերով գրուած արձանագրութիւն մը կայ , որ թաթար յաղթականին նախկին մեծութեան և չքեղութեան կը վկայէ · կը կարծուի՝ թէ այս թիթեղը Պայազիտ—Երզրրում սուլթանին դանձէն վերցուած է : Հրապարակին միւս կողմը կամարաձև դուռ մը կայ՝ որ ընդհանուր կառավարչին բնակարանը կ'առաջնորդէ ,

Մարթա Թալարի — Թիմուրին մէջ պիտի ընդունէր կայսեր փոխանորդը · Հրապարակը մարդկանց բաղմութեամբ լի էր · պաշտօնակալները , Սարթիներուն , Իօզպէքներուն և Տաճիկներուն դվխաւորները հոն ժողվուած էին : Մարթային մնաց առեն , բոլոր բաղմութիւնն դէպ 'ի իր կողմը գնայ · նոյն միջոցին դիմացի դուռը բացուեցաւ և երկու սպարապետներն սեամին վրայ երևեցան : Պաշտօնակալները դինուորական ողջոյնն ըրին , Իօզպէքները ձեռքերնին ճակատներնուն վրայ դնելնէն վերջը՝ յերկինս բարձրացուցին , Սարթիներն ալ ծունկի եկան , և Նորին Բարձրութիւնը Բօֆման սպարապետ խոնարհած դլուխներու երկու կարգի մէջ տեղէն անցաւ և Թիմուրի քարին մօտեցաւ , որուն վրայ դեղեցիկ , մեծամիտ և մեղկ Մարթա իրեն կ'ըսպասէր խնդալով : Ծերունին և դեղեցիկ աղաղոնն՝ զոր մեր ընթերցողք արդէն կը ճանչնան , սպարապետանեցուն ետևէն կ'երթային : Քաղաքավարական ձևերը լըմննալէն վերջը , Բօֆման ծերունւոյն ձեռքէն բռնելով ,

— Տիկի՛ն , ըսաւ Մարթային , քաղաքավարութեամբ ծունկը ծռելով , մեր երևելի դիւռուններէն մին , Ժէկօր Ազէքսանդրօվիչ կօրէֆ ձեղի ներկայացնելու պատիւն ունի : Ժէկօր Ազէքսանդրօվիչ կը փափաքի քանի մ'ամիս Սմրղանդ բնակիլ իր ուսումնական գննութեանց պարապելու համար · Նորին կայսերական Բարձրութիւն գահաժառանգ մեծ դուքսն և Տիկինն մեծ դքսուհին Ժէկօր Ազէքսանդրօվիչ և իր աղջիկն ինձ

յանձնեցին : Արդէն Մօլօթօֆ սպարապետը դիրենք կը ճանչնայ , և եթէ ես անձամբ զիրենք ձեղի կը ներկայացնեմ , ձեզ աղաչելու համար է որ լաւ ընդունելութիւն տաք , և իրենց Սմրղանդ բնակելը ղուարճալի ընէք :

Թէպէտ և Մարթա քիչ մը խոժոռեցաւ Լիղը տեսնելով , սակայն վայելուչ կերպով սպարապետին և իր նոր հիւրերուն առջև խոնարհեցաւ :

— Ձեր փափաքները , սպարապե՛տ , ինձ համար հրամաններ են :

— Ոչ ոք հրաման տալու իշխանութիւն ունի այն տեղ՝ ուր բաղմած էք , տիկի՛ն , պատասխանեց Բօֆման : Արդէն ձեղի ըսի , Ժէկօր Ազէքսանդրովի՛չ , թէ մեր երկիրներուն մէջ կառավարիչներն ամենազօր են · Ես կ'երաշխաւորեմ՝ թէ Մօլօթօֆ սպարապետը ձեզ ամէն կերպով պիտի պաշտպանէ · բայց ահաւասիկ այս տեղեաց ճշմարիտ իշխանուհին , չարունակեց փոխարքային տեսակ մը հեղնութեամբ · իմ իշխանութիւնս անդամ իւր առջև կը դադրի · Չանացէ՛ք իրեն առջև չնորհք դանելու :

— Ամէն ջանք 'ի դործ պիտի դնեմ տիկնոջ ամենէն հնազանդ հպատակներու կարդը մնանելու , պատասխանեց Ծերունին :

— Խիստ կ'ուրախանամ դիտուն հպատակ մ'ունենալուս վրայ , ըսաւ Մարթա խնդալով : Բայց Ձեր Բարձրութիւնը բաղուկս ընդունելու պատիւը պիտի ունենա՞յ , որպէս դի իւր բնակարաններն ցուցնեմ . Պարոն Բլօց , չարունակեց Մարթա , հաճեցէ՛ք պարոնին բնակութեան տեղն որոշելու · իսկ դալով օրիորդին , այսօր իրեն իմ անենեակս կ'ուտամ . վաղն աւելի վայելուչ տեղ մը կ'որոշենք :

— Շնորհակալ եմ , տիկի՛ն , պատասխանեց Լիղ :

— Սրդեօք այս ձայնն և այս կերպարանքն ո՛ւր լսած և տեսած եմ , կ'ըսեր Ռըլիեֆի ինք իրեն պաշտօ-

նակալաց բազմաթեան մէջ խոոված ։

— Բարեհաճեցէ՛ք քիչ մը հոս սպասել ինձ , շարու֊նակեց Մարթա , հինգ վայրկեանէն կը վերադառնամ ։ Նկէ՛ք դուք , սպասարկո՛ւհի , գրեթէ միայն ղգեստնիս փոխելու ժամանակ ունինք , որովհետեւ կերակրոյ ժա֊մը հասած է ։

— Ա՛հաւասիկ եմ , տիկին , ձեր հպատակներին ա֊ռաջինը , պատասխանեց մեծարանօք կայսեր փոխանոր֊դը , բաղուկը Մարթային տալով ։

Երբ Ռըլիէճ ձեկուրը սարաւ , Լիզ հրապարակին մէջ ձնալով աչքերը չորս կողմը դարձուց , և Ռըլիէճին գե֊ղեցիկ դէմքին վրայ կը նայէր ։ Ռըլիէճ ալ զինքը կը դիտեր ։ Լիզ ուրախութեան աղաղակ մ՚արձակեց , և դեպ ՚ի Ռըլիէճին կողմն երթալով ,

— Սարդի՛ս , ըսաւ , հօր եղբօր որդի՛ս , դուք հո՞ս էք ։

— Լի՛զ , ըսաւ Ռըլիէճ , աղջիկը ճանչնալով ։

— ի՞նչպէս , դո՞ւք էք , Սարդի՛ս , մենք ամենքնիս ալ կը կարծէինք թէ Իտալիա կամ Ջուէցերիա էք ։ Հոս հեռի երկրի մը մէջ զինուորակա՞ն էք ։ Բայց դիտէ՞ք , պարո՛ն , թէ բոլորովին երջանիկ եմ ։

— Սիրելի՛ հօր եղբօրս դուստր ։

— Դրկեցէ՛ք զիս . . . . . ի՞նչ տեսակ զուարճալի չըջագայութիւններ պիտի ընենք ձեզի հետ ։ Զգուշա֊ցէ՛ք որ վայրենի կեանք վարելու չսովորիք ։ Ա՜հ , որչա՛փ գոհ եմ ։

Երիտասարդ աղջիկը կը ծափահարէր , առանց պաշ֊տօնականին ճակտին վրայէն անցած ամպը դիտելու ։

— Ա՛յո՛ , սիրելի Լի՛զ ըսաւ Ռըլիէճ , որչափ տաճն որ հոս ճնաք , ես ալ այնչափ պիտի ճնամ ։

— Երկայն տաճն պիտի տեւէ , պատասխանեց Լիզ , որովհետեւ պիտի տեսնեմ հայրս՝ որ հոս իւր բնակու֊թիւնն երկարաձգէ ։

— Ո՞հ , ուրեմն չէ՞ք դիտեր . . . . . ընդմիջեց Ռըլիէճ , պիտի ճնամ . . . . . կ՚ուզէի մեկնիլ , բայց հի֊մա ոչ , ո՛չ , կը ճնամ ։

— Սիրելիս թողելու նպատա՞կ ունէիր ։

— Ա՛յո՛ ։

— ի՞նչ ձախող կերպով կ՚ըսէք լինձ այդ խօսքերը ։ վչտաց մէ՞ջ էք ։ վստահ եմ թէ պիտի իմացնէք լինձ ձեր վշտերը ։ բայց ամէն բանէ յառաջ սա՛ կը հարցնեմ թէ ի՞նչպէս էք հոս ։

— Եւ դո՞ւք ։

— Ո՜հ , ե՜ս , մօրս մահուանէն ՚ի վեր ամէն կողմ կը֊թափառիմ ։ Հայրս զանազան ուսումնական ընկերու֊թեանց անդամ եղած է և միշտ կը ճանապարհորդէ ։

Ռըլիէճ տեսնելով որ Մարթա իրենց կողմը կ՚ու֊դար , ընդմիջեց Լիզին խօսքը ։

— Սեղանի վրայ տեղերն որոշելու պաշտօնն լինձ յանձնուած է , ըսաւ Ռըլիէճ Լիզին , ղքեզ քովս կը֊նստեցունեմ և ուղածնուս պէս կրնանք խօսիլ կերակրոյ միջոցին ։

Կոմսուհին մօտեցած էր ։

— կը ճանչնա՞ք պարոն Ռըլիէճը , հարցուց Մարթա Լիզին ։

— Իրարու հօր եղբօր որդի՛ եմք , տիկի՛ն ։

— Ա՜հ . . . թերևս ղգեստ փոխելու պէտք ունիք , կ՚ուզէ՞ք սենեակս գալ ։

Մօլէթօֆ կոմսուհւոյն այս խօսքերն ըսելու պատ և դրեթէ դառն կերպն երիտասարդ աղջիկը զարմացուց ։

— Հրամաննեերուդ հնազանդ եմ , ըսաւ Լիզ ։ Քիչ առենէն կը վերադառնամ , Սարդի՛ս ։

Ռըլիէճ երկայն առեն երկու տիկիններէն դիտեց մին֊չև որ որմին կամարաձև դուռնէն դուրս ելան ։

— Ո՜հ , ա՜խ , պիտի չդմեկնիմ , հիմայ պարտքս է այս աղջիկը պաշտպանել , ըսաւ Ռըլիէճ ինքնիրեն ։

Կերակուրը լմնցնելու մօտ էր ։ Մարթա ինչպէս կը֊նախազգահէր , աշակողմն ընդհանուր կառավարիչն , իսկ

ձախ կողմը Ժէկօր Աղէքսանդրօվիչ նստած էին : Բազմա-
թիւ հրաւիրեալներ կային . վայլուն , ծաղրական և
այլանդակ զգեստուց տարազներով քանի մը տղէղ տիկ-
նայք և պահպանութեան բարձրաստիճան պաշտօնակա-
ցաց կիները հոն հրաւիրուած էին :

Ա.յս կանանց մէջ, Մարթա մարդարտազարդ զգեստ
մը հագած , աստղի պէս կը փայլփլէր : Կիները շարու-
նակ Նորին Բարձրութեան և կոմսուհւոյն վրայ կը նա-
յէին : Երբեմն երբեմն ընդհանուր կառավարիչն իրենց
ղուարճալի խօսք մը կ'ըսէր , նոյնպէս ալ Մարթա .

Կերակրոյ առեն ըստութիւնը տիրած էր , որովհե-
տև Նոցին վսեմութիւնները չէր դիտողները ձայներնին
բարձրացնելու չէին համարձակեր , և միայն իրարու
հետ կը չշնջէին :

Ա.յս թիւէն էին Լիլ և Ռըլիէֆ . ցած ձայնով իրա-
րու հետ կը խօսէին , բայց խօսակցութիւննին վառվը-
ռուն կ'երևէր : Լիլ իր հօր եղբօր որդւոյն պատմած
էր թէ մօրը մահուանէն առաջիկ յուղեալ , ինք-
զինքը գիտութեան տուած էր , թէ Ժէկօր Աղէքսան-
դրօվիչ կառավարութենէն պաշտօն խնդրած և ըն-
դունած էր , և թէ այս պաշտօնը դէխաւորապէս Թուր-
քաստան և մանաւանդ Սմիրնան երթալուն վրայ կը
կայանար , Տարեներան և Իրանեան ցեղերուն ծադում-
ները ուսումնասիրելու համար . և թէ ի՞նչպէս ինք , որուն բը-
ժիշկները պատուիրած էին Բեդրասուրվի կլիմային ա-
ւելի լաւ կլիմայ ունեցող տեղ մ'երթալ , և կ'ուզէին
զինքը նիկիա ղրկել , համոզած էր հայրն որ զինքն ալ
իր հետ Սմիրնա բերէ :

Ռըլիէֆ իր զինուորական կենաց համառօտ նկա-
րագրութիւնն ըրած էր Լիլին . պատմած էր թէ առ-
ուճանէ աստիճան բարձրանալով . վերջապէս գնդին
մէջ դօրապետ եղած էր : Սակայն երիտասարդ աղջկան
յաճախ կրկնած հարցմանց հակառակ , բնաւ իրեն իմա-
ցնել ուզած չէր թէ ի՛նչ պատճառ դրդած էր զինքն պահ-

պանութեան պաշտօնն յանձն առնլու : Ձանազարհոր-
դութեանց և արկածից վրայ անչափ սէր ցցուց, խաղու
մէջ ըրած կորուստներուն և Մ'օլօթօֆ սպարապետին
հետ ունեցած յարաբերութեանց վրայ խօսեցաւ . վեր-
ջապէս ճշմարտութենէ դատ ամէն բան պատմեց :

— Տակաւին այս առաւօտ , ըսաւ Ռըլիէֆ , կ'ուզէի
արշաւանաց մէջ մնալ , որ քիչ առեն տեղի պիտի
ունենայ , բայց ձեր գալուստը խորհուրդները փոխեց :
Պէտք է որ ձեր տղայութեան բարեկամն զձեզ պաշտպա-
նելով լեցունէ այս հեռաւոր երկրին մէջ . ուրեմն կը-
մնամ , և առ ձեզ ունեցած անձնուիրութենս կը ցու-
ցընեմ .

— Խիստ լաւ , հօր եղբօր որդի՛ս :

— Թողէ՛ք որ դձեզ դիտեմ և ձեր վրայ զարմանամ :
Ի՞նչպէս դեղեցիկ և չքնաղ էք :

— Ո՛չ պէսպիսի խօսք մի՛ ըսէ՛ք , Սարդի՛ս , ըսաւ
Լիլ ծիծաղելով : Կ'ինամցնեմ ձեզի թէ այդ առեակ մե-
ծարանքները կ'անարդեմ : Նիթէ կ'ուզէք լինձ սիրելի
ըլլալ , դդուշացէ՛ք պ.դպիսի խորհուրդներէ : Ուռանց
սահմանութիւն և չողոքորթութիւն ընելու , իրարու
բարեկամ ըլլանք ինչպէս էինք կանուխէն :

— Ո՛հ , լաւ , ես ալ կը փափաքիմ որ այդպէս ըլ-
լայ , բայց դիտէ՛ք թէ չքնաղ էք :

Լիլ խաժոռելով ,

— Տակաւի՛ն , ըսաւ ,

— Սիրահարները պիտի ունենաք , ինչպէս կրնաք
արդիլել ղանոնք որ ձեզի չըսեն՝ թէ . . . . . :

— Ձանոնք լինձմէ հեռացնելու միջոցները դիտեմ :

—Ձեր սիրտը բնաւ մեկուն հետ խօսած չէ՞ :

— Ա.ւա՜ղ , ո՜չ , պատասխանեց Լիլ ղուարճալի կեր-
պով մը , և կը յուսայ թէ Սմիրնայի մէջ ձեղնէ զատ ու-
րիշ մեկը պիտի չդանէ՝ որուն հետ կարենայ խօսիլ , որով-
հետև հոս տեսած մարդիկներէս ամենէն քիչ ձանձ-
րացողը դուք էք :

— Ո՜հ, ո՜հ, չոլոքորթիչ մեծարանքները կ՚արդիլէք, բայց դուք ալ կ՚ընէք։

— Հաւատացէ՛ք, Սարդի՛ս, որ մեկուն սիրահար ըլլալու ամենադոյն պղտցում անդամ չունիմ։ Կեանքս հօրս և քանի մը ծեր դիանոց հետ անցուցած եմ։

— Բայց ես . . . . . ։

Ռըլիէֆի խօսքն ընդմիջեց երբ Մօլօթօֆ ապարատը դաւաթին ՚ի ձեռին ոտքի վրայ ելլելով։

— Պարոնա՛յք, դոչեց, մեր երևելի հիւրին, մեր պատուաւոր դլխաւորին, Նորին Բարձրութեան փօֆմանի ապարատներուն կենացը կը խմեմ։ Թող ամբողջ խաղաղասէր, երջանիկ և հարուստ երկիրն ինձ հետ Նորին կայսերական վեհափառութեան վոխանորդին կարկառ կեանք, պատիւ և մեծութիւն մաղթէ։ Կեցցէ՛։

— Կեցցէ՛, աղաղակեցին միաբերան հրաւիրեալները։

Ջինուորական երաժշտութիւնը սկսաւ քաղցր եղանակ մը հնչեցունել և հրաւիրեալները դաւաթին իրարու դարկին. վերջը լռութիւնը տիրեց, որովհետև Նորին Բարձրութիւնը նշան ըրած էր՝ թէ խօսիլ կ՚ուզէր։ Անյապաղ լռութիւնը տիրած էր՝ որ ճանճին թռչիլն անդամ կը լսուէր։ Ընդհանուր կառավարիչը դաւաթն ՚ի ձեռին, Մարթային առջև խոնարհելով,

— Տիկի՛ն, ըսաւ, ներեցէ՛ք, ձեր կենաց պիտի չխմեմ, այլ յաջողութեան մը և ուրիշ մեկուն համար։

Մարթա գլխով նշան ըրաւ։

— Պարոնա՛յք, շարունակեց ապարատը, փիլիսոփաները և մեծ թիւրքմէնները այսպէս դարերէ ՚ի վեր դող և աւազակ, մեր համբերութիւնը հատցուցին Ռուսական արծուեդրօշին պաշտպանութեան ներքև դանուած երկիրներուն մէջ աւարառութիւն և յափշտակութիւն ընելով։ Նորին Բարձրութիւնը Մօլօթօֆ ապարատս և ես մտածեցինք որ ղերծնք բնակչին ընենք, և որոշեցինք մեր քաղ զօրքերէն վաշտ մը ղրկել

այս աննուաճելի և վայրենի հէնները կոտորելու համար։ Անշուշտ տեղերնիս հեռու և վտանգաւոր է, կ՚երևի որ դործերնիս չյաջողի, որովհետև մեր առջև ընդարձակ և անծանօթ անապատներ և քաջ և բարբարոս թշնամիներ պիտի ելլեն։ Ջեմ կրնար ըսել թէ յաղթութիւնը մեր քաջերուն կողմը պիտի ըլլայ. ասկա միայն Աստուծոյ դիտնալու բանն է. բայց եթէ մեր քաջերը յաղթուին ալ, դարձեալ վրէժ պիտի խնդրեմ նոյն վայրենիներէն։ Պարոնա՛յք, այս արշաւանաց յաջողութեան և անոր հրամայող պաշտօնակալին կենաց կը խմեմ։

— Կեցցէ՛ Նորին Բարձրութիւնը, աղաղակեցին պաշտօնակալը։

— Սպարապե՛տ, ըսաւ կայսեր վոխանորդը Մօլօթօֆին, կը վստահիմ որ արշաւանաց հրամայող պաշտօնակալն ինձ ցուցնէք, որպէս զի անունը դիտնալով իւր կենաց խմեմ։

Մօլօթօֆ պիտի պատասխաներ, բայց Մարթա երկմէ առաջ ընդհանուր կառավարչին ըսաւ.

— Ձեր վսեմութիւնը կը ներէ՞ ինձ քանի մը խօսք ընել այդ մասին։

–Տիկի՛ն, պատասխանեց փօֆման զարմացած, պէտք է որ մենք ձեզնէ հրաման խնդրենք խօսելու համար։

Մարթա չարութեամբ ժպտելով,

— Հիմա, սպարապե՛տ, ըսաւ, ձեզի այնպիսի զօրապետի մ՚անուն պիտի տամ՝ որ եռանդեամբ կըխափանէ այս արշաւանքն ընել, և տակաւին այս առաւօտ իւր այս մասին ունեցած իղձն ինձ յայտնեց։ Երկանս առաջին օգնական—զօրապետներէն մին է, և կարծեմ իրեն մեծ հաճոյք պատճառած կ՚ըլլամ իրեն համար այս չնորհքը խնդրելով։ Այս պաշտօնակալը Ռըլիէֆի զօրապետն է։

Կամուհուդին այս խօսքերը կայծակէն աւելի ազդեցութիւն ըրին զօրապետին վրայ. ամբոխին վրայէն եղաւ և ուղեց քանի մը խօսք ընել, բայց Մօլօթօֆ բոլորովին

ափշած իրմէ առաջ բերանը բանալով,

— Ռըլիէֆ, ըսաւ, առաջինն օդնական – զօրապե՛տը, կարելի չէ. մեծապէս կը սխալիք, սիկին.... ։

Մարթա խոժոռ դիմօք Մօլթօֆին վրայ նայելով՝ խօսքը կէս թողուց ։

— Ճշմարիտ չէ՞, զօրապե՛տ, հարցուց Մարթա ։ Ըսի՞ք ինձ՝ թէ կը փախաքիմ մեր ձարին և մեր տուրք հաւատքին թշնամւոց դէմ պատերազմիլ ։ Ուրեմն չեմ սխալիր, մանաւանդ թէ ձեր իղձը կը լեցնեմ Նորին բարձրութենէն ձեր համար այս ընծայքը խնդրելով ։

Ռըլիէֆ կրնար Մարթային՝ այս խօսքերուն ճիշդ կերպով պատասխանել, բայց չուզեց ։

— Ճշմարտութիւնը խօսեցար, ընծայական եմ սիկին, ըսաւ,

— Խիստ լաւ, ըսաւ կայսեր փոխանորդը, զձեզ կը ճանչնամ, զօրապե՛տ, և դիտեմ թէ ձեր դրից և բախտին ընծայիւ գեղեցիկ ասպարէզ մը բացուած է ձեր առջև ։ Հայրենասիրութեանդ փորձը ցցուցած կըլլաք այսպիսի արշաւանք մ՚ընելով. Սակայն միայն զօրապետ էք, և այս առաւօտ Մօլթօֆ սպարապետին ըսի՝ թէ փիլիսոփաներուն դէմ հրամանատարի մը իշխանութեան տակ ամբողջ վաշտ մը դրկել պէտք է. արդ խօսքիս վրայ հաստատուն կը մնամ ։ Նորին կայսերական վեհափառութեան ինձ ընծայած լիազօր իշխանութեանց ըօրութեամբ զձեզ հրամանատար կանուանեմ, Ռըլիէֆ զօրապետ, և ձեր կենաց կը խմեմ ։ Պարոնայք, ըսաւ սպարապետը բազմականներուն, Ռըլիէֆ հրամանատարին կենաց բաժակ կառաջարկեմ ։ կեցցէ՛.

— կեցցէ՛, պատասխանեցին հրաւիրեալները ։

Գաւաթներուն և խօսակցութիւններուն ձայներն երկար ատեն սրահին մէջ լսուեցան ։ Ռըլիէֆ իւր գաւաթը սպարապետին գաւաթին զարկաւ, և Մարթային խոժոռ դիմօք ընծայէն վերջը տեղը նստաւ,

իրեն ամէն կողմէն եղած բարեմաղթութեանց բոլորովին խուլ, անզգայ և համր ։

— Այս կինը զձեզ կը սիրէ՞, հարցուց Լիլ Ռըլիէֆին ։

— Ի՞նչ գիտեմ, մրմնջաց Ռըլիէֆ ։

Հրաւիրեալները ղոյդ ղոյդ ուրիշ սրահ մը գնացին սուրճ խմելու համար ։ Իսկ Ռըլիէֆ հոն ձնայ ախտը, մաախտրհ և գլուխը ձեռաց մէջ դրած ։

— Ի՞նչ այլանդակ գաղափար ունեցաք, սիրելի՛ս, ըսաւ Մօլթօֆ, Ռըլիէֆին քովէն անցնելով ։

ԳԼՈՒԽ Է.

ՊՈՒԽԱՐԱՅԻ ԷՄԻՐԸ

Սեխա—Մուզաֆֆեր—Տին—Խան, Պուխարայի Էմիրը, կարմիր չուխայէ բազմոցի վրայ նստած էր, ուր կը գտնուէին բազմաթիւ գրքեր և ձեռագրեր. Դիմացը՝ քառակուսի դարգերու վրայ չորս պուխարայի (Ուզբ.) յառաջապահք օրինականայ, իրենց երկայն և սպիտակ մօրուքները կը շոյէին՝ երինոսէ համրիչ քաշելով։ Դարգերէն փոչ մը յառաջ բարձր բազմոցի վրայ, Ինկիլիզ գլխաւորը, որ (Բէյ) պաշտպան կրօնից ալ էր, արաբերէն միածալ մատեան մը կը կարդար։ Այս պաշտօնեայն խանութեան մէջ մեծ անձ մ' էր. իրեն կրօնից գլխաւոր՝ իւր ազդեցութիւնն Էմիրին բռնապետական իշխանութեան հետ հաւասար էր, և իւր անհատականութիւնն անհակառակելի և նուիրական։ Սրահին մէկ անկիւնը, ծաղկենկար հանդերձով և կանաչ ապարօշով ծերը մը ցած ձայնով քառանամեայ մարդու մը հետ կը խօսակցեր. այս վերջինը սև և գեղեցիկ մօրուք մ'ու մեծ աչքեր ունէր և Ս.Ժաերխանի բարձր և սրածայր գլխարկ դրած էր։

Ծերը՝ որ Շեյխ-ուլ-Իսլամ—ձեղալ—Իսլամին կը կոչուէր,

առաջին Վեզիրն էր. իւր խօսակիցը՝ Պարսիկ Միրզա—Մուհամմէտ, Էմիրին ոստիկանաց գլխաւորն էր։

Կանուխէն Միրզա—Մուհամմէտ արդի Էմիրին հօրը Նահրուլլահ Պահատուր—խանին իբրև գերի վաճառուած, իր խորամանկութեամբը, ճարպիկութեամբն և իւր ցեղին բնական եղած նենգութեամբ՝ Մուզաֆֆերին առջև չնորհք գտած և անոր աչքը մնած էր։ Իւր գերութեան վիճակէն ելլելով, խորհրդակից եղած և մինչև այն բարձր պաշտօնին հասած էր, զոր կը կատարէր մինչև այն վայրկեանը՝ յորում մեր պատմութեան յանկարծադէպ վտիտմունքները ի'սահպեն ըզմեզ մեր ընթերցողաց հոչակաւոր Պուխարա ճանապարհորդել տալ։

Սեխա—Մուզաֆֆեր - Տին յիանամեայ, միջին հասակով և չափաղանց գեր մարդ մ'է։ Սպիտակ ակռայներ և անօսր ու սև մօրուք մ'ունի, դէմքը թխադէմն և սակաւիկ մի դեղին. դիմաց դէմերն ալ կանոնաւոր և դեղեցիկ՝ եթէ բարկացած չըլլայ։ Երբ իւր հպատակաց միոյն վրայ նայի, իւր ցուրտ, խոժոռ և թափանցիկ հայեցուածն ամենէն քաջասիրտներն անգամ կը զարհուրեցնէ, մանաւանդ երբոր մտքերնին ալ բերեն իւր վսրած բացարձակ իշխանութիւնը։ Նահրուլլահ—Պահատուր Էմիրին երկրորդ կրտսեր որդին է. հայրը զինքն երիտասարդութեան տասն-բիրմէվ վոքրիկ քաղաքն աքսորեց։ Ծեր Էմիրին մահուանէն վերջը յանկարծ իւր դէրքն ալ փոխուեցաւ։ Եղկրին բացարձակ գլուխն ըլլալով, ամէն կերպով իւր նախորդին օրինակին հետևելու չձանաց։ Բռնապետ, արիւնահեղ և անառակ, բնաւ չը կրցաւ իւր անկարգութեանց առնձ դնել։

Թագաւորութեան սկիզբները, իւր բնաւորեալ մէկ քանի անդամներուն՝ որ կ'ուզէին գահն իրմէ յափշտակել, խռովութիւնները վերջացուց. յետոյ ստիպուեցաւ փիլչաքաց, Թիւրքմէնաց և խոքանտացւոց հետ պատերազմիլ և յաղթող դանուեցաւ։ Իւր անուան փառքը

չուտ մը ամբողջ կեդրոնական Ասիա տարածուեցաւ, իւր յաջողութիւններն ղինքն ալ աւելի հպարտացուցին և առաջնեկն աւելի անդուլ և բռնապետ եղաւ։

Ռուսաց՝ Խոքանտայի հիւսիսային կողմն եղող իւր երկիրներուն մէջ ըրած յառաջադիմութիւններն առաջ չին անդամ ոյնչափ չը դրդեցին ղինքը. այն տեղի մահմետականաց յատկանիշն եղող անդրդուդութեամբ բնաւ դգուշութիւն չէր ըներ։ Ձմեռնեկին հողը չէր իւր հպատակաց կամ կրօնակցաց պարտութիւնը, բաւական էր որ անոնց յաղթուելն ուղղակի իրեն չը վնասեր։ Երբեմն երբեմն վրէժխնդրութեան համար խռնութեան չուկայները անհաւատները կոտորելու հրաման կը ղրկէր և դարձեալ իւր անդրդայ անհոգութեան մէջ կ'ընկղմէր։

Շատ տարիներէ 'ի վեր իրեն ամարանոց յատկացուցած Սիրղանտի առուն իւր համար անակնունելի և անդուլ հարուած մ'եղաւ։ Սմրղանտ Պուխարայէն երկու հարիւր լիսուն քիլոմէթրը հեռի կը գտնուի. ընտրել է Ռուսք իւր մայրաքաղաքին դռներուն մօտեցած էին։ Մուզաֆֆերին վրայ խնդ ուխտաւոր բարկութիւն մը դալով, իւր պաշտօնեայներէն երկուքին գլուխները կտրել տուաւ, և անմիջական արշաւանք մը հրամայեց յանդուգն անհաւատներուն դէմ։ Իւր աղդեցութեան տէր սիրելիներուն ունանց խորհուրդները, այնպիսի խորհուրդներ, որ իրենցմէ մէկ քանիներուն կեանց պատճառ եղան, արդիլեցին ղինքը Սմրղանտի վրայ յարձակելէ իւր անկարդ զօրքերով։ Վերջապէս ղինքն ամբողջ Թուրքաստանէն օդնութիւն խնդրել յանուն սպառնացեալ կրօնից և աւերեալ երկրին։

Բոլորովին այս արշաւանաց պատրաստութեանց դրաղեցաւ. Ռուս անունը ղինքն անտարբեր թողած էր յառաջ, հիմա ընդ հակառակն ատելութեամբ և վրէժխնդրութեամբ վառուած էր։

Քիչ մ'առեն Մուզաֆֆեր իւր քաղաքական ղրաղմունքներէն դադար առնելով, սկսաւ Րէյնին և Ի-լէմանէրուան

հետ կրօնից վրայ խօսիլ։

—Ձեր կարծիքէն չեմ, յարդելի Րէյ», կ'ըսեր Մուզաֆֆեր, կը հաւատամ թէ մեր տուրբ Մարդարէին (Աստուծոյ օրհնութիւնն իւր վրայ ըլլայ) հրեշտակին միջոցաւ յերկինս վերանալուն և արքայութիւնը քննելէն վերջը վերադառնալուն մէջ երկու մանրերկրորդ անցած չէ. Մարդարէն տակաւին ամանին մէջ երկու հարիւր քառասուն լեռթին կաթիլ ջուր դտաւ, այնպէս չէ՞։

—Այո՛, պատասխանեց Րէյ»ը։

—Ամանն այնչափ մեծ չէր, որովհետև Մարդարէին սեղանին վրայ դրուած էր։ Այնպէս հաւատա՛, ինչպէս որ անցեալ օր քեզի ըսի, թէ ամանն երկու հազար հինդ հարիւր կաթիլ ջուր կը պարունակէր. կարծիքս ընդունելի է, որովհետև երկու հազար հինդ հարիւր կաթիլը բաւական բան է։

Րէյ»ը վայրկեան մը մտածելով,

— Աւելի պարունակած սիւտի չըլլար, պատասխանեց համոզմամբ։

— Երէկ առջևս քանի մ'անգամ մի և նոյն չափով ջուր պարունակուած աման մը կորզել տուի Մարդարէին ըրած կերպով, այսինքն յանկարծակի բաղխմամբ թեզանեայ անակնունելի տեսիլքէ զարհուրած և զարմայած մարդու մը պէս... Լաւ, երբ ամանն ոչ թէ ամբողջապէս այլ միայն կողմնակի ծռած էր, դործողութիւնն երկու մանրերկրորդէն աւելի չտևեց։

— Ճշմարի՛տ է, տէր արքայ, բայց Հաճի—Իչայէն կը կարծէ թէ Մարդարէն (Աստուծոյ օրհնութիւնն իւր վրայ ըլլայ) ո՛չ զարմացած և ո՛չ ալ զարհուրած է հրեշտակին տեսքէն։ Շուտով մը, բայց քաղաքավարութեամբ ոտքի վրայ ելաւ. ըրած շարժման պատճառաւ թեզանիքը թեթև կերպով սեղանին դպաւ, և ինչպէս յաճախ կը պատահի, ամանը թաւալման շարժումի մ'ունեցաւ։ Արդ, այս շարժումը կրնայ վայրկեան մը տևել առանց կաթիլ մը ջուր դուրս թափելու, և այն ատեն

երկու բան միայն կընայ յառաջ գալ. կամ ամբոխը դարձեալ ուղիղ կը կանգնի կամ կողմնակի կ'ինայ։ Եթէ ինայ, մէջը գտնուած չուրը ինչպէս Նորին Վեհափառութիւնը կ'ըսէ, առ առաւելն երկու մանրերկրորդի մէջ կը թաւալի. բայց վաթսուն մանրերկրորդ և երկու մանրերկրորդ՝ ամբողջ վաթսուն մանրերկրորդ և երկու մանրերկրորդ կ'ընէ։ Ուրեմն ճիշդն ըսելով, Մարգարէն (Աստուծոյ օրհնութիւնն իր վրայ ըլլայ), ամբողջ վաթսուն և երկու մանրերկրորդի մէջ յերկինս ճանապարհորդեց։

— Այս հաշիւը դո՞ւ գտար, Հաճի՛—ինայէ, հարցուց Մուղաֆիֆեր, Ի-Լճ-Ռնէրէն մէկուն։

— Այո՛, տէ՛ր արքայ։

— Գնա՛ դանձապահս կանչէ, թող քեզի հարիւր պէնկ (տեսակ մը ոսկի) վճարէ դիտութիւնդ վարձատրելու համար։

Յետոյ Մուղաֆիֆեր խօսքը Ի-Լճ-Ռնէրէն մէկուն ուղղեց, որ ուշադրութեամբ վիճաբանութիւնը մտիկ կ'ընէր։

— Հաճի՛ — Ռահմէտ, ըսաւ Մուղաֆիֆեր, քեզի ըսի որ կրկին անգամ կարդաս քօրանը. կատարեցի՞ր հրամանս։

— Այո՛, տէ՛ր արքայ։

— Լա՛ւ, ի՞նչ է քու կարծիքդ Իսլամին պատուէրներուն վրայ։

— Ձ-ուրը Աստուծմէ պատուիրուած և Մարգարէին աւանդուած պարտաւորութիւնն է։ Ինձ-Ռնէրը նոյն ինքն Մարգարէին աստուածային ներշնչութեամբ բղխեալ աւանդութիւնն է.

— Ճշմարի՞տ է. բայց Վ-ծլիպ և Մ-ր-Ռհոպ։

— Ասոնք քօրանին նոր մեկնիչներէն արուած կրօնական խրատներ են։

— Ուրեմն ըստ քո կարծեաց Վ-ծլիպը և Մ-ր-Ռհոպը պարտաւորիչ չե՞ն,

Հաճի—Ռահմէտ ծռելով,

—Ո՛չ, տէր արքայ, ըսաւ։

—Ուրեմն ես որ այս խրատներուն կը հետեւիմ կըրնամ կատարել կամ ոչ, և Բէյ-ը ստիպեալ չէ զանոնք չպահողները պատժել։

—Այս է կարծիքս, տէ՛ր արքայ։

—Մտիկ ըրէ՛, Ռահմէտ, ինչ որ ըսիր՝ ապստամբութեան և կրօնական անտարբերութեան նշան է։ Ձքեզ հոս կանչեցի աղատ կերպով վիճաբանելու համար. հիմա ղքեզ մեռցնել չեմ ուզեր, բայց կրօնքս կը պատուիրէ ինձ ղքեզ պատժել։

Էմիրն երկու անգամ ձեռքերն իրարու զարկաւ, ոստիկանաց ղէլեաուղը գալով ծունկի եկաւ։ Ի-Լճ-ան այլ յայլմէ եղած էր, բոլոր անդամներով կը դողար և Բէյ-ին վրայ աղաչողական հայեցուածք մ'արձակեց։

—Մուհամմէտ, ըսաւ Էմիրը. այս մարդը պիտի առնես, յետոյ ղղլուխ պիտի մերկացնես, ուղտի մը վրայ պիտի կապես, դէմքը կենդանւոյն ապիին կողմը դարձուցած, ղղլխան ալ բայ, որպէս զի արեգակն իրեն պայծառ դաղափարներ ուայ. այս վիճակին մէջ բոլոր քաղաքը պիտի պտըտցնել տաս. ասիկա երեք օր պիտի տեւէ, իւրաքանչիւր անգամին չորս ժամ։

—Լսելը հնազանդիլ է, պատասխանեց Մուհամմէտ։

—Գլխատե՛ն, թօթռալեց Ռահմէտ։

—Դահիճը, ըսաւ Էմիրը, պիտի առաջնորդէ ուղտին և պիտի ըսէ. ահաւասիկ այսպէս Էմիրը կ'ուզէ և Մ-ր-Ռհոպ սուրբ պատուէրները մերժող դաղջ մահմետականները կը պատժէ։

Ի-Լճ-ան, երկայն սպիտակ մօրուքով ծեր, դորգին վրայ ծունկի դալով Բէյ-ին կողմը ծռեցաւ և երկու ձեռքերն իրարու միացուց, որովհետև դիտէր թէ ղղլխաւորը մեկ բառով կրնար ղինքն պատժէ աղատել. բայց Բէյ-ը ուսերը թօթռեց, հատանականաբար սա մտածելով թէ դործն այնչափ մեծ չէր իր միջամտութեան արժանանալու համար։ Ծերը լալով մինչև Էմի-

ըլն ոտքին քով դնաց ծունկի վրայ եկած.

—Ներեցէ՛ք, կ՚աղաղակէր ծերը, մոլորութիւնս կը ճանչնամ։

Մուշաֆֆէր ալ աւելի դաժան կերպարանք մը առաւ։

—Ուրեմն քու տիրոջդ հակառակելու համա՞ր է, որ այս հերետիկոսական կարծիքդ յայտնեցիր։ Ցանցանքդ աւելի ծանր է։ Մուհամմէ՛տ, ասոր լեզուն կտրեցէք, որպէս զի անգամմ՚ալ չկրնայ հայհոյել։

Իւլէման տեսնելու և կարեկցութեան արժանի էր, դետին կ՚ինար լալով և ոռնալով, իւր վարդապետութիւնն և դիտութիւնը կ՚ուրանար և կը մերժէր։ Քանի մը վայրկեան Էմիրը ծերոյն դալարմանց և աղաղակներուն վրայ բերկրեցաւ. վերջը Մուհամմէտին նշան ըրաւ, որ դուրս ելաւ և դրեթէ չուտ մը վերադարձաւ իշխանին թիկնապահներէն երկու հոգի հետն առած։ Իւլէման իւր աղաչանքները կը շարունակէր։ Էմիրը յօրանջելով,

— Թո՛ղ սա՛ շաղակրատը վերջնեն, ըսաւ, դլուխս կը ցաւցնէ.

Ջինուորները չլլան աւին որ մինչև դռնէն դուրս հանելը Էմիրին կողմը կը նայէր, աչքերը լի արտասուօք և դողդոջուն ձայնով աղերսելով կ՚աղաչէր. Մուշաֆֆէր քաղաքավարական շարժմամբ ղՄուհամմէտ ըսպասեցուց, որ ջինուորներուն հետ դուրս պիտի ելլէր.

— Այս անբանին գործն յետոյ տեսէ՛ք. քաղաքին վրայ ի՛նչ նոր լուր կայ։

— Հպատակներդ երջանիկ են և կ՚օրհնեն զԱստուած իրենց քեզի պէս տէր մը տալուն համար. Պուխարայի մէջ նոր բան չկայ, տէ՛ր արքայ։

— Ա՜հ, հպատակներս մինչև այս աստիճան գիս կը սիրե՞ն.

— Չկայ հպատակ մը որ երբ անուանդ լսէ, սա՛ հեռաւեալ խօսքը չըսէ.—Իմի՛ւ թէ հարիւր քսան տարի ապրի —.

— Լա՛ւ. բայց այս անիծեալ Ուռուսնե՛րը։

Ռուսիկանաց դվխաւորը քիչ մը մտածեց։

— Բան մը գիտե՞ս, հարցուց Էմիրը.

— Այս առաւօտ մարդիկներս թիւրքմէն մը և անոր հետ ընկերացող կին մը բռնեցին։ Իրենք գիրենք Սմրղանտէն վախստական եկած կը ձևացնէին, և կը փափաքէին քու վեհափառութիւնդ տեսնել, բայց ղանոնք բանտ ղրկել տուի։

— Ինչո՞ւ հոս չբերիր։

— Ո՛ւզէի լաւ վերահասու ըլլալ որ անոնք Ուռուս դետեր չըլլան դքեզ սպաննելու համար հոս եկած.... Ո՛ւզէի դարձեալ անոնց հարցումներ ընել որոնել ղանոնք և այնուհետև քեզի ներկայացնել, երբ քու նուիրական դեղեցկութիւնդ դիտելու հրամանն եկաւ ինձ, և անոնց ղբաղելու ժամանակ չունեցայ։

Էմիրն ուրախութեամբ ժպտեցաւ։

— Լաւ չես ըրեր, հաւատարիմ Մուհամմէ՛տս. մարդասպաններէն երկիւղ չունիմ, և կ՚ուզեմ որ հպատակներս օրուան բոլոր ժամերը հոս ներկայ ըլլալով և գիս տեսնելով, համոզուին իմ արդարութեանս և իրենց համար ունեցած բարութեանս. դնա՛, անմիջապէս այդ բանտարկեալները հոս բեր։

Մուհամմէտ մեկնելու վրայ էր, բայց Էմիրը զինքը սպասեցուց։

— Սակայն, ըսաւ, որովհետև խոհեմութիւնը դըժբաղդաբար թագաւորաց առաքինութիւնն է, որոնել տուր զանոնք, չորս զինուոր դիր անոնց հետ, և դրան առջև ուրիշ չորսն ալ զինուոր, որ պատրաստ ըլլան եթէ հարկը պահանջէ. դնա՛ հիմա։

Երբ Մուհամմէտ դուրս ելաւ, իւլէմանը և վեզիրը սկսան ծափահարութիւններ ընել Մուշաֆֆէրին քաջասրտութեան համար. վերջը Մուշաֆֆէր շիւքրիւլ-

լահին հարցուց ։

— Մեզի ըսելու ի՞նչ ունիս, վեր՛ը ։

— Քիրչաքներն Ալմուին վրայ կը ժողովին , և Մէր֊վէն լուր առի՝ թէ Թիւրքմէնները կարծեմ մեզի տասը հազար հեծեալ զօրք պիտի տան ։

— Բարի՛ լուր ։

— Վերջնական որոշում մը տալու համար պատգա֊մաւորի մը կ՚սպասեն , զոր Սմրղանդ զրկած են իրենց նախկին դվխաւորներէն մէկուն խորհուրդ հարցնելու ։ այս գվխաւորն իրենց մէջ մեծ համբաւ ունի թէ՛ իւր դիտութեան և թէ՛ քաջութեան համար ։

— Բայց Խիվայի խա՞նը ։

— Սմրղանդի առումն իրեն վրայ մեծ աղդեցու֊թիւն ըրած է ։ Սակայն մինչև ցարդ Ռուսաց յառաջա֊դիմութիւններուն վրայ անտարբեր է , և ինձ ըսաւ թէ Սմրղանդ բնակող իւր բարեկամներէն լսին իրեն նոր յաղթականներուն և անոնց դէմ յարձակելը վտան֊գաւոր ըլլալուն վրայ խօսեր է ։ Խանը դիտէ ալ թէ Ռուսք Իւլտուզնէը չեն հալածեր ։

— Մէկտ—Մուհամմէտ միշտ թշնամիս եղած է ։

— Էլ—Իւմերա Էմիրը , իւր անդրանիկ եղբայրը , ո֊րուն հետ միշտ յարաբերութիւն կ՚ընեմ, խոստացաւ ինձ իւր բոլոր աղդեցութիւնը դործածել Խանին քով , որպէս զի զինքն քեզի օգնութիւն ընել ։ Տէ՛ր արքայ , կարծեմ թէ Թիւրքմէն տասը հազարաց վրայ յոյս դը֊նել պէտք է ։

Էմիրն ոտքի վրայ երևելով՝ ներկայ գանուողներուն վրայ հպարտ հայեցուած մը ձգեց , և ձեռքը դէպ յարևելս տարածելով ,

— Հարիւր հազար մարդէ բաղկացեալ բանակ մը պիտի ըլլանք , ըսաւ ։ Ի՞նչ պիտի կարենայ ընել մեր դէմ Թիմուրի սուրբ հողը ոդոդող կեռլ֊ընէրուն սուրը ։

— Ոչ ի՛նչ , աե՛ր արքայ , պատասխանեց Չէդէը ծը֊ռելով ։

— Անմիջապէս պատերազմ պիտի ընենք , վեր՛ը ։

— Թող քու վեհափառութիւնդ մտածէ ։ քու ան֊դին կեանքդ նուիրական է , և ինչո՞ւ պատերազմի մէջ ղայն ՚ի վտանգ դնել կ՚ուզես ։ Ռուսները հեռվէն ըս֊պաննող դնդակներ ունին , և իրենց կախարդութիւն֊ները զարհուրելի են , որովհետև չէդ֊էը դիրենք կը պաշտպանէ ։

— Կը մտածենք , վեր՛ը ։

Մօտակայ սրահին մէջ յանկարծական աղմուկ և շը֊փոթութիւն լսուեցաւ ։ Մուզաֆիֆեր դուռնատեցաւ և սկսաւ զօրքերը կանչելու աղաղակներ արձակել ։ Մար֊դասպանութիւններն այնչափ յաճախ են այս երկիրնե֊րուն մէջ որ ամենադոյզն աղմուկը զարհուրեցուցիչ դու֊շակութիւն կը կարծուի ։ Դուռն ուժգին բացուեցաւ և Սաֆիէր—Հաճի սրահը մտաւ , որուն հետևէն էին Մու֊համմէտ և չորս զինուոր , որ զՊաֆիէր բռնելու կը ջա֊նային ։

Էմիրը զարհուրած մինչև սրահին ծայրը փախաւ ։ Սաֆիէր—Հաճի մեր ճանչցած փայլուն Թիւրքմէնը չէր , հանդերձները պատռած , ապարօշը տիղմերով աղտո֊ղած , դէմքը քրտինքէն և փոշիէն սևցած , կատաղու֊թենէն ալ դունաթափ եղած էր ։ Սաֆիէրին հետևէն եր֊կու զինուոր ղէմինէ բերին , որ միշտ իւր կատէ եր֊կայն շապկով չրջապատուած էր , միշտ լուռ և ամօթ֊խած ։

Մուզաֆիֆեր իւր աղաղակները կը շարունակէր ։ Իւլտուզնէը գլուխնին ծռած ըլլալով , վեր նայելու չէին համարձակեր ։ Մուհամմէտ և զինուորները Սաֆիէրին չողոպրուցած դաչոյնէն խոհեմութեամբ հեռի կը կե֊նային ։ Միայն Րէյս ը արհամարհոտ , հպարտ և զօրա֊ւոր՝ իւր անձին բոլոր մահմետականներուն վրայ ազդած կրօնական ղդացմամբ , այս տեսիլը կը դիտէր ցուրտ և հեդնական ժպիտով ։ Էմիրին աղաղակներէն ուրիշ զինուորներ ալ սրահը մտած էին , և իրարու վրայ նա֊

յենէն վերջը, յարձակում պիտի ընէին, երբ Սաֆէր իրենց կողմը դառնալով, վհատանձնութեամբ մը չարժմամբ մը,

— Եա կեցէ՛ք, ըսաւ, ինձ մի՛ դպիք. Էմիրին առջևն եմ, և որովհետև ես ալ այս կ՚ուզէի, այլ ևս ինձմէ վախնալու բան չունիք.

Սաֆէր դաշոյնը տեղը դնելով և ձեռքերն ալ խաչաձև բռնելով,

— Տէ՛ր արքայ, ըսաւ Մուղաֆֆէրին, քեզի չարիք ընել չեմ ուզեր, հանդարտէ և ներէ որ . . . . .

Տասը վարդ (1) Սաֆէրը շրջապատեցին Էմիրին մէկ համր հրամանին հնազանդելով, որ ալ ապահով եղած էր տեսնելով որ իւր անձին ջնաս պիտի չդայ:

— Ընօգուտ է, ըսաւ Սաֆէր, արդէն ըսի՝ թէ քեզի չարիք հասցնել չեմ ուզեր:

Մերզա—Մուհամմէտ յառաջեց: Զգացած երկիւղէն դեղնած էր. բայց այս երկիւղին մղեգին կատաղութիւն մը յաջորդած էր.

— Ասիկա ջնաւոկար մարդ մ՚է, տէ՛ր արքայ, պատառը բերել տալէս վերջը, հրամայեցի որ որոնեն գինքը. տարճանակներ, դաշոյն մը, ոսկւոյ բաւական դրամ մը, և երեք չորս միլիոն փենկ արժողութեամբ ադամանդներ, այս ամէնն իւր գրպանիքներուն ներքև պահած էր:

— Ադամանդնե՛ր.

— Առաջին անգամ առանց ընդդիմադարձութեան գինքն որոնելու թոյլ տուաւ, շարունակեց Մուհամմէտ. խոժոռեցաւ՝ երբ ուզեցինք որ հեռու եղող կիներն ալ ըռնենք, սակայն վերջը հանդարտեցաւ: Այս կնոջ վերաբերեալ, տէ՛ր արքայ, կասկածելի բան մը չգտանուեցաւ. խիստ գեղեցիկ է, և սուտիւս ո՛չ թիւրքմենուհի և ո՛չ Սարթուհի է:

(1) Էմիրին թիկնապահ զօրաց այս անունը կուտան:

Մուղաֆֆէր խստութեամբ Մուհամմէտին հարցուց.

— Ուրեմն քոզը վերցուցի՞ր:

Մուհամմէտ զգայ որ սխալած էր, որովհետև մեղադրանք Էմիրը իսլամական պատուէրներէն մէկուն ոտնակոխ ըլլալուն վրայ կատակ չէր ըներ, և կրնար այս անզգամութեան հետևանքը ծանր ըլլալ:

— Ո՛հ, տէ՛ր արքայ, երբէք, պատասխանեց Մուհամմէտ:

— Ի՞նչպէս դիտես թէ գեղեցիկ է:

— Ջինքն որոնող կիներն ըսաւ:

— Ի՞նչ կերպով այս ապուռամբ մարդը մինչև հոս կրցեր է գալ, հարցուց Մուղաֆֆէր, ոսոխականաց դէպ խստութիւն պատասխանելէն հանդարտած:

— Երբ իւր գրպանները դատարկացուցին և ապրուշը քակեցին՝ հրամայեցի որ գինքը մերկացնեն, տեսնելու համար թէ արդեօք հանդերձներուն ներքև պահած ուրիշ գինք ունի՞: Հապա թէ ասիկա հրամայելս լսեց, յանկարծակի կատղեցաւ. հիանալի ուժով կապերը խորտակեց, դաշոյն մը քաշելով սասոիկ վիրաւորեց իմ քաջ մարդիկներէս երկուքը, և ուղղակի հոս վազեց այն նպատակաւ որ . . . :

Սաֆէր մինչև հոս լռութեամբ մտիկ կ՚ընէր. սակայն երբ այս վերջին բառերը լսեց՝ Մուհամմէտին խօսքն ընդմիջելով,

— Լռութի՛ւն, դերի՛, աղաղակեց, հիմա ես պիտի խօսիմ քու տիրոջդ:

Մուղաֆֆէրին հպարտութիւնն և բռնապետութիւնն ալ աւելի դրգռուած երկիւղ յայտնելուն համար, թիւրքմէնին խօսքերէն թշնամանուեցան, և իւր տասը գինուորներուն ետև ինքզինքն անյաղթելի կարծելով,

— Դո՛ւ ալ լռէ՛, ըսաւ Սաֆէրին, միայն այն ատեն կը խօսին Էմիրին՝ երբ հարցնէ:

Սաֆէր ծռելով ըսաւ.

— Կը հնազանդիմ, տէր արքայ,

— Որովհետեւ . . . . . : Բեղի ընելիք հարցմանցս համառօտ կերպով պատասխանէ : Ւսկի՞ կ'ուզաս :

— Մարդանաէն :

— Ինչո՞ւ հոս եկար :

— Բեղի ըսելիք ունէի :

— Ա՜հ . . . . . : Ո՞վ է այս կինը :

— Այդ հարցմանդ չեմ կրնար պատասխանել, տէր արքայ . միայն քեզի սա կրնամ ըսել՝ թէ մահմետական խոնոն մ'է, զոր անհատափներոն ձեռքէն ազատեցի :

— Լա՜ւ դու . . . : Մոբոճո*, ըսաւ Էմինէին, քօղդ վերցո՛ւր :

Գլխոյ շարժումմ մը ժխտական պատասխան տուաւ : Մուզաֆֆէր նշան ընելով, գինուոր մը քօղը վերցուց և թիւրքմէնուհւոյն չքնաղ դեղեցկութիւնը վայրկեան մը բոլոր ներկայ դանուողները զարմացուց :

— Ըրած գործդ վրայ պիտի ղրկաս, Էմի՛ր, ըսաւ Էմինէ իւր վեհ և քաղցր ձայնով . Մարդարէին օրհնութիւնը ոտնակոխ ըրիր :

Բէյ-ը թեթեւ մը խոժոռեցաւ :

Մուզաֆֆէր արհամարհանօք ժպտեցաւ : Սաֆիէր ձեռքը դաշոյնին տարաւ և բարկութեան նշոյլ մը յօրլաց իւր աչաց մէջ :

— Լա՛ւ, ըսաւ Էմիրը, դարձեալ քօղը դրէ՛ք : Այս կինը կանանոցիս համար պիտի պահեմ. իսկ դալով մարդուն, գլուխը կտրեցէ՛ք :

— Կ'աճապարես, Էմի՛ր, գոչեց Սաֆիէր :

Դաշոյնը քաշեց, իրեն մօտ եղող գինուորներէն երկուքը յերկիր տապալելով յառաջ նետուեցաւ : Մուզաֆֆէր զարհուրած Մէլէնէրոն հետ ծածկուեցաւ .

— Բռնեցէ՛ք այդ մարդը, և սպաննեցէ՛ք, կ'ա-

*կին :

զաղակէր :

Սաֆիէր բէյ-ին մօտենալով՝ վզին վրայ դտնուած մատանեայ դերձան մը քակեց, և կարմիր չքաղբամ մը հանելով ի-լէհանէրոն գլխաւորին ներկայացուց.

— Կը ճանչնա՞ս այս նշանը :

— Մէքքէի չէրիֆին կնիքն է, աղաղակեց բէյ-ը, ու տպշած խոնարհեցաւ :

Վերջը ձեռքը հաճիին գլխուն վրայ դրաւ և շուրջը նայելով,

— Ոչ ոք այս մարդուն պիտի դպչի, ըսաւ, Իսլամին պաշտպանութեան ներքեւ է :

ԳԼՈՒԽ Ը.

ՀԱՃԻ ՍԱՖԷՐ

Երբոր Իւլմանէն հետաքրքրութեամբ լրտեսց գլխաւորը կը դիտէին՝ Մուշաֆֆէր ընկճեալ իւր թիկնաթոռին վրայ ինկնալով հարցուց .

— Ըէյ՛ , ի՞նչ կը նշանակէ այդ ,

— կը նշանակէ՝ թէ այս մարդը Մեքքէի ղեւէֆէն ֆերմանը կը կրէ , որ կը հրամայէ բոլոր մահմետականաց օգնել ասոր՝ հարկը պահանջած ատեն : Ֆերմանը քարի վրայ սուրբ գրերով դրօշմեալ և Մարգարէին կնիքը կը կրէ : Շեւէֆը անիծանելով կ՚անիծէ հաւատացեալնե-րէն անոնք՝ որ ամենադոյզն չարիք ընելու կը համարձակին հասնիլ կրոջ այս մարդուն : Հապա թէ բոլոր մահմետականաց մէջ ասոր պէս ասը հոգի կը գըտնուի :

Մուշաֆֆէր՝ որ իւր իշխանութեան սահմանին մէջ հաւատքը մինչև մոլեռանդութեան տարած էր , հասկցաւ թէ յաղթուած էր : վայրենի մռնչիւն մ՚արձակեց .

— Ա՛յս մարդն ազատ է , ղինուորնե՛ր , ե՛տ քաշուեցէ՛ք :

Հրամանն աւելորդ էր , որովհետև Բէյ՚ին ձայնէն Սպասաւորները Մուհամմէտի հետ զարհուրած սրահին ամենէն մթին անկիւնը ժողվուած էին . վերջը յամրաքայլ իրարու հետ դուրս ելան :

— Բէյ՛ , ըսաւ Սաֆէրը , չքադրամին հակառակ կողմը նայէ , բան մը կայ՝ որ գիս ա՛լ աւելի լաւ պիտի ճանչցունէ :

— Բէյ՚ չքադրամը բացաւ . ոսկիէ փոքրիկ թիթեղ մը ինկաւ դետինը չքադրամին մէջէն . ի-լչմանէրէն մին առնելով՝ իւր դվխաւորին տուաւ : Բէյ՚ն այս թիթեղն վրայ դրօշմուած գրերը կարդացած ատեն՝ իւր դիմաց վրայ ափշութեան , յարգանաց և երկիւղի նըշաններ կը տպաւորուէին : Երբ լմնցաւ , թիթեղը չքադրամին մէջ դնելով՝ հաճելի տուաւ և խոնարհելով ,

— Եղբա՛յր , ըսաւ , ի՞նչ կը խնդրես ինձմէ :

— Ինձի սեւիական չեղած հարստութիւններն առին ինձմէ , այն հարստութեանց մէկ մասն ընկերութեան և միւս մնացածն ալ Սև Թիւրքմէնաց է , որոց շահերուն կ՚ղեկավարէի Սմրղանդի մէջ : Կաղաչեմ զքեզ որ այս հարստութիւններն ինձ վերադարձնէք և իմ հետ գանուող կիները ալ ազատէք՝ զոր հոս կեցնել կ՚ուզեն իւր համար հակառակ :

Բէյ՚ը զվխոյ հաստատական նշան ըրաւ :

— Ա՛յս մարդը Նաքշպէնտի փեղինէրե՚ն զօրաւոր ընկերութեան բարձրագոյն գլուխն է , ըսաւ Բէյ՚ը Մուշաֆֆէրին : Տե՛ր ալքայ , պէտք է որ իւր աղաչանաց գլխանիք :

— Խիստ լաւ , ըսաւ Մուշաֆֆէր ծիծաղելով : Հարբասութիւններդ քեզի պիտի վերադարձուին . իսկ կիները՝ ո՛չ . գէհաատին — Նաքշպէնտի կարգին աշակերտանալով , աղքատութեան և այս աշխարհի իրերն արհամարհելու ուխտած ես : Ոչ ոք և մինչև ընկերութեան բարձրագոյն գլուխը ձեր կարգին օրէնքներէն ազատ

չէ ։

Բէնը Սաֆէրին վրայ նայեցաւ, որով լսացնել կ'ուզէր թէ Էմիրն իրաւունք ունէր ։ Սաֆէր թեթեւ կերպով խառնվեցաւ ։

— Քու վրայ դանուած ադամանդներն ու ոսկին, չարունակեց Մուզաֆֆէր, ինձ չեն վերաբերիր, լա՛ւ, ա՛ռ զանոնք ։ Բայց քեզի ընկերացած կինը սուրբ պէտ-ւէնաց ընկերութեան չէ ։ ինձ սիրելի եղաւ · ես որ երկրին լչլանան եմ, կինն ինձ համար պիտի պահեմ և դերիս պիտի ըլլայ · կարծեմ այս մասին՝ քեզի և ոչ մէկ կերպով անիրաւութիւն ըրած կ'ըլլամ, այնպէս չէ՞ ։

— Այս կինը դերիդ չկրնար ըլլալ, պատասխանեց Սաֆէր, որ բոլորովին հանդարտած էր ։ Քու ծննդեանդ հետ ծնունդ ունի · խիստ խանին անդրանիկ եղբօր, Էմիր Իւլ—Իւմերային աղջիկն է ։

Վէզիրը ձեռքերը յերկինս բարձրացնելով, (ասիկա իրեն սովորական ձևն էր),

—Էմիր Իւլ—Իւմերային աղջիկը ։

Մուզաֆֆէր թռնալիք ակնարկ մը ձգելով,

— Լաւ՛, ծե՛ր, ըսաւ, այդ լուսաբերուդ ճշմարտութեան ո՞վ կ'երաշխաւորէ ։

— Մարգարէին մօրուաց վրայ կ'երդնում ։

Այս երդումը մահմետականաց բերանը խիստ ծանր է ։ Այս երդումն ընող անձին սրբութիւնը կասկածանաց տեղի չէր թողուր · սակայն Մուզաֆֆէր հակառակը պնդել ուզելով ·

—Ի՞նչպէս այս աղջիկը քու ձեռքդ ընկաւ, հարցուց ։

— Խոքանտի խանը Շահ—Մուրատ գինքը կնութեան ուզեր և հաճեր էր ։ Թիւրքմէնաց դունդ մը ճամբան աղջկան ընկերացող կարավանը զարկեր, բայց այս դունդն ալ Ռուսաց դնդէ մը զօրնուեր էր ։ Խո-ռասանը Սմըրղանդի Ռուս դլխաւորին կնոջ քով դերի եղած դասյ և գինքն ազատելի իր հօրը վերադարձնելու նպատակաւ, որ ահրս և բարեկամն է ։

— Բարեկամդ, ընդմիջեց Մուզաֆֆէր արհամարհանօք ։ Վերջապէս ինչ որ ալ ըլլայ . . . . . ։ Վէզիրն ըսաւ Մուզաֆֆէր, Շուրթանին պատուհասուր մը պիտի դրկես, և պաշտօնապէս Էմիր Իւլ—Իւմերային իր աղջկին գինձ կնութեան պիտի ուղես ։

Սաֆէր զդայ թէ ամեն ինչ կորսուած էր, որովհետև Բէնն իր ձեռագրին ընթերցման զբաղած էր, որով հասկցնել կ'ուզէր թէ կուռանի մէջ չըմանէր, թիւրքմէնին սրտին մէջ կատաղի բարկութիւն մը կը դոռայր, բայց ինքզինքը կը բռնէր, զդալով՝ թէ ո՛չ չափ այս բարկութիւնն իրեն ձեռնտակար կրնար ըլլալ ։ Ցաժդին չրթունքները կը խածնէր և արեան քանի մը կայլակները կնկան իր մօրուաց վրայ ։ Էմիրը տեսաւ զայն և ծիծաղեցաւ, բայց այս ծիծաղն ալ ատելի գՍաֆէր զայրացուց ։

— Ցանուն այն ընկերութեան՝ որուն դլխաւորն եմ, ըսաւ Սաֆէր, Էմիր Իւլ—Իւմերային աղջկան համար խօսք պաշտպանութիւնը կը պահանջեմ. Բէ՛ն, կը հրամայեմ քեզ, մինչև պատուհասուդին վերադարձը, այս կինը տանդ մէջ պահել ։

Մուզաֆֆէր այս լշնամանքէն իբրև օձի խայթուած ծէ՝ հարուածեցաւ · բայց բան մ'ալ ըսելու չկրնաց, այնչափ առ մահմետական կրօնն արտաքին մեծ յարգանք ունէր, որովհետև իր ժողովրդեան մէջ ներկայանալու հետ կապուելու վտանգը կ'դդար ։ Ցաղթեց նախատանաց, և ըստ երևութին հանդարտ՝ Բէնին պատասխանուն սպասեց ։

Մէնեջոն դլխաւորն աչքը դերին վրայեն վերցուց, դլխով հաւանութեան նշան ըրաւ և կը պատրաստուէր սրդեդրութեան յատուկ խօսքերն ըսել, բայց Էմիրը ժամանակ չտալով,

— Լա՛ւ, ըսաւ, կը հաւանիմ. թո՛ղ կինը Բէնին տուն տանին ։

Էմինէ Բէնին տունը տարուեցաւ ։ Մուզաֆֆէր ձեռ-

քը մօրուայ վրայ տարաւ, և ասիական խորամանկու թեամբ երբեմն մը դէպ՝ դպացած բարկութիւնն և երբեմն միւսկէս՝ դպացած նուաճումը ծածկելով, ըսաւ Սաֆէ-ին.

— Մեր բոլոր վէճերը լմնցուցինք, և այլևս ինձ ուրիշ բան չմնար ընելու, յարդելի ոէվէ՛շ, բայց միայն դքեզ հիւրընկալել:

Սաֆէը հպարտութեամբ Մուղաֆֆէրին վրայ նայեցաւ. այս թաւամազիկ և ցուրտ հայեցուածը զՄուղաֆֆէրը խռովեց.

— Շարունակ Պուխարա պիտի չմնամ, ըսաւ Թիւրքմէնը, միայն դքեզ ահռելու համար հոս եկայ: Քու դերեզդ անխնդրութիւնն ու յիմարութիւնը վինչև ցարդ լինձ թոյլ չտուաւ քեզի կարևոր լուր մ'լմնայնելու, որ ճանապարհորդութեանս դէմաւոր պատճառն եղած է: Լմիր, Ռուսերը քու դէմ ապստամբութեան կը պատրաստուին, և ամիս մը չանցած՝ յարձակում պիտի ընեն:

Մուղաֆֆէրը ոտքի վրայ եղնելով, կատաղութենէ դունատեալ,

— Ռուսե՞րը, ըսաւ, կը տես, երբէ՞ք պիտի չըհամարձակին վրաս յարձակելու:

— Ռուսերն ամեն բան ընելու կը համարձակին, և եթէ պատրաստութիւնդ արագ և ղօրաւոր չէ, պատմի պէս գքեզ պիտի կտորեն:

Լմիրը վրիպադէպ ալեայ նման կատղելով,

— Խելքդ և լե՛ըը դերի՛, աղաղակեց.

Սաֆէը հանդարտութեամբ Լմիրին վրայ նայելով,

— Լմի՛ր, ըսաւ, ես քու դերիդ չեմ, և ինձ ուղղած թշնամանքներդ կրօնքին կը դպին, դուշմի՛ր: Կրնայի գքեզ քու կուրութեանդ և յիմարութեանդ մէջ թողուլ, բայց թշնամիդ չեմ, և Ռուսերը դիս մահու չափ անարգելին, Ուրեմն լինձ մտիկ ըրէ, վերջապես գիս պիտի ճանչնաս և վստահ եմ որ բոլոր

ըսածներուդ և ըրածներուդ վրայ պիտի ղջաս:

Ըէե՛ն ոտքի վրայ եղած էր, Խալհանէն արդէն դրժողութեան իրենցմէ միոյն չարչարանաց համար, իւր շուրջը չարուեցան: Մուղաֆֆէր հասկնալով որ բոլոր ներկայ դահուժողները Հաճիին կուսակից են, կատաղութիւնը ծածկեց:

— Խօսէ՛ ըսաւ:

Սաֆէը՝ Շիւքրիւլլահին կողմը դառնալով,

— Գիտեմ թէ Մերվէն պատգամաւոր մ' ընդունած էք, ըսաւ:

— Բայց, մրմնջեց վէրէը . . . . . :

— Պատասխանէ՛, որմէ՞ էր այս պատգամաւորը:

Շիւքրիւլլահ շուարած,

— Ջեմ դիտեր թէ պիտի ըսե՞մ . . . :

— Ձերբաւ՛, պիտի չըսես, ըսաւ Մուղաֆֆէր: Ա. յս մարդը փոխանակ պատմելու, հարցումներ կ'ընէ: Գաղտնիքներս անծանօթի մը լսացուննե՞լ . . . Վէրէ՛ը . . . :

Սաֆէը արհամարհոտ շարժմամբ,

— Թղթակիցդ խաչճան—պէյ կը կոչուի, ըսաւ, և քեզի դրած է թէ թիւրքմէնները ձեզի հետ միաբանելու համար՝ Հաճի—Սաֆէը կոչուած մէկուն որոշմանը կ'սպասեն:

— Ա՜ըե՛ն, աղաղակեց Վէրէը:

— Լմիր Խլ—իմերա քեզ կ'իմացնէ թէ այս մասին խօսք մը չկրնար ըսել քեզ, Մերվանաէն նոյն Հաճի—Սաֆէրէն պատասխան մ'առնելէ յառաջ:

Մուղաֆֆէր զՍաֆէր ընդմիջելով,

— Հարկ չկայ, ըսաւ որ Վէրէը քննես: Հաճի—Սաֆէր, Մուհամմէտ—Սէիտին նախկին պաշտօնեայ, ամբողջ Թուրքաստանի մէջ անուանի է, թէ՛ իւր գիտութեամբ, թէ՛ քաջութեամբ և թէ՛ երկիւղածութեամբ:

Սաֆէը խոնարհելով,

— Ես եմ Հաճի—Սաֆէրն, ըսաւ:

Մուղաֆֆէր ըէե՛ն վրայ նայեցաւ, ըէե՛ն ալ դիմոյ

շարժմամբ մը հաստատեց։

— Ինչո՞ւ անունդ անմիջապէս ինձ չխմացուցիր, Թօթովեց Էմիրը սրտնեղութեամբ։

— Ժամանակ տուի՛ր որ անունս ըսէի։ Սակայն հանդերձ այսու, Նաքշպէնտիներուն դվխաւոր ըլլալու յատկութիւնս՝ անձս, անուանս կորստական համբաւէն աւելի կը պաշտպանէ։

— Ուրեմն, մրմնջեց Մուզաֆֆէր, շրթունքները սեղմած, թագս և կեանքս ձեռացդ մէջ կը բռնես։

— Ո՛չ, պատասխանեց Սաֆէր հանդարտութեամբ. բայց որովհետև զքեզ չեմ ատեր, քեզի բոլոր զօրութեամբս պիտի օգնեմ. . . .

Սաֆէր առ իշխանն յառաջելով,

— Կ'ուզե՞ս ձեռքդ ձեռացս մէջ դնել, հարցուց։

Մուզաֆֆէր քիչ մը դանդաղելով՝ իւր երկու ձեռքերը Հաճիին ձեռացմ մէջ դրաւ։

— Մենք ահաւասիկ իրարու հետ միացանք, Էմի՛ր, ասոր վրայ լաւ մտածէ։

— Ո՛չ, միացանք իրարու հետ։

— Կ'երդնուի՞ս քեզ Մարդարէին վրայ, ամիս մը չանցուծ քսան հազար Թիւրքմէն ձիաւոր զօրք և Էդղիէք գումարել Ումմի վրայ, ուր արդէն քսան հազար փիրչաք քեզ կ'սպասեն։ Ինձ համար ուղտ մը պատրաստել տուր, քիչ մը պաշար և հանդերձ, որովհետև այս գիշեր պիտի մեկնիմ։

Մուզաֆֆէր Մուհամմէտը կանչելով,

— Լսեցի՞ր, ըսաւ իրեն, Հաճի—Սաֆէր ի՛նչ որ ըսէ, անմիջապէս հրամանը պիտի կատարես. Հարիւր ձիաւոր առջեր պիտի պատրաստես, որպէս զի Սաֆէրին ընկերանան մինչև երկրին սահմանագլուխները։

— Մահմետական երկրի մը մէջ ճանապարհորդելու համար զօրաց պէտք չունիմ, և չնորհակալ եմ, պատասխանեց Սաֆէր։

— Դու ինձ համար ամէն բան կրնաս ընել, իսկ ես

քեզ համար՝ ոչ ինչ . . . ։

— Մեր հաշիւներն աւելի ուշ կը կանոնաւորենք։

— Ա՛յո՛, աւելի ուշ։

Էմիրն ոտքի վրայ ելլելով,

— Երթա՛յք բարեաւ, Հաճի՛, ըսաւ։

— Ստուածոյ օրհնութիւնները դվխուդ վրայ ըլլան։

Մուհամմէտ մինչև պալատին դուռը Սաֆէրին ընկերացաւ. հրապարակին մէջ յանկարծ Հաճին պարսկին ըսաւ.

— Գիտե՞ս, չէ՞, որ կրնամ դլուխդ կտրել տալ։

Մուհամմէտ յետս նահանջելով,

— Ի՞նչպէս կարելի է ըսաւ մ'Մուհամմէտ այլայլած։

— Էմիրին ըսելով՝ ի՛նչ որ իմ հետ դտնուած կինն իրեն ըսելու չհամարձակեցաւ. թէ իւր քօղը վերցուցիր. թէ հանդերձներուն ներքև պահուած ադամանդները առիր . . . երկար չաւերը, պիտի պատժուիս . . . ։

— Ձշմարիտ չէ ըսածդ, ադամանդ չունիմ։

Սաֆէր Մուհամմէտին հանդերձին մէկ ծայրէն բռնելով,

— Տակաւին, ըսաւ, ադամանդներդ դրպանիդ մէջ են։ Կուզե՞ս որ սպասաւորները կանչեմ և զքեզ որոնել տամ։

Մուհամմէտ ձեռքերն իրարու միացուցած,

— Ներէ՛, ըսաւ, բոլորն ալ քեզի պիտի վերադարձնեմ։

— Տակաւին իշխանութեանս ներքև ես, չէ՞, և եթէ կուզես որ քեզ ներեմ, ներելու արժանի բան մը պիտի ընես։

— Ես դերիդ եմ, տէ՛ր, աղաղակեց Մուհամմէտ։

— Այս ադամանդները քեզի աւանդ կը թողում. ընկալադիր մը պիտի տաս. թերևս օր մը, եթէ քու ծառայութիւններդդ գոհ ըլլամ, ադամանդներէն մաս մը քեզ կ'ուտամ ղրը թէ՛ ինձմէ և թէ՛ Էմիրէն ծած-

կել ուղեցիր։ Հաշուոյ տետրները վրաձդ են։

— Ո՛չ, տե՛ր։

— կը տանե՛ս։ դիս որոնած առեններդ տեսայ որ պահ-
նոնք դրպանդդ հանեցիր։

Մուհամմէտ, կորադրուելս, Սաֆիէրին վրայ միան-
դամայն թէ՛ աղաչողական և թէ արհամարհոտ ակնարկ
մը ձգեց։

— Գրէ՛ ընկալադիրդ, հրամայեց Սաֆիէր, և չեմ
մտածեր գքեզ, ապա թէ ոչ գքեզ քու տիրոջդ կը յանձ-
նեմ անմիջապէս։

Պարսիկն իւր հաշուոյ տետրները հանեց, ընկալա-
դիրը գրեց, և դողալով զարհուրելի Հաճիին երկնցուց,
Հաճի ալ ուշադրութեամբ զայն կարդալէն վերջը իւր
ապարօշին մէջ դրաւ։

— Ա՛յս ընկալադիրը, ըսաւ Հաճի, Ռէնին պիտի յանձ-
նեմ, որ ինչպէս դիտես, չո՛ւն, գքեզ չսիրեր։ Եթէ ինձ
թշուառութիւն պատահի կամ ասկէց մէկ ամիսէն պա-
հարա չվերադառնամ, Ռէնին ընկալադիրը Էմիրին պի-
տի ներկայացնէ։ Կը խրատեմ գքեզ որ խոհեմ գտնուիս։
Եթէ քեզ պէտք ունենամ, հրամաններս կ՚ուտամ քեզ,
և եթէ ամենադոյզն դանդաղումն նշմարեմ ինձ հընա-
զանդելուդ մասին, ընկալադիրդ Մուզաֆֆէրին պիտի
տրուի։ Եթէ դահ ըլլամ, առատ կերպով պիտի վար-
ձատրուիս։

Մուհամմէտ ուղեց հեռանալ։

— Հրամայէ՛, ըսաւ Սաֆիէր Մուհամմէտին, որ այս
երեկոյ Բէժիսթանի կռիվէն տեղը համեստ ուղտ մը
բերուն, հետս ալ ուղտապան մը, որուն յանձնէ զգեստ-
ներն ու վրան դտնուած ոսկին . . . . . դնա՛։

Մուհամմէտ պալատը մնաւ, Սաֆիէր ալ Բէժիսթա-
նի կողմը դնաց։

Սակայն Էմիրը՝ Ռէնն ու իւղճաներն իւր քովէն արձա-
կելով միայնակ մնացած էր։ Կրած նուաստութիւնը
միապետին սիրտը բարկութեան ալիք մը յառաջ բերած

էր։ այս երկայն ատեն փակուած բարկութիւնը վեր-
ջապէս յայտնուեցաւ։ Մուզաֆֆէր դորգերուն վրայ
դալարելով, սկսաւ բարձրը կրծել, արտասուօք և
հայհոյանօք խառն աղաղակներ արձակելով։

— Ի՛նչպէս այս մուրացիկ Ռէնը դիս առ ոչ ինչ
համարեց։ կը գոչէր Մուզաֆֆէր։

Պալատին սպասաւորներն իւր աղաղակները լսելով՝
եկան և դողալով ու զարհուրելով դրան եւս չարուե-
ցան, և պատրաստուեցան Էմիրին քովէ վազելու՝ երբ
առաջին նշանը տայ։ Այս նշանը տրուեցաւ։ Էմիրը
ձեռքերն իրարու զարկաւ և դերի մը երեցաւ։

— Գնա՛, շուտով Մուհամմէտը հոս կանչէ՛, ըսաւ
Մուզաֆֆէր դերւոյն։ Եթէ այս համրչին հատերը քա-
կելէս առաջ հոս չըլլայ՝ ոտքերդ կտրել կուտամ։

Դերին իսկոյն անհետացաւ։ Մուզաֆֆէր համ-
րչին չուանը քակեց և սկսաւ կատաղի արագութեամբ
համրչին հատերը կարդալ գետին ձգել։ Հինգ վայր-
կեան անցաւ, միայն երինոսի հատերուն ձայնը կը լը-
սուէր՝ որ սալաքարներուն վրայ ի՛ոստոստելին, և մէկ
մ՚ալ Էմիրին ուժգին շնչառութիւնը։ Վերջապէս վեր-
ջին հատն ինկաւ և մինչև պատուհանին քովէ դարձաւ։
Մուզաֆֆէր մխիթարական հառաչանք մ՚արձակեց,
որովհետև Մուհամմէտ տակաւին եկած չէր, գերւոյն
չարչարանքը տեղի պիտի ունենար։ ըստ որում համրչին
վերջին հատը պատուհանին կողմը կը դարձեր՝ մէկ մ՚ալ
Մուհամմէտ Էմիրին քովէ մտաւ։

Գերին աղաչողական հայեցուած մը ձգեց Էմիրին
վրայ։ Մուզաֆֆէր համրչին չուանը ցցուց գերւոյն,
որ գոնատեալ և շնչատալ սալաքարներուն վրայ ին-
կաւ։

Մուհամմէտ ծունկէ վրայ ինկաւ։

— Իմացա՛ր այս Ռէնչէն դիս նախատելը, հարցուց
Մուզաֆֆէր Մուհամմէտին։

Մուհամմէտ սողալով մինչև իւր տիրոջ գահը մտե-

տեցաւ, իբր թէ՝ այս նուաստութեամբ մուռցնել կ'ուզէին այն անզգամութիւնն՝ որուն յիշատակին իւր տէրը կը ջայրացուներ։

— Մտիկ ըրէ՛, չարունակեց Էմիրը, գէկերը հպատակներս են, բայց երբեմն ստիպեալ եմ անոնց կեղծաւորութիւն ընել. էէ՛ը մեր սուրբ կրօնիդ պաշտպանութեան ներքև է. բայց դու գերիս ես, և եթէ այսօր պատուաւոր դիրք մ'ունիս՝ այն ալ ինձ կը պարտիս։

Մուհամմէտ՝ որ գահին պատուանդանը կը համբուրէր,

— Տէ՛ր, ըսաւ, գիտեմ որ ես քու ստացուածքդ եմ։

— Ինչպէս դի առջևս միշտ չնորհք գտնես՝ պէտք է որ կուրծքէն հնազանդիս ինձ . . . վաղը արևը մարը մտնելէն յառաջ, կուզեմ որ Սաֆիէր իշխանուհիանոս ներքև բլլայ. պէտք է որ դինքն ընկճեմ և գործած անզգամութիւնը նոր և անծանօթ կտտանօք քաւել տամ իրեն։

— Պիտի չանամ, տէ՛ր արքայ, հնազանդիլ հրամանացդ. բայց եթէ դինքը բռնելու փորձ փորձեմ, կրնան դիս սպանել որ գարձեալ արձակեմ. դու ալ գիտես որ Սաֆիէր անհնազանդելի է։

— Ուրեմն եթէ այդպէս է, գաղտնի դործէ։ Ինձ պատին մէջ կը ճանապարհորդէ. անզգամն իմ իրեն տալիք զօրքերս չընդունեց։ Խիստ դիւրին է Սաֆիէրին դլխուն այլ և այլ թշուառութիւններ բերել, մեր աւազէ դաշտերուն մէջ միայնակ ճանապարհորդելուն պատճառաւ։ Իւր անհրևոյթ ըլլալն ոչ ոքէ պիտի զարմանայ. Ասոր վրայ մտածէ. պէտք է որ ասիկա ընես, և այն ատեն ալ աւելի չնորհք պիտի դանես։

Մուհամմէտ ոտքի ելած պատասխանեց.

— Պիտի հնազանդիմ հրամանացդ։

— Այս դիտակը հետդ տար, ըսաւ Մուզաֆֆէր ելլելով, և ոտքով դերին անշարժ մնալովին մղելով. երկու ոտքերը կտրել պիտի տաս, որովհետև լաւ դործածել չդիտէ։

Էմիրը պալատին նեռքին կողմը մտաւ։

Մուհամմէտ դահուն դիմաց կեցաւ, աչքերը դէպ'ի խոնարհ։

Խիստ մեծ անձկութեան մէջ էր. Էմիրին անհնազանդիլը ցնաոսակար էր. բայց իւր կեանքն ալ Սաֆիէրէն կախուած ունէր։ Մուզաֆֆէրէն ազատանդ ծածկելու յանցանքը, այն Մուզաֆֆէրէն՝ որ գլիճքը միայն իւր կատարեալ անձնուիրութեան համար կը սիրէր. երբէք իրեն պիտի չներուէր։ Պարսիկը քանի մը վայրկեան մտածեց. վերջը դերւոյն քով դնաց և ոտքն ուժդին հարուածով մարդը շարժեց։ Գերին հառաչանք մ' արձակեց, բայց չկանդնեցաւ։

— Ոտքի վրայ ելի՛ր, չո՛ւն, ըսաւ Մուհամմէտ, ինձ մտիկ ըրէ՛.

Գերին զարհուրելով կանդնեցաւ և իւր դունատ կերպարանքը ոստիկանաց գլխաւորին վրայ դարձուց։

— Լսեցի՞ր Էմիրին ինձ տուած հրամանն, թէպէտև ինքդինքդ մեռեալ կեղծեցիր։

Գերին հեծեծանօք հառաչեց։

Մուհամմէտ գերւոյն վրայ դորովալիր ակնարկ մը ձգելով,

— Եթէ Էմիրին չհնազանդիմ և քեզ ներեմ, երախտապարտ պիտի բլլա՞ս ինձ, ըսաւ։

Գերին ծունկի դալով Պարսկին ոտքերը պադաւ. ինքն ալ վոխադարձաբար դդերին գրկեց։

— Ա՛հ, ինչ որ ուզես՝ պիտի ընեմ, ըսաւ գերին։

— Եթէ քեզի ըսեմ՝ թէ թռի՛ր՝ պիտի թռչիս. ըսպանի՛ր՝ պիտի սպաննես, մեռի՛ր՝ պիտի մեռնիս։

— Այո՛, այո՛։

Մուհամմէտ զգերին կանգնեցունելով, իւր ամենաքաղցր ձայնով հարցուց իրեն.

— Ի՞նչ է անունդ։

— Հապիպ, աչ՛ք։

— Ելի՛ր, Հապի՛պ, եւ պալատս գնա՝ . . . . . ։ Աւելի ուշ պիտի ըսեմ թէ ինչ պիտի ընես։

Դերին Մուհամմէտին ոտքերը պագաւ ուրախութեամբ։

— Ազատարէ՛, դնա՛ հանգերձներդ եւ կերպարանքդ փոխէ, որպէս զի ոչ ոք զքեզ ճանչնայ, մինչեւ անգամ հայրդ ալ։

Մուհամմէտ առանց Հապիպին շնորհակալութեանց սպասելու, պալատին դրան կողմն ուղղեցաւ։ Հրապարակին մէջ իրեն սպասող երկու մարդոց հրաման մը տուաւ. հանգերձին երկայն ծալքերը վերցնելով, սկսաւ բէժիսթանի ուղղութեամբն ընթանալ։ Գուխարայի բնակիչք միշտ գինքը կը դիտէին, իրարու ըսելով.

— Արդեօք ընտրեալ մեր Լմիրը գողցա՞ծ է որ իւր ամենասիրելին այսպէս քաղաքին մէջ կրվազէ։

Լաւ գազուկար մը ծնաւ Գարսկին դլխուն մէջ։ Վազած ատեն, մէկ կողմանէ կրմտաածէր որ երթէ Րէյ-ին հետ տեսնուելէ յառաջ՝ յայղոլի Սաֆերը սպանանել, այլ եւս երկիւղ չունենար իւր աղդարարութենէն, եւ կրնայ ադամանդները պահել եւ գերեզման ոտքերը կարել։ Մուհամմէտ ուրախ եւ զուարթ էր, ոլորովհետեւ կը սիրէր ոսկին եւ ուրիշները չարչարել։

Երեկոյեան ժամը վեցն է։ Արեգակը կարմրագոյն կը գեղազարդէ Գուխարայի սպիտակ տուներն և Մէ-եղբայրներ հաւատացեալներն աղօթքի կը հրաւիրեն։ Րէյ-ին լորհրդաւոր բնակարանը լոր լռութեան մէջ ընկղմած էր, բայց այս տունը Մեծ — Մզկիթն գատող հրապարակին վրայ օտարոտի աղմուկներ կը լսուին։ Մուրացիկք այոր անդր կը յածէին մերձաւոր վողոյնեբուն մէջ, ամէն կարդի մարդիկ կ'անցնէին կը դառնան, խանութեան հոգեւոր գլխոյն բնակարանը շրջապատող բարձր որմոյն վրայ անհանգիստ հայեցուածներ ձգելով։ Հրապարակին վրայ վայրկենէ վայրկեան շրջագայողնե-

բուն խումբը կաւելնար և ամենքն ալ յուղեալ կ'երեւէին։

— Ուռուս դէտ մը Լմիրը սպաննել ուզեց, կ'ըսէր Սարթիներէն մին Թիւրքմէնի մը. բազմաթիւ դինուորներ սպաննելէն վերջը յաջողեցաւ խոյս տալ Բօրանին վրայ թռչանելով։ Բաղաքին մէջ պահուած է և յարմար միջոցի մը կ'սպասէ մեր Րէյ-ին տունը մտնելու համար։

— Մեծ մխայն Լմիրը սպաննել ուզէր, լաւ ըրած կ'ըլլար, պատասխանեց Թիւրքմէնը, բայց Բօրանին վրայ թռչանե՞լ։

— Ա՛յո՛, ըսաւ մուրացիկ մը, Մէհմէտ Ի-ւլմաֆ տեսաւ։

— Մահու արժանի է այդ անհաւատը։

Բազմաթիւ Սարթիներ մզկիթին կողմը դնացին։

— Եղբա՛րք, ըսաւ առաջին անդամ խօսող Սարթին, մեր Րէյ-ին բնակարանը պահպանենք։

— Ի՞նչ դէպք անցաւ։

— Անհաւատ Ուռուս մը Բօրանին վրայ թռչած է։

Խումբն բազմաթիւն մը լեցուած էր Մեծ—Մզկիթին հրապարակը։ Մուհամմէտ իւր մարդիկներով ամբոխին վրայ կը հսկէր ձեռքերն իրարու շփելով։

Րէյ-ին տանը դուռը բացուեցաւ. Ի-ւլմաֆներուն գլխաւորը շատ մը նմանեալ շրջապատուած և Հաճի—Սաֆերին ուսին վրայ կռթնած, դմբեթին ներքև երեւեցաւ և դէպ 'ի Մզկիթ ուղղեցաւ։

— Խիստ ո՞ւշ, մրմնջեց Մուհամմէտ։ Վերջը յամրաքայլ իւր պալատը վերադարձաւ, ուր Հապիպ իւր հրամանաց կ'սպասէր։

ԳԼՈՒԽ Թ.

Ա. ՐՇԱԽԱՆՔ

Մօրթաֆ կոմսուհին երկայն ամուսին վրայ անկիրթ կերպով տարածուած էր ։

— Պարոն Պասալըքի՛, այսօր դքեզ հոս կանչել տուի, խառնուիլ յանդիմանելու համար ։

Մարթային դէմքն այնչափ խաժռռ չէր . Պասալըքի ալ որուն ամուսնը կոմսուհւոյն ամուսնէն բաւական հեռի էր , ժպտելով մօտեցաւ ։

— Ինչ որ կուզէք , ըրէք ինձ . դանակոծեցէ՛ք դիս , բայց դիտցէք որ դիս ուղղող խարազանը պիտի պատնեմ. սպաննել տուէք դիս , սակայն եւ այնպէս վերջին շունչս ձեր անունը տալով պիտի ուռնգեմ ։

— Ո՛չ , ուղիղ չէք իմաստասիրեր . բոլոր ձեր ցնորքները դիս անպատուելու կրծառայեն ։ Ձեր ինձ ըրած երկրպագութիւններն անպատշաճ կրծուին ձեր դիմաւորին կնոջ մինչդեռ դինքը չէք յարգեր ։

— Ո՜հ . զձեզ իբրև իմ բնութենէս դեր ՚ի վերոյ բնութիւն մը ունեցող չաստուածութեան պէս կը յարգեմ ։

— Ձեր առ իս յարգանքը չէք ապացուցաներ , ա-

նուն միշտ բերաննիդ կառնուք , դիս միշտ կը պաշտպանէք , որպէս թէ պաշտպանուելու պէտք ունենայի . բոլոր ձեր ընկերաց առջև դեղեցկութեանս վրայ ըսելնիդ կը ցուցնէք ։ Ա՜յ՛ , դեղեցկութիւնս արդարեան նման ամեն մարդ կը լուսաւորէ . սակայն չեմ ուզեր որ այդպիսի ցոյցեր ընէք , որովհետև , ինչպէս որ ըսի , ինձ ահաճութիւն կը պատճառեն ։

Պասալըքի հասկցաւ՝ թէ այս անդամ յանդիմանութիւնը կատակ չէր , ուստի խոր կերպով վիրաւորեցաւ ։

— Ի՞նչ պատճառաւ ձեր յանդիմանութեան արժանացայ այդ օր սիկի՛ն ։

— Որովհետև շատ կը խօսիք իմ վրայ . ամենէն երեկ տեղ մը ըսեր էք՝ որ եթէ կոմսուհին կրակին ինկիր ըսե՛ ինձ , կ՚ինամ. պարո՛ն , հարկ չէ խնայանել . կամ ըսել ուրիշի թէ ես կոմսուհւոյն կամակատարն եմ ։

— Ա՜յլ ես ուրիշին չեմ ըսեր՝ թէ ես կոմսուհւոյն ամենահնազանդ ծառայն եմ , բայց որովհետև հիմայ առանձին եմք , կ՚երդնում ձեզ՝ թէ միշտ հրամաններնիդ կատարելու պատրաստ եմ ։

Կոմսուհին դլուխը դարձուց իբր արհամարհոտ ժպիտը Պասալըքիէն ծածկելու համար ։

— Ցիրաւի՛ , ըսաւ կոմսուհին ցած ձայնով ։

Պասալըքի՝ կարծելով թէ կոմսուհին խիստ ուրախ էր ,

— Փորձեցէ՛ք , ըսաւ ։

— Պիտի փորձեմ, ըսաւ Մարթա , Պասալըքիին վրայ նայելով . խօսք կուտա՞ք կատարել ի՞նչ որ ձեզ հրամայեմ ։

— Ո՛հ . . ։

Ա՜ինչափ հաստատական էր այս զարմացման նշանն՝ որ Մարթա երկրորդ անգամ արհամարհոտ ժպիտ մը ցուցնելով իր դիմաց վրայ ,

— Շա՛տ լաւ , ըսաւ , կուզեմ որ հօրեդ օրինորդին միրահարուիք ։

Պասալաքի այնչափ մտքէն չէր անցուներ Մարթա-
յին իրեն այսպիսի առաջարկութիւն մ՚ընէլն՝ որ քիչ
մնաց ամօթէն վրայէն սլիտի ինկնէր : Կոմսուհին ա-
նըզդալի շարժմամբ ուսերը թօթուեց .

— . . . . . Օրիորդին սիրահարուիլ , ո՜հ , նախա-
տեցէ՛ք , մերժեցէ՛ք եւ արհամարհեցէ՛ք զիս , բայց ինձ-
մէ զայդ մի՛ պահանջէք :

Կոմսուհին՝ դժնեայ հայեցուած մը ձգեց Պասալը-
քիին վրայ :

— Պէտք է որ ձեզի տուած խորհրդոյս հետեւիք .
ինձմէ բան մը պիտի չընդունիք , եւ կարծեմ ասոր ալ
համոզուած էք : Ձեր ժամանակին ու երիտասարդու-
թիւնը պիտի կորսնցնէք : Լիլ դեղեցիկ , բարի եւ
հարուստ ընտանիքէ է : Կարծեմ նա ձեր վրայ դէշ ա-
զդեցութիւն չենայիր , այլ՚ի սրտէ կրսիրէ զձեզ , որովհետեւ եր-
բէք իրեն անկիրթ եւ անվայել խօսքեր չէք ուղղեր . .
. . . . . : Սակայն ո՞ր է ձեր հրամաններուս կատարելու
բարի նախանձն , ինձ սիրելի ըլլալու առաջին պատճ
առելիքը կըմերժէք .

Պասալաքի այլ յայլմէ եղած , դիմարկին ձեռացը
մէջ կըդարձուներ .

— Առաջարկութիւնս , ըսաւ կոմսուհին, համբերու-
թիւնը հատած , կարծեմ ո՛չ անհաճոյ եւ ո՛չ ալ դժուա-
րին է . Լիլ դեղեցիկ , խելացի եւ նաղելի է :

— Բնաւ տեսած չեմ զինքը , պատասխանեց Պա-
սալաքի հառաչելով :

— Ա՜հ , եթէ իւր դիմաց չընաղ դեղեցկութիւնը
տեսնէք , անմիջապէս իրեն պիտի սիրահարուիք .

— Ինչո՞ւ ինձմէ այդ կըպահանջէք , եւ ինչո՞ւ այդ
անդթութիւնն ընել կուզէք ինձ :

Մարթա աստիկ զայրացած էր , սակայն ինքզինքը
բռնեց . երիտասարդ մարդուն ընդդիմադրութիւնն ,
որչափ չազգօրրիչ էր անոր (Մարթային) իգական սը-
նապարծութեան համար , բայց և այնպէս լիստ անհա-

ճոյ թուեցաւ կոմսուհուին : Վերջապէս հասկցաւ՝ թէ իւր
նպատակին հասնելու համար , պէտք է քաղցրութեամբ
վարուիլ Պասալաքիի հետ :

— Դիտէ՞ք , ըսաւ Մարթա քաղցրութեամբ , որ դիս
անպատուելու աստիճանին մօտեցաք : Կը վախնաք
երկանս օգնական—զօրապետն ըլլալ . սակայն չէ՞ք տես-
ներ թէ սպարապետն՝ որ յառաջ պատրաստ էր զձեզ
իրեն օգնական— զօրապետն ընել , հիմայ չուզեր : Պէտք
է որ ամեն բան ալ ձեզի իմացուներմ . բնաւ չէ՞ք կրնար
դուշակել կամ նախատեսել :

— Ա՜հ , ըսաւ Պասասալաքի՝ , խիստ մեծ ուրախու-
թիւն մը ղգալով իւր ներսը, մինչեւ ցարդ անիմ՛ք դըր-
նուեցայ . կը հասկնամ . . . . . : Ո՜հ , այո՛ , ինչ որ
ուզէք՝ պիտի ընեմ անմիջապէս :

Մարթա դլուխը դարձուց , բայց այս անդամ թաշ-
կինակով ճակտին վրայ եղած քանի մը կաթիլ քրտինք
ներըը սրբեց . խիստ յոգնած կ՚երեւէր :

— Ահա հիմայ դոհ եղայ , ըսաւ Պասալաքիին կողմը
դառնալով :

Կինը ձեռքը Պասալաքիին երկնցուց . նա ալ չերմ
համբոյր մը տուաւ կոմսուհուին փափուկ ձեռաց :

— Այս օրուընէ սկսելու է . այս առաւօտեան մեր
ընելիք չրջադայութեան դուք ալ պիտի ընկերանաք
մեզ կառքով . զձեզ Լիլին պաշտպան կ՚անուանեմ :

— Ի՛նչ պաշտօն որ կուզէք , այն տուէք ինձ :

Սպասաւոր մը իմացուց՝ թէ Նորին Բարձրութիւնն
եկած է : Մօլթօֆ իւր կնոջ սենեակը մտաւ՝ ձեռքը
Ռըլիեֆին տուած .

— Ռըլիեֆը ձեր քով կը բերեմ , ըսաւ Մօլթօֆ իւր
կնոջ . միայն ձեզ բարեկամական հրաժեշտի ողջոյն տա-
լու ժամանակ ունի : Շուտով պագէք կնոջս ձեռքը ,
սիրելի բարեկա՛մ , որովհետեւ պէտք է որ մեկնինք. ըսր-
քերը մեզ կ՚սպասեն բաւական առենէ՛ի վեր :

Մարթա օգնական — զօրապետը տեսած չատեն՝ ըսր

ընդհանուր կառավարչին մեկնելէն ի վեր տեսած չէր, խռովեցաւ։ Ռըլիեֆի կնոջ մտեցաւ. դիմաց վրայ երկիւղ կը նշմարուէր, սակայն ո՛չ բարկութիւն և ո՛չ ալ առելութիւն կը տղայոյ աչաց մէջ։

Ռուսաց մէջ սովորութիւն է որ կինը վոխադարձաբար՝ իր ձեռքը հանբուրող մարդուն ճակատը պագնէ։ Կոմսուհին այս սովորութեան հետևեցաւ։ Օգնական—զօրապետը Մարթային ձեռքը պագաւ. կինն ալ՝ անոր ճակատը։ Ռըլիեֆի յօժարակամ երկրորդ անգամ հանբուրեց կոմսուհւոյն ձեռքը։

Ելեքտրական ազդեցութիւն մը թռավանդեց այս երկու հոգիներուն մէջ։ Երբ Ռըլիեֆի դէմքը վերցուց, դունատեալ էր. կոմսուհին ալ՝ արտասուքները խեղդեցուցած, —ո՛վ գիտէ—թերևս արտասուաց կաթիլ մը ծածկելու համար։ Մարթա կենացը մէջ առաջին անգամ քաղցր և փափուկ բան մը ղգաց իր ներսը. կարծեց որ իր հօրեղբօրորդւոյն դունատութիւն առինքն միշտ ջերմ սիրոյն և համակրութեան նշանն է։ Կոմսուհւոյն գութը շարժեցաւ և յոյժ դղջաց մինչև նոյն առն ըրածներուն վրայ. միտքը բերաւ Ռըլիեֆին, այն խիստ դէղեցիկ, խիստ քաջ և խիստ անձնուէր Ռըլիեֆին կերպարանքը. երևակայեց՝ Ռըլիեֆը առանց ամենայն կարմիր աւազին վրայ ինկած՝ արիւնաթաթաւ և անկենդան, և դառնապէս լացաւ իր անդթութեան վրայ, և առաջադրեց նոյն օրը՝ բարի մէկին ըլլալ։

— Պարոն Պասալըքի՛, ըսաւ կոմսուհին չնորհալի կերպով, հաճեցէք երթալ աղաչել դիօրեֆի օրիորդն որ հոս դայ. կարծեմ խիստ դոհ պիտի ըլլայ հօր եղբօրորդին տեսնելով։

— Ընկարելի է, սիրելի կի՛նս, ըսաւ Մօլթօֆ, ըսպասելու ժամանակ չունիմք։

— Շնորհակալ եմ. տիկին, կրկնեց Ռըլիեֆ, չնորհակալ եմ յամենայն սրտէ. արդէն հրաժեշտի ողջոյնս տուի դիօրեֆի օրիորդին. այս առաւօտ քովը էի և շատ

ժամանակ չկայ որ դինքը թողուդի։ կը հադուի և հիմայ կուդայ մեղի ընկերանալու համար։

Մարթա այս խօսքերէն խիստ վիրաւորուեցաւ. մը-տածելով որ իր առաջին խօսնայրը, այն մարդը՝ որուն Պասալըքի հաւասար կ'երկրպագանէր, տասն և հինգ տարի միջոցի մէջ միայն հրաժեշտի ողջոյն տալու համար իր քով եկած և օրուան բոլոր ժամը Լիզին հետ անցուցած էր, բարկութեամբ լեցուեցաւ, և ատկի վրայ եղելով,

— Պարոնա՛յք, ըսաւ, ձեղ հրաժեշտի ողջոյնս չեմ տար, որովհետև տակաւին դիրար պիտի տեսնենք. բայց պէտք է որ ես ալ հագուելու երթամ. պարոն Պասալըքի՛, սպասեցէք ինձ, գիտէք՝ թէ մեղ պիտի ընկերանայք։

Մարթա դարս եղաւ առանց յետս դառնալու։

Պասալըքի իր նախկին բարեկամին մտեցաւ.

— Գնդապե՛տ, ձեր փառաւոր արշաւանաց յաջողութեան համար ըրած բարեմաղթութիւններս ընդունեցէ՛ք, ըսաւ, և ձեռքը Ռըլիեֆին երկնցնելով, նեըրեցէ՛ք նոյնպէս, ըսաւ յաճ ձայնով, բոլոր ըրածներուս, սիրելի՛ս։

Գնդապետը Պասալըքին ձեռքը չառաւ. սակայն վայելուչ քաղաքավարութեամբ ողջունեց զանիկա։

— Շնորհակալ եմ զօրապե՛տ, ձեր բարեմաղթութիւնները կ'ընդունիմ։

— Դարձեալ իրարու բարեկամ եղանք, այնպէս չէ՞։

— Մ՛հ, պարո՛ն . . . . . բարեկա՛մ, ո՛չ. իրարու բարեկամ ըլլալիս ինչ օգուտ ունի . . . . . Հաւանականաբար վերջին անգամն է որ իրարու հետ կը խօսինք։

Ռըլիեֆ յուսահատութեամբ ողջունեց զՊասալըքի և սպասարանին հետ մեկնեցաւ։

Սիրանոի մէջ երկու քաղաք կայ. միոյն վողջոյնե-

բը նեղ և անմաքուր, տուները կաւէ և ագիւսէ չինուած և խոր փոսերով շրջապատուած են. միւս քաղաքին մէջ զուարթութիւնն և ուրախութիւնը տիրած է, ուր սպիտակ ամարաստուն ապարանքներն յատիտենական կանաչութեան մէջ ընկղմած են. վերջինը պատուարներէն դուրս է, բացակայրին սահմանին վրայ և խիտ ընդարձակ: Հովանաւոր ծառուղիներ պարտէզներն իրարու կը միացունեն. ադուդայներն ականակիտ ջուրերնին բարձրաբերձ ծառոց հովանւոյն ներքև կը հոսեցունեն. խաղաղութիւնը, զուարճութիւնն և մաքրութիւնը քաղաքին այս մասին մէջ տիրած են:

Զօքանաթայի լերան ստորոտը, Մոլդանակ՝ի պուխարա ճանապարհին վրայ, չորս ծառ քառանկիւն մը կը ձևացնեն, որուն բնաւ պատճառը չեմք դիտեր, և որ Թէհուէ Քըզըլ—կէօ կ'ըսուին: Այս չորս ծառերուն շուրջն ալ կաղամախի ծառեր կը բարձրանան:

Քառանկեան կեդրոնին մէջ քարերով չինուած ջրհոր մը կայ, որուն կից կը գտնուի անասնոց համար ջրաման մը: Մարդոց և կենդանեաց ոտից կոխան եղած ընդարձակ դետին մը կայ շուրջանակի: Սոսկալի բար այս տեղն անմաքուր է, ուր կը գտնուին զանազան աղտեղի իրաց կոյտեր, ցնդոտիք և ոսկրոտիս օդը Սարթինեներուն, Էօղլէքներուն և ուղտերուն արտաքս շնչած ոչ քաղցր համեմատուր հիւթոց հոտով լեցուած և ապականուած է:

187 . . . մայիս 27ին, այս տեղը մնքրուած էր. ջրհորն և ջրարբը ծածկուած էին. առաջնոյն վրայ փայտեր՝ իսկ երկրորդին վրայ դրասեղան մը դրուած. ջրարբին դրասեղանին վրայ տարածուած ոսկեզօծ փսիաթ մը, չառագոյն սկիհ մը, երեքտասանի ամոս մը քովը, որուն վրայ Աւետարան մը կար, տեղան մը կը ձևացնէին: Քահանայ մը մանուշակագոյն շուրջառ առած՝ պատարագի խորհուրդը կը կատարէր. քահանային քով համագործատր հագած գինուոր մը շա-

րունակ տեղանը կը մաքրէր, որուն վրայ ծառերէն տերևներ և պտուղներ կիյնային, և տեղանոյն շուրջը թռչող միջատներն և թիթեռները կը հեռացունէր: Ջրհորին վրայ դրուած տախտակները դորգով մը ծածկուած էին, ուր կեցած էին Մօլլթօֆ ապարապետն, իւր կինը, Կօրէֆ և իւր աղջիկը, Պասալըքի և քանի մը բարձրաստիճան պաշտօնակալք:

Ուրիէֆ՝ սուրն՝ի պատենէյ մերկացուցած, ծառերուն մէջ կեցած էր. իրեն նաև ալ հրազարակին վրայ հետևակազօրաց վաշտ մը: Զօրաց մնչրագոյն շապիկները մաքուր էին. հրացաններն ալ՝ տակաւին նոր սրբուած ըլլալով, արեգական ճառագայթներէն կը փայլփլէին. ամենքն ալ դվխարկնին ձեռքերնին բռնած և պայուսակներնին կռնակնին առած. իւրաքանչիւրին արևակէզ դիմաց վրայ ուրախութիւն կը ցոլայր: Զօրաց խումբին եռև, սայլակներու վրայ դրուած չորս թնդանօթներու բերանները՝ հեռուն տեսնուած բացակայրին կողմը չակուած, և թնդանօթաձիգները պատերազմական անօթոց առջև չարուած էին: Աւելի հեռուն՝ աչխեյա ձի մը անհամբերութենէն դեսնին դափը կը հատանէր. այս ձին արշաւանաց հրամանատարին պատերազմական ձին էր: Մօրթէֆ չինուած քանի մը դվխարկներ կը շարժէին հեռուն բացակայրին մէջ. այս դվխարկներն առաջապահ զօրագունդն էին, որք պատարագին ներկայ գտնուելու չատ միտում չունենալով՝ իրենց առաջապահութեան պաշտօնին ըսկըսած էին:

Պատարագը լմնցաւ. քահանայն դպատուած ձարին և իւր ընտանեաց յօդնութիւն կուտէր, և գինուորներուն կողմը դառնալով՝ անոնց վրայ օրհնեալ ջուր սրսկեց. յետոյ խաչը Ուրիէֆին և իւր խմբանութեան ներքև եղող հինգ պաշտօնակալաց երկնցուց համբուրելու համար: Զինուորները դվխարկին դրին. այն ատեն Մօլլթօֆ յառաջելով սկսաւ խօսիլ:

— Ո՞վ քաջ ընկե՛րք իմ, երկայն ճառերը պիտի չը-
խօսիմ։ Պատիւն ու քաջութիւնը դաս առնելով սովրե-
լու բաներ չեն, ամենքնիդ ալ այս երկուքը ձեր սրտե-
րուն մէջ ունիք։ Յաղթական վերադարձէք, և այն ա-
տեն ձարը ձեզ չնորհակալ պիտի ըլլայ. եթէ յաղթո-
ւիք, ձարը վրէժխնդիր կ'ըլլայ փոխանակ ձեր. չեմ ը-
սեր թէ քաջ եղիք, ասիկա ըսելն ըստ իս բոլորովին ա-
ւելորդ է. Ռուս զինուորը միշտ քաջ է. միայն սա՛ կ'ը-
սեմ՝ թէ որպէս զի աւելի չուտով յաղթէք, պէտք է որ
հաստատամիտ, համբերող, զգոյշ, սթափ և կանոնա-
ւոր ըլլաք։

— Կեցցէ՛, կ'այսր, աղաղակեցին զինուորները։

— Որդեա՛կք իմ, Աստուած ձեզ պահպանէ և
յաղթութիւնը ձեզ տայ, ըսաւ Մօլօթօֆ. և Ռըլիէֆին
կողմը դառնալով,

— Դնդապե՛տ, ըսաւ, հրամայեցէ՛ք որ մեկնին
զինուորները։

Ռըլիէֆ ձի հեծնալէ յառաջ, վերջին հայեցուած
մը ձգեց շուրջն. այս հայեցուածը Լիղին համար էր,
սակայն Մարթա արդելք եղաւ Ռըլիէֆին զԼիղ տեսնե-
լուն։ Մարթա սակաւիկ ինչ դուռնատեցաւ։ Պաշտօնա-
կան հրաժեշտի ողջոյններէն այլ ևս թոյլ չէին տար որ ո՛չ
խօսք և ո՛չ շարժում ըլլան, ամեն ինչ լմնցած էր։

Ռըլիէֆ իւր ձիոյն վրայ նետուեցաւ, և քիչ մը խը-
ոովեալ, բայց ուժգին ձայնով հրամայեց որ դրօշակ-
ները պարզուին և զօրքերն յարձակման կարգով շա-
րուին։ Դրօշակները պարզուեցան, և քահանայն անոնց
վրայ խաչին նշանն ըրաւ. յետոյ Ռըլիէֆ բանակին կեդ-
րոնն անցնելով՝ հրամայեց որ յառաջեն։ Արդարև սը-
խո՛ւր տեսարան, երբ կը տեսնուի մարդկան բազմու-
թիւն մը՝ որ անստոյգ բազդին եռւէն կ'ընթանայ։
Դառաւարիչն և այլք միշտ զօրքերը կը դիտէին, որ
տակաւ տակաւ ծառոց ետև կ'անհետևէին. զօր-
քերը լուռ և մտախոհ էին. այսպէս քառորդ մ'ան-

ցաւ։ Գունդը ճամբուն վրայ չարժուն դծի մը պէս կ'ե-
րևէր, բայց տակաւին թմբկին ձայնը կ'ուղար։ Տասը
վայրկեան ալ անցաւ, և ահա ոչ ինչ կը լսուէր։

— Աստուած յաղթութիւնն իրենց տայ, կրկնեց
Մօլօթօֆ։ Ռըլիէֆ քաջասիրտ մէկն է. սակայն ի՛նչ
այլանդակ և անհեթեթ դաղափար յղացաւ իւր մտաց
մէջ։ Մարթա՛, դուք որ այս դործոյն մէջ անոր խոր-
հըրդատուն եղաք, դիտէ՞ք թէ ի՞նչ չարժառիթ իրեն
այս դործն յանձն առնուլ տուաւ։

Մարթա չդիտնալ ձևացուց։

— Ֆիրչաքներուն քաղաքակրթութեան դաս տալ
ուզեց, ըսաւ Պասալըքի ծիծաղելով, այս տեսակ դա-
սերը տալ կը սիրէ։

Լիղ ժպտեցաւ, բայց ընդհակառակն Մարթա խո-
ժոռելով,

— Իւր խորհուրդները լաւ են, ըսաւ։

— Պարոն Պասալասքի, ըսաւ Լիղ, զարմացմամբ
կոմսուհւոյն վրայ նայելով, այս խօսքն առանց չար դի-
տաւորութեան ըսաւ, տիկի՛ն։

— Նոյնպէս ալ ես, օրիո՛րդ, ըսաւ Մարթա ծիծա-
ղելով. Պարոն Պասալըքիի դէմ չար դիտաւորութիւն
չունիմ։

— Ա՛հ, ինչո՞ւ Ռըլիէֆ այս մըրկալից և աղմկալից
դործոյն մէջ մնաւ, կ'ըսէր Մօլօթօֆ ինքն իրեն։

ԳԼՈՒԽ Ը.

ԹԻՒՐՔՄԷՆԱՑ ԲԱՆԱԿԸ

Երեկոյեան հեղձուցիչ ջերմութիւնը ամբողջ մըթնոլորտը պատած է, օդին մէջ ոչ հովնոյ ամենադողդոջ հնչիւն կը լսուի և ոչ ալ երկնից երեսը ամպ կը տեսնուի։

Աւազոյ դեղին և սեպաձև բլուրները, նման անբաւ հողակոյտերու, ուղիղ և ոչ կոր գծով կը սահմանուին։ Որչափ աչքս տեսողութիւնը կրնայ զօրել, անեզր, մինչ բազոյն, փոշեվից և հարթ բացավայր մը կ'երևի. բացավայրին կեդրոնն ալ Ամու — Տերիա կը հոսի. այս գետն անծանօթ ակնարկէ մը կուգայ և անոր պէս կ'անհետանայ բացավայրին ընդարձակ տարածութեան մէջ. Սև և չախչախեալ եղեգունք և քիչ մ'ալիք, որ արագութեամբ գետոյն մակերևութեին վրայէն կ'անցնին, ասոնք միայն կը վկայեն այն լոյծ մարմնոյն շարժման, որ առաջին հայեցուածով անշարժ կը թուի։ Օդին մէջ և ոչ մէկ թռչնոյ դայլայլիկ կը լսուի, և ոչ ալ ջրոյն երեսը խաղացող ձկունք կ'երևին։

Շուրջանակի ամեն ինչ խորին լռութեան մէջ կը

թուի. սակայն միլիոնաւոր մարդիկ հոն անթիւ բանակ մը կը կազմեն, և կ'սպասեն պատերազմական նշանին տրուելուն՝ որպէս զի բացավայրը դիմեն և այս ահագին ընդարձակութիւնն աղաղակով և կոտորածով լեցունեն։

Կէս վայրենի թափառականք Մորկալի, Մէրվի և Խիվայի եղերքներէն, և կասպիական ծովուն և Խըզըլ — Խումայի կողմերէն Ամուի ափունքը խմբուած են։ Այս ժողովուրդները՝ որ առաւելին երէկ իրարու սխոյեան կանգնած էին և իրարու դէմ կը պատերազմէին, յանուն Իսլամին, իրենց էմիրներուն և Խալիֆներուն խըրախուսանօք՝ հասարակայ թշնամի Ռուսաց դէմ միաբանեցան։

Երկայն և աւազուտ թերակղզի մը կը յառաջէ Ամու—Տերիայի մէջ՝ աւազոյ բլուրներուն ստորին կողմը։ Երբեմն սոյն թերակղզին սպիտակացեալ կը տեսնուի ղինքն երկու կողմէ շրջապատող եղեգամբք անթափանցելի անտառին մէջ տեղ. սուր ծայր մը կը ձևացնէ, որ ջրոյն մէջ կ'ընկղմի և դարձեալ վեր կը բարձրանայ և մինչև գետոյն ռուսական եղերքը կ'երկարի։ Ասիկա Ամուի հունն է։

Այս թերակղզին մարդկան բազմութեամբ լի է այն վայրկենին՝ յորում մեր պատմութիւնը կ'սկսինք. սակայն այնպէս կը կարծուի թէ միայն ցնորքներ կը գըտնուին հոն. այնչափ խորին լռութիւն մը տիրած է։ Երկայն, դիւրաբեկ և երկու ծայրերնին ձիոյ մազերով զարդարուած ցիցեր անկուած են գետոյնը, որք չատ մ'ուղղ և զուգահեռական գծեր կը ձևացնեն. ասոնք նիզակներ են։ Աւազին վրայ արծաթով և գոճաղմներով (1) դրուագեալ զէնքեր և սանձեր ցան և ցիր աստ և

(1) Ակն ինչ պատուական։ (turquoise)

անդ դրուած են։ Ոսկեզօծ կապուտակադոյն վահան-
ներ արեգական ճառագայթներէն կը փայլփլին։ Նիզա-
կաց գծին եւս, այն տեղը՝ յորում թերակղզին Պուխա-
բայի հողին հետ կը միանայ, բազմաթիւ ձիեր կ'արա-
ծին. փոքրիկ գլուխներնին յերկիր ծռած, և կըռ-
նակնին՝ ջերմութեան հակառակ բուրդէ թանձր ծած-
կոյներով ծածկուած են։ Ասոնք մատակասաղ ձիեր
են. երբ անձանօթ մը կը մտնէնայ քովերնին, կուշտ
կուշտի իրարու կը սեղմուին, սպառնալից կերպով սը-
րածայր ականջներնին չարժելով։

Անթիւ կրակարաններ ջրոյն եղերքը չափակցու-
թեամբ դրուած են դէպ այն կողմն՝ ուր թերակղզին
Ամու-Տէրեայի մէջ կ'ընկղմի. մոխրոյն վրայ թէյի պղըն-
ձէ երկայն անօթներ կեռան. իւրաքանչիւր կրակարա-
նին չուրջը խումբ խումբ մարդիկ ժողվուած են, ա-
մէնքն ալ գոյնզգոյն զգեստներ հագած, տեսքերնին
թատերական և ծաղրելի է, և թաղեայ սրածայր և
լայն եղերքներով գլխարկներնին աւելի վայրենի կ'ե-
ւոյնեն մոխրագոյն, նիհար և թաւ դէմքերնին։

Մեծ Նաֆնէ մը կը գառնայ այս մարդոց մէջ, և
կարգաւ կը քաշեն առանց իրարու հետ խօսելու։

Ասոնք Մէրվի չրջակայներէն եղող Սև Թիւրքմէն-
ներն են։ վայրենի և լռակաց, ամենևին չեն սիրեր ի-
րարու հետ յարաբերութիւն ունենալ. իրենց մալաներուն
ձայնին հնազանդելով, կրօնակիցներնուն օգնութեան
եկած էին, այն կրօնակիցներնուն՝ որոց վրայ պիտի
յարձակէին նախորդ իրիկունը. օգնութեան եկած են,
բայց առանց եղբայրանալու անոնց հետ՝ ըստ ամեն
ժամանակ արհամարհելու սովորած են։ Օտարական-
ներն իրենց թշնամի կը համարուին, սպանութիւնն ու
գողութիւնն հաճոյքներնին եղած են. գո՞ղ և աւազա՛կ.
աշխարհիս առեղծուածն՝ ի վեր աննուաճելի քաջու-
թիւն մ'ունին։ Իրենց մէջ սովորութիւն է որ երբ
մեկը երէց բառն արտասանէ, անմիջապէս անոր լե-

զուն կը կարեն, որովհետև, կըսեն, այս բառն իրենց
լեզուին մէջ սև գլուխներէն (պարսիկ դերվիշը) մը-
տած է։

Թերակղզւոյն եւս, մոխրագոյն, սև, բոլորակ և
ձուաձև վրաններ, ոմանք հարթ, ոմանք ալ բարձրա-
ցած, բացավայրին մէջ կը տարածուին։ Սև թիւրքմէ-
նաց բանակէն դրեթէ հինգ հարիւր քայլ հեռի, երե-
քանկիւնի վրաններ կը տեսնուին, կամ մանաւանդ,
աճապարանօք եղէդներէ չինուած խուղեր։ Ա,յս վրան-
ները ցից և ցան սփռուած են, և ասկից անկից տղա-
յի մը աղիողորմ աղաղակը կը լսուի։ Այս տեղը խըր-
խըշներուն և փիրչաքներուն ընտրածն է։ Խուղերուն
վրայէն ուղտեր կ'անցնին, գլուխնին երկայն և տձև,
բերաննին ալ կանաչ լորձունքով աղտեղեալ. փոքրիկ
ձիեր աղաւաւթեամբ վրանաց ցնցերուն մէջ տեղ կը-
պտըտին, արագ արագ չոր խոտայ ճիւղեր ուտելով.
թէ՛ ձիերն և թէ՛ ուղտերը թամբեալ են։ Հողէ սա-
ներ, լի զանազան կերակուրներով, աստ և անդ կէս
չինչեալ ածուխներուն վրայ դրուած են. խըրխըշներն
օրուան բոլոր ժամը կը քնանան ոտքերնին վրաններէն
դուրս ձգած, երեկոյեան ընթրեաց սպասելով.

Ցակաւին երիտասարդ, բայց յոտից ցգլուխս պժգա-
լի աղաւեղութեամբ լի կին մը վրանի մ'առջև նստած,
ցնցոտիներ կը կարկատէ. երկու մերկ տղայք, գլուխ-
նին դերծեալ, ձիու ոսկր մը կը կրծեն ծայրերէն բըռ-
նած։

Ամուի եղերքը գտնուած եղէդները յանկարծ կը-
ծռին. Հսկայաղօր մարդ մը դէպ 'ի խըրխըշներուն բա-
նակին կողմը կ'ուղևորի յամրաքայլ, գլուխը խոնարհե-
ցուցած և մէկ կողմանէ հառաչելով, կռնակը եղե-
դանց խուրձ մը և ջրով լի տիկ մ'առած. իւր երկայն,
սև և գանդուր մօրուքը՝ որ մինչև կուրծքը կ'իջնայ,
բացավայրին աւազը կ'աւլէ. ճակտէն ալ քրտանց կայ-
լակներ կը վազեն. այս մարդը պարսիկ դերվիշ մ'է. տա-

կաւին իրեն համար հանդստութեան ժամը զարնուած չէ, և միայն յաւիտենական հանդստութեան վայրկենին պիտի զարնուի։

Խըրխըններուն խուդերէն եւս և Իօզպէքներուն բանակը կուգայ։ Այս բանակին մէջ մնխրագոյն թաղեայ չորեքանկիւնի վրաններ կանգնուած են։ Սպիտակ սպարօյով մարդ մը այս վրաններուն միոյն առջեւ կը ճառագայթէ. մէկ մարդիկները նստած կամ յատին կեցած և կամ վրանայ ոյիցերուն դէմ կռթնած՝ ուշադրութեամբ անոր մտիկ կ'ընեն։ Երաժշտական դործիքի մը ձայները կը լսուի։

Խըրխըններուն և Իօզպէքներուն բանակին մէջ տեղ յանկարծակի օրհասականի մը աղաղակը լսուեցաւ։ Թիւրքմէններէն մին իւր դանակը Խըրխընի մը փորը մխած էր։ Վիրաւորեալն աւազին վրայ կը դալարի, և արեամբ գլան կը ներկէ։ Իւր ընկերներն անտարբերութեամբ դինըը կը դիտեն։ Թիւրքմէնն իւր կնդանային վրայ կը հեծնայ. սակայն Խըրխընը մը մօտենալով կենդանւոյն սապանդակէն կը բռնէ։

Աւելի հեռուն՝ բացավայրն աղմկալից կ'երեւի. ըրած նոր դունդ մը կը հասնի, և վրաններ կը կանգնէ։ Նոր եկող զօրքերը կարմիր համազդեստով են, քիչ մը աւելի աղտեղի քան Իօզպէքս։ Այս նոր դունդը Պուխարայի Էմիրին առաջապահ «սարպազներն» են։

Ուրիշ բազմաթիւ թափառականք բացավայրին այս տեղը ժողուած են. ամենուրեք երիվարաց դլուխներ և ուղտուց երկայն վղեր կը տեսնուին, և աւելի հեռուն, մինչեւ այն տեղ՝ ուր երկիրն երկնից հետ կը միանայ, սեւ մխոյ ամպեր կը բարձրանան ոլորածոյ դծերով։

Ջերմաթեան աստիճանը քիչ մը իջաւ. գետը մտրը մտնող արեգական ճառագայթներէն ծիրանագոյն կ'ըլլար։ Այն ատեն՝ չորս մարդ քառակուսի դորգ մը բերին և ջրին եզերքը տարածեցին։ Այն չորս մարդոց

ընկերացող շատ մը Իօզպէքներ բոլորակ մը կազմեցին. երիտասարդ մը, գրեթէ տղայ, յանկարծ դորգին վրայ ցատկեց. կարմիր չապիկ մը հագած, նոյնպէս ալ կարմիր գլխարկ մը դրած էր գլուխը, երկայն մազերը գլխարկին ներքեւէն դուրս կը ցցուէին, ոտքերն և բազուկները բոլորովին մերկ. խիստ գեղեցիկ և հրապուրիչ կերպարանք մ'ուներ, աչքերը փայլուն և հայեցուածն ալ դժնեայ։

Այս երիտասարդը կաքաւիչ էր, որ Բէյոռ Օղլու կ'ըսուէր, բոլոր Թուրքեստանի և մինչեւ Չինաստանի մէջ ալ յայժ համբաւաւոր եղած էր։ Իօզպէքները յետս մղեց, որք խիստ մօտէն կը դիտէին գինըը. յետոյ իւր խաղերուն սկսաւ։ Նախ և յառաջ ոտքերը չարժելով՝ սկսաւ յամրաքայլ յառաջել. դորգին շուրջը գարձաւ՝ շատ վարպետ ձևեր ընելով. վերջապէս յանկարծ կանգ առաւ, եւս ծռեցաւ, այնպէս որ գլուխը մինչեւ գորգին դպաւ, ամեն մարդ սկսաւ ծափահարել։ կաքաւիչը կանգնեցաւ, և ծանր ուվհ քայլով բազմութեան մէջ մտաւ։ Իօզպէքները դգուանօք և համբոյրներով լեցուցին գինըը. ամենէն հեռի դանուողներն ալ ձեռքերը, մազերուն հիւսքերն և դգեստին ծայրերը կը պագնէին. վերջը գնաց դորգին վրայ պառկեցաւ, ուրուն յաջորդեցին ուրիշ կաքաւիչներ ալ, բայց ասոնք՝ առաջինին չափ յաջողակ չէին։

Գիշերը վրայ հասաւ, և մթութիւնը բոլոր բացավայրը պատեց. երկինքը բիւրաւոր աստղերով ծածկուեցաւ. Այո՛ — Տէրեայի վրայէն կապոյտ մառախուղ մը թռաւ, և մեծամեծ ձկունք դեռին մակերեւոյթին վրայ խաղալ սկսան։

Սակայն Թերակղզին միշտ ախուր և միշտ լուռ էր. պղտիկ դողդոջուն հուրերը կ'երեւէին և կ'անհետանային եղեգանց մէջ, և իրենց լուսոյ ճառագայթին մէջ մեծ ստուերներ դանդաղ կերպով կը չարժէին։

Թերակղզւոյն ծայրը, չորս թիւրքմէն իրենց ար-

դէն չիջած կրակարանին մօտ պառկած են։ Աստղիկ մին անկողնէն ցատկեց, աչքերը բացաւ և գետին ուղղութեամբ դիշերային մթութեան մէջ նայեցաւ, որովհետև ռուսական եղերքին կողմէն ձիոյ վրնջիւն մը լսուեցաւ. թափառականը լաւ մը դիտեց և տեսաւ որ քանի մը հեծեալներ հունէն կ'անցնէին.

— Ա՜հ, աղաղակեց, իւր ընկերին. Հիւսէյ՛ն, տե՛ս։

Հիւսէյին եկաւ և մթութեան մէջ նայելով, մեր մարդիկներն են, ըսաւ, վերստին պառկելով. եագուպի մատակախաղ ձին սպիտակ բծեն ճանչցայ։

Ջուրէն ձի մը կ'ելլէր և արդէն սմբակները չիջեալ ծովրոյն վրայ կը դնէր.

— Դո՛ւ ես, եա՛գուպ, հարցուց առաջին թիւրքմէնը։

— Ա՛յո՛.

— Ա՛ւա՛ր կը բերես։

— Ո՛չ. Ռուս զօրաց գունդ մը տեսանք որ այս կողմը կ'ուղևորի. այս գիշեր մեր դիմացը պիտի ըլլայ.. .... Տափարեցանք վախչելու։

Զօրս թիւրքմէններն ալ եկած էին։

— Ո՞ւսք, ո՞ւր, ո՞րչափ, ի՞նչպէս, հարցուցին միաբերան։

եագուպ ուսերը թօթուեցուց.

— Սպարապետը բանա՞կն է հարցուց։

— Հիմայ եկաւ Լիվրին «բրոպրնեռա» քովէն։

— Ես ալ հոն կերթամ։

եագուպ հեռանալ ուզեց։

— Սպասէ՛, աղաղակեց առաջին թիւրքմէնը, քիչ մը մեզի պատմէ.....։

— Պէտք եղածն սպարապետին պիտի ըսեմ. դուք պատրաստ եղէք, որովհետև վաղը պիտի պատերազմինք։

— Լա՜ւ։

— եագո՛ւպ, հարցուց Հիւսէյին, Հադուլլահ ձեր հե՞տ է։

— Հադուլլահ սպաննեցին։

— Սպաննեցի՞ն..... ուրեմն Ռուսք զձեզ տեսա՞ն։

— Ո՛չ. բայց Հադուլլահ խիստ մօտեցաւ Ռուսաց բանակին, տեսնուեցաւ և ռումբ մը գինքը յերկիր կործանեց։

— Մեռա՛ւ ինձ վիճաբելիք քսան թուման։

— Արքայութեան մէջ կը վճարէ։

— Գոնէ ձին առի՞ք.

եագուպ պատասխանել չուզեց և սկսաւ թերակղզւոյն միւս ծայրը կանգնուած կարմիր վրանին կողմն երթալ. Սև մատակախաղ ձին ուշադրութեամբ կը քալէր, որպէս զի պառկող թափառականաց ջնաս չհասցունէ։ Սակայն Հիւսէյին իւր բոլոր զօրութեամբ կը պօռար.

— Գոնէ Հադուլլահի ձին առի՞ք։

— Ո՛չ, պատասխանեց եագուպ։

Հիւսէյին անմիջապէս ձէնքերն առաւ, և դէպ 'ի բացավայրին կողմը գնաց մրմնջելով.

— Պէտք է որ Լօզպէքներէն միոյն ձին գողնամ, որովհետև քսան թուման կորսնցունելով պատերազմի մէջ չեմ կրնար մնալ.

Երիվարաց վրնջիւններն և երկու թիւրքմէնաց խօսակցութիւնները քանի մը քնացող մարդիկ արթնցուցին. անմիջապէս ծովրոյն շուրջը բոլորուեցան և սկսան Ռուսաց և պատերազմին վրայ խօսիլ.

եագուպի ամբողջ գունդը ջուրէն դուրս եկաւ։

— Հակեցէ՛ք, աղաղակեցին հեծեալները բանակին մէջէն անցնելով, Ռուսք կը մօտենան։

— Հակեցէ՛ք, հակեցէ՛ք, կրկնեցին թիւրքմէնները իրարու։

Ամբողջ բանակն ոտք եկաւ. Հիւսէյինի կրակարանին շուրջն երեսուն չափ մարդ ժողվուեցան և սկսան իրենց դէմքն քաշել։

— Ուրումպէյ, ըսաւ առաջին թիւրքմէնը, տակաւին ոչ այնչափ ծեր մէկուն, հիմա դիշերը պիտի հըսկեմք, մեզի դիտցած պատմութիւններէդ մին պատմէ։

— Այո՛, այո՛, ըսին միւսները, ամենքնիս ալ կ'աղաչեմք որ պատմութիւն մը պատմես։

Ուրումպէյ ժպտեցաւ և նստաւ դեռինը և իւր մոխրագոյն մօրուքը շոյելով.

— Լա՛ւ, ըսաւ, սկսիմ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՈՒՐՈՒՄՊԷՅԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

"— Ակէց չատ ժամանակ առաջ . . . ըսաւ Ուրումպէյ։

"Լռելով՝ քիչ մը մտածեց։

"— Այո՛, ասկէց չատ ժամանակ առաջ, չարունակեց, այն անապատը՝ զոր մեք "ապականիչ կենաց" կ'անուանեմք, բարերեր և մշակեալ հողիա մ'էր . . .։

"— Օ՜հ, օ՜հ, աղաղակեցին բազմաթիւ անհաւատ ձայներ։

"Ուրումպէյ բոլորտիքն ողիմպիական ակնարկ մը ձգելով,

"— Այն անապատը բարերեր և մշակեալ հողիա մը էր, կրկնեց. հաւանականաբար Աստուած այսպէս ուզած էր։ Այս հողիին մէջ արուեստագէտ, հարուստ և անկախ թագաւորէ կառավարեալ ժողովուրդ մը կը բնակէր։ Նոյն ատեն ահեղերքի վրայ թագաւորողը թիմուրլէնկն էր։

"Հիմա ինձ պիտի հարցնէք՝ թէ ի՞նչպէս կարելի է որ անկախ թագաւոր կենար 'ի կենդանութեան թի-

մուրի ։

— Ա՛յո՛, կը հարցնենք քեզ, պատասխանեց իւր ունկնդիրներէն մին ։

“— Օր մը մինչդեռ մեր կաղն այս հովտէն կ՚անցնէր, որովհետեւ ջերմութիւնն այս աւուր պէս սաստիկ և անտանելի էր, ֆռֆռ խմել ուզեց ։ Սակայն բնակարան մը չը տեսնելով բոլորտիքը, որպէս զի կարենար հոն երթալ՝ անմիջապէս ծարաւն անցնելու համար,

“— Ծարաւի՛ եմ, ըսաւ իրեն ընկերացող իշխանաց, թո՛ղ իմ համար ֆռֆռ բերելու երթան այս գաւառին բնակչաց մէկուն տունէն ։

“ Բայց հեծեալը յաղթականին հրամանը կատարելու փութացին. անոնցմէ մին մատակ ձիոց ջուրի մը կողմը գնաց դանդաղութեամբ ։ Թիմուր ասոր դանդաղութիւնը նշմարելով, պաշտօնակալաց ըսաւ.

— Ահա գերի մը, որ իւր տիրոջ հաճոյքը գոհ ընելու մասին վոյթ և եռանդ չունի. երբ վերադառնայ, այն առեն բարկութեանս ծանրութիւնը պիտի զգայ ։

“ Իշխաններն իրենց տիրոջ դաժան և խոժոռ կերպարանքէն զարհուրելով՝ սկսան հծծել, և բնաւ հեծը խօսելու չէին համարձակեր ։

“ Քանի մը վայրկեան անցաւ. Թիմուր միշտ պապակեալ, անհամբերութենէն ձին կը նեղէր, և մինկոլեան պատերազմիկները ղարհուրանօք իրարու երես կը նայէին ։ Հեռուն փոշւոյ ամպ մ՚երեւցաւ. հեծեալ մը ձիարձակ կ՚արշաւէր, և յանկարծ իւր ձին յաղթականին առջև կեցուներէն վերջը՝ քաղ՚քաւարութեամբ ձիոյն թամբին վրայ խոնարհելով՝ Թիմուրին ֆռֆռով լի գաւաթ մ՚երկարեցուց ։

“ Երբ Թիմուր ֆռֆռը խմելով ծարաւն անցուց, քաղցր դիմօք ըմպելին բերող մարդուն վրայ նայեցաւ. զանիկա ճանչցաւ, և անմիջապէս վերստին առաջին կերպարանքն առնելով,

— Ինչո՞ւ, ըսաւ ահեղ ձայնով, հրամաններս կատարելու մասին դանդաղեցար. հիմա արժանիք չունիս, բաղդն այնպէս յաջողեր է որ առաջին անդամ դու բնակարան մը դտեր ես ։

“ — Ո՛վ մեծ և հզօր տէրդ աշխարհի, պատասխանեց հեծեալը, բնակարան չգտայ. հեռուն լերանց ստորոտն արածող մատակ ձիոց ջուրը մը տեսնելով՝ անոնց կողմն ուղղեցայ, և որպէս զի չխրտչին, ձիս սըրարշաւ չվազցուցի. երբ մօտեցայ՝ անոնցմէ միոյն կաթն առնելով, սկայ այս հովտին մէջ բուսնող տեսակ մը խոտ գտնել, որ կաթն խակոյն ֆռֆռի փոխելու յատկութիւնն ունի ։ Հիմա վերստին չտապաւ վհատութեանդ եկայ, որովհետեւ դիտէի՝ թէ այսպէս ընելով, երկար առեն պիտի չսպասէիր ։

“ Թիմուր դէմքը փոխելով,

“ — Աղէկ կը ճանչնա՞ս այս գաւառը, հարցուց ։

“ — Հոս ծնած եմ, տէ՛ր ։

“ — Լա՛ւ, այս գաւառը քեզ կը շնորհեմ, այս հովտին վրայ պիտի թագաւորես առանց հնձ տուրք վճարելու ։

“ Այնուհետեւ սկսան այս հեծեալը փուլի — խան կոչել, և երեսուն տարի խաղաղ և երջանիկ թագաւորեց ։ Երբ Թիմուր մեռաւ և իւր գաւազանին հպատակ ժողովուրդներն ուզեցին հպատակութեան լուծը թօթափել, փուլի—խան անոնց ապստամբութիւնը դսպեց յանուն մեռած յաղթական իշխանին ։ Յետոյ Թիմուրին իշխանութիւնը բոլորովին բնաջինջ ըլլալով, փուլի—խան ինքզինք երկրին տէր և թագաւոր հռչակեց ։ Իւր տէրութեան կալուածները Զինաստանի լեռներէն մինչև Արալ լիճն և անկէց մինչև Կասպից ծովը կը տարածուէին ։

“ փուլի—խան երկայն առեն ապրեցաւ. իւր կեանց վերջին առեններէը, որովհետեւ Աստուած կուզէ որ ամեն մարդ աշխարհի մէջ վշտի ենթակայ ըլլայ,

իրեն այնպիսի ուրախութիւն մը տուաւ՝ որ անմիջապէս տրտմութեան վերածուեցաւ։ Քուլի—Խան՝ Եօճինա իշխան անուն տղայ մ՚ունէր, զոր այնպէս կը սիրէր՝ ինչպէս Աստուած զՄարգարէն, և որուն պիտի յանձնէր իւր աթոռն և հարստութիւնները։ Իշխանը լրացեալ լուսնոյ նման գեղեցիկ, սիրելի, կրթեալ և քաջ էր, բայց բնաւ ամուսնանալ չէր ուզեր։ Երբ անոր առաջարկէին որ ամուսնանայ, պալատէն կը մեկնէր և ամբողջ օրն երևան չէր գար։ Մ՚է թէ իշխանը վարեկի էր կամ կիները չէր սիրեր, այլ ընդհակառակն այս առարկութիւններն անոր հաճոյք կը պատճառէին. բայց ինչ ըսեմ, երբ իշխանին ամուսնութեան վրայ կը խօսէին, զուարթ ուրախ պալատէն հեռանալով կ՚երթար տեղ մը կը պահուըտէր։ Քուլի Խան դիւթերուն, աստղահմայներուն և մոլեռներուն խորհուրդ հարցուցած էր. սակայն ոչ ոք կրցած էր իրեն որոշ բան մը պատասխանել։ Խանը կը յուսահատէր, որովհետև Եօճինա իւր միակ որդին ըլլալով, անշուշտ իւր ցեղն իրեն հետ պիտի սպառէր։ Այլ որովհետև Խանն արդար իշխան մ՚էր, ուստի և ոչ մէկ պարագայի մէջ կուզէր իւր որդւոյն կամաց վրայ բռնանալ։ Եօճինա կատարեալ աղատութիւն կը վայելէր, և իւր հօր անբաւ հարստութիւններն ուզածին պէս կը գործածէր։

« Երիտասարդ իշխանը մեծ որսորդ ըլլալով ապամանդեայ ծայրերով վաթսուն ոսկւոյ նետ չինել տուած էր։ Իշխանը՝ հակառակ իւր անբաւ հարստութեանց, բնաւ այսպիսի դանձերը հոգւոյ չէր տար. օրէնք և սովորութիւն ըրած էր նետերն որսոց վրայէն հանել, զանոնք ապաննելէ վերը։ Հինգ տարիէ՚ի վեր որսորդութեան սկսած էր. այսչափ միջոցի մէջ յիսուն վագր, հարիւր տաս կինճ, հինգ հարիւրէն աւելի ցուռ, և Թերևս հազարէն աւելի գայլ սպաննած՝ և միայն երեք նետ կորսնցուցած էր։

« Ուրումպէյ պատմութիւնն ընդմիջելով, սկսաւ քա-

նի մ՚անգամ նկատել քաշել։ Բազմութիւնը չասցած էր։ Բազմաթիւ թափառականք պատերազմին լուրէն արթնցած այս տեղ ժողվուածէին. քանի մը հեծեալք առանց հետևակ կեցած և գլուխնին ձիոց վրէրուն վրայ ծռած, ուշադրութեամբ ծերոյն պատմութիւնը մոիկ կ՚ընէին։

— Ի՞նչու իշխանն ամուսնանալ չէր ուզեր, հարցուց Ուրումպէյի հեծեալներէն մին։

« — Աստր պատճառն ալ պիտի ըսեմ, պատասխանեց Ուրումպէյ։ Օր մը իշխանը վարագի մ՚ետևէ պրծնելով, քիչ մը սովորականէն աւելի հեռացաւ իւր հօրը պալատէն։ Կէնդանին կրճի մը մէջ աներևութացաւ, որսորդն ալ անդադար իւր որսոյն ետևէ կը վազեր, բայց անմիջապէս տեսութենէն կորնցուց զայն։ Կիրճը նեղ անցք մ՚էր, և շարունակ ընդարձակելով՝ երկուստեք խիստ բարձր ժայռերով շրջապատուած ձկի մը մէջ կ՚երկարէր. Եօճինա այնչափ պարտասեալ էր՝ որ իւր որսը վերստին դանելու յուսով՝ ձկին եղերքը նստաւ սակաւիկ մի հանգստանալու համար. արդէն այս տեղը տեսած էր, սակայն նոյն օրն իրեն այնչափ դեղեցիկ երևցաւ, և ջուրն ալ այնչափ յստակ և վճիտ՝ որ ձկին մէջ լուացուիլ ուզեց։ Աղեղը դետին գնելով՝ սկսաւ մերկանալ. կօշիկները առաջէն հանելու միջոցին՝ թեթև ձայն մը ականջին հասնելով՝ գլուխը յետս դարձուց։

« Ձկին յղկեալ մակերևութեին վրայ, եղերքէն քանի մը դերկ հեռւ, կին մը կը լուացուէր։ Կնոջ երկայն, խարտեաշ և խայտաճարիճ մազերն ոսկիէ գորգի պէս էին, որուն վրայ Հ-ոյն մը (յաւերժահարսն գրաճաի մահմետականաց) գլուխը հանդչած էր։ Մեծ խեցի մը, զոր չորս խոշոր գայլաձուկն կը քաշէին, կնոջ բազրտիքը շարունակ կը դառնար, որուն քով միլիոնաւոր փոքրիկ ձկունք ժողովուած էին։

Կինն և խեցին Եօճինայի ձայնը լսելով, ջուրն ընկղղ-

մեցան և քիչ առնէին դարձեալ երեցան. կինը խեղճուհին մէջ էր և դայլաձկունք կը չանային երենց բոլոր զօրութեամբ լճին հակառակ եղերքը դալ։ Իշխանը՝ որ ո՛չ կը զարհուրէր և ո՛չ կը զարմանայր, աղեղն առնելով՝ դայլաձկերէն մին վիրաւորելով սպաննեց. կրկին նետ մ՚ալ արձակելով՝ մէկին ալ սպաննեց։ Խեցին սկսաւ յամրաքայլ երթալ. որովհետև դայլաձկերէն երկուքն սպաննուած էին։ Եօմննա չուրը նետուելով՝ սկսաւ ա՛նոնց կողմն երթալ. դեղեցիկ կինն աղաչողական դիմօք իշխանին բոլոր ըրածները կը դիտեր. կինն այնչափ չըքնաղատես երեւցաւ որ Եօմննա չանքերը կրկնապատկեց և երեք դրկով յաջողեցաւ խեցին իւր բազկօք չըջապատել։ Գայլաձկունք սրածայր ակռայներովնին Եօմննայի հետ սկսան կռուիլ, սակայն իշխանը դաշոյնի երկու հարուածով երիտասարդ կնոջ վերջին պաշտպաններն ալ սպաննելով՝ զանիկա իւր երկու բազկաց մէջ բռնեց։

“ Այլ հազիւ թէ իշխանը կնոջ մարմնոյն դպաւ, և ահա զարմանօք յետս նահանջեց, որովհետև դրեթէ պաղ, թոյլ և անկենդան մարմին մը չօշափած էր. Եօմննա կնոջ վրայ նայեցաւ, որ բոլորովին դունատեալ, ծիւրեալ, ակարացեալ և չնչասպառ եղած էր։

“ — Իշխան, ըսաւ կինը, խիստ մաքուր արաբական բարբառով և յանդիմանական ձեւով, կը սիրեմ զձեզ, բայց դուք զիս սպաննել կ՚ուզէք։

“ Եօմննա յուսահատեալ, կուզէր պատասխանել նեղութիւն խնդրելու համար, սակայն ժամանակ չունեցաւ. օդին մէջ զարհուրելի աղաղակ մը լսուեցաւ, հսկայաձեւ ոգին մ՚երեւցաւ լճին եղերքը։ Գլուխը երկրի լերանց աստիճաններէն վեր կը բարձրանայր, և սեւ ամպեր կախուած էին իւր երկայն և սպիտակ մօրուքէն։

“ — Ողջի՛կս, աղաղակեց ոգին։

“ Իշխանը զարհուրած և սարսափած գետին ինկաւ. այս ահեղ ձայնէն բոլոր լեռները շարժեցան և դղրդեցան։

“ Որպէս զի ոգին կարենայ իւր աղջիկը կանդնել ձեռքէն բռնելով, որ արդէն շնչասպառ մահուան մօտ էր, մէկ մանրերկրորդի մէջ փոքրիկ ծառոյ մը բարձրութեան հասատարեցաւ. սկսաւ լալ և արտասուաց կաթիլները լճին ջրոյն հետ խառնուելով լիճը փրփրեցաւ։

“Նիհատարդ աղջիկը քիչ մը կենդանութիւն առնելով

“—Մի՛ յանդիմաներ զիս, հայր, ըսաւ հեծեծադին ձայնով, կը սիրեմ այս իշխանը։

“Ոգին զաղջիկն բազկացը մէջ բռնելով,

“—Թշուառ աղջիկ, ըսաւ, արդ լրեցի քեզ որ կեանքդ վտանգի չդնելու համար, ցամաքին վրայ չերեւիս, ուր խիստ չար և խիստ դաժանաբարոյ մարդիկ կ՚ապրին, ինչպէս որ այս անգութ և անողոք մարդը ղքեզ ղարհուրեցուց։

“—Հայր, երբ ինձ զլար՝ կատարեալ էս առողջացայ։

“—Այո՛, բայց քեզ վերապահուած բազդը դիտե՞ս. կամ սարին չըրացած վրիվրոյ պիտի վոխուիս, կամ բազդդ դետին լինկած այս թշուառական մինչառին բազդին պիտի միացնես։

“Ոգին ոտքով իշխանը չարժեց։

Եօմննա տեսնելով որ ոգին զինքը թշնամանեց՝ խղկոյն յատին կանգնեցաւ։ Լինաւ երկիւղ զգացած չէր, նուաղումը միայն ոգւոյն դէրբնական ձայնէն յառաջ եկած էր։

“— Գիտցի՛ր որ թէպէտ ոգի եմ, աղաղակեց Եօմննա ձեռքը դաշոյնին տանելով, բայց հիմայ զքեզ կ՚սպաննեմ։

“ Ոգին բարձրաձայն ծիծաղեցաւ և արհամարհանօք երիտասարդ մարդուն վրայ նայեցաւ. ընդհակառակն աղջիկը դորովալիր աչնարկ մը ձգեց Եօմննայի վրայ։

“ — Հայր, ըսաւ աղջիկը, այս մարդը դեղեցիկ և աներկիւղ է, հրաման տուր որ ասոր հետ ամուսնանամ։

« — Մարիկ ըրէ՛, անպիտա՛ն, ըսաւ ոդին Եօսննայի։

« Եօսննա առջի յառաջ նետուիլ ուզեց, սակայն ղդալով որ չարժելու կարողութիւն չունէր, և հասկըցալ՝ որ ոդւոյն հետ կռուիլն անկարելի է,

« — Ձվայլէր քեզ, ըսաւ Եօսննա ոդւոյն, դիս թըշնամանել, դու քան զիս ղօրաւոր ես։ Ցկատմայ աղջկանդ հասուցած չարիքիս վրայ կը ղղջամ, որովհետև խիստ դեղեցիկ և չքնաղատեսիլ է։ Իրեն եռանէ վաղեցէ, ի՛բաւունք ունէի, որովհետև հո՛ ես եմ երկրին տէրը։

« Ոդին կրկին ծիծաղեցաւ. Իւր ծիծաղն անդամ երկիւղ կ՛ազդէր։

« — Երկրին տէ՞րը, ըսաւ ոդին, չուրջդ նայէ։

« Եօսննա տեսաւ որ լիճն աներեւութացած էր. Իրեն առջև մընչող, անբաւ, անեղր, անսահման և ա՛ռանց հորիզոնի ծովն երեւցաւ, և դիմացն ալ բարձրաբերձ, չոր և աւազուտ լերինք։

« Լա՛ւ, ըսաւ Եօսննա, սակայն աղջիկդ կը սիրեմ, զանիկա ինձ կնութեան պիտի առնեմ։

« — Աղջիկս քեզ կնութեան պիտի տամ, որովհետև Աստուած այսպէս հրամայած է, բայց դքեզ անոր պիտի տամ, և ոչ թէ զանիկա քեզի. . . . . Գիտե՞ս թէ ես ո՛վ եմ։

« — Ո՛չ, և դիտնալ ալ չեմ ուզեր, ես դերիդ չեմ։

« — Իշխանութեանդ ներքև ես, որովհետև երկրիդ վրայ հարիւր հազար քիլօմէդրը հեռի կը գտնուիս. . . . Սարերկրեայ չորց իշխանն եմ, ես եմ հովիտ հարուստ և պտղաբեր ընողը, և հիմայ այսպէ՞ս երեսաստղիտութիւնդ կը վիայես ինձ. բարի ոդի իմ, և տակաւին հիմա Աստուծոյ կերպարանքը տեսայ և սուրբ Մարգարէին հետ խօսեցայ։

« Եօսննա այս խօսքերը լսելով, որովհետև երկիւղած էր, երկրպագեց ոդւոյն։

— « Որովհետև, ըսա՛ւ ոդին, աստուածավախ ես, ինձ մարիկ ըրէ՛. Աստուած իւր իմաստութեամբ մեզ իշխա-

նութիւն և գօրութիւն տալով, ուզած է որ ի՛նչ որ ըստեղծենք և ի՛նչ որ մեր ձեռքէն գլէ, սակայ ըլլայ։ Հիմայ կրնամ գքեզ չնչուիս մեռցունել, Աստուած միայն մեծ է. որպէս զի կարենաս աղջիկս կնութեան առնուլ, պէտք է որ պահանջած պայմաններուս հնազանդութիւն և հաւատարմութիւն ուխտես։

« Եօսննա կնոջ վրայ նայելով և տեսնելով որ գերմարդկային և հրապուրիչ գեղեցկութիւն մ՛ ունէր, գլխով հաւանութեան նշան տուաւ։

« — Բեղնէ պահանջած երդումս զարհուրելի է. Մարգարէին գլխոյն և Աստուծոյ աղըմութեան վրայ պիտի երդնուս։

« Եօսննա դողալով երդումն ըրաւ։

« — Ահաւասիկ պայմաններս, ըսաւ ոդին. ուրիշ կին պիտի չճանչնաս, այն օրերը միայն պիտի տեսնես աղջիկս՝ երբ գքեզ առաջարկեն որ առնուանանաս։ Իւրաքանչիւր անդամ որ գքեզ այդպիսի առաջարկութիւն մ՛ ընեն, անմիջապէս լճին եղերքը պիտի գաս, ուր առաջին անդամ աղջիկս տեսար։ Բնաւ մէկուն պիտի չյայտնես այս գաղտնիքը։

« — Կ՛երդնում։

« — Այս պայմաններով երեքիս ալ կրնանք երջանիկ ըլլալ. Բայց եթէ երդումնազանց դտնուիս, անմիջապէս աղջիկս պիտի մեռնի, Աստուծմէ պիտի անէծք ուխտես, ես ալ հովիտդ ներքևէն քաշուելով, զարհուրելի, չոր և աւազուտ անապատի պիտի փոխուի։ Ուրեմն երդումդ կախումն ունին թէ՛ յաւիտենական վերութիւնդ, թէ՛ աղջկանս կեանքն և թէ՛ բոլոր հպատակացդ երջանկութիւնը. լաւ մտածէ՛ ասոր վրայ։

« — Դարձեալ կ՛երդնում, աղաղակեց Եօսննա։

« Երրորդ անգամն էր որ կ՛երդնույր։

« Այն ատեն Եօսննա շքեղ և զարդարուն սրահ մը փոխադրուեցաւ, ուր կը դտնուէր լիճը լուացուղ խիստ գեղեցիկ կինը,

«Այսպէս Եօսննա Եօթն տարի ապրեցաւ և կատարեալ երջանիկ եղաւ. հաւատարիմ մնաց երդմանը, իւր հօր ազաչանաց և պաղատանաց կարևորութիւնն չը տուաւ և բնաւ մոխիկ չըրաւ, և իրեն հատանութեան որուելիք հարիւրաւոր կանանց դէղեցկութեան բոլորովին անտարբեր մնաց։

«Նոյն առեն Զանաօա—խան, Սեւ Թիւրքմէնաց պէյլարբէյը, խիստ չքնաղատես աղջկան մը հայր էր։ Ա.յն ժամանակի Թիւրքմէնք նոյն էին՝ ինչ որ հիմայ, այսինքն, հպարտ քաջասիրտ եւ խիստ ազատասէր, ի բրենց դարաւոր անկախութիւնը . . . . . ։

«— փոխանակ առատապէս մոխիկ ընելու, այն ահկախութիւնը պահելու միջոցներուն վրայ խորհիմք, ազգակից մեկը Թիւրքմէնաց խումբին եաւէն

Թախտաւանք բարկութեամբ լեցուած՝ կ'ուզէին դիրենք սատակել անդադար մարդը պատժել. սակայն կրնային մ'ընելու չհամարձակեցան, երբ չքեղ հագուած բարձրահասակ հեծեալ մը տեսան։

— Սէրոբ է, հծծեցին Թախտաւանք։

— Առատապէս ընդմիջեցի, ձե՛ր, ըսաւ Սէրոբը, Եօսննայի ակարութիւնը պատճառ եղաւ իր երկրին կործանման։ Մուզաֆֆէրի վատութեամբ եւ անհոգութեամբ Ռուսք Սմրղանտ մտան։ Եթէ Սեւ Թիւրքմէնները ալ այս օրինակաց հետեւին, իրենք ալ անհատնին ձեռքը դերի պիտի ինկնան։ Յոսի՛ն, Զանա՛ր, Թեք.քէ՛ք եւ Սալո՛ր, յոսի՛ն։ Սէրոբը մեկ ժամէն վերջը ձեզ կ'ապատե Ա.մու—Տերեայի ուռւսական եղերքը։

Սէրոբը չտատպաւ մեկնեցաւ. եաւէն բազմաթիւ խումբ մը գետը մտնելով՝ հոնէն անցաւ։ Թիւրքմէնաց դառնդը ցերը ու դան էր, որովհետեւ իւրաքանչիւրն իր գենքն և ձին առնելու վազած էր։ Սէրոբին դնդին վերջին երկու հեծեալներն ալ Ջուրը մտած էին. ա. ոնցմէ մին Թիւրքմէն ուղտապան, և միւսն ալ Էմիրին

կանոնաւոր Թիկնապահ պաշտօնակալաց մէկն էր։

— Էհ, ուրեմն, Հապիլ, կ'ըսեր պաշտօնակալը, Ու համմէտ տիրոջդ ղրկելու ի՞նչ լուր ունիս։

— Տակաւին և ոչ մէկ լուր . . . . . ։ Ատուած զանիկա կը պահպանէ. Թերեւս այս երեկոյ, պատերազմին մէջ . . . . . ։

Հեծեալը դիշերային մթութեան մէջ անհետացաւ։ Նոյն դիշերն Ամուի հունին յատակութիւնը պղտորեցաւ. ամբողջ երկու ժամ, չարունակ ձիու և մարդու ատուերներ դեռեն անցան, յետոյ խոր լռութիւն մը տիրեցալ Թերահղղին վերտին ամայութեան մէջ լինկաւ։ Խըրխըղայ և քիրչաջայ բանակը ուրախ, զուարթ և անհոգ էր, և վառած կրակները բացալայրը կը լուսաւորէին։

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՊԱՏԵՐԱԶՄ

Արեգական ծագելուն ժամը մօտեցած էր. վերջին անգամ մհտութիւնն իր թանձր ստուերը բացավայրին վրայ կը տարածէր: Գետը վերտին ականակիտ եղած էր. թախտաձկանաց բանակին հուրերը կը չիջանէին, մերթ ընդ մերթ լուսոյ ցոլքեր ցայտելով կապուտակ և հանդարտ ջրոյն երեսը. խոր լռութիւն մը տիրած էր:

Առաւօտեան ժամը հինդին միջոցները չորս սպիտակ ստուեր երեւցաւ Ա.մու—Տէրեայի ուուսական եղերքը. ստուերները զօրականներ էին՝ որք մանրակրկիտ հայեցուածով մհտութիւնը դիտելէ վերջը՝ ջուրը նետուելով, սկսան զգուշութեամբ յառաջել. գետոյն մէջ տեղը հասնելնուն պէս, դլուխնին չետս դարձուցին հրացանաբռնին նշոյն մը տալու համար. հաւանականաբար այս նշանը ծանօթ պիտի ըլլար, որովհետեւ անմիջապէս երկու հեծեալք սկսան յառաջ գալ այն բլուրներէն՝ որոց ետեւ ծածկուած էին հեծեալները զօրականաց հետքերուն նայելով, հունէն անցան. ձիերն զգալով

դոզդես խորագիտութեան մը հարկը՝ չէին վրնջեր եւ իրենց քալուածքէն ծագած ջրոց քիչ մը ճոպիւնն ա- մենէն սուր ականջներն անդամ արթնցունելու անբա- ւական էր:

Երբ հեծեալները գետոյն մէջ տեղը կը հասնէին՝ արդէն չորս զինուորները հանդիպակաց եղերքը հա- սած էին:

Ա.յն ատեն հեծելոց ճակատն հետեւող դրեթէ հա- զար մարդէ բաղկացեալ դունդ մը Ա.մու—Տէրիա մը- տան, ամենքն ալ հրացաններնին դլուխներնէն վեր բռնած, և այնչափ զգուշութեամբ կը քալէին՝ որ ոտնաձայն ան- դամ չէին հաներ: Երկու հեծեալները հասնելով այն թերակղզին՝ զոր այն լինչ թաղած էին Սեւ թխուքմէնք, ձիերնին կեցուցին և յետս դարձունելով երեսնին՝ դէմ- դին անցած տեղւոյն վրայ յառեցին աչքերնին: Զօրաց սպիտակ զգեստներէն՝ որք գիշերային մհտութեան մէջ չէն կ'երեւէին, դունդը պատանքի մէջ պատուած ճի- ւաղներու լեգէոնի մը կը նմանէր, որոց հանդարտիկ քայլերէն ցնորքը կը կրկնապատկէր: Ա.մեն տեղ խաղա- ղութիւնն ու լռութիւնը տիրած էր: Խշրխշրնեռուն և փիլչաքներուն բանակն՝ առկայծեալ հուրերուն՝ աղօտ լուսովը յանդարտու կը նմանէր:

— Վայրենիները բանէ մ'ալ չէն կասկածիր, դէմ- դապե'տ, բսաւ հեծեալներէն մին. յիրաւի դործերնիս պիտի յաջողի: Այնչափ հեշտ յառաջ խաղացինք՝ որ տակաւին այս առաւօտ արշաւանքին յաջողութեան վը- րայ կը տարակուսէի:

— Ի՞նչ ընեմ, զօրապե'տ, պարտաւորեցայ դլխա- ւորայս հրամաններուն հպատակիլ: Թաշքանտ սուր- հանդակ սուրհանդակի վրայ դրկելէս յետոյ մինչև հոս յառաջեցի: Գետ այս երկուքն ընդհանուր կառավար- չէն պատդամաւոր մ' ընդունեցի, որ կ'ինամցունէ ինձ դունդ մը հետեւակ զօրաց և ութն պատերազմական ա- նօթներու մեղ օգնութեան գալը. այս զօրքերն 'ի ծա-

դէպ արեւու հոս պիտի ըլլան ։

— ինչո՞ւ անոնց չսպասեցինք ։

— Հրամայեցի որ յարձակումն ըլլայ , որովհետեւ դիշերը յանկարծական յարձակման խիստ յարմար է ։ Քիբչաքներն չեն ենթադրեր անգամ թէ մեք այսքան սակաւաւոր թուով պիտի համարձակինք անոնց դէմ ելլել . երբ լուսնայ , հինգ հազար պիտի ըլլանք ։

— Ո՞րչափ կը կարծէք , Ռըլիէֆ դնդապե՛տ , Քիբչաքներուն բազմութիւնը ։

— Մեր բնիկ լրտեսայ ըսածին նայելով՝ գրեթէ քսան և հինգ հազար ։

— Բազմաթիւ չեն , եթէ մեր զօրավիդները ժամանակով հասնին , մեղնէ մին անոնց հնդին դէմ պիտի ըլլայ , և այսպէս անշուշտ յաղթութիւնը մենք պիտի ստանանք ։

— Հրամայեցի որ չորս պատերազմական անօթ պատրաստ դանուի մեր եղերքը , և երբ զօրայ վերջինը հանգիստակայ եղերքն ելլէ , հուր արձակեն . այս պիտի ըլլայ յարձակման նշանը , Քօղաքները՝ հուր արձակուածին պէս Ա.մուէն պիտի անցնին և այս տեղ դալով , վախճատականներուն առջև պիտի աւնուն հունը կարելով ։ Ապահով եմ որ այս աւազակները դէպ 'ի իրենց ապահատը պիտի կարենանք մղել ։ Թնդանօթաձիգները , որք դեռէն պիտի չանցնին , մեր զօրքերը պիտի պաշտպանեն՝ եթէ իրենց ձեռս հասնի . խորհրդոյս կը հաւանի՞ք , զօրապե՛տ ։

— կատարելապէս ։

Հեռաւակաղօրը դեռէն անցած էր . մի քանի յետսագնաց զինուորներ տակաւին ջրոյն մէջ կը դանդաղէին . դունդին մեծագոյն մասը պատերազմական կարգով կը շարուէր ։

Ա.յս միջոցին Ռըլիէֆի ձին կրծած ոսկր մը մղելով ոտքով՝ մեխրոյ չղջկի մը մէջ թաւալեցաւ ։ Ռըլիէֆ ձիուն վրայէն դեռին նայեցաւ տեսնելու համար թէ արդեօք թշնամի կա՞յ , սակայն ոչ ոք տեսնելով ,

— Երեսի վրայ թողուած բանակ մը , ի՞նչ կը նշանակէ այս , ըսաւ ։

Իր զինուորները շարունակելու ժամանակ չունեցաւ , որովհետեւ բամբակի ծաղկի նման սպիտակ ամպ մ'երեւցաւ մթութեան մէջ . ճայթիւն մը լսուեցաւ , յանկարծ բացակայող աղմուկով և չիսթութեամբ լեցուեցաւ ։ Առաջնոյն յաջորդող երկրորդ ճայթիւն մ'ալ Էօզպէքայ բանակը յանկարծ արթնցաւ քունէն , և հարիւր ու մէկ կողմերէ յարձակման և կատաղութեան ճիչեր ու աղաղակներ բարձրացան յօդս ։

— Ո՛ն անդը , յառաջ , հրամայեց Ռըլիէֆ ։

Քիբչաքներն և Էօզպէկներն իրենց զէնքերն և ձիերն առնելու կը վազէին , սակայն խիստ ուշ էր , որովհետեւ Ռուսաց դունդը սրածայր բեւեռի մը պէս բանակին մէջ մխուած էր ։ Եղեգները զօրայ կօշկայ ներքև կը շաչէին , և խուղերը՝ սուիններով ծակոտուած , ահադին դղրդմամբ յերկիր կը կործանէին . Մի քանի օր հասական աղաղակներ , աղիողորմ մռնչիւններ և ռումբերու ճայթիւններ կը լսուէին . Ռուսք Քիբչաքայ բանակին սիրտը էին ։

Սակայն դիակները բազմաթիւ չէին . արիւնաթաթաւ կին մը խոչի մը փով ինկած էր , և տասն կամ տասն և մէկ թափառականք ըմբռնեալ 'ի խոր քուն՝ դեռինը փռուած էին դլուխնին չախչախեալ ։

—Յառաջ , հրամայեց Ռըլիէֆ ։

Գունդը վերսին յարձակման կարգով շարուեցաւ , և իր պաշտօնեայներէն առաջնորդեալ՝ դէպ 'ի բացավայրը յառաջ խաղաց ։ Թնդանօթները շարունակ կ'որոտային , և ռումբերը զօրայ դլուխներուն վրայէն սանալով՝ ճառաչմամբ կը պայթէին թափառականաց բանակին մէջ ։

փախստականները՝ պատրաստ կեանքերնին պաշտպանելու , Քիբչաքայ և Էօզպէկայ բանակներուն մէջ

դանուած պարապ տեղ մը՝ ի մի վայր ժողուած էին։ Էօզպեկները ալ ճայթիւններէն դրդռեալ թշնամին վանելու կը պատրաստուէին։

Ռուսական դումարտակն աներկիւղ յառաջ կ՚երթար։

Ռուսք և Փիրչաքք միմեանց դէմ յանդիման կանգնեցան. մարտը ժամ՝ մը տեւեց. թափառականք՝ ի վախճան դարձան իրենցմէ հինգ հարիւր հոգի գետինը վռռուած ձգելով։ Դեպ՝ ի Էօզպեկաց բանակն անցքը անարգել էր։

Ուրեմն առաջին ճառադայթը բացավայրը լուսաւորեց։ Ռըլիեֆի բոլորտիքը նայելով՝ տեսաւ որ քառասուն Ռուս զինուորք գետին ինկած էին Փիրչաքայ դիակներուն մէջ. զինուց անհաւասարութեան պատճառաւ՝ ի հարկէ պատերազմը պիտի սաստկանար։

Գնդապետը ձիուն սպառազիններուն վրայ յոտին կանգնած՝ չորս կողմը դարձուց հայեցուածքը։ Պուլկարական եղերքը յուզեալ էր, Էօզպեքները պատրաստի կը պատրաստուէին. իրենց եւս կարմիր դիւծ մը կողմնակի դաշտը կը կորէր. Էմիրին բանակն էր որ խումբ խումբ կը յառաջէր. ընդհակառակն Ռուսական եղերքը հանդարտ և լռիկ էր, չորս թնդանօթները միշտ իրենց ռումբերը կ՚արձակէին. բայց իրենց եւս մի այն ուղիղ դծով շարուած անեղը և անբաւ աւազակներ կը բարձրանային։

Ռըլիեֆի ճակատը կնճռեցաւ. բացավայրին հորիզոնը նայեցաւ. մինչև իր աչաց զօրած տեղէն՝ թշնամեաց ահագին բազմութեան դեմ՝ ի դեմ յառաջանալը նշմարեց։

— Ո՛չ, բազմաթիւ են, ըսաւ Ռըլիեֆ, զօրապետին։

Ռըլիեֆ՝ սաստելով զօրաց՝ որք իրենց արիւնաթաթախ և արիւնաներկ սուիններն աւազով կը չորցնէին,

— Աւազակները թուաւոր են, ըսաւ, տակաւին օրը մեզի ծանր եւ դժնդակ պիտի ըլլայ, տղայք։

Եւ ահեղ ձայնով,

— Օ՛ն անդր յառաջ, հրամայեց։

— Կեցցէ՛ կայսր աղաղակեցին զօրքերը։

Յանկարծ Ռըլիեֆ ղգաց թէ զօրապետը զինքն իր համազգեաներէն թեղանիքէն կը քաշէր. դլուխը դարձնելով՝ տեսաւ որ Բօղաքաց հեծելազօրն չտապաւ կուգար, որուն եռուէն պնդած էր բազմաթիւ դունդ մը՝ որ սոսկալի աղաղակներ կը բարձրացուներ, օդին մէջ փոշւոյ կայտեր նետելով։

— Թիւրքմէննե՛րը, ըսաւ Ռըլիեֆ, այս դեւերն ուսկի՞ց եկած են։

Երեք հազարի չափ Թիւրքմէնք դարանամուտ եղած էին բլուրներուն եռեւ, թողած էին որ Ռուսք իրենց բանակատեղին մտնեն. վերջը վազելով հունէն անցան առանց ընտտելու այն ռմբաձիգներէն՝ որք շարունակ ռումբերնին Էօզպեկաց բանակին վրայ կը տեղային, յետս մղեցին Բօղաքներըը, և զօրաց ապաւինի տեղը կտրելու դիտաւորութեամբ դէպ՝ ի բացավայրը յառաջեցին։

Մի և նոյն վայրկենին դրեթէ հինգ հազար մարդ բազկացեալ ուրիշ զօրաւոր Թիւրքմէն դունդ մը մի և նոյն յատակագծին հետեւելով, բացավայրին հարաւային կողմէն կուգար Ռուսերը չորս կողմէն պաշարելու համար։

Այս դունդին դլուխը ծիրանազդեաց հեծեալ մը յաղթանակաւ Մարգարէին կանաչ դրօշակը՝ կ՚երերցնէր։

Էօզպեկք դաշտին մէջ երիւարաւ շուրջ կուգային, և Էմիրին բանակին կարմիր դիծը դէպ՝ ի Ա֊մու կը յառաջէր հորիզոնին վրայ ընդարձակ կիսաբոլորակ մը ձեւացունելով։

Ռըլիեֆ հասկցաւ թէ պատերազմը Ռուսաց համար ձախող էր, իր ունեցած դիրքը նայելով՝ տեսաւ որ եթէ երկու Թիւրքմէն դունդերը միանան՝ Ռուս զօրքե֊

բէն եւ ոչ ոք պիտի կարենայ աղաւիլ ։ Ի՛նչ որ ալըլայ, հարկ էր այս վայրկենէն յառաջ հունէն անցնիլ, եւ Ռուսական եղերքն ապաւինիլ ։

Ժամանակն էր որ կ՚ասիլէր . Քօղաքները միայն հինգ հարիւր քայլ հեռի էին, եւ իրենց եռեւէն պընդողներուն աղաղակներն որոշակի ականջնին կը հասնէին։ Ռըլիւֆ արդէն կրնար որոշել այն ոսկեզօծ մահիկը՝ որ երկրորդ դունդին գլխաւորը՝ ծիրանաղդեաց հեծեալին դրօշին վրայ կըփայփչէր ։

— Զօրապե՛տ, ըսաւ Ռըլիւֆ, բանակին հրամանատարութիւնն առէք եւ հրամայեցէք որ զօրքերը յետս դառնան ։

Ռըլիւֆ այս Թիւրքմէններէն հարիւր քայլ հեռի ըլլալով, մէկ մանրերկրորդի մէջ Թերակղզւոյն դունդը տեսաւ ։

— Նախ պիտի հրամայէք որ հուր արձակուի, ըսաւ Ռըլիւֆ, զօրապետին, վերջը քառակուսի մը կազմելով այս աւազակայ վրայ պիտի յարձակիք եւ զանոնք կոխկրտուտելով եւ յերկիր կործանելով՝ դէտէն պիտի անցնիք ։ Մէկ անգամ մը Թնդանօթաձիգ զօրայ պաշտպանութեան ներքեւ ըլլաք, կրնաք քանի մը ժամ դէմ դնել, մինչեւ որ քիչ առնէն մեր զօրավիդները հասնին ,

— Բայց դո՞ւք, դնդապե՛տ ։

— Ե՞ս . . . . . պիտի մեռնիմ։

Եւ առանց զօրապետին պատասխանելու միջոց տալու ։

— Ձկայ առէ՛ք, հրամայեց զօրայ ։

Զօրքերը Ռըլիւֆի հնազանդեցան ։

— Կամաւոր հարիւր ձի՛ք ՚ի մահ դիմադրաւելու, ըսաւ Ռըլիւֆ ։

Ոչ ոք շարժեցաւ, բայց ամբողջ դունդը միաբերան աղաղակեց ։

— Պատրաստ՚եմք ։

Ռըլիւֆի սասիկ յուղուելով,

— Քաջ զինուո՛րք, ըսաւ, ճշմարիտ է, անկրաւեցայ, ամէն ռուս զինուոր գիտէ մեռնիլ ։

Ռըլիւֆ հրամայեց որ իւրաքանչիւր կարգի տասնեորդ Թիւը յառաջ գայ ։

Իւրաքանչիւր ոք իւր որոշեալ Թուովն խակոյն յառաջեց զուարԹութեամբ ։ Երկու մանրերկրորդի մէջ հարիւր մարդ բաղկացեալ վոքրիկ գունդ մը կազմուեցաւ յանդիման Թշնամեայ՝ որք արագ Թեամբ կը մօտենային ։

Ա՛յս վայրկենին քօղաքները բանակին միացան . իրենց եռանէն պընդող լուսմբերը հազիւ Թէ մի քանի քայլ հեռի էին ։ Ռըլիւֆ ձեռքը զօրապետին երկնցնելով,

— Մնաք բարե՛ւ, ըսաւ ։

— Գնդապե՛տ, պատասխանեց յուտուԹեամբ զօրապետը, ես ալ ձեզի հետ կուգամ։

— Անկարելի՛ է ։

— Բնաւ չեմ հաւանիր . . . . . ։

Ռըլիւֆ լսիւտ ձայնով զօրապետին խօսքն ընդմիջելով,

— Ես ձեր գլխաւորն եմ, ըսաւ, զօրապե՛տ, այսպէս կը հրամայեմ։

Վերջը ցած ձայնով ։

— Ա՛պրեցէ՛ք Ռուսիոյ համար, ինչպէս ես իրեն համար պիտի մեռնիմ. իւրաքանչիւր ոք իւր պաշտօնը ։

Քօղաքները ղՌըլիւֆ շրջապատեցին . Թափառականք՝ տեսնելով որ Ռուսաց դունդն իրենց դէմ կը ճակատի, քիչ մը շուարեցան ։ Գնդապետը մի քանի խօսք խօսեցաւ քօղաքներուն, եւ զանոնք իրենց ուղեկից ունենալով՝ Թիւրքմենաց երկրորդ խումբին ուղղուԹեամբը շտապաւ յառաջեց ։

Ռըլիւֆ կամաւոր զօրաց վոքրիկ գունդին քովէն անցած ատեն .

— Հո՛ւր, հրամայեց, հո՛ւր չարուանակ, Թէ և ձեր

դնդակները մեղ ալ հասնին ։

Փոքրիկ դունդը քառանկիւնի ձեւ չարուելով, Ռըլիէֆին հետեւեցաւ ։ Բօշաքները հալածական ընող Թիւրքմէնները դվլսաւոր դունդին դիմաց գտնուեցան ։ Ահեղ ճայթիւնէ մը յետոյ՝ յարձակումը սեղի ունեցաւ ։

Սակայն դնդապետն երկրորդ խումբին միացած էր. իւր սրոյն հակառակ կողմով Մարդարէին դրօշակը յերկիր տապալեց, և յետոյ դիւցազունք Թիւրքմէնաց բազմութեան մէջ մնան ։

Թիւրքմէնաց երկու դունդերուն իրարու միանալն արգիլելու համար որոշուած հարիւր մարդէ բաղկացեալ փոքրիկ խումբը կանոնաւոր կերպով հուր արձակելու սկսաւ, յիմանալով որ Ռըլիէֆ և Բօշաքներն այլ ևս մահուընէ երկիւղ չունէին ։

Ա՛յն աւեն անապատը վանք տեսարանի մը հանդիսատես եղաւ. չուրջանակի թափառականաց անհեդեդ կերպարանօք բազմութիւնը կը սեռնուէր. միայն երկու ոսկեհատ կէտ դաշտին կեդրոնը լուսաւոր կ'երեւէր. այս երկու կէտերը Թերակղզւոյն Թիւրքմէնաց հետ կռուող կամաւոր զօրաց փոքրիկ դունդն և մեծ բանակն էին ։ Ռըլիէֆ և իւր ընկերները բոլորովին Թափառականաց դունդերուն մէջ մնած էին, և ուրիշ բան չէր տեսնուեր, բայց միայն իրենց նիզակաց ճոճելէն յառաջ եկած շաղիւնը ։

Մարդկան և ձիոց մեծ զոհ մը և կոտորած մը դիզուած էր Ռըլիէֆին և Բօշաքներուն չուրջը, որք տակաւին կենդանի էին ։

Այս գիտէիներն իրրև ամուր ապաստանի կը պաշպանէին Ռուսերը. Թէպէտ՝ի սկզբան այնչափ կասկած և երկիւղ չունէին, բայց վերջապէս ստիպուեցան իրենց կեանքը պահպանելու միջոցներ մտածել ։ Ռըլիէֆ չորս կողմը դարձուց աչքերը, և տեսնելով զինքը շրջապատող դիահներն և միանգամայն մնացածելով՝ թէ չմեռած տակաւին շատ Թիւրքմէններ կրնայ ողջա-

նալ, իրաւացի հպարտութիւն մը զգաց ։

Կէս ժամ տևեց ասիկա. ձիոց վրնջիւնները, Թիւրքմէնաց կատաղի աղաղակները, ճայթիւններն և կենաց վերջին շնչոյն հետ կռուողներուն հռնչիւնը, այս ամենը իրար խառնուած՝ զարհուրելի, ազիողորմ և դերմարդկային ձայնի մը պէս կուգար. օդին մէջէն թռչող անդրները ցնծալով հեծեծանքներ կ'արձակէին, և գետոյն միւս կողմէն Թնդանօթին տոկալի որոտումն անընդհատ կը լսուէր ։

Լօզպէքներն և Կարպարները ուսմերէն նեղեալ՝ դանդաղաքայլ կը յառաջէին, իսկ մեծ բոլորակը վայրկենէ վայրկեան ուսական բանակը կըշրջապատեր ։

Վերջին Բօշաքը, կուրծքը սիգով վերաւորուած՝ յերկիր տապալեցաւ. Ռըլիէֆ միայն կը ձգար թեթեւ վերքեր ընդունած. բայց ձին սպաննուած էր ։ Բոլորսիրը կուտակ դիակները լեռ մը կըձեւացունէին. երբ ձի, մեկ մեկու վրայ պառկած տեսնելու մատ է՝ էին աղիքներնին դուրս թափելով ։ Ռըլիէֆ սրոյ մեկ հարուածով առ ինքն արձակուած նիզակին բունը երկուքի բաժնեց, և երեք շնչասպառ ձիոց վրայ ցատկելով, անոնց վրայէն բոլոր բացակայները դիտեց ։ Կամաւոր զօրաց ձեւացուցած ոսիտակ կէտն անհետացած էր. հարիւր ռուսերը մնած էին. Լօզպէկները գերաւեր էին այս տեղը, և փորձ կը փորձէին զՌըլիէֆ շրջապատող Թիւրքմէնաց միանալու ։ Գետը հանգարտ էր, դվլսաւոր դունդն անկէց կ'անցնէր, որուն կը հեռեւէին ջրին մէջէն մի քանի Թիւրքմէնք. Սակայն դունդն սակաւաւոր էր. Թնդանօթաձիդները Լօզպէկաց դէմ ուսմերը արձակելու անօգտակարութիւնը ճանչնալով, Թնդանօթներն գետին վրայ ուղղած էին՝ արշաւող հետեւակ զօրքերը պաշտպանելու համար ։

Երկու նետ Ռըլիէֆի կուրծքին կ'ապառնայր, սակայն սրոյ երկու հարուածով այն նետերը իրմէ հեռացուց. յանկարծ նոր լծում մը զգաց. խիստ յոգնած էր ահա-

դին կառորածները ընելով. Ռըլիէֆ ռուսական հօրիզո-
նը նայեցաւ, եւ մէկէն սուլիններուս վայրէն դիմ մը նըշ-
մարեց, որուշակի ուժեն լծեդանօթ ուռաս, որ դէպ՝ի
եզերքը կըմօտենայիր։

Ռըլիէֆ ուրախութեան աղաղակ մը հանեց, այն
վայրկենին շքեղ կերպարանք մ՝ առաւ, իր հպարտ
եւ ամբարտաւան հայեցուածովը կը հաշուէր այն դիակ-
ները՝ զորս իր ձեռքը դիզած էր շուրջանակի, իր
դէմքը վաշխով և արեամբ ծածկեալ էր, ճակատն ալ
յաղթութենէն և վեհ կերպով կատարուած պարտուց
զգացմանց դրոշմը կը կրէր. մխիթարական հառաչանք
մ՝արձակեց և երեսը խաչակնքելով,

— Մարթա՛, ըսաւ, մնաս բարեաւ։

Վերջը յանկարծ յառաջ նետուեցաւ։

Այն առեն տարօրինակ դէպք մը պատահեցաւ. Թիւրքմէնները ճամբայ ուուին իրեն և նիզակներնին
ծռեցին։ Ռըլիէֆ՝ չմեռնելուն վրայ զարմացած՝ աչքերը
վերցուներով տեսաւ որ ծիրանագգեստ հեծեալն շտա-
պաւ կուգար։ Թիւրքմէնք, քաղաքավարութեամբ շա-
րուեցան. Ռըլիէֆին այնպէս երեւեցաւ որ դաշտն մը
հեծեալին կուրծքին կ՝ապառնայր. առ՝այն Ռըլիէֆ իր
բնական գիտութիւնը ձեռք առնելով՝ Լօզըէկ լեզուաւ
հեծեալին ըսաւ.

— Զգուշացէ՛ք։

Հեծեալն աճապարանօք յետս դարձաւ. Ռըլիէֆ
սաստիկ յուզուելով՝ գետին իջաւ։

Սոսկալի աղմուկ մը կը տիրէր բացավայրին մէջ.
Սարպարներն և Լօզըէկները Թիւրքմէնաց հետ միա-
ցած էին, և գետին մուս եղերքը տան երկու թնդա-
նօթն շարունակ կ՝որոտային։

Մեծ կռուին ժամը կը մօտենար։

ԳԼՈՒԽ ԺԳ.

ԿԱԼԱՆԱԻՈՐԸ

Ընդարձակ անապատին մէջ ախտութիւնն ու լռու-
թիւնը տիրած էր. կարմիր աւազը վերջալուսոյ նշոյլ-
ներով մանիշակի գոյն առած էր. հեռուն սրածայր և
կոր ապառաժի մը վրայ չինուած հին և աւերակ դղեակ
մը կը դանուէր, որ իր ցնորական տուները դէպ՝ի եր-
կինք կը բարձրացուներ։

Տան հեծելազօրայ խումբ մը, յամրաքայլ դէպ
՝ի դղեակին կողմը կուգըար. այս խումբը օտարազգի-
ներէ բաղկացած էր. առջեն ուղտապան մը ի՛երթար.
երկու Թիւրքմէն, երեք Լօզըէք և երեք Խըրխըզ պի-
սակ, ծեր և դանդաղ ձի մը կը շրջապատեին, որուն
վրայ մարդկային էակ մը կապուած էր։

Անկարելի էր այս մարդուն դէմքն որոշել. արիւ-
նաթաթաւ յատից ցղլուխ, դէմքը վաշխով և արեամբ
ներկուած, և իր երբեմն սպիտակ զգեստները բոլո-
րովին պատռած էին. Այս մարդուն մարմնոյ կատարեալ
անշարժութիւնն և դիմաց ոգեղութիւնը կարծել կու-
տային՝ թէ դիակ մ՝էր. սակայն այն ջղային չարժում-
ները, որ մերթ ընդ մերթ այս վիրաւորեալ մարմնոյն

վրայ կը նշմարուէին, կը յուշնէին՝ թէ տակաւին կեն-
դանի է։

Ջնաստայները բղղալով ձիոյ շուրջը կը թռչէին, և
երբեմն զանոնք իրենց սուր խայթոցներով կը խայթէին։
Շատ անգամ ալ կալանաւորին դէմքին կը մօտենային,
հոն դադար առնելու նպատակաւ։ Կալանաւորը միջա-
ներկին ձանձրանալով՝ կը սուլէր, որպէս զի իրմէ հե-
ռանան։ Թափառականը իր ամէն մէկ չարժմանց վրայ
կը ծիծաղէին։

— կը խայթե՞ն, այնպէս չէ՞, ըսաւ խըրխըղ մը,
հոգ չէ կը վարժուիս։

— վայրի՛ խոզ, դոչեց կալանաւորը ի բարկու-
թեամբ։

Խըրխըղն բարձրաձայն լանգալով,

— Ջուարթ չես, ըսաւ, սպասէ, ես հիմա ղբեղ
կը զուարթացունեմ։

Խըրխըղը իւր կաշիէ խարազանով թշուառ մարդուն
երեսին ղարկաւ, և անմիջապէս արիւնը սկսաւ ցայտել։

— պիտի սպաննե՞ս ղինքը, ըսաւ Թիւրքմէն մը,
այնչափ զօրաւոր չէ, ինչո՞ւ ձեռքերն և ոտքերը կա-
պեցիր։ մենք տասն հոգի ենք, մինչդեռ ինք միմակ
և անզէն է։

Խըրխըղը դլուխը թօթուելով,

— Ա՛յս Թուսերուն ինչ ըլլալը չե՞ս դիտեր ըսաւ,
ամէն բան ալ ընելու կարող են։

Թիւրքմէնն արհամարհանօք խըրխըղին վրայ նայելով

— եթէ, ըսաւ, Սէրոպէն օրոշումն և վճիռը չըլլար,
դաշոյնով իւր ցաւոց վերջ տուած էի։

Կալանաւորն երախտադիտական և աղաչողական
ակնարկ մը ձգեց Թիւրքմէնին վրայ,

— կը տեսնե՞ս, ըսաւ խըրխըղը Թիւրքմէնին, ի՞նչ-
պէս անհաւատ շունը չրթունքները կը խածնէ մահը
աչքին առջև բերելով։ Ո՛չ, ոչ, հեռո՛ւս, ասկէց աւե-
լին պիտի տեսնես. յետոյ սկսաւ խարազանը չարժել։

— Լ՛ո՛հ, Ռուսմպէյ, աղաղակեց Թիւրքմէնը,
մուսներուն հետ արշաւանքի եկող ծեր պատճին, ըսէ
Հապխային՝ որ եթէ կուզէ որ ի՛նդին վրկանայ կալա-
նաւորին մեծ դումար մը չահինք, պէտք է արձակել իւր
կապերն և իրեն ուտելիք տալ, ապա թէ ոչ ճամբան
կը մեռնի։

— Հիմայ մեր կեանքը կը հաւնինք, թող սպասէ
մինչև այն տեղ, պատասխանեց Հապխը, առանց յետս
դառնալու, Թիւրքմէնին անուղղակի հարցման։

Կալանաւորը խոր հառաչանք մը հանեց. Ռըլիեֆ
(որովհետև ինքն էր կալանաւորը) ուշաբերած, տեսաւ
որ ձիու մը վրայ կապուած էր և բացավայրին մէջէն
կ՛երթար։

Ճհաւասիկ պատահած եղելութիւնը։ Ան վայրկե-
նին՝ յորում Ռըլիեֆ ծիրանագեաց հեծեալին՝ իրեն
սպառնացող վտանգը կ՛իմացուներ, Լօզպեկը Թիւրք-
մէնաց հետ կըմիանային, Լօզպեկ հեծեալ մը Ռըլիե-
ֆին սրոյ հարուած մը տուած էր, որոյ ուժգնութիւնը
զօրապետին ժապաւինեալ դլխարկէն արդիլուելով՝ մի-
այն թեթև վէրք մը պատճառած էր, թէպէտ և բո-
լորովին անդրայ՝ դէտին ինկած էր. Լօզպեկը և Թիւրք-
մէնք կ՛ուզէին սպաննել ղինքն իբրև յաղթութեան նը-
շան. բայց Սէրոպէն արդիլեց, իմացունելով անոնց՝ թէ
սպաննել ուղածնին բարձրաստիճան պաշտօնակալ է, և
թէ կրնան կամ ղինքը վաճառելով կամ՝ ի գին իւր փըր-
կանայ՝ բաւական մեծ դումար մը շահիլ։ Ան միջոցիս
մահուան երկրորդ վտանգ մ՛ալ պատահեցաւ գնդա-
պետին դլխուն. ղՌըլիեֆ վերաբերող Լօզպեկը կը պըն-
դէր՝ թէ նա իւր սեփականութիւնն է. ամենէն մօտ
կեցող Թիւրքմէնն կը պնդէր թէ Ռըլիեֆ իւր սեփակա-
նութիւնն է։ Իսկ Լօզպեկաց բանակին մէջ կորսուած
փիլչաք մ՛ալ կ՛ըսէր՝ թէ այս հաւաստումն իրեն կը պար-
տին, իւր աղին՝ վերջին պատերազմին մէջ ըրած կո-
րուստներուն համար։ կալանաւորը պիտի սպաննէին.

սակայն Թիւրքմէնաց Սէրոտը առաջարկեց որ չսպաննեն. առաջարկութիւնն ընդունուեցաւ. երեք Լօզպէկ, երեք Խըրխըզ և երեք Թիւրքմէն յանձն առին՝ կախանաւորը— եթէ կարելի էր զանիկա կենդանացունել — ապահով տեղ մը վոխադրել: Թիւրքմէնաց դլխաւորը հրամայեց ալ որ իւր վրկանաց դնոյն վրայ խօսքին ունենց հետ, կամ իրրև դերի վաճառեն և դոյացած արդիւնքն իրենց մէջ բաժնեն:

Ռըլիէֆի վէրքերն բժշկուելով, խնացուեցաւ՝ թէ այն՞ վէրքերը ո՛չ մահառիթ և ո՛չ վանդաւոր էին. զանիկա ձիու մը վրայ կապելով՝ անապատը բերին: Թափառականք և իրենց կալանաւորը մէկ ժամու չափ ալ ձիավարելով՝ երեսի վրայ թողուած դլեակը հասան: Ռըլիէֆի կապերը քակելով, ձիէն իջեցուցին և դետին դրին: Աւազին զովութիւնը սակաւիկ մի ըզդաղեաը կենդանացուց: Կերակուր և ջուր խնդրեց, կրծելու ոսկր մը նետեցին առջևը, և բաժակով ալ ջուր տուին. վերջն այլևս չվնասեցին զինքը: Ռըլիէֆ իւր ցաւած անդամները տարածեց, յոդնութիւնը վըշտաց յագթեց և խոր քուն մտաւ:

Սակայն Թափառականք բոլորուած նստած էին հին դլեակը մնալու դրան կամարին ներքև: Իսկոյն Թիւրքմէններէն մին բացավայրին մէջ վոչխէ ամպ մը նշմարեց՝ որ քիչ քիչ կը մօտենար: Անապատին մէջ ամէն մարդ թշնամի՞ կը կարծուի:

— Թերևս մեր կալանաւորը մեզնէ յափշտակել կուզեն, ըսաւ Հապիպ, ոտքի վրայ ելլելով և իւր զէնքերը առնելու երթալով. պէտք է որ կռուոյ պատրաստուինք:

Փոչիէ ամպը հետզհետէ կը մեծնար. հեծելոց բազմաթիւ դունդ մը դէպ՝ի Թափառականաց կողմը կը յառաջէր:

— Բազմաթիւ են, ըսաւ Խըրխըզ մը, յիմարութիւն է անոնց դէմ դնելը:

— Շատ լաւ, աղաղակեց Թիւրքմէն մը, պէտք է կալանաւորն ապաննել. եթէ մեզի չմնաց, դէթ անոնց ալ չըլլար:

— Իրաւացի է, ըսաւ ուրիշ Թիւրքմէն մը:

Ռըլիէֆ չարունակ կը քնանար. Թիւրքմէնները սուրերնին մերկացնելով՝ իրեն մօտեցան. Լօզպէկ մը անոնց եռանդն դնաց: Գնդապետին դլեաոյ պատուած կաորնները կուրծքը բաց թողած էին: Ոսկիէ բարակ շղթայ մը, որոյ ծայրը սարդիոնէ շքադրամ մը կապուած էր, աւազակայ ուշադրութիւնը դրաւեց: Աջին նչմարողն Լօզպէկն եղաւ. յանկարծական շարժմամբ քնացողին վրայ ինկաւ, շղթային խորտակելով շքադրամն առաւ: Գնդապետն ընդոստ քունէն արթննալով՝ անկողնին մէջ նստաւ: Զինքը շրջապատող երեք կառապի կերպարանք առնելով, կարծեց՝ թէ իւր վերջին ժամը զարկած էր, և դարձեալ աչքերը փակեց:

Սակայն Լօզպէկը շքադրամը քննելով՝ զարմացման աղաղակ մ՚արձակեց. առաջին Թիւրքմէնին վերցուցած դաշոյնը բռնելով՝

— Բազդերնիս՞, ըսաւ, մեր կարծածէն աւելի մեծ է. կալանաւորը մեծ դլխաւոր մը, և Էլ — իմերա էմիրին հետ ՚ի յարաբերութեան է:

— Մէ աւելի իրաւարը պէտք է սպաննել զինքը, մեր վրայ եկողներուն ձեռքը չտալու համար:

Սակայն Հապիպ և ուրիշ երկու Թափառականք մտեցած էին. Հապիպ շքադրամն լաւ մը դննեց,

— Ո՛րչափ ազէկ կ՚ըլլայ եթէ այս մարդը աղէ մը պահենք, ըսաւ Լօզպէկը:

— Ա՛յս դլեակին մէջ հին բանա մը կը ճանչնամ, յարեց անմիջապէս Խըրխըզ մը:

— Ա՛յո՛, այո՛, աղաղակեց Հապիպ, իրաւունք ունիս. . . . . ժանդահոտ բո՞ղոքը:

Թիւրքմէնը հակառակելով,

— Աւելի լաւ չըլլար, ըսաւ, եթէ անմիջապէս դինը ապաննենք, գոնէ քիչ կը չարչարուի։

— Ի՞նչ հոգ մեղի, եթէ անհաւատ շուն մը չարչարուի։

— Սակայն չաւտով կը մեռնի, պնդեց առաջինը։ Կը յիշե՞ս մեր՝ վերջին առեններդը հան իջեցուցած մարդը, երեք ժամէն աւելի չկրցաւ դիմանալ։

— Պահ՝, ասիկա զօրաւոր է, պատասխանեց Հապիպ . . . ։ Դարձեալ դինդը պահելնէս չահ մ՚ունինք, բայց խակին մեռցնելով . . . ։

Թիւրքմէնը գաշոյնը ցածցնելով,

— Ինչ որ կ՚ուզէք, այն ըրէք, ըսաւ։

Ռըլիէֆ լմնցաւ՝ թէ երկուքն ալ մար զարհուրելի չարչարանք մը կը պատրաստուի. մահը մօտեցած էր։

Կեդրոնական Ասիոյ մէջ դեռ անտարոյր բռնաւեր կան՝ զոր ասիական միապետութիւնն և անհոգութիւնը հըներած են. այս բռնաւերը նեղ ծակերով՝ սեպագիր հոլեր են։ Եթէ անգամ մը մէկը մէջը ձգուի, ալ անկարելի է անկէց առանց օգնութեան երթալ։ Այն հորերուն մէջ երդոյն ո՛չ կրնայ ձեռքով դեահինը փորել, և ո՛չ ալ աւազն և կոպճի մէջ քանդակեալ գոգաւոր պատերէն մագլցելով վեր երթալ։ Օդն և լոյսը միայն վերէն բացուած փոքրիկ ծակէն կրնան այս բռնաւերուն մէջ թափանցել։

— Գիտե՞ս, հարցուց խըրխըղը Հապիպին, այդ ժամգահաս բռնաւեր ո՛ւր չինուած է։

— Ա յո՛, հին միջնաբերդին մէջ . . . Երե՛ր, շո՛ւն, ըսաւ Հապիպ, ոտքով պնդելով, երե՛ր և մեր եաեէն եկո՛։

Ռըլիէֆին մահը մօտեցած էր, ինչպէս ըսինք։ Սակայն ժանգահաս բռնաւեր գաղափարը դինքը ասոնիկ յուզեց։ Յուսահատ ուժով երկաւ կանգնեցաւ՝ իր գահճայ հետ կռուելու և զանոնք ապաննելու նպատակաւ. բայց իր առաջին շարժումէն զգաց՝ թէ բաւա-

կան զօրութիւն չունի. ՚ի խորոց սրտի հառաչելով գետնին ինկաւ։ Սակայն իր կայծակնացայտ աչքերն այնպիսի սպառնալից ձև մ՚ունէին՝ որ Հապիպ քայլ մը յետս նահանջելով,

— Զուղեր, ըսաւ, քաշկռտելով տանինք դինքը, ընկե՛րք։

Ռըլիէֆը բռնեցին, որ ալ ընդդիմանալու զօրութիւն չունէր, և Հապիպին, որ կողմնակի կը քալէր, որոշած տեղը բերին։

Հեծելազօրաց երիւարներուն ընթացից ձայնն որոշակի կ՚ուգար. դնդապետը՝ պատին մէջ բացուած լրտեսատեն՝ հեծելազօրաց բազմաթիւ գունդը նշմարեց, որ լերան գառ ՚ի վայրին ուղղութեամբ կը յառաջէր։ Ռըլիէֆ՝ այս գունդին գլուխը պատերազմին մէջ տեսած մի եւ նոյն ծերանաղդեաց հեծեալը տեսաւ. բայց այս անգամ պաղատանիվով դէմքը ծածկուած չէր. Ռըլիէֆ հաճի Սաֆիէրը ճանչնալով,

— Սաֆի՛ր, աղաղակեց։

Կաշիէ խարազանով Ռըլիէֆին հարուած մը տալով՝ խօսքն ընդմիջեցին, որով ձայնը չլսուելով՝ ծերանաղդեաց հեծեալը գլուխը չվերցուց։

— Սէրոթ ը կը ճանչնա՛ն, հարցուց Հապիպ զարմացած։

Ռըլիէֆ չկրցաւ պատասխանել. խարազանին հարուածը շրթունքները արիւնելով, կարծես իր լեզուն բոլորովին կապուեցաւ։

Գունդը շտապաւ կը մօտենար. Ռըլիէֆի պահապանները կալանաւորնին պահելով՝ վախան։ Իակոյն հին որդնակերը դրան մը դիմաց եկան, որոյ մէկ թիւն իր ժանգահար ծղինեաց վրայ կախուած, և միւսն ալ դետնին ինկած էր՝ ապտեղութեանց կոյտ մը ներքև. այս տեղ կը դանուէր մղէնների անհամար բազմութիւն մը։

— Ըսած տեղը այս է, ըսաւ Հապիպ։

փոսին ծակին մօտը դրին Ռըլիէֆը, կապերը քակեցին և անուժներուն ներքեւէն չուան մ'անցուցին։ Ա.յս վայրկենին, կենաց պահպանութեան բնազդումն՝ որ բնաւ մեղնէ չհեռանար, կարծես թշուառին ղօրութիւն մը տուաւ. Ռըլիէֆ ուժով եա քաշուեցաւ։

— Յամա՛ռ, ըսաւ Հապիպ, ակռայները կրճտելով։

Հապիպ ոտքով Ռըլիէֆին կռնակին ուժգին հարուած մը տուաւ։ Ռըլիէֆ ծակին վրայ կախեցին. թշուառն օդնութիւն, օդնութիւն կ'աղաղակէր. սակայն մուանները վոխանակ դժալու՝ բարձրաձայն կը ծիծաղէին. շատապաւ ղՌըլիէֆ վոսն իջեցուցին. թոյլ բանի մը վրայ լինելաւ. երբ նոր տարածեալ ձեռքերով այս առարկայն չօշափեց, ցասկեց ոտքի վրայ ելաւ. աչքերը բացուեցան և դլխուն մազերը քաամնեցան և զարհուրած պատին դէմ կռթնեցաւ. Ռըլիէֆ՝ բանտին կեդրոնը՝ պատուհանէն թափանցած աղօտ լուսով, ճիշդ ծակին դիմաց՝ կէս լուծեալ դիակ մը տեսաւ։ Թշուառը ձեռքերը դէպ 'ի երկինք վերցուց։ Հինգ վեց խոշոր սարդ՝ թաւ և երկայն ոտքերուն իրենց սարդոստայնը չինելու կ'զբաղէին, զոր Ռըլիէֆ անցած առեն պատռած էր։ Ա.ճապարանօք սարդերը կը գոյեին այն ծակը՝ ուսկից լոյսը կը թափանցէր, և երբ իրենց աշխատութենէն սակաւիկ մի դադար առնելով՝ խոշոր աչքերնին դնդապետին վրայ կը յառէին, ո՞կարծես ըսել կ'ուզէին՝ թէ դու հոս մնար, բայց այլ ևս չես կրնար ելլել։

Ռըլիէֆի այնպէս երեւցաւ՝ թէ բանտը հետզհետէ կը մթնար։ Ջեր դիտեր՝ թէ արդեօք սարդերն իրենց սարդոստայնները լմնցուցի՞ն. միայն կ'զդար թէ բանտն առջինէն աւելի կը մթնար։

Ռըլիէֆ յանկարծ ղօրաւոր մարմանչուն մը ղժաց, որ վերջը խիստ դժայոն կսկծի վոխուեցաւ. այս կըսկիծն անմիջապէս մարմնոյն բոլոր մասերուն վրայ տարածուեցաւ։

Ռըլիէֆ ձեռքերը մարմնոյն վրայ տարաւ, զգուշալի և նողկացուցիչ հոտ մը առաւ. ապշած չորս կողմն նայեցաւ. այս բանտին երբեմն դուշխապայտ որմերը քիչ մը կարմրացած էին. միլիոնաւոր մլուկներ պատերուն մէջէն դուրս ելած կարդաւ կարդաւ իրեն կը մօտենային։

Ռըլիէֆ մլուկները սպաննելու փորձ փորձեց, բայց կսկիծն և հոտն այնչափ անտանելի եղան՝ որ կալանաւորը՝ ցաւէն դոռալով և դոչելով, յուսահատութենէն գլուխը պատին դէմ չախչախել ուզեց, բայց չնչասպառ ինկաւ և այլ ևս չկրցաւ ոտքի վրայ ելլել։

ԳԼՈՒԽ ԺԳ.

ԼԻԶ

Մօլթօֆ կոմսուհւոյն տունն աւագ–որբոյ բազմամբոխ ակումբ մը կար։ Ա.յն կապուտակ սրահը՝ զոր մեր ընթերցողք արդէն կը ճանչնան, լայերով կը վայլէր։ Նոյնահանդերձ սպասաւորներ պնակներ ձեռքերնին բռնած՝ կը պարտէին, և պաշտօնակալաց ու դոլծակալաց խումբերը ընդարձակ սրահին ամենէ անկիւնները ժողվուած՝ իրարու հետ վառվռուն խօսակցութիւններ կ'ընէին։ Ա.յն օրը յիսուն հրաւիրեալք կառավարչին կնոջ տունը հաւաքուած էին։ Մանելու դրան քով՝ կօրէֆ, Մօլթօֆ և ուրիշ բարձրաստիճան պաշտօնակալք իրարու հետ կը խօսակցէին. բազմոցի մը և սեղանին չուրջը պահակապանի մի քանի տիկնայք դէպ 'ի ձեղունը կը նայէին՝ մէջերնին առանց խօսք տեղի ունենալու, և կը չանայէին յօրանջմունքներնին ծածկել։ Մարթա մէկ խումբէն միւսը կանցնէր, և տան տիկնոջ պարտքերը կը կատարէր այնպիսի քաղցրութեամբ և մարդասիրութեամբ՝ որ ղինքը խիստ նաղլի կ'երևցունէին։ Ա.յն օր իր հրապուրիչ դեղեցկու-

թիւնն իր բոլոր պայծառութեամբ կը փայլէր. փաթիլէն ղրկուած և Օռէնպուրկի կարաւանէն եկած չըքնաղ զգեստ մը հագած էր. բազկաց վրայ, պարանոցին շուրջն և մազերուն մէջ ադամանդներ կը շողային, Սակայն այս արուեստակեալ մարդասիրութեան և ուրախութեան հետ աչացը մէջ տխրութիւն մը թափանցած, և թեթև դունատութիւն մը իր այտերը ծածկած էին։

Բնականաբար Պասալըքի ալ հրաւիրուած պիտի ըլլար։ Սեղանի մը դէմ կռթնած, Մարթային բոլոր չարժումները կը դիտէր։ Կ'սպասէր որ Մարթա առանձին մնայ՝ անոր մօտենալու համար. երեկոյթին մեծ մասն սպասելով անցուց։ Վերջապէս յարմար վայրկեան մը գտած կարծելով, դէպ 'ի Մարթային կողմը գնաց։ Կոմսուհին զանիկա տեսնելով, անհամբերութեան փոքրիկ շարժում մ'ըրաւ, բայց ձեռքը Պասալըքին երկընցուց։

— Ճշմարտութիւնը, ըսաւ Պասալըք, ողջունելով, երբեմն ակամայ բերնէն կ'ելլէ. դրեթէ յանդգնութիւն է, տիկին, խմացունելը ձեղի՝ թէ այսօր հրեշտակային դեղեցկութիւն մ'ունիք, բայց . . . ։

Մարթա զանիկա ընդմիջելով,

— Ցիրաւի, պարո՛ն Պասալըք, ըսաւ, պէտք էր որ նոր բան մ'ըսէիք. սակայն ձեր բերնին մէջ դեղեցկութիւնս դովելէ զատ ուրիշ բան չունէի՞ք ըսելու։

— Տիկի՛ն . . . ։

— Գեղեցի՛կ եմ, Ասաւա՛ծ իմ, դիտեմ. դիտեմ նաև թէ ձեր աչքին այնչափ տգեղ չեմ երևիր. տասուան մը միջոցի մէջ առաջին անգամ խմացուցիք՝ թէ դեղեցիկ եմ։ Եթէ կօրէֆ, որ մինչև ցարդ ըսած չէ՝ թէ դեղեցիկ ես, եթէ այսօր ըսէր, թերևս չողբորթուէի, բայց անտարբեր կեցայ ձեր ղարմացման։

— Զգայացած դէչ կը բացատրեմ, տիկի՛ն, մի՛ բարկանաք։

Կոմսուհին հեգնական դէմքով վրան նայելով,

— Հապա Լիզ օրիո՞րդը, հարցուց։

Պասալաքի թեթեւ մը խռովելով,

— Տիկին, մրմնջեց։

— Պատասխանեցէ՛ք, պարո՛ն Պասալաքի, ըսաւ կոմսուհին խստիւ. կատակի ձեւով չխօսինք. ձեզի՞պաշտօն մը տուի՝ որպէս զի կատարէք, և կատարեցիք ։ալ. Լիզին վայելուչ յարգանքներ ընծայեցիք առանց դժդոհութեան։ Կը յուսամ թէ այս սիրելի աղջկան անձին արժէքը ճանչցած էք, եւ թէ բոլոր լեհնդուհիներուն գլխէդ եւած են։

— Բայց, տիկի՛ն, աղաղակեց Պասալաքի, ինչ գաշինք որ իրարու հետ դրինք, եւ ի՛նչ որ ըսիք, զայն չէ՞ք յիշեր . . . . . ։

— Ձեզի ուրիշ առիւն ըսածիս վրայ չէ խնդիրը. հարցմանս պատասխանեցէք. ի՞նչ են ձեր նպատակները. կօրէֆի օրիորդը յաճախ ձեր վրայ կը խօսի ինձ, և կ՚երեւնայ որ շատ աղէկ կը խօսի ձեր վրայ. զձեզ յանչափս կը մեծարէ, մինչդեռ ես . . . . ։

— Անդութ էք. բայց դիտէք, տիկի՛ն, որ դուք առանձին . . . . . ։

— Ի՞նչ կ՚ըսէք, պարո՛ն, պատասխանեց Մարթա արհամարհոտ ժպիտով, այնչափ յանձնապաստան մի՛ ըլլաք, և երկու կնոջ, Լիզի և ինձ միանդամայն յարգանք մի՛ տաք. Դիտեմ, բաւական չանացիք օրիորդ կօրէֆին քով՝ որ ձեր առ ինքն ունեցած սէրերնիդ իմանայ։ Արդ, ամբողջ առաւօտն անոր քով խօսելով անցնելնիդ վերջը, երկուքնիդ կուգաք ձեր մեծարանքներն ինձ տալու. ըրածնիդ լաւ չէ։

— Բայց տիկի՛ն, պատասխանեց Պասալաքի տատանելով, դիտէք որ ձեր մեկ խօսքը բաւական է, որպէս զի այլ եւս անոր հետ չխօսիմ։

Մարթա բարկութենէն շառագունեալ,

— Ձիշդ ձեզնէ պահանջածս հակառակն է, աղա-

ղաչեց ուժգին։

Պասալաքի չուարելով եւ թոթովելով.

— Ո՛հ, տիկի՛ն, ըսաւ, այդ տհաճութեան արժանի չեմ. արդէն որ ձեզի հետ չը խօսիմ . . . . . ։

Կոմսուհին լմնցնելով՝ թէ իւր խօսքից մէջ ծայրայեղութեան դացած էր, քաղցր ձայնով,

— Գոնէ սա՛ կարդացէմ, ըսաւ որ անգամ մ՚ալ տարօրինակ յարգանք և մեծարանք չցուցնէք առ իս. ասիկա վայելուչ չէ։ Մի՛ ձեզ ունեցած բարութեամբս չուզեցի երկանս լմնցունել և միջամտել տալ անոր՝ որ ձեր իմ քովս գալը չարգիլէ. միջոցները ցցուցի ձեզ՝ որով միշտ պատշաճ կրնաք յառաջանալ, բայց չքաջալերեցի ըզձեզ՝ որ չափազանցութեան դիմէք. կը յուսայի դարձեալ՝ որ այս սիրելի աղջկան հետ ձեր մի քանի շաբաթ մտերմութիւն ընելը վտանգելով պիտի դիւրացնէ. չխաբուեցայ, որովհետեւ կը տեսնեմ որ կօրէֆի օրիորդին հետ շատ մտերիմ էք. լաւ, շատ ուրախացած եմ. բայց ինչո՞ւ ձեր մեծարանքներով միշտ ինձի հետ նսեմիլ ելլել կուզէք. եթէ կըվտանգիք որ իրարու հետ աղէկ բարեկամ ըլլանք, այլ եւս առ իս ցոյցերը մի՛ ընէք, և յայտնի համարձակ ըսէք ինձ՝ թէ Լիզին վրայ ի՞նչ կը մտածէք։

Պասալաքի աչքերը խոնարհած, ինչ պատասխանելը չէր դիտեր.

— Խօսեցէ՛ք, ըսաւ Մարթա, կը սիրէ՞ք Լիզը։

— Բայց, տիկի՛ն, կարծեմ թէ . . . . . ։

Մարթա սրանեղութիւն ցցուներով դիմաց վրայ,

— Հիմայ, ըսաւ, ձեզի ինչ որ ըսեմ, անոր պատասխանատուութիւնը ձեր վրայ առէք։ Արդէն երկիս ձեր հանապազօրեայ այցելութեանց պատճառը հարցուց ինձ. պատասխանեցի երեսն՝ թէ Լիզին վայելուչ յարգանքներ կ՚ընծայէ. կը կարծէի՝ թէ այնպէս է, որով հետեւ բնաւ ատ խօսելու վատութեան չեմ դիջանիր. դարձեալ չեմ ուզեր այս աղջիկն անուանարկ ընել. ու-

ըեան, եթէ քիչ ժամանակի մէջ ձեր խորհրդոց տեղեակ չըլլամ, պիտի ստիպուիմ ազդարարել ձեզ՝ որ այլ եւս յաճախ այցելութեան չգաք ինծի։ Լիզը ճանչնալու ժամանակ ունեցաք։ Ա.յս խօսքերը մէկ կողմ թողունք. դիտե՞ք թէ ձեզի համար ինչ ըսին ինձի. որպէս թէ երէկ շրջագայութեան առեն, Լիզ ձեր կեանքն ազատած ըլլայ, ճշմարի՞տ է։

Պասալըքի չափազանց տակնուվրայ եղած,

— ճշմարիտ է, ըսաւ, շատ ձայնով. . . . . .

Ա.յս վայրկենին Լիզ սրահը մտաւ։

— Ձեր վրայ կը խօսէինք, սիրելի՛ս, ըսաւ Մարթա, մօտենալու նշան ընելով անոր։

Կօրէֆ օրիորդին եւ կոմսուհոյն երբարու հետ ունեցած յարաբերութիւններնին խիստ լաւ կերեւէին, որով հետեւ Լիզ ժպտելով մօտեցաւ. հանդերձ այսու ժպիտն ալ բարեկամական էր։

— Իմ վրաս կը խօսէիք, հարցուց Լիզ, ի՞նչ կ'ըսէիք։

— Երէկուան անցած դէպքին վրայ մանրամասն տեղեկութիւններ կուզէի։ Կերեւի՝ թէ պարոն Պասալըքին կեանքն ազատած էք. ասիկա մեզի պատմեցէք։

Լիզ բարձրաձայն ծիծաղելով,

— Շատ տարօրինակ բան էր, ըսաւ. երէկ հայրս, ես, Բլօց և Պասալըքի պարոնայք, քաղաքին դուռերէն դուրս, արեգական՝ի մուտս մտնելը դիտելով, խիստ կը զարմանայինք հորիզոնը նկարուած տեսարանին վրայ. տեսայ որ պարոնը հեռացաւ. իսկոյն ատելու ձայն մը լսեցի, տեսայ որ օձ մը պոչին վրայ կանդնած, պարոն Պասալըքին վրայ պիտի յարձակի. հաւանականաբար քալած առեն օձին վրայ կոխած պիտի ըլլայ. խարազանս առնելով՝ օձին կողմը վազեցի եւ խիստ յաջողակ հարուածով մը ողնայարը ջախջախեցի ճիշդ այն վայրկենին՝ յորում մեր բարեկամին վրայ պիտի նետուէր. պարոն Պասալըքի օձը չէր տեսներ։ Մա-

հաբեր խայթուած ունեցող ատլան մը կ'երեւէր։

— Պարզապէս դիւցազնուհի ես, ըսաւ Մարթա։

— Պատմութեանս ամենէն ծիծաղաշարժ մասը սա՛ է՝ թէ պարոն Պասալըքի ափշութեամբ օձին կտորնեբուն վրայ նայած առեն լինձ ըսաւ. — Դիտե՞ք, թէ կեանքս աղատեցիք —, Ա.յս խօսքն այնչափ պարզ եւ բնական զարմացմամբ ըսաւ, որ ալ խնդալէն մարելէս չկրցայ ինքզինքս բռնել. ես ալ պատասխանեցի՝ թէ այնպէս է. վերջը սկսաւ շնորհակալութիւն յայտնել։

Պասալըքի տակաւին մի խռոված էր. նախորդ երիկուան դէպքը յիշեց, և երբ Լիզին վրայ նայեցաւ, այնչափ դեղեցիկ և այնչափ հրապուրիչ էր, որ անոր մօտենալով՝ ձեռքը բռնեց և մեծարանօք համբուրեց ըսաւ։

— Ո՜հ, ըսաւ Մարթա, թանձրամիտ մարդ մը կը զարմանայ՝ թէ ինչպէս կին մը դեղեցկութեան հետ քաջասրտութիւն ալ կրնայ ունենալ. երէկ, ճիշդն ըսելով, ես ալ զարմացայ. կզղջամ որ մինչեւ ցարդ օրիորդին ունեցած ամեն կատարելութիւններն ալ չեմ ճանչցեր։

Պասալըքի Մարթային կողմը դառնալով, և աչքերըն անոր վրայ յառելով,

— Իրաւունք ունիք, ըսաւ, սիրելին, կը ճանչնամ այդ մարդը։

Կոմսուհին ձեռքը Պասալըքին երկնցունելով.

— Իրարու ձեռք սեղմենք, ըսաւ, որովհետեւ ա-հա բարեկամացանք մեկզմեկու։

Կօրէֆ օրիորդը զարմացած երկուքին խօսքերուն վրայ, ըսաւ.

— Ա.հա իրարու անկեղծ բարեկամ եղաք,

Մարթա պանիկա համբուրելով,

— Ձեզի հաճոյանալու համար է, ըսաւ, ձեզի՝ որ անկեղծները կը սիրէք։ Դարձեալ, դիտեցի որ կօրէֆ օրիորդը՝ որ յանչափս չողոքորթները կատէ, պարոն Պա-

սալաքիին յարդ անաց վրայ չէ բարկացած ։

Լիլ չառադունելով պատասխանեց ։

— Պէտք է ընդունիլ այն մարդուն չափազանց ընտրհակալութիւններն ալ , որուն կեանքն ազատուած է ։

Ա՛յս միջոցին , Մօլթօֆ մօտեցաւ , և գլխիլ տեսնելով՝ ժպտեցաւ ։

— Պէտք էր , ըսաւ Մօլթօֆ Լիլին՝ որ ձեր հօրեղբօր որդւոյն Ռըլիէֆին իմացուներէք՝ որ իր լուրերը ձեղի հաղորդեր ։ բոլորովին զմեզ մոռցաւ , զմեզ՝ որ իր բարեկամներն ենք ։ երեն գրկելու կարեւոր նամակներ ունիմ , բայց չեմ գիտեր՝ թէ ուր կը գտնուի ։

— Վերջին անգամ մեզի իմացուցիք , սպարապե՛տ , ըսաւ Պաստալքի , թէ տեղեկագիր մ՚ ընդունած էք , որուն մէջ ձեզի կ՚իմացունէ 10,000 հազար Քիրչաքայ կոտորածը ։

— Բայց ամիս մը կ՚ընէ ։ դիտեմ որ Թաշքանտէն մինչեւ Ամու—Տէրիա երթալու հրամանն ընդունած է , որպէս զի ընդհանուր կառավարչին հետ գրկած դունդին հետ միանայ՝ մեր դէմ ճակատած թշնամի բանակ մը կոտորելու համար , բայց ճիշդ չեմ գիտեր՝ թէ ո՞ր կը գտնուի ։

— Այնուհետեւ ուղղակի Թաշքանտ երթալիդ կ՚ընէ , ըսաւ բարձրահասակ պաշտօնակալ մը ։

— Ասոր համար է որ կը ցաւիմ զմեզ մոռցաւ այս սիրելի բարեկամը , տեղեկագիրը չգրելով՝ զմեզ իր վիճակին վրայ անհանգստութեանց մէջ կը թողու . . . ։

— Ո՛հ , աղաղակեց Պաստալքի , այս վայրենիներուն դէմ պատերազմիլը վտանգաւոր չէ . չորս հոգի՝ ի միասին կ՚արձակեն մեկ հրացանը։

— Ցայտնի է , ընդմիջեց Մարթա , որ ըսածնիդ ճիշդ չէ ։

Մարթա ծիծաղելով ըսաւ այս խօսքը , բայց այս ծիծաղին տակ բարկութիւն կար ։ Միայն Լիլ իւր կա-

նոյն բնազդմամբ կրցաւ Մարթային բարկութիւնը նըշմարել ։

— Մարթա՛ , ըսաւ Մօլթօֆ , Ռըլիէֆին այն տեղերն երթալու պատճառը քիչ մը դուք եղաք ։

Մարթա թեթեւ մը այլայլուեցաւ ։

— Մինչեւ ցարդ իրեն մեծ ջնաս պատահած չէ , շարունակեց սպարապետը , որովհետեւ այս առաւօտ թաշքանտէն հրաման ընդունեցի որ իրեն աւազակութեան ուրիշ առիթ մը հասնելուն լուրը դրկեմ՝ ի վարձատրութիւն փիչաքներուն դէմ տարած մեծամեծ յաղթութեանց ։

— Ինչ բախտ , աղաղակեց Պաստալքի , երկու առանց մէջ աւազակութեան երկու առիթ բարձրանա՛լ ։

— Ընժանի է , ըսաւ Մօլթօֆ ցրտութեամբ ։

Երիտասարդ պաշտօնակալը Մօլթօֆին խիստ ձայնն վախնալով ,

— Սեւմափայլ տե՛ր , թոթովեց , բնաւ չեմ ըսեր՝ թէ արժանի չէ ։

— Լա՛ւ , պատասխանեց սպարապետը ։

Մօլթօֆ կռնակը երիտասարդ պաշտօնակալին դարձուց , և իւր կնոջ ձեռքէն բռնելով ,

— Ա՛յս երեկոյ քիչ մը դուռնատեալ կ՚երթանք , սիրե՛լի՛ս , ըսաւ . հիւա՞նդ էք ։

— Ո՛չ , բարեկա՛մս , պատասխանեց ։

— Յոգնա՞ծ ։

Մարթա քիչ մը անհամբերութիւն ցուցնելով ,

— Բարեկա՛մս , ըսաւ Մօլթօֆին , միշտ դէմքս կը դիտէք , կերեւի թէ դիս շատ կըսիրէք ։

— կարելի՞ է ձեզ շատ սիրել , պատասխանեց սպարապետը ։

— Ա՛հ , այո՛ քրիստինէյ Մարթա կէս ձայնով ,

Մարթա սակաւիկ մը հանգստացաւ . ուզեց երկանն երեսը ժպտել , որ զարմացմամբ գինքը կը դիտէր ։ յե-

ատյ հրաւիրելոց խումբին մէջ մտաւ ։

Պասալաքի կօրէֆ օրիորդին մօտենալով ,

— կը ներէ՞ք , հարցուց , որ վաղը առաւօտեան այ֊ցելութիւն տամ ձեզի ։

— եկէ՛ք , պատասխանեց Լիզ ։

ԳԼՈՒԽ ԺԵ ։

ՆՈՐԼՈՒՐ

Հետևեալ առաւօտ Մօլթօֆ իր հնոյ ներքնատեներա֊կը մտաւ , ճիշդ այն վայրկենին՝ յորում Մարթա տակա֊ւին նոր կը զարդարուէր ։ Կինը զանիկա տեսնելով՝ զար֊մացման և դժգոհութեան նշաններ ըրաւ ։

Զօրապետը ակռաը և մօտգրաղ կերպարանք մ'ու֊ներ , որ իւր սովորական զուարթ դէմքին և բարեսէր ու քաղցր նայուածքին չէր համապատասխաներ , ան֊հանդիստ և վարանեալ կը թուէր ։ Մօլթօֆ սենեկա֊պան կինը տեսնելով՝ որ կոմսուհւոյն վարսերը կը յար֊դարէր , իսկոյն յօնքերը պռատեց ։

Մարթա՝ որ գլուխը Մօլթօֆի դարձուցած էր , և կարծես՝ իրենց օրական յարաբերութեանց կանոնին հակառակ այսպիսի տարաժամ այցելութեան պատճա֊ռըն իմանալ կուզէր , իւր երկան անսովոր կերպարանքը նշմարելով՝ ներքնատէս յուղուեցաւ ։

Մօլթօֆ հնոյը քով նստաւ , և անոր ձեռքը [համ֊

բուրելով,

— Մարթա՛, ըսաւ գաղղիերէն, ձեզի հետ քիչ մը խօսելիք ունիմ։

— Աստո՛ւած իմ, ինչ ախտը կերպարանք, պատասխանեց Մարթա, ժպտել կեղծելով. խօսեցէ՛ք, պատրաստ եմ ձեզ լսելու։

— Կը փափաքիմ որ առանձին խօսիմք։

— Մի և նոյն բանն ըսել է եթէ գաղղիերէն խօսիմք, հաճելինը չհասկնար։

— Այո՛, բայց իւր ներկայութիւնը դիս անհանգիստ կ'ընէ։ Ո՛տաչեմ, սիրելի՛դ իմ, հաճեցէք ինքը դուրս հանելու քանի մը վայրկենի համար։

Մարթա՝ հեղձամղձուկ հառաչանք մը հանելով,

— Շատ լաւ, ըսաւ, ուրախ կերպ մը ցուցնել ջանալով. հաճելին, զմեզ առանձին թողէ՛ք։

Երբ ապարատեալը կոմսուհւոյն հետ առանձին մնաց, ծունկի եկաւ, ձեռքերը խաչաձև կնոջն ըղդեսացին վրայ դրաւ, և դողդողալը աչօք Մարթայէն վրայ նայելով,

— Մարթա՛, ըսաւ, ի՞նչ ըրի ձեզի։

Կոմսուհին՝ այս բառերը և ախտը ձայնով եղած հարցմանէն զարհուրելով,

— Բարեկա՛մս, թողլովից, ըսածնիդ չեմ հասկնար։

— Ձեզի անհաճոյ երեւելու ի՞նչ յանցանք դործեցի, հարցուց Մօլթօֆ.

Մարթա՝ ձեռքն երիտասարդին ուսին վրայ դնելով,

— Եւ ոչ մեկ յանցանք, պատասխանեց բռնադատեալ ժպիտով մը. յիրաւի, խիստ տարօրինակ դաղափարներու կը ծառայէք։

— Ինչո՞ւ ուրեմն, սիրելի՛դ իմ, ըսաւ Մօլթօֆ, ինձ նկատմամբ բոլորովին փոխուած էք։ Երկու ամիսէ ի վեր, միայն խնջոյից ժամերուն և պաշտօնական ընդունելութեան առեն կը տեսնեմ ձեզ։ Երբ մանաւանդ ձեզ հետ տեսնուիլ ուզեմ, երբեմն հիւանդութիւն, երբեմն ալ յոգնութիւն, կամ ո՛ր և է բան պատճառելով, կերպով մը առաջարկութիւնս կը մերժէք։

— Բարեկա՛մս, պատասխանեց Մարթա, դուք ինձ շատ կը սիրէք, ինչպէս որ երբէք ձեզի ըսի, բայց ինձ բաւական չէք ճանչնար։ Վայրկեաններ կուգան՝ յորս մեզ կանայքս ջղային և անհանդիստ կ'ընեմք։ Ներեցէք, կը խոստանամ որ երկու ամիսէ ի վեր խիստ անհանգիստ եմ։ Ընթրեան ներկայ եղէք, կը յուսամ որ շուտով այս վիճակէն կ'աղատուիմ։

Մօլթօֆ իւր ոտից ամանները բռնելով,

— Գիտեք, ըսաւ Մարթայէն, որ ես ձեր ամենէն անձնուէր ծառան եմ, և եթէ երբեմն կը դժդոհիմ, անոր ալ ներեցէք։

Ծեռայ եղաւ և իւր կինը դրկելով,

— Մարթա՛, ըսաւ, ղբեղ այնպէս կը սիրեմ, որ ալ չեմ կրնար բացատրել, եթէ ղբեղ կորնցունեմ, կամ կը մեռնիմ կամ կը խենդենամ։ Եթէ ուրիշ մեկը ինձմէ քու սերդ յափշտակէ, օհ, այն առեն, վայ այն մարդուն. ծեր և կաբի հեղ եմ, բայց եթէ քեզի դպչին.....։

Ապարատեալին կերպարանքը վայրկեան մը ապառնալէն ձև առաւ, և իւր հանդարտ և խաղաղ աչքերէն, կարծես, սիրան կայծակներ ցայտել, մինչև փիլ մնայ Մարթա սիրտն նուաղեր. բնաւ իւր երկան ձայնը այսպիսի ուժգնութիւն ունեցած չէր։ Մարթա հասկցաւ՝ թէ ապարատեալն առ ինքն սիրով տոչորեալ իւր նպատակին մէջ հաստատուն պիտի մնայ։ Երեսը մեկ կողմ դարձուց՝ որպէս զի Մօլթօֆ իւր դիմաց դունատութիւնն և գեղնութիւնը չնշմարէ։

— Ներեցէք, ըսաւ Մարթա ահեղ ձայնով, դիտաէք որ ձեղնէ զատ ոչ ոքը կը սիրեմ և կամ սիրած եմ.....։

— Ո՛հ, Մարթա՛, մինչև ցայսօր Աստուծոյ չնորհա-

կալ եղած եմ՝ ինձ քեզի պէս կին մը չնորհելուն համար։ Ա՛ռ իս ցցուցած սէրերնիդ չափազանց է, դուք անհամեմատ դեղեցկութիւն ունեցող երիտասարդ աղջիկ մ՚էք, մինչդեռ ես ծերացած եմ։

— Պճնասէր, ընդմիջեց Մարթա, թէպէտ յիսուն տարեկան էք, սակայն և այնպէս շատ երիտասարդներ աւելի լաւ էք։

— Նոյն իսկ Գասալբիէ՞ն ալ աւելի լաւ եմ, հարցուց, քիչ մը չարութեան մղքով։

Մարթա բարձրաձայն ծիծաղելով,

— Գասալբիէն վրայ ալ կը նախանձիք, ըսաւ։ ա՜հ, տարօրինա՛կ բան, իգաւունք չունիք։

— Ջեմ նախանձիր, պատասխանեց Մօլիճօֆ, բայց ըսա իս միշտ ձեր քովյաճախներն անհամ և անվայելուչ է։

— Ճիշդ է ըսածդիդ, և անոր համար արգիլեցի որ ալ քովս չգաճախէ։ Հիմա Գասալբի կօրէֆ օրիորդին վայելուչ յարգանքներ կ՚ընծայէ. կարծեմ ասիկա ձեզի ըսած եմ.....։

— Ա՜յո՛..... բայց երէկ երիկո՞ւն։

— Ո՛հ. եթէ երէկ իրեն ըսածներս ըսած ըլլայիք, պիտի իմանայիք՝ թէ նա ձեր երջանկութեան ա՛րչալի ջատագովը մէկն է. Դարձեալ կը կրկնեմ՝ թէ կօրէֆ օրիորդին սիրտգոհած է։

— Ինչպէս կ՚ելլ այս մտքդուն կը հասնի։

— կարծեմ կ՚ելլ անոր վրայ դէշ աչքով չնայիր, այս այս բանը գիս կը զարմացուներ. որովհետև կ՚իմին վիճակին ու Գասալբիի թերեւութիւնն իրարու հետ պիտի չհամաձայնէին։

— Ինչո՞ւ հարսանիք չէք ըներ. կ՚ելլ լաւ օժիտ պիտի ունենայ, որովհետև Գասալբի հարուստ և միանգամայն արհուեստական ընտանիքէ է.

— կը յուսամ՝ թէ զանոնք իրարու հետ պիտի ամուսնացնեմք։

— Հիմայ հասկցայ։

Ներքնատեղեակին դրան զարնուելով, խօսակցութիւնին ընդմիջեցին. սենեկապան կինն իմացուց՝ թէ պարոն կօրէֆ կերակրոց սրահին մէջ նորին վսեմութեան կ՚սպասէ։

— Ա՜հ, ճշմարիտ է, ազատակեց Մօլիճօֆ. բաղդս վին մոքէս եղած էր՝ թէ այսօր ծեր իմաստունն՚ի միասին նախաճաշելու հրաւիրած էի. մեղ հետ նախաճաշելու կը բարեհաճի՞ք։

— Ա՜յո՛, եթէ ինձ սպասել կուզէք։

— Ինչո՞ւ պիտի չսպասեմք։

— Լաւ, ուրեմն գացէք սակէց, որպէս զի հադուիմ։

Մօլիճօֆ անդամ մ՚ալ իւր կինը դրկելով ներքնասենեակին մեկնեցաւ։ Երբոր դուրս եկաւ, յանկարծ Մարթային դիմաց վրայ երևցած արուեստակեալ ուրախութիւնը արտմութեան փոխուեցաւ և արտասուաց կաթիլներ սկսան վազել այտերուն վրայ. դէմքը թաշկինակով ծածկեց և դառնապէս յուզուց հանելով,

— Աստուա՛ծ իմ, ըսաւ, ո՞րչափ թշուառ եմ։

Սենեկապան կինը՝ որ սովորած էր միշտ իւր տիկնոջ սէգ, խրոխտ, ամբարտաւան, հեգնոտ և ծաղրող սեռանել, բայց ոչ բնաւ յուզեալ, ափշեցաւ, երբ ներս մտած ատեն՝ նայեցաւ որ Մարթա կուլար։

— Ո՛հ, ո՜հ, ըսաւ սենեկապան կինն ինքն իրեն, արդեօք ի՛նչ դէպք պատահած է։

Բայց Մարթա, միշտ մեծամիտ և հպարտ նոյն իսկ նեղութեան միջոցին ալ, չուտով աչքերը սրբեց և խոժոռ դիմաք խեղճ քաթրինին վրայ նայելով, հարցուց.

— Կանչեցի՞ր ձեզ։

— Ո՛չ, տիկի՛ն, բայց կարծեցի՝ թէ.....։

— Ա՛յսու հետև տանս մէջ մի՛ կեներ։

Վճիռն անդառնալի էր. քաթրին, հակառակ իւր արտասուաց, նոյն իսկ երիկունը տախտակեցաւ պալա-

տէն մեկնիլ. Մարթա իր տարուբեռանց վկայ չէր ուզեր :

Թխմուրի հին պալատին մեկ ուրիշ մասին մէջ ալ՝ մի և նոյն ժամուն սարքեր տեսարան մը տեղի ունեցած էր :

Պահապետի օբէֆի օրիորդին այցելութեան գացած էր : Լիլ վարդապետն ծոպերով սոխակի բեհեզեայ դրեսը հագած խիստ չքնաղ տեսք մ'ունէր . այս դրեսը միայն առաւօտները կը հագնէր : Որովհետև Լիլ այնչափ գեղեցիկ և այնչափ հրապուրիչ կերևէր , ուստի Պահապետին , որ պալատէն բացակայ դանուած միջոցին՝ երկան առեն տարակուսած էր Լիլին նկատմամբ , վրանմունքները վարաւեցան : Պահապետին Լիլին համար կրած դգացումն անբացատրելի էր : Պաշտօնակալը յոյժ կարի մըտիկան ցանկութեամբ հրապուրեալ չէր երիտասարդ աղջկան վրայ , այլ մի քանի շաբաթէ ՚ի վեր ա նոր հետ ունեցած յարաբերութիւնները այնչափ հաճոյ երևցած էին՝ որ այն յարաբերութիւնները հետզհետէ անհրաժեշտ եղած էին : Լիլ չնաշխարհիկ գեղեցկութեամբ կին մ'էր , և Պահապետին յոյժ հաճելի կ'երևնէր : Սակայն այսու ամենայնիւ տակաւին իրարու սէր չէին յայտնած . երիտասարդ մարդն ինք իրեն կը մտածէր՝ թէ Լիլ կատարելապէս ինձ պիտի յարմարի . Օրէֆի օրիորդին հետ վարելիք կեանքը լաւ դոյներու ներքև կ'երևակայեր . բայց ատուդիւ , ցաւէն ալ պիտի չմեռնէր՝ եթէ յաջորդ օրն իրենց միութեան խոչնդոտն եղող դէպքը մը պատահէր :

Օրէֆի օրիորդը քան և մեկ տարեկան և շատ խելացի էր , խորհածը միշտ կը կատարեր : Դիտած էր՝ որ Պահապետի պահակապանին պաշտօնակալայ նման իրեն յանչախ յարգանքներ չէր տար ուստի աւելի Պահապետին ընկերութեան ախորժեցաւ :

Մարթային հաշիւները անոնց օգնելով՝ անմիջապէս իրարու հետ ներքին յարաբերութիւններ հաստատեցին : Պահապետի հանճարեղ և կրթեալ էր , և լաւ կերպեր

ունէր . քաջ և յանդուգն էր , բայց չար չէր , անձնադովութիւնն և թերեւութիւնը մեկ կողմ առնելով և բևեռի-պաշտօնակալ էր . կրնար հնոյ մը հաճելի ըլլալ , և եղաւ ալ Լիլին : Բեղ բսպուրկ կամ Մոսկուա , ուր Պահապետները շատ կը դանուին , Լիլ դանիկա ընտրած պիտի չըլլար . բայց Սմիզանա զօրապետն իր ընկերներն կ'որոշուէր , որոնց շատը բաղդին յաջողելով պաշտօնակալ եղած էին :

Ահա եղելութիւնն այսպէս ըլլալով , ընթերցողը Լիլին և Պահապետին հետևեալ պատ խօսակցութեան վրայ պիտի չզարմանայ :

— Օրիո՛րդ , ըսաւ պաշտօնակալը մտած առեն , ձեղի հետ մանաւոր խօսակցութիւն մ'ընելու համար եկայ :

— Մտիկ կ'ընեմ , պարոն Պահապետ՛ :

— Օրիո՛րդ , զձեզ կը սիրեմ , և զձեզ կինս կանչելուս համար շատ երջանիկ պիտի ըլլամ : Հաւանութիւն կուտա՞ք այս ամուսնութեան :

— Ա՛յ , եթէ հայրս հաճի :

— Անդամ մը ձեր հայրը տեսնելու երթամ՞ք ,

— Երթանք :

Բաղուկ բաղկի տալով , պարոն Օրէֆին տունը դացին , ուր իմացան՝ թէ ձեր խնամատուն կառավարչին տունը կը նախամաշէ .

— Կառավարչին տունն երթամ՞ք :

— Երթանք :

Հանդարտաքայլ թալարի — Թխմուրին մէջէն անցնելով՝ դալէնին խնամատին :

Մօրթաֆ և Օրէֆ թուղթ կը խաղային , Մարթա ալ անոնց քովն էր :

Պահապետի Մարթային մտնելով , իմացաւ՝ թէ Լիլին հետ ամուսնանալու դիտաւորութեամբ եկած է :

— Լաւ , պատասխանեց Մարթա . — Աղէքսա՛նդր , ըսաւ էրկանը , հոս եկէ՛ք , երթանք , փափըսայ Լիլին

ականջին, ձեր ամուսնութեան խօսնակին ես պիտի ըլ-
լամ։

— Սպասեցէ՛ք, ըսաւ Մօլթօֆ, որ լմնցնեմ այս...։

— Ջեմ ապասեր, աղաղակեց Մարթա, ոտքը դե-
ռին զարնելով. չո՛ւտ, չո՛ւտ։

Կառավարիչը թուղթերը անդանին վրայ դրաւ։

— Դուք ալ, ժէկօր Աղէքսանդրովի՛չ, ըսաւ Մար-
թա։

Երբ խնամատուն և ապարապետը Մարթային ցցու-
ցած թիկնաթոռներուն վրայ նստան,

— Աղէքսանդրովի՛չ, ըսաւ Մարթա կօրէֆին, պա-
տիւ ունիմ ձեղնէ խնդրելու որ ձեր ազգիկը պարտն
պասալոքլին կնութեան տաք։

Խնամատուն ափսոսութեամբ Մարթային վրայ նա-
յելով,

— Տիկի՛ն, ըսաւ, չեմ դիտեր.....։

— Ա՜հ, պայման չկայ, այս կամ ոչ. թէ՛ ձեր ազ-
գիկն և թէ՛ երիկս հաւանութիւն կուտան, միայն ձեր
հաւանութիւնը պէտք է. Պարոն Պասալոքլի հարստա
և աղնուական ընտանիքէ է, երկուքն ալ դիւրաւ կը տի-
րեն։ Հիմա այս ակումբին մէջ դանուք պիտի նշանենք,
եթէ հաճիք. յետոյ երիկս Պետերսպուրգ կը դրկէ կարեւոր
թուղթերն ստանալու համար. ի՛նչպէս կը խօսք մը
ընէք։

Կօրէֆ ապարապետին կողմը դառնալով, հարցուց.

— Սպարապե՛տ, ի՞նչ է ձեր կարծիքն այս մա-
սին. եթէ աղջիկս ալ հաճութիւնը տայ, ես ընթիւք
չունիմ։

Մօլթօֆ ժպտելով,

— Ըսա իս, պատասխանեց, անոնց իրարու հետ ա-
մուսնութիւնը վայելուչ է։

Կօրէֆ դլուխը ծռելով,

— Լաւ, ըսաւ, հաւանութիւն կուտամ.

— Կեցցէ՛ կօրէֆ, աղաղակեց Մօլթօֆ անմիջա-

պէս բնդբռպարկ պիտի դրամ, առ առաւելն երկու
ամիսէն պատասխան կ'ընդունիմ. նշանենք այսօր այս
տղայքները, և երկու ամիսէն վերջը՝ այս երկրին մէջ
առաջին քրիստոնէական հարսանիքը կատարենք։

Յետոյ Պասալոքլին կողմը դառնալով,

— Այս օրէն սկսեալ, ըսաւ, օդնական — զօրապե-
տը ես եք, այս պալատը պիտի բնակիք՝ որպէս զի առ-
ւի դիւրութեամբ կարենաք ձեր առնակոյսին վայելուչ
յարդանքները տալ։

Լիւ ինքզինք լուր հօր բազկաց մէջ նետած էր։
Պասալոքլի Մարթային հետ կը խօսէր, երբ Բլօց սենեա-
կը մտնելով՝ ըսաւ.

— Սպարապե՛տս, թաչքանատն սուրհանդակ մ'ե-
կած է։

— Թող հոս դայ, աղաղակեց ուժգին կառավարի-
չը, ա՜հ, թերևս մեր Ռըլիէֆ բարեկամին վրայ նորու-
րեր պիտի առնեմք։

Փոխ — պաշտօնակալ մը մտնելով՝ Մօլթօֆին կըն-
քեալ ծրար մը երկնցուց։

Մարթա դոնդահեսյաւ։

Մօլթօֆ չտապաւ կնիքները վերցնելով՝ բօֆման
սպարապետին նամակները բացաւ. հազիւ թէ առաջին
տողը կարդաց, և ահա ուրախութեան աղաղակաւ,

— Յաղթութի՛ւն, պարոնայք, ըսաւ։ Մեր քաջ
դունդերը բալտովին ցիր ու ցան ըրեր են Պոլսարայի և-
միրին մեր դէմ հանած զօրքերը։

— Կեցցէ՛ կայսր, աղաղակեցին հոն ներկայ գըն-
նուողները։

— Սակայն առաղաները, չարունակեց Մօլթօֆ,
որ նամակները կը կարդար, դրեթէ 60,000 են եղեր,
և գմբրլանա Ամու — Տերիայէն բաժնող անապատին
մէջ գացեր են, բայց մեր դունդերը չեն կրցեր անոնց
հետևին պնդիլ։ Քաղաքը պաշտպանութեան վիճակին
մէջ դնելու և զօրականները լրտեսներ դրկելու հրամանը

կ'ընդունիմք . . . . . : Պուխարացիք 30,000 'ի մծա մարդ կորնդուցեր են պատերազմին մէջ ։

Յանկարծ Մօլթօֆ լուեց , կերպարանը սեցաւ , և խիստ յուզեալ ձայնով ,

— Ամեն մեռաղ , չարունակեց , իւր հակառակ կողմին ունի . պարոնայք , չատ կանուխ ուրախանալու ա֊ճապարեցինք . յաղթութիւնը մեղի սուղ կը նստի ։ Մեր լատաղան ընկերներէն և մեր ռուսական բանակին ա֊մենէն քաջ պաշտօնակալներէն մին , Ռըլիեֆ դնդապետը կորնդուցեր եմք ։

Սուր աղաղակ մը կառավարիչն ընդմիջեց ։ Մար֊թիա կանդնեցաւ , և խոժոռ դիմօք Մօլթօֆին դառ֊նալով՝

— Ի՞նչ ըսիք , հարցուց երկանը , չնչասպառ ։

Մօլթօֆ ալ ասսակի յուզեալ ըլլալով , կնոջը դիմայ պլոյտութիւնը չկրցաւ նշմարել ։ Միայն Լիլ , որ Մար֊թային քովն էր , ուժգին կամուհոյն ձեռքէն բռնեց , բայց 'ի զուր , նա ոչ բան մը կը տեսնէր և ոչ ալ կը լսէր ։

— Ի՞նչ ըսիք , հարցուց Մարթիա կրկին , ահեղ ձայ֊նով ։

— Ռըլիեֆ պատուոյ դաշտին վրայ 150 քաջերով ինկեր է , որք անձերնին ռուսական բանակին վերա֊դարձան համար զոհեր են ։ Պարոնայք , այս երեկոյ Ռը֊լիեֆին հոգւոյն համար աղօթենք Աստուծոյ ։

Մարթիա ուշադրութեամբ մտիկ ըրած էր , ձեռ֊քերը տարածեց , կոկորդէն հեղձամղձուկ աղաղակ մը մը ելաւ , և նուաղած գորգին վրայ ինկաւ ։

Ամեն մարդ կսմսուհոյն շուրջը բազմութեան . միայն Մօլթօֆ վարկեան մը դանդաղեցաւ , որովհետև եր֊կրորդ անգամ զարհուրելի կասկած մը իւր սիրտը ճմլե֊ց ։

Ձեռքը ճակտին վրայ տարաւ , և կնոջը քով եր֊թալով՝ զանիկա աթոռին վրայ նստեցուց . քիչ մը ժա֊

մանակ նորա դանդաղութիւնը դիտելով , ակը֊սաւ դառն արցունքները թափիլ ։

Գօրէֆ , Լիլ և Պասալոքի ալ ախորժնան մէջ էին ։

— Տիկնոջ և տանտիկնոջ մեր ամուսնութեան հա֊մար , բաւ Լիլ Պասալոքիին ։ Խե՛ղճ Մարթիա , դու որ լաւ և քաջ էիր , ի՞նչ եղար ։

ԳԼՈՒԽ ԺԶ.

ԳԵՐԵԱՑ ՎԱՃԱՌՈՒՄԸ

Սէթա — Մուշաֆֆէր — Տէն իր պալատին պարտիզին մէջ Շիւքրիւլլահ Քէնէն և Մէրզա — Մուհամմէտն հետ կը շրջագայեր , էմիրը խիստ զուարթ կ'երևէր. խօսքն երբեմն ընդհատ , երբեմն ալ ոսոխականաց դէմ առակներ կ'ուղղեր ։

— Վէյ՛է , կ'ըսեր էմիրը , կը կարծե՞ս որ էլ — իմ մերա էմիրը կը հաճի ։

— Գրած պատասխանդ նայելով , կարծեմ կրնայ ճի . իր նամակին միջոցաւ կ'իմացուներ ինձ՝ թէ քանի մ' օրէն վեհափառութեանդ պաշտօնական պատգամաւորութիւն մը պիտի գրկէ ։

— Մուհամմէ՛տ , ըսաւ էմիրը , ես՝ ինն տանը բոլոր աիրը ժրութեամբ հսկել պիտի տաս , ուր խնդալի իշխանութիւն , իմ ազատանի կինս կը բնակի ։ Իմացայ որ այն մուրացիկ ծերուկը , որ այսօր Թիւրքմէնոյ Սէրտարն է , յառաջ այն կողմերը կը յաճախէ ։ Ւրն , Մուհամմէ՛տ ,

Մուհամմէ՛տ , չարունակեց էմիրը , մատոյ անոր սպառնալով , մեծ վատութիւն ըրած կ'ըլլամ եթէ այն ծերվնէ դէմ ձեռնարկութեանդ անյաջողութեան համար նեղեմ քեզ ։

Մուհամմէտ ծունկի վրայ եկաւ ։

— Ինչ և իցէ , ըսաւ Մուշաֆֆէր , այս ամենը չուտով պիտի լմննայ , և կարծեմ , մեր հաշիւները պիտի կանոնաւորեմք ։ Այլ ևս այդ ծերվնէն ինձ օգտակար չը կրնար ըլլալ . և երբ այս դունդերը ցրուին , տեսնենք , պիտի կարենա՞յ յանդգնիլ իմ դէմ խրոխտալու . . . ։ Վէյ՛է , թաշքանաի ուսս դլխաւորին պատասխանն ընդունեցիր ։

— Իրաքանչիւր օր այդ պատասխանուդն կ'սպասեմ ։

— Կը տեսնե՞ս , Մուհամմէ՛տ , որ քանի մը ժամանակէ ՚ի վեր քեզի բան մը չը յաջողիր ։ Այն ուսս պաշտօնակալը , որուն պէտք ունէի , և զոր Պուխարայի մէջ չեմ տեսեր , այսօր Հնդկաստանցւոյ մը վոքրիկ կրպակին մէջ աճուրդի դրուելով՝ ծախուր է ։ Մուհամմէ՛տ , ոսոխականութիւնդ կարդաւորեալ չէ , ըզդուշացիր , որ չը բարկանամ ։

Մուհամմէտ դլուխը ծռեց ։ Էմիրը , խօսքը Շիւքրիւլլահին ուղղելով ,

— Ինչ է կարծիքդ , ըսաւ , Հնդկաստանցւոյն ըրած ծին վրայ , իր կալանաւորը պահեց և հիմա օրինաց պաշտպանութեան կ'սպասեցնի . ինչ խենդ օրէնք , է՛ն ։ Երբէք կրնայի Հնդկաստանցւոյն տուներն այս դերին առնուլ , և այսօր , որովհետև հրապարակը վաճառելու հաներ է , ստիպեալ եմ իր տաղտուկը յարդել ։ Այսուհետև այս կալանաւորն իմ համար անբրնաբարելի է , ծախողն և դնողը , երկուքն ալ իշխանութեան ներքև չեն , և պարտաւորեալ եմ մեծ կամ մարդ մը վճարել այն մարդուն համար՝ որուն պէտք ունեմ . դումարն ալ հպատակաց մեկուն պիտի վճարեմ ,

անհեդեդ չէ՞ ։

— Խիստ անհեդեդ է, պատասխանեց Էվլիյը ։

— Միանգամայն զայրացուցի՛չ և դրգռի՛չ, յաւելցուց Մուհամմէտ ։

— Պէտք է, ըսաւ Էմիրը, որ այս բանին վրայ Րէնէ հետ խօսիմ։ Անպատճառ այս կալանաւորը պիտի գնեմ, որովհետև ինձ խիստ պիտանի է ։ Զօրաւոր դվխաւոր մ՚է, և իմ քովս պատանդ ձնալով, կրնամ խիստ մեծ գումար մը շահիլ։ Եթէ այս մարդն իշխանութեանս ներքև ըլլայ, աւելի դիւրութեամբ խաղաղութիւնը կը վերահաստատուի, և եթէ այս ամենը չը յաջղի, դո՛նէ գինքը տանջել և խոշտանգել տալով, այս անիծեալ Էվլիյները օրինաւոր վրէժխնդրութիւն կառնում։ Մուհամմէտ, վաճառանոց գնա՛, և 10,000 թումանով այն կալանաւորը գնէ՛ ։

— Կերթամ, տէր արքայ ։

— Գանձապետին քով գնա՛ և որոշեալ գումարն ա՛ռ, բայց առանց անոր մի՛ վերադառնար, կը լսե՞ս ։ . . . . ։ Ա՛հ, մտիկ ըրէ, յարեց Էմիրը զՄուհամմէտ կանչելով, որ հեռանալու վրայ էր ։ Հնդկաստանցին ձիաստակար մէկն է, աչքդ անոր վրայ ըրէ՛, և առաջին պատեհ առթով . . . . . կը հասկնա՞ս . . . . . ։

— Տէր արքայ, իմաստութիւնդ մեծ է ։

Տիվանպէկկի(1) Ջրոց ընդունարանին քարայատակ ճանապարհն և հրապարակը՝ Պուխարայի ժողովուրդին՝ ի մի վայր հաւաքման գլխաւոր կեդրոնատեղին է, վանպէրի, հունգարացի ճանապարհորդն այս տեղն հետևեալ կերպով կը նկարագրէ ։

« Գրեթէ, ըսած է յիշեալ ճանապարհորդը, քա-

(1) Ա՛յս տեղը Խանքուլի—Խան Էմիրին քարտուղար Տիվանպէկի անուամբ կը կոչուի ։

ռակուսի հրապարակ մ՚է, որոյ կեդրոնը՝ հարիւր ոտք երկայնութեամբ և հարիւր ոտք լայնութեամբ Ջրոց խոր ընդունարան մը փորուած է, Այս ընդունարանը խորանարդ քարերով եղերեալ է, որք ութ աստիճանով սանդուղ մը կը ձևացնեն ։ Քարայատակ ճանապարհին վրայ ասա և անդ անկուած մի քանի սքանչելի կճնիներ կան, ասոնց մեան ալ թէյի կրպակ մը կը դանուի իւր «սմովըռներով» որք դարեջրոյ խոշոր տակառներու կը նմանին ։ Այս «սմովըռները Ռուսաստան կը շինուին, մանաւանդ Պուխարացւոց դործածութեան համար, և ամեն եկողին մէկ մէկ դաւաթ կանաչ թէյ կուտան ։ Հրապարակին եղերդնեայ փախիներով ծածկուած երեք կողմերը բաղմաթիւ շարժուն փոքրիկ կրպակներ կան, ուր յաճախորդք թէ՛ հաց, թէ՛ պըտուղ, թէ՛ տաք ու պաղ մխս կրնան դանել ։ Քաղցեալ խառնիճաղանճը՝ մեղուաց պէս շարունակ բզզալով՝ ամենէն հետաքրքիր տեսարանը կ՚ընծայէ ։ Ուրիշը, զուդահեռական տեղւոյն չորրորդ կողմը դարաւանդի ձև ունի, որ կերպով մը Տիվանպէկկի մզկիթին պատուանդան է ։ Մզկիթին առջև, ցիր և ցան ծառոց ներքև, վիպասանք, փերվէշ կամ լարախաղացք, չափական և արձակ բանաստեղծութիւններով կերդեն և կը հըրաչակեն, մարդարէից և երևելի պատերազմողաց դիւցազնական քաջութիւնները ։

Ջրոց ընդունարանին հրապարակն ահագին բազմութեամբ լեցուած էր՝ նոյն օրը դերեաց վաճառման օրն ըլլալով ։ Դարաւանդին վրայ փոքրիկ կըրպակ մը կար, ուր չաւերը կը յաճախէին ։ Կրպակին ներսը, հարիւրի չափ պարսիկ դերիք, վիզերնին տախտակամածին կապուած, խառն՚ի խուռն պառկած էին ։ Հնդկաստանցի մը, որ ինք գինքը ճշմարիտ հաւատացեալներն ճանչցունելու համար տարբեր դվխարկ դրած էր, ճակտին վրայ կարմիր նշան ունէր, և իւր դերիին և ահռելի կերպարանքն ալ յաճախորդաց կողմը դար-

ցուցած էր, վեհամ խօսքերով իւր վաճառքները կը գո-
վէր։ Երբեմն երբեմն ձեռքը բռնած պղնձէ նուրբ և
երկայն փոկը դերեզմ վրայ կը շարժէր, անկիրթ դիւ-
քերնին ուղղելու համար։

Փոքրիկ կրպակին կեդրոնը, ամենէն բաց տեղը,
տեղ մը՝ որ Տիվանպէկի հրապարակին ամէն կողմերէն
ալ կ'երեւէր, բարձր տախտակամած մը չինուած էր,
որոյ վրայ կարմիր մետաքսեայ չքնաղ դրեզով մարդ
մը, այտերը անդուրեալ եւ շրարեալ եւ մօրուքն ալ
սանտրուած, վիզէն ցոյլ մը կապուած երր Ա. յս ցոյլին վրայ
հեռեւեալ բառերը գրուած էին, "Թիւրա Ռուսս"
(ռուս դվխաւոր)։ Ջեռքերն ու ոտքերը շղթայակապ և
երեսն ալ հրապարակին կողմը դարձուցած, կռնակին
վրայ պառկած էր։

Ա.յս մարդը Ռըլիեֆ էր, շղթայից ծանրութիւնը
կ'արգիլէին զանկիա ամենափոքրիկ շարժում մ' ընել,
բայց աչքերէն բարկութեան նշոյլներ կը ցայտէին։

Ռըլիեֆ խաւարչտին բանտին մէջ մեռած չէր։

Երբ Ռըլիեֆ գրուելի եւ դարշահոտ միջաներուն
թայթուածէն նուաղած՝ չնչասպառ գետնին ինկաւ,
պահապանները տեսնալով որ Սէրոզէ դուռնդն առանց
դղեակին առջեւ մնալու անցաւ գնաց, զինքն ազատե-
ցին։ Վէրքերը դարմանելով՝ ձիու մը վրայ կապեցին,
և կէս մը մեռած, եւ բոլորովին անզգայ, Պուխարա
բերին։ Երբոր թափառականք քաղաք մտան, իմացան
զՌըլիեֆ երկայն ատեն ծածուկ պահելու անկարելիու-
թիւնը, մանաւանդ թէ իրենց դալէն յառաջ, Ռուս
երեւելի պաշտօնակալի մը դերզի խնդալեն լուրը ամբողջ
քաղաքին մէջ տարածուած էր. մանաւանդ թէ իմի-
րին բռնապետական միապետութենէն եւ յափշտակու-
թենէն կը վախնային, ինչպես նաև ժողովրդեան մե-
ծառանդութենէն։ Միւս կողմանէ ալ թափառականք կա-
ղանաւորը դարմանելու ատակ չունէին։ Ռըլիեֆ այնչափ
յուսահատ վիճակի մէջ կը դանուէր՝ որ նոյն իսկ իւր

դահիճները հասկցան՝ թէ պէտք է խնամել զանկիա,
եւ եթէ լաւ չխնամեն, կրնայ մեռնիլ, որով իրենք ալ
անորմէ շահելիք դումարը կը կորսնցունեն։ Հապկ ա-
ռաջարկեց՝ որ կալանաւորը դերեզմ վաճառողի մը
յանձնեն, որպէս զի առողջացունելով զանկիա, վա-
ճառէ եւ դոյացած տոկը հաւասարաբաժին ընեն մէ-
ջերնին։

Հապկի առաջարկութիւնն ընդունուեցաւ. այս
մասին Հնդկաստանցւոյ մը հետ խօսեցան, որ խոստա-
ցաւ կալանաւորին բժշկութեան ծախքը վճարել, այն
պայմանաւ որ 100 էն 20 իրեն տրուի՝ եթէ վաճառէ,
ապահովցուց ալ թափառականներն՝ որ 3,000 թուման
(33,000 ֆրանք) կրնայ վաճառել կալանաւորը։

Ռըլիեֆ Հնդկաստանցւոյն քով տարին, հոն դրեթէ
ամսոյ մը չափ մնաց, եւ որովհետեւ Հնդկաստանցին
զինքն ամէն կերպով կը խնամէր, լաւ ուտելիք կու-
տար, եւ հետն ալ աղեկ կը վարուէր, ուստի անմիջա-
պէս ղօրացաւ։ Ռըլիեֆ քիչ քիչ կզդար՝ թէ վերստին
կը կենդանանայ. և կը յուսար ալ որ դերութեան վի-
ճակէն կ'ազատի։

Գերեզմ վաճառողը՝ որոյ արհեստն վրայ Ռըլիեֆ
բնաւ չէր կասկածեր, կալանաւորին վստահութիւնը
չինքն գրաւեց. հաւատացոյց իրեն՝ թէ զինքը թիւրք-
մէնները դնած է, թէ ռուսները կը սիրէ, թէ մահ-
մետականները կ'անարգէ. խոստացաւ ալ Ռըլիեֆին որ
իր ազգակցաց հետ հաղորդակցելու միջոցները դանէ։

— 1,000 թուման՝ դնեցի դբեզ, բսաւ Հնդկա-
ստանցին, դիմալով քու խեղճ վիճակիդ վրայ յոր դա-
ռապարտած էին գբեզ այն վայրենիները. դահիճներդ
կը կարծեն եղեր՝ թէ դուք աղնուական Թիւրք մը ըլ-
լալով՝ կրնաք ինքզինքնիդ գնել։ Կը տեսնէք որ ասկէ
աւելի բարիք չէի կրնար ընել յարեց Հնդկաստան-
ցին կեղծ ժպտուով։ Կը յուսամ՝ թէ ան իս պարտքեր-
նիդ կըհատուցանէք. որովհետեւ ձեր առողջութեան

համար շատ տակ վատնեցի։

Հնդկաստանցին դՌըլիէֆ խաբելու համար ասիէ աւելի լաւ միջոց չէր կրնար ընտրել։ Գնդապետը, բը-նութեամբ սիրելական, դէմքը խոժոռեց՝ երբ լսեց որ Հնդկաստանցին իւր բարի ղեկացմանց վրայ կը պար-ծենայ. բայց երբ վրէժխնդիր վրայ խօսեցաւ՝ կալանա-ւորին դիմաց վրայ ուրախութեան նշոյլներ ցոլացին, և խոստացաւ 10,000 թուման վճարել իւր ազատու-թեան համար։ Հնդկաստանցին՝ Ռըլիէֆին խօսքին վը-րայ շատ ուրախացաւ, բայց քիչ մը խորհրդածելէն վերջը՝ ըսաւ։

— Այո՛, բայց եթէ էմիրն իմանայ որ դուս քուկս ես, կառնու զքեզ և այնուհետև բան մը ալիսի չունենամ։

— Պէտք չէ որ էմիրն իմանայ . . . . . ։

— Ձեր ազդակցաց հետ հաղորդակցելու միջոցներն ի՞նչպէս ցուցնեմ ձեզ, ես խեղճ հնդկաստանցի մ՚եմ.

Քանի մ՚օրէն վերջը Հնդկաստանցին համոզուեցաւ որ ամենէն պարզ միջոցն իւր կալանաւորն աճուրդի հանել և ծախելն է, ինչպէս որ խոստացած ալ էր Թիւրքմէնաց։ Ցերաւի, արդէն խիստ դժուարին էր պահել և երեան չը հանել այնպիսի մարդ մը՝ որոյ՝ի Պուխարա գտնուելն ամեն մարդ գիտէր, և էմիրն ամ-աչ մ՚ի վեր ղանիկա գտնելու եռանդ էր։ Թուրքաստանի մէջ հաստատուած լրտեսութեան դրութեան շնորհիւ անհնարին էր ղՌըլիէֆ երկայն ատեն պահել ուղիղը։ Մէկ կողմանէ ալ Թիւրքմէնք դերեաց վաճառողին վրայ՝ի մեծ կը հակէին։

Հնդկաստանցին միտքը դրաւ շահու դաղափարնե-րըն և հպարտութիւնը մէկ կողմ ձգել. վարպետ և խո-րամանկ ըլլալով, բնաւ Ռըլիէֆին բան մը չը յայտնեց, այլ ընդ հակառակն՝ զանիկա հրապուրիչ խոստմամբք կը պատրէր միշտ։ Հնդկաստանցին մինչև վաճառման օրը կեղծաւորութեամբ վարուիլ կուզէր Ռըլիէֆին հետ, որովհետև, անկէց յետոյ, ինչպէս ըսինք, օրէնքը կա-

նանաւորն անբռնաբարելի կ՚ընէր։

Վաճառման որոշեալ աւուր նախորդ երիկունը, Հնդ-կաստանցին ղուարթ դիմաք Ռըլիէֆին գոլ եկաւ, խնդուց՝ թէ թաշքանտ իւր ազդակցաց հետ հաղոր-դակցելու միջոցը գտած է։ Ցետոյ գինւոյ չիչ մը հա-նելով — Պուխարայի մէջ հազուագիւտ է — առաջար-կեց կալանաւորին՝ որ իւր ազատութեան համար մեկ մեկ գաւաթ պարպեն։

Ռըլիէֆ, առանց երկմտութեան, առաջարկութիւնն ընդունելով՝ գաւաթ մը պարպեց. գինւոյ մէջ թմրեց-ուցիչ դեղ խառնուած ըլլալով՝ Ռըլիէֆ դրեթէ կայ-ծակնահար, գետին ինկաւ, և միայն յաջորդ առաւօ-տուն քունէն արթնցաւ, անտրուած, այտերը շպա-րած և Տիվանպէկի բարձր տախտակամածին վրայ դը-րուած։

Ընկարելի է նկարագրելը, թէ գնդապետին հոգին ւ՛րպիսի բարկութեամբ լեցուեցաւ և ւ՛րպիսի անէծք-ներ և նզովքներ թափեց մատնիչ Հնդկաստանցւոյն գլխուն վրայ։ Ռուս պաշտօնականին հպարտ և անկախ հոգին յանհնարինս կը նեղուէր, որովհետև Հնդկաս-տանցին գինքն՝ի տես ամենեցուն դրած էր, տեսարան մը՝ որմէ աւելի մահը նախամեծար կը համարէր։ Թէ-պետ Ռըլիէֆ անշարժութեան մատնուած, բայց իւր բարկութեան միջոցին, կարծես, գինքը հեռաքրքրու-թեամբ դիտող և քննող բոլոր բազմութիւնն բակիս-ը մէջ խեղդելու զօրութիւնը կ՚զգար։ Սպիտակած էր գլուխն ուղիղ բռնել չղթայից ծանրութեան տակ. աչքերը կատաղութեան արտասուօք լի, և չղթունք-ները բարկութենէն կարմիրած էին։ Զգնաղ դէս-տուլ այս դեղեցիկ մարդը, թէպետ և չղթայակապ և կատաղի, բոլոր Պուխարացի ազուչներուն ղուարճու-թեան առարկայ եղած էր. բարձր տախտակամածէն քանի մը քայլ հեռի, Ուրտամէյ, Թիւրքմէնք և գըն-դին մէջ դանուած խըրխըզք՝ի մի վայր ժողովուած,

մասով իրենց նախկին կալանաւորը կը ցուցնէին, և մէկ կողմանէ ալ տրտմութեամբ կը ծիծաղէին։

Հնդկաստանցին խօսակցութեան բռնուած էր կա՛նաչ ապարօշ դրած ծերի մը հետ. կանաչ ապարօշ դնելը Մարդարէին ցեղէն ըլլալուն նշան է։

— Անկարելի՛ է, կ՚ըսէր այս ծերը։

— Ճիշդ է, տէ՛ր, հարիւր Սև Թիւրքմէն սպաննած է. վերաւորուելով՝ ութ օր ձիու վրայ կապուած և վեց ժամ ալ դարշահոտ հորի մը մէջ ձգած. դրեթէ երկու ամիս անցած չէ . . . ։ Դիտեցէք հիմա ղինքը։

Հնդկաստանցին Ռըլիէֆին մօտենալով՝ մազերը վերցուց և նոր վէրքը ցուցնելով,

— Ահաւասիկ, ըսաւ, վէրքին նշանները, իւր բոլոր մարմինը խայթուածներէն կարմրացած է։

Հնդկաստանցին Ռըլիէֆին դէմքը սակաւիկ մը բանալով՝ ծերը չատ մը կարմիր սպիներ նշմարեց կուրծքին վրայ, սպիներ՝ որք խայթուածոց վրայ դրուած սպեղանիներէն քան թէ նոյն իսկ խայթուածներէն մնացած էին։

— Հը՛, հը՛, մխիթար ծերը։

— Փրկանքը թադաւորական պիտի ըլլայ, հիմակու հիմա կրնաս ազատացնել ղինքը, որովհետև զօրաւոր է, ջղերն ու վիզը նայէ։

Հնդկաստանցին ձեռքը կալանաւորին բազկաց և դէմքին վրայ տարաւ. Ռըլիէֆ չհանդուրժելով այս չօշափման, յանկարծական շարժմամբ հետ քաշուեցաւ, որուն վրայ Հնդկաստանցին բարձրաձայն ծիծաղեցաւ։

Ռըլիէֆին կատաղութիւնն չափ ու սահման չունէր ցաւ, կատաղի աչօք ծերին վրայ նայելով, եօզպեկերէն ըսաւ անոր.

— Եթէ դիս դնես, ապուշ ծե՛ր, օր մը դլուխդ կըջախջախեմ, որովհետև այս թշուառականին դիս չօշափելուն պատճառը դու եղար։

— Օ՜հ, օ՜հ, ըսաւ ծերը, հետ քաշուելով, բարկա-

սիրտ է։

— Պա՜հ, պատասխանեց Հնդկաստանցին, ըսածին կարեւորութիւն տալու չէ, ամոյ մը չափ հանդարտ էր, բայց իր տիրոջ իրեն խաղցած խաղը ղինքը կատղեցուց։

Հնդկաստանցին ծերին քանի մը խօսք ըսաւ ցած ձայնով, ծերն ալ դլխով հաստատական նշան ընելով ըսաւ.

— Իրաւունք ունիս։

Ցետոյ ծերը ոտքով դնդասպետը մղելով՝ հարցուց.

— Շուն, աղաւթեանդ համար ո՞րչափ կրնաս վճարել,

Ռըլիէֆ հանդարտած էր, դժնեայ հայեցուածով իւր դահիճները դիտեց և բողբոջին լուռ կեցաւ։

— Պիտի չը պատասխանէ, տէ՛ր, աղաղակեց Հնդկաստանցին, իշոյ պէս յամառ է, բայց սպասեցէք, ահաւասիկ իւր տէրը։

— Ո՛չ, ո՛չ, անօգուտ է, ես կը դնեմ ղինքը, եթէ դինը ղեղչէք։

— Անկարելի՛ է, տէ՛ր, 4,000 թուման վճարել պէտք է։

— Կ՚երդնում որ 4,000 թուման չատ է, ի՞նչ կ՚ըսես. 3,000 կը վճարեմ, այս ալ բաւական մեծ գումար է։

Ուրումպէյ, որ ուրիշ Թիւրքմէնաց հետ մօտեցած էր, ցած ձայնով անոնց հետ խորհրդակցելով, շարժմամբ դլխաւոր Հնդկաստանցին կանչեց։

— Բնաւ մեծ գումար մը պիտի չը վաստկինք, ըսաւ Ուրումպէյ Հնդկաստանցւոյն . . . . ծախեցէք։

— Սպասեցէ՛ք, թերևս կարենամ մեծ գումար մը վաստկիլ։

— Այո՛, բայց չուտ, ընկերներս անհանդիստ են, թերևս ծերը սուտ կը խօսի։

— Ո՛չ, ո՛չ, սպասեցէ՛ք, ես արհեստս գիտեմ։

Այս միջոցին, քարայատակ ճանապարհին երկու

հակառակ կողմերէն, հեծելոց երկու դունդ դալով՝ դարաւանդին կողմը կ'ուղղէր. Հաճի—Սաֆէր այս դնդաց առաջնոյն՝ որ Սև Թիւրքմէններէ կը բաղկանար, դլուխն անցած էր. Միրզա — Մուհամմէտ ալ տաճիկ դունդի մը և քաղաքային պաշտօնակալաց հետ խօսելով ձեռաց շարժուձեւեր կ'ընէր: Մուհամմէտ Թիւրքմէնները տեսնելով՝ ձին մարակեց, և անմիջապէս փոքրիկ կրպակին առջև եկաւ իւր ընկերներովը: Թիւրքմէնք հանդարտաբայլ կը մտահոգային՝ առանց տաճկաց չտապալ յառաջելը նշմարելու:

Հնդկաստանցին զՄուհամմէտ ճանչնալով, իւր դերին վաճառել ուզեց:

— Ինչ է ձեր վերջին դինը, հարցուց ծերին, ինչ որ ալ տաք, դոհ պիտի ըլլամ:

— 3,500 Թուման, պատասխանեց ծերը, արդէն ձեղի ըսի.

Մուհամմէտ՝ հոն դանուած բազմութեան վրայ դժնեայ հայեցուած մը ձգելով՝ պօռաց.

— Ես 4,000 կուտամ, և յանուն Էմիրին կալանաւորը կը դնեմ:

Հնդկաստանցին մինչև դետին ծռելով՝ ուզեց այս բարձր դնոյն վրայ վիճել, Թէպէտ լաւ դիտէր որ անհակառակելի հրաման մ'է, սակայն ժամանակ չունեցաւ: Բոլոր դարաւանդը Թիւրքմէններով լեցուած էր. Հաճի —Սաֆէր իւր ձին մինչև բարձր տախտակամածին եղերքը քշելով՝ աղաղակեց.

— 5,000 Թուման կը վճարեմ:

Մուհամմէտ սակաւիկ մի դունատեցաւ, բայց անմիջապէս խելքը դլուխն եկաւ. Էմիրին պաշտպանութեան վստահ և իրեն ընկերացող տաճկաց բազմութեան ապաւինելով, ճակատը վերցուց և բարձր ձայնով ըսաւ.

— Սէյիտը, անշուշտ ըսածս չէ հասկցած. Էմիրը պիտի դնէ այս կալանաւորը:

— 5,000 Թուման կուտամ. Սաֆէր կրկնեց:

Մուհամմէտ, իւր մարդոց կողմը դառնալով՝ ցած ձայնով ըսաւ անոնց:

— Դժուար է այս կատղած խողերուն խօսք հասկըցունել. 6,000 Թուման կը վճարեմ, աղաղակեց:

— 8,000, պատասխանեց Սաֆէր:

Մուհամմէտ բարկանալով՝ ըսաւ.

— Թիւրքմէնաց Սէյիտին կողմէն քաղաքավարութիւն չէ տիրոջս հրամանն անարդել:

— Քու տէրդ իմս չէ. Հաճի պատասխանեց. ուրիշն Թող վճարէ՝ իրեն ուզածը տանելու համար, ինչպէս որ ես պատրաստ եմ վճարելու:

— Լա՛ւ, էմիրը ամեն բան կրնայ ընել:

— Լ՛ո, ինձի ի՛նչ հոգ:

Մուհամմէտ՝ հասկնալով որ տակաւին դինն աւելցունել պէտք է՝ ըսաւ.

— 10,000 Թուման կը վճարեմ:

— 11,000, պատասխանեց Սաֆէր:

— Շատ է, ըսաւ Մուհամմէտ, որ վայրկեան մը իւր զարհուրելի տիրոջ սպառնալից կերպարանքը աչքին առջև բերաւ և չվախցաւ: Էմիրը երկրին տէրն է, ուզածը կրնայ դնել: Բարեկամնե՛րս, հրամայեց իւր տաճկաց, այս դերին վերցուցէք, Թո՛ղ այս վայրենիներն Էմիրին քովէն առնեն, եթէ կրնան:

Քանի մը տաճիկ՝ ոտիկանութեան դլխաւորին հրամանին հնազանդելով՝ բարձր տախտակամածին մօտեցան, բայց հնդկաստանցին, որ ահագին գումար մ'իրականացնելու մօտ էր, յուսահատութեան աղաղակ մը հանեց: Ուրումպէյ, որդ վրայ ոչ ոք կը մտածէր, յօտին կանգնեցաւ Ռըլիէֆին քով, և կայծակի պէս պօռաց,

— Թիւրքմէնք, մեր անվտանգութիւնը մեղնէ կը յափշտակեն:

Սէյիտը նշան ընելով, իւր հետ դանուած հեծեալք Մուհամմէտին դունդը չրջապատեցին, և դլխաւորին

հրամանին սպասեցին կռիւն սկսելու համար։

— Մուհամմէ՛տ, ըսաւ Սէրաֆը, եթէ քայլ մը յա՛ռաջ երթաս, ո՛չ դուն և ո՛չ ընկերներդ ապրիլ կրնաք ողջ ելլել։

Մուհամմէտ յետս դարձաւ, և տեսնելով որ թիւրքմէնները պաշարուած է, խելքը կորսնցուց. Մուղաֆֆերի բարկութեան գաղափարն աւելի վաղահաս վտանգի մը դիւրութիւնը մոռցուց իրեն։

— Լա՛ւ, ըսաւ Մուհամմէտ, ա՛ռ այս դերին, բայց սա՛ աղէկ ըմբռնէ որ ոչ թէ իմ դէմ, այլ ուղղակի էմիրին դէմ կռուելու կը համարձակիս։

Պարսիկը հեռանալ ուզեց. թիւրքմէնք ճամբայ ելին տային իրեն, երբ Սաֆիէր օձիքէն բռնելով,

— Սպասէ՛ ըսաւ, 'ի միասին կանոնաւորելու հաչիւ մ'ունիմք . . . . . այս մարդուն 11,0 00 թուման վճարէ՛։

— Ե՞ս, գոչեց Մուհամմէտ։

— Ուրեմն՝ մոռցա՞ր որ դուն ինձ կը պարտիս։

Մուհամմէտ իւր ձին Սէրաֆին ձիոյն մօտեցնելով ըսաւ։

— Տէր, ընկալադիր մը տուած եմ քեզ . . . . . և . . . . ։

— Ընպիտա՛ն, աղաղակեց Սաֆիէր, կը կարծես որ առանց գողնալու նպատա՞կ ունիմ. վճարէ հիմա, և բոլոր հոս եղողները պիտի վկայեն՝ թէ վճարեցիր։

— Բայց . . . . ։

— Եթէ կրնաս, ըսաւ Սաֆիէր, մի՛ վճարեր, և էմիրիդ քով գնա՛։

Սաֆիէրին հեգնութեան ներքև ծածկուած սպառնալիքը պարսիկը ղարհուրեցուց.

— կը վճարեմ, ըսաւ Մուհամմէտ, կը վճարեմ։

Մուհամմէտ դրամոյ երկայն քսակ մը հանելով իւր գօտւոյն մէջէն, սառակը վճարեց Հնդկաստանցւոյն. յետոյ Հնդկաստանցւոյն վրայ խոժոռ հայեցուած մը

ձգելով, շտապաւ իւր տաճկաց հետ մեկնելու։

— Հիմա, ըսաւ Սէրաֆը երբ առանձին մնաց իւր հեծելոց հետ. այս չուն Ղեվ-Օ-ռը որ հեծեալներէս հարիւրը սպաննած է, բանակը բերէք. իմ քով վարելիք կեանքը զինքը մահուան պիտի բաղձացունէ, որովհետև պիտի իմանայ թէ ի՛նչպէս Սաֆիէր իւր հեծելոց ընպանման վրէժը պիտի առնու։

— Կեցցէ՛ Սէրտար, աղաղակեցին թիւրքմէնք։

Ուրիէֆ այս տեսարանին սկիզբէն Հաճի—Սաֆիէր ճանչցաւ, և վայրկեան մը հաւատաց՝ թէ երկինք իւրեն ազատարար մը կը խրկէ, բայց իւր նախկին բարեկամին խօսքերէն դուշակելով թէ բնաւ յոյս չկայ իրեն համար, յուսահատութեան մէջ ինկաւ։

ԳԼՈՒԽ ԺԷ.

ՄՈՒՀԱՄՄԷՏ

Տիմանպէկի հրապարակէն մինչև պալատն երթալու երկայն ճամբան խիստ կարճ երեւցաւ Պարսկին։ Տխուր և մթին խորհրդածութիւններ հոգին պաշարեցին. երբեմն իւր տիրոջ բարկութեան, և երբեմն Սաֆիէի սիրաստանութեան վրայ մտածելով՝ որ իւր մահուան վճիռը պիտի տար, կարծես, անել բանտին մէջ կը գտնուէր։ Երկայն ատեն խորհելով, չը կրցաւ վերջապէս հնարք մը գտնել. երբ Էմիրին սրահին դրան վայրադոյրը շարժեցաւ, այնպէս մ՚ երեւցաւ Պարսկին, երբ թէ դժոխոց դրան վարագոյրը շարժած ըլլար։ Ան ատեն իր սովորական միջոցին դիմեց. դողդոջուն ձեռքով վարագոյրը վերցուցնելով՝ յանկարծ դեռևին փուռւեցաւ։

Մուզաֆիէր իւր մտերիմը կը ճանչնար. կասկածեցաւ որ գէշ լուր բերած է, ուստի դէմքը խոժոռելով՝ հարցուց.

— Ո՞ւր է այն մարդը՝ զոր հրամայեցի քեզ դնել։

— Աւա՛ղ, պատասխանեց Մուհամմէտ հառաչելով։

— Ա՜յս անդա՞մ ալ պարապն ելաւ։

— Տէր արքա՛յ, ըսաւ Պարսիկը ջարհուրած. ներէ՛, որ տեղն ՚ի տեղը զուրցեմ այն պատճառները՝ որոց համար չկրցայ քու նուիրական հրամաններդ կատարել։

— Խօսէ՛, բայց թո՛ղ այս շնորհքը վերջին ըլլայ։

Մուհամմէտ՝ երկիւղէն այլ յայլմէ եղած, դէմքը վերցուց և դողդողալով, նախորդ դէպքին մէջ մեր նըկարագրած տեսարանը պատմեց։ Որչափ Մուհամմէտ իւր պատմութեան մէջ կը յառաջէր, այնչափ ալ Մուջաֆիէրը կը տխրէր և աչքերէն կայծակներ կը ցայտէին։ Երբ Մուհամմէտ պատմութիւնը լմնցուց՝ Էմիրն ալ ղաղակեց.

— Ա՜յս անլսելալ տեղւոյը միշտ ճամբուս խոչընդո՞ն պիտի ըլլայ, և պիտի չդտնե՞մ մէկը՝ որ դիս այդ մարդէն աղատէ. չկրցա՞ր բռնել այդ անդդամ դերին, ու սպաննել և կտոր կտոր ընել։

— Տէ՛ր, պատասխանեց Մուհամմէտ, Սև թխըմէ՝ նաց Սէյիտն է. իւր մարդիկները զանիկա շրջապատած էին, և դիտես որ թաթառականաց բազմութիւնը մայրաքաղաքիդ շուրջը բնակած է։

Ա՜յս խօսքերը յուսահատացուցին զՄուջաֆիէր։

— Գերի՛, բարբառեցաւ ցասմամբ, հայհոյուածը Մուհամմէտին վրայ յառելով, որ սկսաւ ալ աւելի ջարհուրիլ և դողալ, չեմ դիտեր՝ թէ դիս ո՛ւր պիտի արդիլէ դլուխդ կարելէ.

Մուհամմէտ՝ երկրորդ անդամ ճակատը սրտաբարին ջարնելով՝ ըսաւ.

— Տէ՛ր. դերիդ ստացուածքդ է, և անոր վրայ կատարեալ իրաւունք և իշխանութիւն ունիս։

— Ինչո՞ւ, շո՛ւն, հրամաններս չկատարեցիր. բոլոր ինձ պատմածներուդ մէջ անհնազանդութիւնդ արդարացնող կէտ մը չեմ նշմարեր. չեմ դիտեր, արդեօք աւ իս չերմ սերդ պաղեցա՞ւ. կը տեսնեմ՝ որ օրէ օր դդալի կերպով խեղդդ կը կորանցնես։

— Տէր արքայ . . . . . ։

— Լռէ՛, պէտք էր որ դերեայ վաճառողին քսան, երեսուն կամ յիսուն հազար Ռոման խոստանայիր. անշուշտ նա ինձի վստահելով՝ դերին քեզի պիտի տար ։

— Բայց, տէր արքայ, վճհախաւութիւնդ չը նեղեց որ տասն հազար Ռոմանին աւելի տամ ։

— Քեզի ըսի որ հարստանալէդ ’ի վեր խելքդ պակսած է ։ Եթէ յիսուն հազար Ռոման խոստանայիր, ո՛չ կ’ամիպեր ղքեզ որ խոստացած ստակդ վճարէիր. ապանենլու կամ կախելու միջոց չէի՞ր կրնար գտնել ։

Մուհամմէտ աղիողորմ ձայնիւ պատասխանելով՝ դլուխը քարին զարկաւ.

— Ինձի, ըսաւ Էմիրը, խիստ մեծ գինս կը պատճառես, ուստի պէտք է որ պատժուիս ։ Կը վայլէր որ ղքեզ մեռցունէի, բայց այս անդամ ալ կը ներեմ, միայն կը հրամայեմ որ կեանքդ գնես 50 հազար Ռոման վճարելով. նոյն իսկ այս իրիկուն գանձապետիս պիտի հաստատանես յիշեալ դումարը ։

Ա՛յս անդամ Մուհամմէտին ազահութիւնը՝ երկիւղին աւելի զօրաւոր եղաւ. ծունկի վրայ աղաղակեց. տէ՛ր արքայ այդչափ ահագին դումար ։

— Ա՛յդչափ ստակ չունի՛ն, ըսաւ Էմիրը հեգնելով, քեզի դեռ պիտի ըլլայ. որովհետեւ եթէ արեւը մարը մնանելէն յառաջ՝ այդ դումարը արկղիս մէջ չըլլայ, դլուխդ պիտի կտնայ ։

— Տէր արքայ, ողբաստանա՛լս կուզէք ։

— Ա՛յ՛, աղքատանա՛լդ, չո՛ւն. ես չեմ ուզած բոլոր ունեցածդ. հիմա ալ ետ կառնում, որովհետեւ քեզնէ դոհ չեմ. ալ բաւ է. վճարելու կամ մեռնելու պատրաստուէ ։

Մուհամմէտ՝ դարձեալ դեռին կտնալով՝ ըսաւ.

— Տէր արքայ, կամքդ ուրբ է ։

— Հիմա, մոիկ ըրէ՛, յաւելցուց Մուզաֆֆէր, եթէ

ասկէց ամիսէն այդ Հաճի — Յաֆէրը աղատ ըլլալով՝ վերսաին իմ դէմ խրոխտալու և դիս նախատելու յանդգնի, Մարգարէին մօրուքին վրայ կ’երդնում որ այն ատեն պիտի չը ներեմ և պիտի մեցունեմ ղքեզ ։

Էմիրը վարագոյրը վերցուց և սրահէն դուրս ելաւ, վերջին անդամ ապառնալից աչքերով մը ձգելով Պարսկին վրայ ։

Մուհամմէտ պալատէն մեկնելով՝ իւր տանը կողմը ուղղեցաւ ։ Սիրտն անհնարին բարկութեամբ լցուած, կուզէր որ մեկէն վրէժ խնդրէ կրած նուաստութեան համար ։ Վայրենի և անգութ ուրախութեան կայծ մը ցոլաց աչքին մէջ ղչապիպ տեսած ատեն, որ Մուհամմէտին տանը հրապարակին մէջ անոր կ’սպասէր.

— Ա՜հ, Հապի՛պ, ըսաւ քաղցր ձայնով, բարի եկար. քեզի հետ խօսելիք ունիմ, հետս եկո՛ ։

Մուհամմէտ՝ տանը ներսը մնանելէ յառաջ, յաճախ ձայնով իւր ծառայներէն մեկուն բան մը հրամայեց. յետոյ՝ Էմիրին նախկին դերւոյն հետ շատ սենեակներէ անցնելէ վերջը, հրապարակին վրայ դտնուած սենեակ մը մտաւ ։ Հոն քանի մը վայրկեան լուռ կենալէն վերջը՝ հարցուց Հապիպին.

— Դերեայ վաճառման ներկայ դտնուեցա՞ր ։

— Ա՛յ՛, տէ՛ր, պատասխանեց Հապիպ ։

Մուհամմէտ խնդալով՝ ըսաւ.

— Մինչև յարդ խոստումներդ չը կատարեցի՞ր. Հաճի — Յաֆէր կենդանի, և առաջինէն աւելի զօրաւոր է ։

Հապիպ դլուխը ծռելով՝ պատասխանեց ։

— Ոսուած զանիկա կը պահպանէ, բայց յարմար առիթ մը կուգայ որ . . . . . ։

— Շատ ուշ կուգայ այդ յարմար առիթը ։

— Տէ՛ր, հրահանգներուդ համեմատ կը շարժիմ ։

— Ո՞ր հրահանգներուն, Հապի՛պ ։

— Ինձի չըսի՞ր որ “ Հաճի — Յաֆէրը սպաննելու

մի՛ չանար, այլ պատերազմի առեն պատեհ առթիւ մը սպասէ . . . . . Հաճի — Սաֆիէր արդար մարդ է, և Ռէնէն խմացուցած է որ եթէ պատերազմի մէջ մեռնի, որովհետև այն առեն ես յանցանք չեմ ունենար . . . . „ :

— Ա՛յո՛, այո՛, ընդմիջեց Մուհամմէտ, բայց քեզի ուրիշ ի՞նչ հրամայեցի :

— Լրտեսել, պատասխանեց Հապիպ, և եթէ Մուհամմէտի օրինաց դէմ մեղանչէ, քեզի խմացունել : Բայց իրեն ծառայութեան մնանելէս ՚ի վեր, բան մը չտեսայ . սուրբ, աղնուական և բարի մարդ է :

— Օ՛հ, օ՜հ, աղաղակեց Պարսիկը ժպտելով, հիմայ սկսար ես սիրել տերդ :

Հապիպ չը պատասխանեց :

— . . . . . Եւ երջանիկ պիտի ըլլաս, եթէ դքեզ երդումդ ազատեմ :

— Ա՛յո՛, այո՛, տէ՛ր, ըսաւ գերին . Հաճի — Սաֆիէր կեանքս ազատեց, և եթէ իրեն ընտանելու հետամուտ ըլլամ, յանդիմայից է, կը հնազանդիմ քեզի, բայց կը խորհիմ մտանիչ ըլլալէ :

Մուհամմէտ՝ քիչ մը մտածելով, յանկարծ հարցուց.

— Հապի՛պ, 50 հազար ղուռուշ ունի՞ն :

Հապիպ՝ ակնշած ես քաշուելով՝ պատասխանեց .

— Տէ՛ր, դերիդ կը ծաղրե՞ս :

— Հիմա 50 հազար ղուռուշ չունի՞ս :

— Ո՛չ, տէ՛ր :

Մուհամմէտ ձեռքերն իրարու զարկաւ և յանկարծ դէմքը փոխեց . ոտկղ, վայրենի և սպառնալից ձայնով՝ ըսաւ .

— Մտի՛ր ըրէ, Հապի՛պ, էմիրն ինձմէ դժդոհ է, և իմ վրայ 50 հազար ղուռուշ տուգանք դրաւ, բայց ես ալ քեզմէ դժդոհ եմ. իսկ որովհետև չեմ կրնար սպասկ առնուլ քեզնէ, ուստի ուրիշ միջոց պիտի դործածեմ նախանձդ դրդռելու համար :

Ան սենեկին՝ որոյ մէջ այս տեսարանը տեղի կու-

նենար, տախտակամածին վրայ ձգուած թանձր դորդերը արդելք կըլլային շատ ոտնաձայն չը հանելու . անոր համար՝ Հապիպ, որ կռնակը դրան կողմը դարձուցած էր, ոտիկանաց գլխաւորին կանչելով սենեակին եկող երկու մարդոց ոտնաձայնը չը լսեց : Ասոնցմէ մին, որ բարձրահասակ թաթար մ՚էր, գերւոյն ձախ կողմը կեցաւ, իսկ միւսն ալ, որ անհեղեղ և այլանդակ կերպարանքով Հնդկաստանցի մ՚էր, գերւոյն աջ կողմը կեցաւ : Մուհամմէտ լսելով՝ հարցուց Հապիպին .

— Կը յիշե՞ս, մեր դաշինքները. էմիրը հրամայեց ինձի որ ոտքերդ կտրեմ, բայց հրամանը չը դործադրեցի, որովհետև երդումընդար որ ինձ կուրօրէն հնազանդիս . կը յիշե՞ս այս երդումդ :

Հապիպ զարհուրելով՝ թոթովեց .

— Ա՛յո՛, տէ՛ր .

— Ո՛չ, կարծեմ թէ մոռցած ես, և հիմայ քեզ կըրկին յիշեցնելու պէտք կ՚ղդամ :

Մուհամմէտ հրամայեց իւր երկու ծառայից՝ որ Հապիպը զդեանելով՝ երկու ձեռաց բոյթերը կտրեն :

Հապիպ հառաչանաց և յուսահատութեան աղաղակներ հանեց՝ երբ երկու մարդոց գազանային ձեռքերն իրեն դպան : Մանրերկրորդ չանցած, գերին ըզդեանուելով, սկսաւ աղաղակել, պաղատիլ և լալ, բայց ՚ի զուր : Ոտիկանաց գլխաւորը երկրորդ անգամ նշան ընելով՝ թաթարը ծունկերը Հապիպին բազկաց յօդուածոց վրայ դնելով՝ ոտիպեց զանիկա որ ձեռքերը տարածէ . Հնդկաստանցին ածելիով Հապիպին ձեռաց բոյթերը կտրեց . յետոյ արիւնաշաղախ ձեռքերը քացախի մէջ թաթխուած լաթով մը կապելով՝ աղատ թողուցին թշուառ մարդը . երկու դահիճներն ալ վարդոյրին ետեւ կեցան՝ որպէս զի Պարսկին ամենափոքրիկ նշանին պատրաստ գտնուին .

— Հիմա, ըսաւ ոտիկանաց գլխաւորը Հապիպին, կարծեմ խելքդ գլուխդ պիտի դայ .

— Ա՜հ, անիծեա՛լ, կը մրմռար Հապիպ, դեռևին դէպրահելով, ա՜հ անիծեա՛լ։

— Մոխիկ ըրէ՛ · ըսաւ Մուհամմէտ · էմիրը ինծի ա֊միս մը միջոց աուաւ գԱաֆէրը ազատելու · բայց ես քե֊զի տան և հինգ օր միջոց կուտամ · եթէ երկու շաբ֊թուան մէջ հրամանս կատարած չըլլաս՝ ձեռքդ ալ պի֊տի կտրեմ։

— Հիմայ դիս անմիջապէս ազատէ, պատասխանեց Հապիպ, որովհետև այլ ևս քեզի պիտի չը հնազան֊դիմ, դահի՛ճ։

— Երդումներդ կը մոռնամ, բայց մոռածէ · գքեզ ազատ կը թողում, ասկայն վախենալու մի՛ չանար · ամեն բան կրնաս Սէբաոյէն իմացնել, որ քնաս պիտի չը զար֊մանայ · որովհետև դիս լաւ կը ճանչնայ, յարեց լերբ Ժպիտով · Պիտի մերժէ գքեզ քովէն, և այն ատեն հի֊մակուան կրած ոսկեայ ցաւդ՝ քեզի պատրաստուելիք տանջանաց քով ոչինչ պիտի երևի։

— Ա՜հ, անիծեա՛լ, անիծեա՛լ, ես գքեզ աղէկ մարդ կը կարծէի։

Մուհամմէտ բարձրաձայն ծիծաղելով՝ ըսաւ ·

— Ինչ որ կուզես, կարծէ, բայց հնազանդի՛ ինձ, որովհետև իշխանութեանս ներքև ես։ Կրնամ, եթէ ուզեմ, էմիրէն վախճանական դէրի կարծել տալ գքեզ Սաֆէրին։

Հապիպ դեռին փուռած, ցաւոց տակ կը հեծէր։

— Շուտ ասկէց դնա՛, ըսաւ Մուհամմէտ, եթէ չես ուզեր որ դահիճը կրկին կանչեմ։

— Լաւ, պատասխանեց Հապիպ, կը հնազանդիմ։

Ցեռայ դողալով և զարհուրելով ելաւ և մեկնեցաւ։

— Ծառայից նախանձը, ըսաւ Պարսիկը ձեռքերն իրարու չփելով, դրգռելու համար՝ քիչ մը արիւն պէտք է։

Երբ Հապիպ վոլոցն ելաւ, արհամարհոտ ակնարկով Պարսկին տանը վրայ նայելով,

— Երդմանս հաւատարիմ պիտի՝ դանուիմ, մրմռաց արիւնաթաթաւ ձեռքերը կուրծքին վրայ սեղմելով, բայց յետոյ վրէժ պիտի լանդրեմ։

ԳԼՈՒԽ ԺԸ.

ՍԱՖԷՐԻ ՏՈՒՆԸ

Հիմա անշուշտ ընթերցողը պիտի ներէ՝ որ պատմութեանս կարգին մէջ քիչ մը ետեւ երթալով՝ հաճի Սաֆէրի ընկերանալը այն վայրկենին՝ յորում՝ Բէյ-ը և Ֆլեմանբուռն հետ մկկիլեն աղօթելէ վերջը, խիստ և Մէրվ պիտի մեկնէր՝ Թիւրքմէնաց ցիր ու ցան դունդը վերստին կազդուրելու համար։ Երբ Մուհամմէտ Հապիպին կըսէր՝ թէ Սաֆէր արդար մարդ է, և չուզէր դանիկա որ և է անակընկալ պատահարի պատասխանատու ընել՝ դուշակած էր։ Յիրաւի, հաճի՝ Պարսկէն առորագրուած ամբաստանագիրը բէյ-ին յանձնած ատեն՝ ըսած էր անոր.

— Եթէ անբարեբաստիկ կամ եթէ իմ վրայ տեղեկութիւն չառնուս, այս թուղթն էմիրին պիտի տանիս, իսկ եթէ յանանա՝ որ պատերազմի մէջ մեռնիս իմ, վերստին թուղթը այս շանը (Պարսկին) պիտի տաս։

Երբ Սաֆէր իր պատգամաւորութիւնը յաջողցնելէ վերջը՝ Պուխարա պիտի երթար Ս.մու—Տէրեայի եղերքը զօրք դումարելու համար, աղաչեց բէյ-ը՝ որ իր

հրահանգներուն համեմատ վարուի։

Բէյ-ը կրկին և կրկին երդուընցաւ՝ որ հաճիին կամքը յարգէ։ Հաճի—Սաֆէր մեկնած իրիկունը հապիպին հանդիպած էր՝ Պուխարայէն քանի մը հազարաժեթը հեռի։ Դերվին Թաամբին վրայ վառուած կրակները հաճի—Սաֆէր բարի մահմետականաց պէս երկիւղած և մարդասէր ըլլալով, ձիէն վար իջաւ. հապիպ ճշմարտութեան մէկ մասը հաճիին պատմեց. իմացուց՝ թէ ինքն էմիրին դերվին է, և Մուհամմէտին իրեն համար պատրաստած զարհուրելի տանջանքէն ազատելու համար վախած է, այն Մուհամմէտէն՝ որուն կառավարութիւնը առաւօտուն դրդռուած էր՝ ոեւէիւէ մը ընդդիմութեան և յանդգնութեան պատճառաւ։ Արդէն այս կառավարութիւնը շատ դերվիներու սուղ նստած էր։ Սաֆէր հապիպին պատմածները լսելով՝ գլխով վրան, և ինքն իրեն ըսաւ՝ թէ այս մարդուն թշուառութեան պատճառը քիչ մը ես եմ։ Սաֆէր հապիպին հարցուց՝ թէ իւր հետ գալ կուզէ՞. նա ալ իւր առաջարկութիւնն ընդունեց.

Թուրքաստանի մէջ թափառականք միշտ երկու ձիով կը ճանապարհորդեն։ Սաֆէր հրամայեց դերվիշին՝ որ միւս ձին հեծնայ, և առաջ միատեղ էլ—Ռւմրա էմիրին քով՝ և յետոյ Մէրվ գացին։ Հապիպ ընդունած հրահանգներուն համեմատ՝ իւր տերը կը լրտեսէր, բայց նորա դէմ բան մ' ընելու փորձ չփորձեց։ Օր մը աւազակաց խումբ մը ատոնց վրայ յարձակելով՝ Սաֆէր թէ՛ իւր և թէ՛ հապիպին կեանքն ազատեց։ Հապիպ մղեռանդ և համզուած ըլլալով՝ որ ըստ իւր երդման իր տիրոջ թշնամին է, պատերազմի մէջ դհաճին սպանելու փորձ փորձեց. տեսանք՝ թէ ինչպէս այս փորձը պարապն ելաւ։ Հապիպ տղայամիտ էակ մ'էր։ Ինքզինքը իւր երդման հաւատարիմ ընալու հարկաւորութեան կը հաւատար, բայց երկու ամիս հաճիին ծառայելով՝ ղդացումները փոխուեցան. Մուհամմէտին

սլաքի հնաոճ դէր, սակայն յարմար առիթ չդտնելուն համար շատ ուրախ էր և դտնել ալ չէր ուզեր. իր տկար լմացականութեամբ անդուլ ջիմրին և քաղցրաբարոյ ու մարդասէր Սէրոբէն ծառայելուն մէջ եղած տարբերութիւնն իմանալով՝ քիչ քիչ իր տիրոջ յարած էր: Մտածեր էր կորսուած և կրած վիշտն իր դաղափարները փոխելին. Մուհամմէտին հնազանդելու հարկաւորութիւնը դգաց. բայց միանդամայն միտքը դրաւ ալ որ իր տէրը մտանելէ վերջը՝ պարակէն ալ վրէժ առնու:

Հապիպ ասիկանութեան դլխաւորին տունէն եղբէ վերջը՝ դէպ՚ի Պուխարայի կողմը ուղղեցաւ Թիւրքմէնաց բանակը երթալու համար: Աւազին վրայ սլառեցաւ՝ Սէրոբէն վրանին մօտ, իր տէրը լրտեսելու նպակաս: Որդէն ըսած ենք՝ թէ Հաճի—Սաֆէրին համբաւն ամբողջ Թուրքաստանի մէջ հռչակեալ է: Ամենէն զօրաւոր կրօնական ընկերութեանց միոյն դլխաւորն ըլլալով, ամեն քաղաքաց եւ գաւառաց մէջ բազմաթիւ բարեկամներ ունէր. ուստի Ռուսաց դէմ պատերազմելու համար մեկնած միջոցին, իր հաւատարիմներէն մէկուն պատուիրած էր՝ որ Պուխարա հրապարակին վրայ կամ բէյին պարտէզները շրջապատող որմին երկայնութիւնը դանուած վաղոյներէն միոյն մէջ իրեն համար տուն մը դնէ:

Որդէն Հաճի — Սաֆիր ուրիշ փոքրիկ տուն մ՚ ունէր, որոյ պարտէզը բէյին պարտէզներուն որմին կից էր. սակայն տարօրինակ բան. ընաւ Թիւրքմէնաց Սէրոբէն այս տանը սեմէն ներս չկոխեց, թէպէտ Պուխարայի մէջ և ոչ ոք կը կասկածէր՝ թէ այս տունը Սաֆերին էր: Այս տունը երեսի վրայ թողուած կ՚երեւէր. բայց ուրիշները տեսած էին՝ որ մուրացիկ պէտիւ մը դալա այս տունը կը մտնէր. իսկ որովհետև Պուխարայի մէջ պէտիւներուն ամեն տեղ կը մտնեն, անոր համար մեկը ուշադրութիւն ըրած չէր մուրացիկ պէտիւին հոն

մտնելուն:

Թէպէտ Հապիպ Թիւրքմէնաց սովորութեան համեմատ մօրուքը բոլորովին ածիլած և սլլանդակ կերպարանք առած էր չճանչցուելու համար, այլ դարձեալ բանի Պուխարա մտաւ՝ վախնալով որ էմիրին մարդիկներէն կամ ծառայներէն մին դինքը կը ճանչնայ: Սակայն օր մը, երբ Մուհամմէտ դանիկա իր քով կանչեց, փողոցի մը մէջ պէտիւ մը պատահեցաւ՝ զոր շատ անգամ Սէրոբէն վրանին մէջ տեսած էր: կարծես, այս պէտիւը ինքդինքը կը ծածկեր. Հապիպ դդալով դատնիքը՝ պէտիւն եւս վազեց, բայց նա ալ, որպէս թէ մեկուն իրեն եւս վազելուն վրայ կասկածած ըլլայ, մեծ մրկիլթը մտաւ: Որովհետև Հապիպ հասարակաց տեղերն երևնալու կը վախնար, և դարձեալ այնպիսի դիրքի մը մէջ էր՝ յորում իր տիրոջ Հաճի — Սաֆերին շատ չարիք հասցունել չէր ուզեր, պէտիւն եւս չը գնաց: Սէրոբէն վրանին քով պատկելու վայրկենին՝ պէտիւն պատկերը դերեզմն մտաց մէջ ներկայացաւ, եւ գաղտնի դգացում մը իրեն ըսաւ՝ թէ ասիկա այնպիսի խորհուրդ մ՚ է՝ որ իր կենաց եւ գոյութեան անհրաժեշտ պայմանն է:

Թողունք զՀապիպ որ լրտես եւ գարանակալ ըլլայ. Հաճի— Սաֆերին վրանը մնանենք. Այս վրանը քնդարձակ, քաղաքացւոց եւ Թուրքաստանի մէջ նմանը չկնուած ամենանուրբ թաղեայ էր. գետինը մետաքսեայ գորգեր փռուած էին. վարագոյրներու դիմաց, դամասկոսի կարմիր եւ դեղին օթոցներ վրանը երեք մասի բաժնած էին: Առաջին մասին մէջ խիստ դեղեցիկ բարձեր կային, ուսկից յայտնի էր՝ թէ այն տեղ Սէրոբէն ընդունելութեան տեղին էր. ձակատին մէջն ալ գետինը գայլի մորթերով ծածկուած՝ և երկաթէ անկողին մը կար. այս անկողնոյն քով՝ Ռուսիէֆ մորթերուն վրայ տարածուած էր՝ ձեռքերն ու ոտքերը չորթայակապ, ընթերցողը կը յիշէ՝ թէ Սէրոբէ հրա-

մայած էր՝ որ պՌըլիէֆ իւր վրանը վոխադրեն։ Զորս թիւրքմէնք զանիկա ձիու մը վրայ կապելով՝ բանակը բերած էին։ Հոն Ռըլիէֆին ձեռացը ու ոտից շղթայնե֊ րը քակելով՝ վայրի կաորի պէս, Սէրոբէն վրանին այն մասին մէջ նետած էին, ուր կը գանուի հիմա։ Ռըլիէֆ ճամբան բնաւ որեւէ կամ սպառնալիք ըրած չէր, այնչափ չարչարուած էր՝ որ բոլորովին անզգայ և սըր֊ տուտ ու տխուր՝ միայն մահուան վրայ կը մտածէր։

Իսկոյն Հաճի — Սաֆէր երևցաւ. Ռըլիէֆ գլուխը դարձուց՝ երբ իւր քոյր եկող մարդը ճանչցաւ. և ար֊ համարհոյա ակնարկ մը ձգելով նորա վրայ՝ ուսերը թօ֊ թուեց։ Սակայն Սէրոբէն դէմքը ոչ խոժոռ և ոչ ըս֊ պառնալից էր. ընդհակառակն քաղցր ժպիտ մը կար իւր շրթանց վրայ։

— Թեթև կերպով մի՛ դատեր դիս, ըսաւ Հաճի ուսուցչին Ռըլիէֆին. ես այս տեղի տէրը չեմ, և պար֊ տաւորեալ եմ քեզի հետ այնպէս վարուիլ՝ ինչպէս վա֊ րուեցայ ղքէդ մահուանէ և դերութենէ ազատել կա֊ րենալու համար։

Ռըլիէֆ՝ Սմըրնա եղած միջոցին՝ Սաֆէրի բնու֊ թիւնը ճանչցած և շատ հաւանած էր. իւր սրտին մէջ կայծ մը ցոլած Սէրոբէն խօսքերուն վրայ. բայց այն֊ չափ վշտացեալ և տառապեալ էր՝ որ բան մը չմտել֊ և չմտանալու զարհաւ։

— Կեանքս ազատեցիր, շարունակեց Սաֆէր. եր֊ քեք պիտի չմոռնամ։ Հոս ունեցած բոլոր իշխանու֊ թիւնս պիտի գործածեմ՝ դերութիւնդ մեղմելու հա֊ մար։ Մինչև ցարդ ստիպուած էի այնպէս ձեւացունել՝ որպէս թէ զքեզ կատէի. որովհետև, դարձեալ կը կրկ֊ նեմ, Սէրոբէ տիտղոս միայն պատերազմական պաշտօ֊ նէի իշխանութիւն կուտայ ինձ պատերազմի առեն։ Ե֊ թէ սակաւիկ մի դիմութեան նշան ցցունէի քեզի, իսկոյն կը մեռնէիր, ես ալ կասկածելի կըլլայի, որովհետև հրամանիցներս կը յիշեն՝ թէ շատ սարիներ ձեր մէջ

ապրած եմ։

Ռըլիէֆ ուշադրութեամբ Հաճիին խօսքերուն մտիկ կ՚ընէր՝ առանց պատասխանելու։

— Եղբայր, ըսաւ Սէրոբէ, Ռըլիէֆին մօտենալով, շղթայակապ ըլլալուդ համար՝ կը չարչարուիս. ազատե՛։

Հաճի դրպանէն խարտոց մը հանելով՝ կապանաւո֊ րին քով ծունկի վրայ եկաւ, և սկսաւ նորա ոտից շղ֊ թայները կտրել.

— Շնորհակալ եմ, Սաֆէ՛ր, ըսաւ Ռըլիէֆ, հաս֊ կըցայ, շնորհակալ եմ.

— Պիտի ազատեմ դքեզ շղթայներէդ, շարունակեց Սաֆէր, և այլ ևս նոցա ծանրութիւնը պիտի չըզգաս. բայց պէտք է ինձի խոստանաս՝ որ շղթայները մեկ դի պիտի չնետես, որովհետև երթէ ծառայներս հոս մտնեն ու զքեզ ազատ տեսնեն, կրնացդ վտանգ կը հասնի. նոյնպէս պէտք է խօսք տաս որ հրահանգներուս հա֊ մեմատ շարժիս։

Ռըլիէֆ՝ Սաֆէրին վրայ երախտագիտական հա֊ յեցուած մը ձգելով՝ ըսաւ.

— Շնորհակալ եմ, Սաֆէ՛ր, ի՛նչ որ ըսես պայ֊ պիտի ընեմ. ամեն ժողովրդոց մէջ ալ վեհ սրտեր կը գտնուին, գիտեմ։ Երթէ ինձ ազատութիւն չնոր֊ հես . . . . . ։

Ռըլիէֆին այս խօսքերուն վրայ, Սաֆէր դէմքը խոժոռեց, և վայրկեան մը շղթայները խարտեչէ դադ֊ րեցուց՝ ըսաւ.

— Ազատութի՛ւն, ո՜հ, ո՛չ. անկարելի ցնորքնե֊ րով մի՛ սփոփեր անձդ. կրնամ դերութեանդ վիշտե֊ րը մեղմել, կրնամ կենացդ խնայել. բայց չեմ կրնար և չեմ ուզեր քեզի ազատութիւն շնորհել։

Ռըլիէֆ՝ յանկարծական չարժմամբ ետ քաշուելով՝ պատասխանեց,

— Ուրեմն ինձմէ ի՛նչ կուզես, խաբեբա՛յ, և ինչո՛ւ անտես յոյսերով զիս կը խաբես. շուտով զիս սպաննէ։

աւելի բարեկամի քան թէ պահապանի քով պիտի ըլ-
լաս. եթէ պատերազմը վերջանայ, դու ալ պիտի ա-
զատուիս։

— Եթէ պատերազմը վերջանայ . . . . . արդեօք պիտի վերջանայ։ Մղեռանդ եւ անհաւատ մահմետա-
կաններդ . . . . . ։

Սաֆիեր Ռըլիեֆին խօսքն ընդմիջելով՝ ըսաւ,

— Ես կրօնքդ չեմ նախատեր, դու ինչո՞ւ իմս կը նախատես. արդարութիւն չէ։

Ռըլիեֆ Սաֆիերին ձեռքը սեղմեց, որովհետեւ չըզ-
թացները խարտուած էին։

— Վայրկեան մը ըզձերդ առանձին կը թողում, եղ-
բա՛յր, շարունակեց Սաֆիեր. կը խոստանա՞ս որ մինչեւ վերադարձս ամենևին տեղէդ պիտի չը շարժիս. այս խոստումը քեզնէ անոր համար կը պահանջեմ՝ որով-
հետեւ կեանքդ ասկէց կախուած ունիր։

— Ի՞նչ արժէք ունի կեանքն առանց աղատու-
թեան. բայց ալ ինչ որ է, կը խոստանամ որ տեղէս չը շարժիմ։

Ուրեմն մարը մնաց էր, երբ Հասիպ՝ որ վեր-
քերն ու ցաւերը բանի տեղ չը դնելով՝ բնաւ այքերը Սերաբէն վրանին դրան վրայէն վերցուցած չէր՝ ճան-
չցաւ անկէց եկողը Տերվիշը։ Հասիպ ցաթկէց եւ սիրաւ անոր եռանդէն վաղել։

Տերվիշը բանակէն եկլելով՝ քաղաքին դառնալէն ան-
ցաւ, եւ որմերուն քովէն՝ դէպ՚ի մեծ մզկիթին ուղղե-
ցաւ, եւ հոն մտաւ։ Այս անգամ Հասիպ տերվիշէն պէս ըրաւ, եւ մզկիթին անկիւններուն աղօթող քանի մի հո-
գիներուն մէջ մնալով՝ միշտ տերվիշն շարժուձեւերը դի-
տեց։ Տերվիշը երկայն ատեն աղօթեց. Հասիպն ալ յուսահատեցաւ իւր վորձէն անյաջողութեան համար՝ երբ տերվիշը վերջին անգամ երկրպագելէ վերջը՝ բոլոր-
սիքը նայեցաւ եւ դէպ՚ի մզկիթին դրան կողմն եկաւ։

Սաֆիեր՝ ձեռքը Ռըլիեֆին բազկին վրայ դնելով ու խարտոցն առնելով՝ կալանաւորին յուզման հակառակ, ըսաւ.

— Մտիկ ըրէ՛, ուռո՛ւս, քեզի կը պարտիմ, բայց ա՛լ աւելի կը պարտիմ կրօնիցս և հայրենեացս։ Երբոր Սմըղանա դիս ազատեցիր, ինձ ըսիր՝ թէ «Ի՞նչ կրնայ ընել հայրենեացս դէմ քեզի պէս թշուկ մը»։ Իրա-
ւունք ունէիր այս խօսքն ըսելու, և դէպքերը դայն հաստատեցին։ Ես պզտիկ եմ, մինչդեռ հայրենիքդ մեծ է. առանց վտանգի դիս կրնայիր ազատել. իրա-
ւունք ունէիր. հայրենիքս տկար է, և կզդամ՝ թէ դու ի՞նչ չարիք կրնաս հասցունել հայրենեացս։ Բաղուկդ զօրաւոր է, քաջասիրտ և հանճարեղ ես. միշտ լաւին-
ներուս թշնամի ես և պիտի ըլլաս։ Գանի որ կը պատե-
րազմինք, քեզի ազատութիւն չնորհելու իրաւունք չունիմ։

— Բաժնեդրէ վախտատի ճամբայ են, պատասխա-
նեց Ռըլիեֆ։

— Ինչո՞ւ վախտատի ճանբայ պիտի դործածեմ, մինչդեռ իշխանութեանս ներքև ես։ Ո՛չ, եղբա՛յր. դու՝ որ հայրենիքդ և կրօնքդ կը սիրես, ի՞նչ պիտի ընեիր, եթէ իմ տեղս ըլլայիր. պատասխանէ՛։

Ռըլիեֆ սթամփելով՝ Հաճիին խօսքին վրայ ուշադը-
րութեամբ մնաց. ականջ շողքորթուեցաւ՝ Սերա-
բէն՝ երեսց երկուքին համար ըրած բաղդատութենէն։ Սաֆիեր չարունակ չղթայները կը խարտեր. դնդապե-
տին ձեռքերը արդէն ազատ էին։ Հաճի ըստութեամբ ասկց չղթայներն ալ խորտակեց։

— Կը հաւնամ, ըսաւ Ռըլիեֆ. բայց ինչո՞ւ դիս ազատել կուզես. աւելի լաւ չէ՞ որ դիս անմիջապես ըս-
պաննես։

— Ո՛չ, եղբա՛յր. վաղը կամ աս առաւօտն միւս օ-
րը զքեզ խիստ պիտի պրկեմ. հոն իլ—Ումրա էմիրին, իմ նախկին տիրոջս և բարեկամիս տունը պիտի բնակիս։ Էմիրին աղջիկը դերութենէ ազատեցիր. անոր տունը՝

Հապիպ միւս երկիւղածներուն մէջ խառնուած ըլլալով՝ ոեբվեւը չը կրցաւ զանիկա ճանչնալ և ուրիշներէն որոշել։ Հապիպ ալ եկաւ և սկսաւ ոեբվեւին եռևէն վազել։ Տէր-վեւը հրապարակին աչքէ անցուներէ և ապահով ըլլալէ վերջը՝ թէ այն տեղ և ոչ մէկը կայ, Հաճի — Սաֆիէին տանը մօտենալով՝ հոն մնաւ։

Հապիպ հրապարակին մէջէն վազելով՝ տանը դրան առջև հասաւ, բայց չկրցաւ դուռը բանալ՝ որովհետև փակուած էր։ Հապիպ այնչափ կ'ղդար այս գաղտնեաց խորը թափանցելու հարկաւորութիւնը՝ որ անհնարին դժուարութեանց հակառակ՝ տանը պարսպին ցանկէն վեր եկաւ։ Խիստ մեծ զգուշութեամբ մինչև պատուհանները սողաց — պուխարայի մէջ տուները մէկ դահլիճէ են — և լաւ մը տանը ներսը դիտեց։ Գիշերը վրայ հասած էր, բայց լուսինը տանը չորս սենեակները կը լուսաւորէր. ո՛չ մարդ և ո՛չ կահ կարասի կար այս սենեակներուն մէջ, ուսկից յայտնի կ'երևէր թէ սովորաբար հոն մէկը չէր բնակեր։

Գերին համարձակելով մէկ պատուհանէն ներս մը-տաւ, և ամեն տեղ նայեցաւ. սակայն բան մը չգտաւ. ոեբվեւը աներևութացած էր։

Հապիպ չյուսահատեցաւ.՝ պարտէզին, պարտէզին ճամբայներէն ու հոն աճած խիտ մացառներուն ալ աչքէ անցուց. ոեբվեւը չէր աներեւութացած։

Յանկարծ Հապիպ օդին մէջ՝ իւր դլխէն վեր, ձայն մը լսեց։ Այս ձայնը՝ բէյ-ին պարտէզը զատող ցանկին կից դանուած սքանչելի ժանտաթզենւոյ մը դագաթէն կուգար։

Հապիպ աչքերը վերցուց. ոեբվեւը ծառին մէկ ոտ-տին վրայ նստած՝ անտեսանելի խօսակից մը հետ կը խօ-սակցէր։ Ուրիշ մեղմ և ներդաշնակաւոր ձայն մ'ալ կը պատասխանէր. կարծես այս ձայնը բէյ-ին տունէն կուգար։ Հապիպ տեսնել ուզեց, բայց ե-լեմանեբոն դըլ-խաւորին պարտէզը շրջապատող որմը խիստ բարձր էր.

գերին բան մը չորոշեց. այն տաեն դեպին պատկելով լսել ուզեց, բայց հողմը հակառակ՝ հողմէն կը փչեր՝ թէ լեզուն երեն անծանօթ էր, բան մը չկրցաւ հաս-կընալ։

Հապիպ չարունակ ոեբվեւին վրայ կը նայէր, բայց չէր կրցած իւր կերպարանքը դիտել, որովհետև խոհեմու-թեամբ բաւական հեռի կեցած էր այն մարդէն՝ ո-րուն եռևէն ինկած էր։ Իսկոյն լուսնոյ մէկ շաւաւիղը ծառին ոտերուն վրայէն անցնելով՝ ոեբվեւին դէմքը լուսաւորեց՝ որ այն վայրկենին երեն հողմը դարձած էր։

Հապիպ ճանչցաւ զՀաճի — Սաֆիէր։

ԳԼՈՒԽ ԺԹ.

ԷՄԻՆԷ

Հապիպ ուշածը գիտնալով՝ հետաքրքրութիւնը յագեցունելէ վերջը՝ արուեստական ջօրութիւնները վրայէն գացին և տկարացաւ։ Կրած վիշտը՝ որ մեղմած կ՚երեւէր՝ աւելի սաստկացաւ. դլուխը դարձաւ և տենդ ունենալուն համար՝ արիւնը սկսաւ արագ ապրիլ ջղերուն մէջ։ Թէպէտ Հապիպ բոլորովին դառն և տագնապալից վիճակի մէջ էր, սակայն յայտնուած վտանգը հասկցաւ, ժողվեց բոլոր ուժն և սկսաւ ցանկին ուղղութեամբ վար սողալ, որպէս դիրքը խիստ լաւ կը յիշէր. առանց իյնալու մինչև որ ին սարոսը հասաւ. բայց երբ մագլցիլ ուղեց, ինչպէս որ անդամ մ՚ըրած էր, զգայ թէ բոլորովին անկարելի էր։ Անկէ յոդնած էր՝ որ ալ վրան ջօրութիւն չէր մնացած. հառաչանք մ՚արձակելով՝ մրմնջոյ մը բունեն քով նստաղած ինկաւ, որպէս ոսոխը իրար գալով, նորա անշարժ մարմինը ծածկեցին։

Հարկաւ ընթերցողք գուշակած ըլլալու են՝ թէ Հապիպին լսած այն ձայնը՝ որ Սաֆէրին խօսքերուն կը-

պատասխանէր՝ Էմինէինն էր։

Կը յիշենք՝ որ Մուղաֆիէր՝ Էլ — Ումրա Էմիրին աղջիկը Ե-ըմանեըոն դիմաւորին հաւատացած էր։ Ընկարելի կը թուէր՝ որ Էմինէ տեսնելու փորձ փորձելը. որովհետև Րէյ-ը՝ խիստ օրինապահ և երկիւղած ծեր, իւր կրօնքէ հետ իրաւախօհ ըլլալու երբէք հաւանութիւն պիտի չտար։ Սակայն Սաֆիէր և Էմինէ՝ իրարու հետ համաձայնելով՝ որոշեցին որ ամեն խոչընդոտներուն յաղթեն։ Ձենք կրնար բացատրել՝ թէ ինչպէս Սաֆիէր ժանտաթիղենին դատ՝ որպ ճիւղերն Րէյ-ին պարտէզնէրէն վեր կը բարձրանային, և թէ ի՛նչպէս Էմինէ ալ ճիշդ այն ժանտաթիղենւոյն հաւասար բարձր տեղ մը՝ թումբ մը դատ. շատ անգամ երկուքնին իրարու հետ տեսնուած էին, Հաճիին արշաւանքէն վերադառնալէ ի վեր։

Էմինէ և Սաֆիէր գիրար կը սիրէին. սէրնընին՝ մէկ մըմի և նոյն վտանգի ենթակայ ըլլալնէն և մէկ մ՚ալ իրարու քով յաճախելնէն յառաջ եկած էր. մարդու և կնոջ մէկզմէկու հետ յարաբերութիւն ընելը՝ տաճկայ մէջ սովորութիւն չէ. Ընդհակառակն երկայն տեսնէ ի վեր Էմիրին աղջիկը Թիւրքմէնին վրայ ըրած տպաւորութիւնը լաւ գիտցած էր. Հաճի իւր ուխտերը աղջկէն գաղտնի պահած չէր. բացատրած էր իրեն՝ թէ մահմետականաց և մանաւանդ իւր աղանդոյն մէջ, ուխտերը յաւիտենական չեն։ Եթէ, ըսած էր, Մէքքէ ուխտութեան երթանք և այն տեղի շէյխ-ալ մեծակակ գումար մը տանք, կրնանք մեր ուխտերէն ազատուիլ։ Սաֆիէր իւր վերջին ճանապարհորդութեան միջոցին՝ իւր խորհուրդները Էլ — Ումրա Էմիրին յայտնած, նա ալ հաւանութիւն տուած էր։ Ուրեմն Էմինէ և Սաֆիէր կրնային երջանիկ օրերու յուսալ, բայց ինքզինքնին ծածկելու պարտաւորեալ էին. որովհետև իսլամին օրինաց համեմատ խիստ մեծ յանցանք կը համարուի՝ ներքին կենաց դէմ մեղանչելը։

Այս իրիկուն՝ Սաֆիէր բարի լուր մը բերած էր։

— Նամակ մ՚ընդունեցի հօրմէդ, կ՚ըսէր Սաֆիէր Էմինէին. պատգամաւորութիւն մը կազմուած և խնդրած ճանբայ ելած է՝ գքեզ առնելու համար. շաբաթը չանցած՝ հոս պիտի ըլլայ։ Քիչ առնէն երջանիկ պիտի ըլլանք. որովհետև բանակս Պուխարայէն պիտի չհեռանայ՝ պատգամաւորութեան գալէ յառաջ, և ըզ-Մուղաֆիֆեր կրնանք նեղը ձգել՝ եթէ չթողու որ հօրըդ քով երթաս։

— Աստուած բարի է, Սաֆիէր, և իւր երկիւղածները կը պահպանէ։

— Այո՛, ամենասիրելի՛ աղջիկս. կը յուսամ՝ որ քեզի համար վտանգաւոր ժամանակն անցած է, որովհետև ես տակաւին կատարելիք պաշտօն մ՚ունիմ, այն է, անարդար յաղթականաց դէմ՝ հայրենիք և կրօնք պաշտպանել։ Բայց գոնէ, եթէ Աստուած ուզէ, ապահով տեղ մը պիտի ունենամ, ուր երբեմն երբեմն կարենամ քովդ հանգստանալ. . . . . ։ Ամենասիրելի աղջիկը, կը յիշե՞ս մեզի աղատութիւն տուող Ռուս պաշտօնակալը։

— Չարցնելդ աւելորդ է, օր մը չեմ անցուներ առանց զանիկա օրհնելու՝ և անոր վրայ Մարդարէին օրհնութիւնները կանչելու։

— Պատերազմին բաղդերը զանիկա կալանաւոր ըրին. շղթայակապ և վիրաւոր հոս է. մեզ ըրած մարդասիրութիւնը յիշելով՝ զայն պաշտպանութեան տակ առի։

— Լա՛ւ, Սաֆիէր։

— Հօրդ քով պիտի ղրկեմ, որպէս զի մինչև պատերազմին վերջը՝ զանիկա պահէ. յետոյ անոր ազատութիւն պիտի տամ։

Էմինէ՝ քիչ մը մտածելով՝ հարցուց.

— Որոշումիդ պաշտօնակալին յարմար կուգա՞յ։

Սաֆիէր՝ ժպտելով՝ պատասխանեց.

— Ոչ այնչափ, բայց հարկ է որ ընդունի։

— Ինչո՞ւ բոլորովին չես ազատեր և չես թողուր որ իրենները քով վերադառնայ։

— Քաջասիրտ, ղօրաւոր և բոլոր Ուռուսներուն մէջ համբաւաւոր դէմքաւոր մ՚է. եթէ ազատենք՝ մեր նպատակին դէմ դործած պիտի ըլլանք։

Էմինէ՝ դլուխը թօթուելով՝ հարցուց.

— Երբոր նա զմեզ ազատեց, մեզի պայման առաջարկե՞ց։

— Բայց, ամենասիրելի՛ աղջիկս, բաւած ուրիշ բան է. պաշտօնակալը հաւատալով որ ես իւր հայրենեաց վրատանդ չեմ կրնար հասցունել՝ դիս ազատ թողուց. իսկ ինչն ընդհակառակը . . . . . ։

Էմինէ Սաֆիէրին խօսքն ընդմիջելով՝ ըսաւ.

— Միայն Աստուած մեծ է, Սաֆիէր. հայրենիքդ ղօրաւոր պիտի ըլլայ՝ եթէ Աստուած ուզէ, կամ պիտի կորսուի իւր չնչովը։ Աստուած ուրիշ միջոցներ կը դանէ զմեզ պատժելու համար, և այս մարդը մեր դէմ բան մը չկրնար ընել՝ եթէ իւր դերադոյն կամքը չուզէ։ Ո՛չ, Սաֆիէր, խղճիդ թելադրածին պէս դործէ, և դէս մարդասէր մի՛ ըլլար։

— Կուզե՞ս։

— Դաղաչեմ։

— Դամբդ միշտ ինձի համար նուիրական է. կը հնազանդիմ քեզի. Ուռուս պաշտօնակալն այս իրիկուն պիտի ազատուի։

— Շնորհակալ եմ, Սաֆիէր, Աստուած գքեզ պիտի վարձատրէ, ես ալ գքեզ աւելի պիտի սիրեմ՝ եթէ կարելի ըլլայ։

Երկուքին ձայնն ալ մեղմ և խորհրդաւոր մրմունջի փոխուեցան, իրենց յոյսերուն և նպատակաց վրայ կը խօսէին։ Սաֆիէր վերջին համբոյր մը ղրկելով էմիրին աղջկան, ծառէն վար իջաւ և պարտէզէն դուրս եկաւ։

Սէրաւէն վրանին մէջ թողուցինք զՈՒլխէֆ բացար-

ձակ անշարժութեան մատնուած ։ Բազուկները տարա-
ծելով՝ ազատութեամբ շունչ առաւ և սկսաւ քնանալ ։

Ռըլիեֆի խառնակիղոր ձայները լսելով՝ արթընցաւ ։
Սէրոբէն ընդունելութեան սենեակին մէջ թխըրքմէն-
ները կը խօսէին ։ Ռըլիեֆ բան մը չհասկցաւ ։ որովհե-
տև միայն Ուռուս բառը շատ կը կրկնուէր՝ դուշակեց՝
թէ նոցա խօսակցութեան առարկայն ինքն է ։ Դիշեր
էր , և վրանին մէջն ալ խաւարը պատած՝ երը քիչ քիչ
ձայները լռեցին ։ Թեթև աղօտ նշոյլ մը Ռըլիեֆին սե-
ղը լուսաւորեց ։ Հաճի — Սաֆիէր՝ լապտեր՝ ի ձեռին ,
ուսն ալ ծրար մը , երկրորդ անգամ կալանաւորին քով
մտնելով ըսաւ ։

— Եղբա՛յր , քեզի աղատութիւն կը բերեմ ։

Այս աւետիսը այնչափ անյուսալի էր՝ որ Ռըլիեֆ
դաթիկելով՝ զարմացման և ուրախութեան ալաղակ ար-
ձակեց ։

— Կամա՞յ , կամա՞յ ։ տակաւին վստանդ բոլորովին
ազատ չես ։ ։ ։ ։ ։ ։ Ըրուշեցինք որ զքեզ խելա ղըր-
կենք ։

Սաֆիէր՝ քերած ծրարը անկողնոյն վրայ ձգելով՝ ըսաւ ,

— Այս իմ հանած ֆէրմէն լաթերս հագիր ։ շուտ ըրէ՛ ։

Ռըլիեֆի տակաւին ափշած , իւր հանդերձները հա-
նեց ։ Սէրոբէն զգեստները հագած միջոցին՝ ուղեց որ
քանի մը հարցումներ ընէ , բայց Սէրոբէ չթողուց և ըսաւ ։

— Քեզի համար հրեշտակ մը բարեխօսեց ։ ։ ։ ։ ։ ։
վերջը կվսանացուենք քեզի ։ ։ ։ ։ ։ լուսիբէնա ։

Երը դնդապետը հագաւ լաթերը , Սէրոբէ՝ ծուռ
տղերը շտկելով և ձեռքին բռնելով՝ ըսաւ ,

— Հիմայ եաւաչ եկո՛ , բայց բաւ մ՚ալ մի՛ հա-
ներ բերնէդ ։

Պահապան զօրքերը՝ զՍէրոբէ ճանչնալով , յարգա-
դանօք ճամբուն վրայէն եան կը քաշուէին ։ Երկուքն ալ
բանակին ծայրը հասան ։ առջևնին ընդարձակ և մութ
անապատը կը տարածուէր ։

Մթութեան մէջ մտնելով՝ այնպիսի հեռւն տեղ մը
հասան՝ որ բանակին աղմուկները մինչեւ հոն չէին
դար , եւ լոյսերն ալ այն տեղը չէին լուսաւորեր ։

Հուսկ ուրեմն , Սաֆիէր՝ բերան բանալով՝ ըսաւ ։

— Լմիրին աղջիկն էր քեզի համար աղաւթիւն
պահանջողը , այն աղջիկը՝ զոր դու Սմըրղանտի մէջ
ազատեցիր ։ հիմա անոր երախտապարտ ես ։

— Հիմա բոլորովին ազատ եմ , Սմըրղանտ վերա-
դառնալու աղաւթիւն ունիմ , հարցուց Ռըլիեֆ ,
որ տակաւին իւր երջանկութեան չէր կրնար հաւատալ ։

— Այո՛ , շնորհիւ Լմինէի ։

— Նա իւր պարտքը կը վճարէ ։

— Ես ալ իմն կը վճարեմ ։

Սաֆիէր Ռըլիեֆին վիզէն կախուած չղթայն ալ խոր-
տակեց ։ և մեր ընթերցողներուն ճանչցած չքադրամը
գնդապետին երկնցնելով՝ ըսաւ ։

— Այս հո՛յնուը աւ։ ասիկա Մեքքէի շէրիֆին կնիքն է ։

— Բայց ։ ։ ։ ։ առարկել ուզեց Ռըլիեֆ ։

— Ա՛ւ , ծպտեալ կերպարանքդ անբաւական է ։
դիւրին կրնաս ճանչցուիլ , բայց այս հո՛յնուը զքեզ Մահ-
մետականաց նուիրական կընէ , և ոչ ոք կը համարձակի
քեզի դէմ մեղանչելու ։ կարծեմ պարտուցս , հակառակ
դործած չեմ ըլլար՝ այս նուիրական կնիքը քեզի պես
արդար քրիստոնէի մը յանձնելով ։

Ռըլիեֆ՝ ուժգնին Սաֆիէրին ձեռքը սեղմեց ։

— Շքադրամը ինձի կարևոր է , ըսաւ Հաճի , որով-
հետև էմիրին թշնամութեան դէմ պիտի կռուիմ , և երբ
կայն առնն անորմէ պիտի չկրնամ զատուիլ ։ վաղը ծա-
ռայներէս երեքն ետեւէդ պիտի զրկեմ ։ երբ Սմըր-
զանտ հասնիս , խօսք առ՛ր ինձի՝ որ ամեն դիշեր թիւ-
բուշ կէս ըսուած տեղը երթաս ։ այս հո՛յնուը « Սաֆիէր
եւ Լմինէ » անուններն հնչող մարդուն պիտի տաս ։

— Եթէ չմեռնիմ՝ ութ օրէն յառաջ քեզի կը վերա-
դարձնեմ , ըսաւ Ռըլիեֆ ։

— Դուք, չարունակեց Հաճի, երբոր ձեր պատուոյն վրայ երդնուք, ամենևին չէ՞ք խաբեր ուրիշները։

— Երբէ՛ք։

— Կաղաչեմ, պատուոյդ վրայ երդնուս՝ որ քու մարդոցդ դրկել աղատողին անունը սիտի չհամացունես։ Բոլոր քրիստոնեայները քեզի չեն նմանիր։ Երբոր խաղաղութիւն ըլլայ, Ռուս մը կրնայ կրօնակիցներուս ըզքեզ ազատողին անունը յայտնել, և եթէ այս առթիւ անունս ալ արուի, իմ վրայ կասկած կը հրաւիրեմ, կանպատուիմ, և թերևս կամբատանուիմ։

— Ո՛հ, պատուոյս վրայ կ'երդնում՝ որ ամենևին անունդ բերնէս սիտի չը հանեմ։

— Ըղատ ես. բայց երբոմն բաժնուելի յառաջ՝ նեղրէ որ վերջին չնորհք մ'ալ պահանջեմ քեզմէ. ըսին ինձ՝ թէ Մուղաֆֆեր ձեզի հետ խաղաղութիւն ըրեր է. Սմրղանտ կ'ինանաս ասիկա. կրնա՞ս ճիշդը ինձ յայտնել պատգամաւորիս։ Շնորհք մ'է որ կը պահանջեմ քեզմէ, բայց այս չնորհքը ազատութեանդ պայման չեմ համարիր։

— Ռուս, Սաֆէր, թէ՛ կը պատերազմին և թէ՛ յայտնի խաղաղութիւն կրնեն. եթէ Սմրղանտ բան մը իմանամ, պատգամաւորիդ կ'ըսեմ։

Սաֆէր՝ քսակ մը հանելով՝ ըսաւ.

— Քեզի ձի չեմ կրնար տալ, որովհետև ուժգնեբէը ձիով չեն ճանապարհորդեր, կրնաս ալ ճանչցուիլ, բայց քեզի էշ մը պետք է, ահաւասիկ ատակ։

Ռըլիէֆ չմերժեց, այլ քսակը առնելով՝ ըսաւ.

— Սաֆէր, գրկենք զիրար։

— Գրկենք զիրար, եղբա՛յր։

Տարբեր ցեղերէ այս երկու անձինքն և ուխտեալ թշնամիները՝ խիստ մտերմութեամբ իրարու հետ կապուեցան. յետոյ Ռըլիէֆ մղուելեան մէջ անհետացաւ։

Սաֆէր արթնցած ատեն՝ առաջին անդամ Հապիպի երեսը տեսաւ։ Գերին ուշաբերած էր առաւօտեան զովութենէն. դլուխը վերցնելով՝ սկսաւ քալել։ Հապիպ ապահով ըլլալե վերջը՝ թէ ոչ ոք կայ պարտիզին և առանը մէջ, և թէ ամեն վտանգ անցած է, ոտիկանաց գլխաւորին տանն ուղղութեամբ յառաջեց։ Մուհամմետ բացակայ կը գտնուէր, որովհետև Էմիրը զանիկա իր քով կանչած էր։ Որովհետև Հապիպ կը վախնար որ մի գուցե Սաֆէր իր բացակայութիւնն իմանայ, ուստի Պարսկին ծառայներէն միոյն պատչեց՝ իմացունել Մուհամմետին՝ թէ Հապիպ կ'ուզէ իրեն այցելութիւն մը տալ. յետոյ խոհոյն բանակը վերադաձաւ։

Թէպէտ վիշտը վայրենի բնութեանց վրայ չազդէր, սակայն Հապիպ այնպիսի զարհուրելի ցաւեր ղգացած էր, այնպէս որ իր դիմաց այլայլութիւնը Սէրաէլն աչքէն չէր վրիպեցաւ։ Հաճի յամենայն արտե կը սիրէր գերին՝ իրեն ըրած աղէկութեան պատճառաւ։

— Ի՞նչ ունիս, հարցուց Սաֆէր, Հապիպին. հիւանդ ես։

Գերին Սաֆէրին բարութենէն ամչցաւ, և թոթովելով՝ պատասխանեց.

— Երէկ ինկած առենս ձեռքս վիրաւորեցի։

— Աւաղ, որովհետև քեզի պաշտօն մը յանձնելու նպատակ ունէի.

— Ո՛հ, ջնաս չունի, տէր, այլ ես վերքիս ցաւը չեմ զգար. կրնաս այդ պաշտօնը յանձնել ինձ.

— Ընձնանուէ՞ր ես, Հապի՛պ,

Գերին՝ ծռելով իր դիմաց դուռնատուութիւնը ծածկելու համար՝ պատասխանեց.

— Դու մարդասէր և բարի չե՞ս, և ամեն ինչ քեզի չեմ պարտիր։

Սաֆէր հրամայեց Հապիպին որ իր ընտիր ձիերէն մին առնելով՝ Սմրղանտ երթայ. Հաճի ինքզինք Ռըլիէֆին ճանչցնելու համար որոշած բառն ալ ինծոյց

դերւոյն և պատուիրեց որ չքաղբամը առնէ քերէ։

— Թերևս քաղաքին չրջակայները չես ճանչնար, ըսաւ Հաճի, բայց բնակիչները քեզի ցոյց պիտի տան թնդոտրէ ըոլըոկ կիոը։

— Կը ճանչնամ Սմրղանա, ասէր, շատ անգամ Լմիրին ծառայից հետ եղած եմ։

— Լա՛ւ ուրեմն, Հասլի՛պ, օր մը, ժամ մը մի՛ կորսընցունէր, որովհետև այն հարցնելը ազատարար է, և մեծ վտանգներու ենթակայ պիտի ըլլամ, մանաւանդ եթէ թշնամիներս իմանան որ հարցնելը վրաս չէ։ Նեթէ առաջին դիչերը հոն չը գտնես այն մարդը՝ որուն քով կը ղրկեմ քեզ, բնաւ հոգ մի՛ ըներ. անիկա իշով, իսկ դու ձիով ես, կարելի է որ ուշանայ. այս երեկոյ պիտի մեկնիս, կատարեալ վստահութիւն ունիմ վրադ, և մի անգամուլ կրնաս՝ ինձ քեզի ըրած աղէկութեանս վոխարէնը հատուցանել։

Այն առեն Հասլիպ Միրզա — Մուհամմէտին քով վազեց, և պարսկին ամեն բան պատմեց և յայտնեց։

Մուհամմէտ անմիջապէս հասկցաւ՝ թէ Սաֆիեր Լմինէին հետ յարաբերութիւն ունի, և Մէքքէի ընդհանրապէս վրան չէ։ Ուրախանալով՝ պալատը վազեց, հապիպին հրամայելէ վերջը՝ որ Սմրղանա երթայ և շըքադրբանին իրեն բերէ։

Գերին երկայն առեն Մուհամմէտը դիտելով՝ ըսաւ.

— Երդմանս հաւատարիմ մնայի, ազատ ենք. հիմա գործն երիւքիս մնայ։

ԳԼՈՒԽ Ի.

Ա.ՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ

Հապիպին մեկնելէն երեք օր վերջը, և ուրիշ երկրորդ պատգամաւորի մը մեկնելուն հետևեալ օրը, որուն Սաֆիեր մի և նոյն պաշտօնը տալը յարմար սեպած էր, Թիւրքմէնաց բանակին դրան առջև վողերու ահագին ձայներ հնչեցին. Լմիրին պատգամաւորութիւնն եկած էր, և Թիւրքմէնաց ազգային մեծ ժողովոյն ներկայանալ կուզէր.

Մեր նկարագրելիք տեսարանը հասկցնելու համար, պէտք է բացատրենք ընթերցողին Թիւրքմէնաց վարչութեան ներքին և անկախոն մեքենայն։

Այսոյ ժողովուրդներէն միայն Թիւրքմէնք հասարակապետական կառավարութեան մը ձևն ընդունած են։ Թագաւոր չունին. ամենէն համբաւաւոր պատերազմողներէն կամ ամենէն ծեր հարուստներէն մանաւոյով մը կը կազմուի, որ խաղաղութեան առեն Թիւրքմէնները կը կառավարէ։ Երբ արշաւանք ընելու որոշուի պարտի, Սէրտարէ մը (զօրապետ) ընտրութեան կը ձեռնարկեն։ Ընտրուած Սէրտարը պատերազմի միջոցին լիա-

ջոր իշխանութիւն ունի. բայց իւր իշխանութիւնը առ-
կէ անդին չանցնիր: Նոյն իսկ պատերազմի առեն, բո-
լոր վարչութիւնը արշաւանաց ակիզբներն ընտրուած
ժողովին վրայ կեդրոնացած է, որոյ նախագահ կը-
բազմի՝ անդամոց ամենէն հարկաւոր ծերը: Այս ժո-
ղովին որոշումներն անգառնալի են, և նոյն իսկ Սէրո-
րը, որ իրաւամբ այս ժողովոյն անդամ կը համարուի,
անոր իշխանութեան ներքև է: Մէ-էղէն ը ժողովոյն
գումարման օրը կորոշէ՝ ժողովոյն վրանին բարձրէն, որ
միշտ բանակին կեդրոնը կ'ըլլայ:

Մէ-էղէն ը պատգամաւորութեան գալն իմանալով,
անմիջապէս ժողովը նոտի հրաւիրեց: Երբ երկայն և
սպիտակ մօրուքով ծերը ապահով եղաւ՝ թէ բոլոր ան-
դամները ներկայ էին, պաշտօնակիցները բարձերու վը-
րայ նստեցուց, և հրամայեց որ պատգամաւորը ներկա-
յանայ: Միրզա—Մուհամմէտն էր: Պարսիկը մինակ ներ-
կայացաւ Թիւրքմէնաց. ընկերները դուրսը մնացին:
Մտած առեն բաղմականները ողջունեց՝ ձեռքը ճակ-
ատին և կուրծքին վրայ տանելով: Յետոյ ըսաւ.

— Ո՛վ ծերք և գլխաւորք Թիւրքմէնաց, Մէկա—
Մուզաֆֆէր — Լաուն — Իալն, Պուխարայի Էմիրն և իմ
աէրս, ղրս ձեզի կը ղրկէ՝ ձերիններէն միայն դէմ դա
պահանջելու համար, ղոր կ'ամբաստանէ իմ միջոցաւ՝
չնութեան, մատնութեան և սրբապղծութեան յանցա-
նօք:

Խոր լռութիւն մը տիրեց պարսկին խօսքերէն: Այս
երեք յանցանքները՝ որոց համար Մուհամմէտ իրենցնե-
րէն մին կ'ամբաստաներ, իսլամին արդիլած երեք մեծ
յանցանքներն էին. անոնց պատիժն ալ խիստ սաստիկ
էր: Թիւրքմէնք ակնութեամբ իրարու կը հարցունէին:
Հաճի—Սաֆէր՝ որ ժողովոյն ներկայ էր, թեթեւ մը
դունատեցաւ: Նախագահը յոտին կանգնեցաւ, եւ
սպառնալից ձայնով Մուհամմէտին ըսաւ:

— Յանցաւորը մեղի ցոյ՛ւր, եւ դատ պիտի առս-

նուի:

— Յանցաւորը ձեր մէջն է, ազազակեց Մուհամ-
մէտ, ձեղնէ ամենէն զօրաւորն է, ձեր Սէրոն է:

Ա՛յն առեն զարհուրելի եւ ահագին աղմուկ մը փըր-
թաւ: Թիւրքմէնք ոտքի վրայ ելլելով՝ կատաղութեամբ
իրարու հետ կը խօսէին. միայն Սաֆէր նստած մնաց և
քան երեւութին հանդարտ կ'երեւէր: Իսկոյն նախագա-
հը լռութիւն հրամայեց և Հաճիին վրայ նայեցաւ: Բայց
նախագահը տեսնելով՝ որ Հաճի արհամարհոտ կերպա-
րանք մ'ունէր և կը ծիծաղէր Մուհամմէտին ըսաւ.

— Ամբաստանութիւնդ ըսէ՛:

— Կ'ամբաստանեմ Սէրոն չնութեան յանցանօք,
Թխվայի իշխանուհւոյն հետ՝ որ իմ տիրոջս կինը պիտի
ըլլայ. կ'ամբաստանեմ Սէրոն ոուսաց հետ դաշնի
յարաբերութիւն ունենալու յանցանօք. կ'ամբաստանեմ
Սէրոն Մէքքէի չէէֆէն կինքին դաղութեան համար: կը
պահանջեմ ձեղնէ յանուն տիրոջս՝ որ անմիջապէս Սէ-
րոն ինձ յանձնուի, Լմիրին առեանը հրապարակաւ
դատուելու, և օրինաց՝ չնացողներուն, մատնիչներուն
և սրբապղծներուն համար սահմանած պատիժը կրե-
լու համար:

Թիւրքմէնք նստած ըլլալով, ամենքն ալ Սէրոյին
վրայ կը նայէին, իսկ սա շարունակ կը ծիծաղէր.

— Ի՞նչ պիտի պատասխանես, Սէրո՛, հարցուց
նախագահը, այս ամբաստանութեան:

Սաֆէր՝ ոտքի վրայ ելլելով և արհամարհանօք պարս-
կին վրայ նայելով՝ հարցուց.

— Մուհամմէ՛տ, այդ համարձակութիւնդ, յանդգ-
նութիւնդ ուսկի՞ց է, ի՞նչ, ֆեռանքդ քեզի բե՞ռ եղած
է: Այս մարդուն այլանդակ ամբաստանութեանց դէմ
ինքզինքս պաշտպանելու պիտի չընուաստանամ, մա-
նաւանդ թէ այս մարդուն առջև . . . : Լմիրը աէրս
չէ, և կը մերժեմ այնպիսի առեան մը՝ զոր կատեմ. միայն
ձեր առջև, ընկե՛րք իմ, որ հիմա դատաւորներս էք,

ինքզինքս պաշտպանելու պիտի դիմանիմ։

Մուհամմէտ՝ Սաֆիէրին խօսքն ընդմիջելով և հեգնութեամբ ծիծաղելով՝ ըսաւ.

— Բէյ-էն պաշտպանութեան կ՚ապաւինիս, ղոր խաբեբան. հանդարտ եղիր, նա խարէութիւնդ լմցաւ. այլ ևս ղանիկա պիտի չտեսնես։

Նախադահը՝ դէմքը խոժոռելով՝ հաճիին ըսաւ.

— Մեր քեզնէ պահանջածը քու հաճութիւնդ չէ։ Ուղես չուզես, պէտք է որ ինքզինքդ պաշտպանես։ Քու դէմ եղած ամբաստանութիւնները խիստ ծանր են, անոր համար չես կրնար զանոնք թեթեւ և չնչին համարիլ։ Մեր դաշնակիցն ինքզինքը թշնամանուած կը սեպէ. եթէ չես ուզեր որ ըստ մեր օրինաց գործդ անոր արդարութեան յանձնենք, ապացուցանէ մեզի անմեղութիւնդ։ Վատնդատոր է մեզի երեսի վրայ ծուղալ այնպիսի մէկը՝ որուն միջոցաւ շատ յաղթութիւններ շահած ենք պատերազմի մէջ։

Սաֆիէր իր յաղթանդամ մարմնով ժողովին վրայ հպարտ և արհամարհոտ հայեցուած մը ձգելով՝ ըսաւ.

— Ընդհակառակ, կասկածն և անվստահութիւնը ձեր հոդիներուն մէջ թաւիանցած է, լա՛ւ, ինքզինքս ձեր առջև պիտի արդարացնեմ, բայց միայն ձեր առջև։ Ես Էմիրին դատաւորութեան ներքև չեմ, և ձեզնէ դատուելու իրաւունքս կը պահանջեմ, որովհետև այլ ևս ոչ թէ ընկերներու, այլ դատաւորներու մէջ կը դանուիմ։

— Պատրաստ եմք քեզի լսելու, ըսաւ նախադահը, վեհ դէմքով։

— Ո՛հ, ո՛չ, պատասխանեց Սաֆիէր հեգնութեամբ։ Որպէս զի արդարացում մը ղրկուղ ըլլայ, պէտք է որ ամբաստանելոյն վրայ բնաւ կասկած չունենաք. կարեւոր է որ ինձի ութ օր միջոց տաք յաղթահարելու համար այն դրպարտութիւնը՝ որուն զոհ գացած եմ։ Ընկերք այս ութ աւուր միջոցը ձեզնէ կը պահանջեմ։

Նախադահը դլուխը թոթուեց յայտնի դժդոհութեամբ. ժողովականաց մեծ մասն ալ դժդոհութիւն ցցուցին։ Մուհամմէտ հասկցաւ՝ թէ ժողովոյն անդամներն իրենց կասկածին մէջ աւելի հաստատուեցան։ Մուհամմէտ դիտեր՝ թէ Սաֆիէր անմիջապէս ինքզինք արդարացնելու բացարձակ անկարելիութեան մէջ պիտի դանուէր, եւ համոզուած էր՝ թէ այս մոլեռանդներուն բարկութեան հեռանքը պիտի ըլլայ անմիջապէս հաճիին ներել։ Եթէ Սաֆիէր անդամ մը Մուհամմէտին ձեռքն ընար, իակոյն և առանց ժամանակ կորսուելու պիտի սպաննուէր։ Ոչ ոք կրնար ազատել զինքը, ոչ ըովհետև Բէյ-ը՝ եղելութեան ճշմարիտ ըլլալը ստուգելէ վերջը՝ խոստացած էր՝ որ օրինաց վրէժխնդրութեան յանձնէ զինքը. ուրեմն Մուհամմէտ պիտի յաղթանակէր։ Բայց եթէ Սաֆիէր օրինաց դլխաւորին հետ կարնար հաղորդակցիլ, ամեն բան՝ հակառակ հեռանքի պիտի ունենար. որովհետև եթէ Սէլիմն անմեղութիւնն ալ չապացուցուէր, վրէժխնդիրը ըլլալու համար պիտի պահանջուէր Բէյ-էն՝ որ տոմսակը Էմիրին տար, և Մուհամմէտ լաւ դիտեր՝ որ Իսլամպէյոն դլխաւորն անմիջապէս Սաֆիէրին հրամանը պիտի կատարէր։ Մուհամմէտ բոլոր այս դաղտնարները միտքը բերելով՝ իր կենաց վրայ դալիք վտանգէն զարհուրեցաւ. երկիւղն խոհեմութիւնն ալ մոռցաւ, եւ հայհոյելով՝ Սաֆիէրին ըսաւ.

— Հապիպին դալատեան կ՚ապատես, այնպէս չէ՞։ Ա՛յ, օտար բարեկամներու կը վստահիս. որպէս զի դան զքեզ վրիժեն։ Ո՛չ, ո՛չ, անմիջապէս ինձի պիտի յանձնուիս, և ինքզինքդ Էմիրին առջև պիտի արդարացնես, եթէ կրնաս։ Թիւրքմէնք, տեր կը պահանջէ.....։

Նախադահը՝ յանկարծ Մուհամմէտին խօսքն ընդմիջելով,

— Թո՛ղ պահանջէ, կրկնեց. դուն այս բաւին վար-

ժուած ես, բայց մեր ականջներուն դէշ կը հնչէ։ Ի՞նչ միրը միայն դատ պահանջելու իրաւունք ունի և ոչ այլ ինչ . . . . . Ընկե՞րք, ես Սաֆէրին ութ օր միջոց տրուելու որոշումը կ'ընդունիմ, և դո՞ւք։

— Մե՞նք ալ, պատասխանեցին թիւրքմէնք միաբերան։

— Բայց . . . . . ըսել ուզեց Մուհամմէտ։

Ժողովին որոշման մեկ ըրե՛ւ ։ Ութ օրէն վերջը Սէրտարը մեղի հետ առնելով, ամենքս ալ Էմիրին առջեւը պիտի ներկայանանք։ Սէրտարը Էմիրին արդարութեան պիտի յանձնուի, եթէ ատոր դիւրին յանցաւոր ճանչցուած է. բայց աղէկ գիտցիր՝ որ եթէ զանիկա անմեղ դատենք, —որովհետեւ մենք ալ դատաւոր պիտի ըլլանք— տէրդ ծանր հաշիւ պիտի տայ մեր դէխաւորին հետ զմեղ ամենքս ալ թշնամանելուն համար։

Մուհամմէտ քիչ մը հանդարտած էր. վարպետութիւններով և խորամանկութիւններով լեցուն միտքն իրեն ուրիշ դաղափար մը ներշնչեց ։

— Թիւրքմէնք, ըսաւ ցած ձայնով, եթէ անկայել խօսք հանեցի բերնէս՝ ներեցէ՛ք. ըսել կ'ուզէի՝ թէ տէրը կը պահանջէ որ դատ տեսնուի, և գիտէ՝ թէ այսչափ կարեւորութիւն ունեցող արդելական մը չէր կրնար ձեր բանակին մէջ պահել . . . . . ։

— Ի՞նչ ըսել կ'ուզես, հարցուց նախագահը ։

— Կը պահանջեմ որ Սէրտարը բանտ տարուի. որովհետեւ որոշեցիք որ ութ օրէն վերջը պիտի դատուի, թո՛ղ հոն իր դատաստանին սպասէ՛, առանց մէկուն հետ հաղորդակցիլ կարենալու ։ Եթէ հոս բանակին մէջ մնայ, ո՞վ կ'երաշխաւորէ ինձ՝ թէ այս մարդն՝ որ երէկ ձեր դէխաւորն էր, պիտի չը յաջողի իր առջեւ կարգեալները համոզել՝ որ գինքը գաղտ վախցունեն ։

Հաճի—Սաֆէր միջամտել ուզեց, բայց նախագահը յանդիմանական շարժմամբ հրամայեց իրեն որ կեցուցին մէջ չը մտնէ ։

— Լա՛ւ, ըսաւ նախագահը պատգամաւորին. այս իրիկուն Սէրտարը քաղաք պիտի տարուի, մենք իրեն համար պատասխանատու ենք ։ Հարիւր թիւրքմէնք արդելականը պիտի պահպանեն այն տանը մէջ՝ զոր էմիրը պիտի որոշէ, ութ օր հոն կենալու համար, և ուրիշները միայն մեր ներկայութեան առջեւ հետ պիտի կարենան խօսիլ . . . . Գո՞հ ես ։

Մուհամմէտ՝ տեսնելով որ որսը ձեռքէն կը փախչի՝ ըսաւ .

— Ձիս ղարմացնող կէտն այն է՝ թէ Հաճի—Սաֆէր, որ կրնայ մէկ բառով ամբաստանութիւնս ջրել, թոյլ կուտայ որ գինքը բանտարկեն ։ Հոս, ինչպէս Պուխարա դէպքին կինքը՝ զոր ամենքս ալ Սէրտարէն ձեռքը տեսած ենք, իւր հզօր պաշտպանութիւնը կը տարածէ Սաֆէրին վրայ, և գանիկա անբռնաբարելի կ'ընէ ։ Ինչո՞ւ Հաճի այս կինքն երեսան չը հաներ .

Մուհամմէտին յարձակումը զօրաւոր էր. և Սաֆէր այնչափ լաւ հասկցաւ՝ որ բաղդովին այլ յայլմէ եղաւ ։ Բարեբաղդաբար, թիւրքմէնաց ժողովը՝ աչխարհիս միւս առեանններուն պէս ըլլալով, տուած որոշումն ետ չառաւ ։

Թիւրքմէնք սկսան իրարու հետ հաձել և մտածել իրենց Սէրտարը ցուցնել. հասկցան՝ թէ ատիկանաց դըէխաւորին խօսքերէն ո՛րը ճշմարիտ է. բայց միաբեղ ո՛րոշում մը տուին, զոր նախագահը Մուհամմէտին հաղորդեց .

— Էմիրը պիտի ամբաստանէ, և մենք պիտի դատենք ութ օրէն վերջը ։ Այսօր մեր որոշումն ետ չենք կրնար առնուլ ։ Գնա՛, և մեր խօսքերն Էմիրին հաղորդե ։ Արեւուն մարը մտնելէ յառաջ, Սէրտարը հարիւր հեծեալով ձեր որոշած տեղը պիտի երթայ ։ Բայց թող իւր դէխան մեկ մաղին չը դպչին դատը լմնցնելէ յառաջ. որովհետեւ եթէ իրեն վտանգ մը պատահի, յանցաւոր ըլլայ չըլլայ, խմացուր տիրոջդ՝ որ թիւրք-

մինք քար քարի վրայ պիտի չը թողուն իւր պալատին և քաղաքին մէջ : Հիմա դնա՛, պատգամաւորութիւնդ լմնցած է : Նախագահը չարժուում մ՚ընելով, Թիւրքմէնք երան . այս չարժումը արձակման նչան էր . այնուհետև աելի բառ մ՚արտասանելը, անպատշաճութիւն կը համարուէր : Մուհամմէտ կատղած և կրակ կտրած՝ մեկնեցաւ :

Երբ Սաֆիէր առանձին մնայ իւր նախկին ընկերոց հետ ժողովոյն վրանին մէջ, խօսք ուղեց . այնչափ վարպետորդի էր՝ որ առանց դժուարութեան ուրիշներն իրեն մտիկ ընել տուաւ :

— Ընկե՛րք և բարեկա՛մք, ըսաւ, եթէ այն մարդուն առջև ինքզինքս չարդարացուցի, անոր համար էր որ էմիրին դերւոյն դրպարտութիւնը կ՚արհամարհեմ, այն դերւոյն՝ որ անձնական թշնամիս է : Հոս ձեր առջևն եմ, մինակ և արդելական . հիմա ձեզի հետ քիչ մը խօսելով, ինքզինքս պիտի արդարացնեմ, և կը յուսամ՝ թէ կրնամ արդարանալ մահմետականաց առջև՝ վտառեր մէջ բերելով :

— Խօսէ՛, խօսէ՛, ազաղակեցին Թիւրքմէնք :

— Այո՛, ըսաւ Սաֆիէր, ճշմարիտ է որ շատ անդամ դաղանի խիվայի իչխանութէն սեռայ . . . . :

Խառնաչփոթ աղմուկ մը Սաֆիէրի խօսքն ընդմիջեց : Թիւրքմէնք ամենը մէկտեղ կը խօսէին և սպառնալից ձեւեր կը բանեցունէին : Բայց Սաֆիէր՝ նախագահին օգնութեամբ այս անդամ ալ զանոնք հանդարտեցնելով

— Բայց, չարունակեց, խիվայի իչխանութէն Մուզաֆֆէրի կինը չէ և պիտի չըլլայ . Իւր հայրը, Էլ—Ումրա էմիր պատգամաւորութիւն մը կը ղրկէ, որ երեք օրէն վերջը հոս պիտի ըլլայ . այս պատգամաւորութիւնն Էլ—Ումրա էմիրին աղջիկը պիտի պահանջէ, ինձի տրուելու համար : Մարդարէն չըսա՞ր՝ թէ հօր մը կամքը նուիրական է : Էլ—Ումրա էմիրն իւր աղջիկը ինձ յանձնեց՝ վերջին անդամ խիվա ճանապարհորդած ա-

տենս . իւր պատգամաւորութիւնն ալ իմ խօսքերս պիտի հաստատէ քեզի, ըսաւ Սաֆիէր նախագահին . . . : Աղջիկը տեսնելու իրաւունք չունէի՞ :

— Եթէ այդ էֆճմարտութիւնը, պատասխանեց նախագահը, մեկ դի թողունք ամբաստանութեան այս կէտը :

Սաֆիէր՝ խօսքը չարունակելով՝ ըսաւ :

— Այո՛, ըսաւ, Ռուսաց դէտեր ղրկեցի . . . . . : Բայց գիտէ՞ք ասոր պատճառը : Մուզաֆֆէրը համոզելու համար՝ թէ մտանութիւն ըրած է . որովհետև դիտեմ՝ թէ դաղտնի թաչքանտ հաղորդակցութիւն կընէ և դունդն երեսի վրայ թողուլ կուզէ : Ին՛ն, դաւաճանութիւնը լաւ մեքենայուած էր : Բարեբաղդաբար կոյր բռնաւորներ չէք, և ձեր արդարութիւնը լուսաւորուելու պէտք ունի : Վտանգը չէ միւս օրը, պատգամաւորը հոս պիտի ըլլայ, Թերևս վաղը . դէտերս, զոր ձեր առջև պիտի ընդունիմ, յուսամ՝ թէ իրենց պաշտօնը պիտի կատարեն, դաւաստանը վերջանալէ յառաջ :

Հիմա իմ դէմ եղած երրորդ ամբաստանութիւնը պիտի հերքեմ, այսինքն որբասպղծութեան ամբաստանութիւնը : Բնաւ այսպիսի յանցանք դործած չեմ, յանցանք մը, որ ամենեն զարհուրելին է . որովհետև գԱստուած և գմարդիկ կը թշնամանէ : Թիւրքմէնաց Սէյիտն իրենցմէն մէջ վախուտաի ճամբայ դործածելու վատութեան չզիջանիր . կամ ճակատս բաց պիտի պաշտպանեմ, կամ դլուխս պիտի խնայ, որովհետև ամեն բան Աստուծոյ ձեռաց մէջ է :

Ժողովը լուռ կեցած էր . իրարու նայէ թիւրքմէնք վրանէն դուրս ելան, և արդելական Սէյիտն առջևէն անցնելով՝ իւրաքանչիւր թափառական Քօրանին սա՛ խօսքը ղուրցեց .

« Աստուած միայն արդար է, և իւր արդարութեան կչիռը հրեշտակաց ձեռօք ձուլուած է » :

ԳԼՈՒԽ ԻԱ.

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Երկու ամիս ՚ի վեր, Սմոլանսկ ընդհանուր ուշադրութեան վրայ էր։ Քաղաքը պաշարման վիճակի մէջ էր, որովհետև Քլեչաքսայ, Խըրխըզայ և Թիւրքմէնաց անզուսպ դունդերը, որք Սմու — Ցէրիայի վրայ խորտակուած բանակին մնացորդներն էին, դաշտին մէջ կը պտըտէին, և երբեմն մինչև քաղաքին դրան կը մօտենային՝ կռուելու համար։

Պատերազմը կը շարունակէր այս աննուաճելի երկրին բոլոր կողմերը։ Եթէ այսօր վաշտ մը Սմոլանսկէն դուրս ելլելով՝ թափառականներն անապատը վարէր, հետևեալ օրը, երբ ռուսք ամրոցը մնանէին, ցրուած թափառականք վերստին ժողվուելով՝ աւազակութեան և ապստամբութեան կ՚սկսէին Մուշաֆէրի քաղաքերու թեամբ, որոյ կալուածները ռուսական երկրին սահմանակից էին։

Ոմն զօրութիւն և չանք ՚ի գործ պէտք դրուէր, թափառականաց յարձակմանց վերջ տալու համար. և եթէ չէր ուզուէր՝ որ Էմիրը նոյն իսկ իւր մայրաքաղաքին մէջ նեղը մտնէ՝ երեն հետ խաղաղութիւն պէտք էլլար։ Թաչքանտ այս խաղաղութեան հնարքներուն վրայ կը ժպտէին, բայց տակաւին պաշարումը վերցուած չէր։

Յերեկ առեն, կրնային ելլել մտնել քաղաքը բաց դռներէն, բայց գիշերը բնակիչներն ամրոցին ներսը կը քաշուէին. և միայն պահանորդները, որք արթնութեամբ խրամներուն վրայ կը հսկէին, անապատացեալ փողոցները կը շրջէին։ Մահմէտական բնակիչները, միշտ թշնամի ռուսաց, ա՛լ աւելի թշնամացած էին հաճի — Սաֆէրի աներևութանալէն ՚ի վեր, և թափառականաց հետ յարաբերութիւն կ՚ընէին։ Բազմաթիւ անկանոն ռուս զինուորք, որք թուրքաստան արշաւելու եկած էին, չէին կրնար հանդարտիլ քաղաքին մէջ ըլլալով հանդերձ. որոնք շատ բաներէ ալ զրկուած էին։ Զինուորաց մէջ դասալքութեան շատ դէպքեր պատահեցան, և նոյն՚իսկ՚ պաշտօնակալք, հաւանականաբար շատ ստակ շահելու յուսով՝ թափառականաց յանշատակութեանց կը մատնակցէին. մէկ մ՚ալ որ Պարսկաստանի սահմանն անցնելու և փախչելու դիւրութիւն կար թափառականաց հետ միացած առեներնին։

Մօլօճօֆ խաութիւն ձեռք առնելու սակարկեցաւ. պահանորդներէն զատ՝ միւս զինուորաց և պաշտօնակալաց արդիլուեցաւ, քան և չորս ժամու մէջ հրացանի բռնուելու պատժով, քաղաքէն դուրս ելլել, այլ ամրոցին մէջ մնալ դրանց փակուելէ վերջը։

Պահանորդաց այս վիճակը նեղ և ճանբայները դոցուած քաղաքի մը մէջ, — որովհետև չրջակայ վայրաց բնակիչներն ալ հոն ապաստանած էին — շատ չէր յարմարեր զինուորաց և պաշտօնակալաց. անոր համար ամենքն ալ խաղաղութեան կը բաղձային, հակառակ ռուսաց յաղթողութեան իւրաքանչիւր յարձակման առեն, որովհետև այս անօգուտ պատերազմն ամեն մարդ յոգնեցուցած էր։

Թիմուրի պալատին մէջ ալ ամէն բան կերպարանա-
փոխ եղած էր։ Այլ եւս ղբօսնոց համար դիշերական
ակումբ տեղի չէր ունենար։ Ամրոցին կամարաձեւ դու-
ռը խիստ քիչ անդամ կը բացուէր։ Եղած աւերները,
ապականութիւնները ու ձլատները երկու ամսուան մէջ
Մօլթօֆ ծերացուցած և կոմսուհւոյն դիմաց դեղեց-
կութիւնը կորնչուցած էին։

Հակառակ ասոր, նոյն իսկ այն օրը՝ յորում Մա-
համմէտ Հաճին ամբաստանեց, Սիլղանտ տօնի և ըն-
ծութեան մէջ էր. այլանդակ կերպարանքով հետաքըր-
քիր բաղմութիւն մը խառնուած էր պալատին բոլորտիքը։
Ամրոցին դիմաց, շատապատ բայց դեղեցիկ չինուած վայ-
ր էնք մը, որոյ վրայ ոսկիէ խաչ մը կար, ամենուն
ուշը դրաւեր էր։ Մէկ մեթրօ լայնութեամբ դորդ մը
բեւեռուած էր՝ Թիմուրի պալատէն դէպ՝ ի այս չէնքն
առաջնորդող ճամբուն վրայ. ճանբուն երկու կողմերն
ալ ծաղիկներ շարուած էին. Շէնքին դուռը բաց էր.
ներսը՝ ոսկեզօծ աշտանակներու մէջ լոյսերը կը վալ-
վլէին. քրիստոնէական եկեղեցի մ՚էր այս չէնքը, որ
Սարթիներուն հետաքրքրութիւնը կը շարժէր, որով-
հետև բնաւ այնպիսի չէնք մը տեսած չէին իրենց երկ-
րին մէջ։

Կաղաչենք ընթերցողը՝ որ մեզի հետ այն կապա-
տակ սրահը մտնէ՝ ուր արդէն շատ անդամ մտած ենք
միասին։ Մարթա իւր սովորական տեղը նստած էր,
բայց անկարելի էր ըսնիկա ճանչնալը։ Տակաւին խիստ
գեղեցիկ կ՚երեւէր, բայց առողջութիւնը խանդարուած
էր։ Լիլ հարսի դէմքով՝ Մարթային առջև ոսքի վը-
րայ կեցած էր։ Պալատին դիմաց դանուած վայրէ ե-
կեղեցին՝ պատարքի ծախիք չինուած էր։ Ամսանու-
թիւնն այն իրիկունը պիտի կատարուէր. բոլոր կարևոր
թուղթերը շատ օրերէ՝ ի վեր եկած էին։

— Այ՛, Լի՛լ, հրեշտա՛կ իմ, կ՚ըսէր Մարթա, ճըշ-

մարիտ է, կը դղջամ և կ՚ամբաստանեմ ինքզինքս, ո-
րովհետև ես էի դքեզ այդ ամսանութեան դրդողը.
բայց այսօր ալ՝ ամսանութեանդ վայրկենին, վերջին
անդամ քեզի հարցնել պարտք կը համարիմ՝ թէ լաւ
մտածա՞ծ էք։

— Կատարելապէս, պատասխանեց Լիլ ծիծաղելով.
խօսնատնս պակասութիւնները կը ճանչնամ, բայց եր-
բէք չեմ վախնար։

— Ի՞նչ ապահովութիւն։

— Միշտ ցրտութիւնս երեսս կը ղարնէք. ճշմարիտ
է, յուրտ բնութիւն մ՚ունիմ։ Մինչև ցարդ՝ եռանդ,
բորբոքումն և կիրք կոչուած բաները ճանչցած չեմ, և
ճանչնալ չեմ ուզեր. ասոնք այնպիսի զգացումներ են՝
որ դրեթէ միշտ խենդութիւն դործել կուտան և յա-
ճախ չար դործեր։

Մարթա չարժում մ՚ընաւ, բայց Լիլ ղայն չը նըշ-
մարելով՝ խօսքը շարունակեց.

— Կենացս բոլոր դործերը կը քննեմ, և այս առա-
ջակայ դործին վրայ՝ որ՝ հարկաւ ամենէն կարեւորն է,
երկու ամիս մտածեցի։ Եթէ ապագայս սպառնացեալ
տեսնէի, մանրերկրորդ մ՚ալ չէի դանդաղեր այս ա-
մսանութենէն հրաժարելու։ Բայց զՊատալբի լաւ
ճանչնալով հանդերձ և խիստ լաւ կը ճանչնամ, հոդ
մի՛ ընէք.....։

— Վստա՞հ էք, ընդմիջեց Մարթա։

— Կուզե՞ս որ Պատալբին քեզի նկարագրեմ։

— Այո՛, պատասխանեց կոմսուհին չար ժպիտով մը։

— Թեթև, յանդուգն, սիճնասէր և ամբիծագով և
ձեղի քան թէ ինձի սիրահար է։

— Ո՜հ, ըսել ուզեց Մարթա, ժխտման ձևով մը։

— Այո՛, այո՛, ըսաւ Լիլ ծիծաղելով։

— Բայց.....։

— Ընենցած սէրն ալ իւր բոլոր ղգայմանց կը նմա-
նի, ըսել կուզեմ՝ թէ հարևանցի է։ Կուզէ որ ամբողջ

Ռուսաստանի մէջ վրան խօսին, անոր համար դիս հինութեան կառնու։ Լրագրայ մէջ հետեւեալ խօսքերը պիտի դրուին, «Մրըլանտի մէջ, կայսրութեան հարաւային կողմերը, Պ. Պասալըքի, քաջ և նշանաւոր պաշտօնական առաջին քրիստոնէական ամուսնութիւնը կատարեց....» ։ Նոյն իսկ կայսրն ալ այս տողերը պիտի կարդայ. թերեւս փարիզ ալ վրան խօսուի.... Հոս, ամենուն խօսակցութեան նիւթ եղած է։ Մի և նոյն պայմաններով իւր հանուդն եղբօրն աղջկան հետ պիտի ամուսնանար։ Ի՞նչպէս կուզէք որ դէղեցիկ հինոջ մը հետ չամուսնանայ, մանաւանդ թէ պատուաւոր ընտանիքէ ալ է։

— Ի՞նչպէս, Լիլի, ըսաւ Մարթա, այս ամենը դիտնալով հանդերձ՝ Պասալըքիի հետ կամուսնանաք։

— Ծառուդիս, լաւ մտածելի. բոլոր իւր պակասութիւններն իմ համար երջանկութեան երաշխաւորութիւններ են։ Արդէն դիս կը յարգէ, և երբոր դիս լաւ մը ճանչնայ, այն ատեն ա՛լ աւելի պիտի յարգէ, որովհետեւ իւր անունն արժանապէս պիտի կրեմ։ Հիմա բաւական ինձի սիրահար է, աւելի ուշ պիտի գայ յարգանքը, եւ խաղաղ, հանդարտ և թշուառութենէ ղերծ ամուսնական վիճակ մը պիտի ունենանք։ Այն-պիսի մարդ մը ընտրեցի, որ երբեք իմ վրայ պիտի չէշխէ, եւ որովհետեւ ես ալ իշխելու փափաք չունիմ, հետեւաբար կատարեալ երջանիկ պիտի ըլլանք։

Լիլին իւրաքանչիւր խօսքը սլաքի հարուածներ էին, որք զՄարթա կը ղարհուրեցնէին. կռմռուհին այնչափ նեղն ինկաւ եւ Լիլ այնպիսի իշխանութիւն մը բանեցուց անոր վրայ, որ Մարթա հառաչելով պատասխանեց.

— Ձեզ այչափ դրական չեի կարծեր։

— Ո՛րչափ կը սիրեմ ճանապարհորդութիւնները, արկածները եւ վտիտութիւնները, այնչափ կուզեմ որ ներքին կենացս մէջ խաղաղ ըլլամ։ Մեկ խօսքով, Պ.

Պասալըքի հետ կ'ամուսնանամ, որովհետեւ համոզուած եմ՝ թէ ինձի սաստիկ սիրահար չէ, եւ մեկուն ալ պիտի չըլլայ։

— Ինչէ՞ն դիտէք։

— Որովհետեւ ձեզի պէս պաշտելի արարածոյ մը չսիրահարեցաւ, սիրելի՛ կռմռուհի։

— Շողոքո՞րդ..... Ահա այս երիկուն տիկին Պասալըքի պիտի ըլլաք։

— Ես իմ յօժարութեամբս (ոչ բնաւ) ամուսնութիւնն ընտրեցի. այս դործողութեան մէջ ծնողացս կամքը չըլլայ. պարապ տեղը դիտնական մարդու աղջիկ չեմ։

Մարթա՝ քիչ մը մտածելով՝ ըսաւ.

— Այո՛, թերեւս ըսածնուդ մէջ ճշմարտութիւն կայ. բայց դուք ինքզինքնիդ բաւական կը ճանչնա՞ք։ Մտիկ ըրէ՛ք, աղջի՛կս, ես ալ ձեզի պէս ուսումն առի և յօժարութեամբ ամուսնացայ, (ծրէ՜ոչ ոչ բնաւ) կարծելով՝ որ բնութեանս պիտի յարմարի. բայց հիմա, արդեօք ինձմէ աւելի թշուառ կին մը կը ճանչնա՞ք։

Լիլ զարմացմամբ կռմռուհւոյն վրայ նայելով՝ պատասխանեց.

— Այո՛, այո՛, սիրելի՛ կռմռուհի։

Մարթա՝ անոր ձեռքը սեղմելով՝ ըսաւ.

— Բան մը չէ՛ք տեսներ, բան մը չէ՛ք լսեր։ Ո՜հ, ես կը կարծէի՝ թէ ամեն բան լմնցած է՛ք, և ապագայ համար ղձեղ կը սիրէի։

— Բարեկա՛մ, հասկցայ՝ թէ հօր եղբօր որդիս կը սիրէիք, և թէ անոր մահուան վրայ կը սգամիք։ Յամենայն դէպս ղքեզ կ'ողբայի. չեմ կարծեր՝ թէ պարապ քերնիդ մտցած էք, և կը յուսամ՝ թէ ձեր վիշտն օր մը կը փարատի։

— Ո՜հ, ո՛չ, հօր եղբօր որդիդ ինձի չը սիրահարեցաւ, այլ խօսնայրս եղաւ, բայց խոստումնքներս դժուեցի այն ինչ պատճառաւ..... կամ հպարտութեամբ։ Օր մը տեսայ որ թշուառութեանս պատ-

ճառն ես եղած եմ, և երբ ղպայլ՝ թէ այս մարդը կը սիրէէ, ինքը սպանդանոցը (պատերազմ) ղրկեցի։

— Ինչ չափազանցութիւն։

— Ո՛հ, չէ՞ք հաւատար։ Թերեւս կը կարծէ՞ք թէ այս արիւնաթաթաւ ատուերին՝ որ միշտ ձիս կը հալածէ, և այն սոսկալի իրականութեան մէջ տեղ մնալով՝ որ դիշերը ցերեկ ինձի հանգիստ չը տար, երջանիկ եմ, Բարի, ղպայուն և անձնանուէր մարդ մը ճանչցած եմ, որ ամէն բանի հակառակ և մինչև մեռած աստն ձիս սիրած է. հիմա դիակ ըլլի այն մարդը՝ ինքզինքս ծեր ապուշի մը ծախելու համար, որ միայն լալ և ողբալ գիտէ։

— Ո՛հ, կոմսուհի՛։

— Չէ՞ք դիտեր թէ հիմա ինչ տհասակ կեանք կը վարեմ այս ծերին քով, որ էրիկս է, և ձիս ձանձրացնելու ասելիճան՝ կը սիրէ ինձ։ Կատեմ այս մարդը՝ որ ինձմէ երիտասարդութիւնս յափշտակեց, կատեմ այս մարդը՝ որուն սուտ համբաւն ինձի ղրկել տուաւ իմ սիրածս։

— Ո՛հ, այդպիսի խօսք մի՛ ընէք. ձեր ըսածները ձիս կը խռովեն։ Պարարը կրքին վեր է։ Պիտի սիրէք ձեր բարի և անձնանուէր էրիկը, եթէ ոչ սիրով, գէթ բարեկամութեամբ։

— Է՛հ, ճիշդ ատոր համար է որ կը ցաւիմ. Ան իշխանութեան ուրախութիւններուն՝ որուն ծարաւ էի, հիմա կշտացած եմ։ Ինձի մարդ մը պէտք է, որ իմ վրայ իշխէ, այս մարդը իմ սպաննել տուածս պիտի ըլլար։ Էրիկս միայն հեծել և հանդերձիս քղանցը պատնել գիտէ։ Կը կարծէք՝ թէ հողմաթևներս ծերի մը դէմքուն վրայ սրբելով, միշտ հաճոյք և ուրախութիւն կ'ղգամ։ Մի անդամ աղէկ է, բայց բոլոր կեանցըս մէջ . . . .

Լիզ Մարթան դիտեց, և այս տխուր և արհամարհոտ հոգւոյն խորերը ինքը ղարհուրեցուցին. լռեց,

բայց Մարթա խօսքը չարունակեց։

— Ցակաւին կը դիմա՞ս։ Քանի՛ անդամ բերանս բացալ ուզեցի էրկն (էրկանը) ըսելու համար թէ Սարդիոս կը սիրեմ և ինքը կ'սպաննէ. բայց չը համարձակեցայ . . . . դիմալով . . . . Էրիկս ի՛նչ որտէ ձիս կը սիրէ, բայց այս սէրը ձիս կ'սպաննէ։ Սպանելու վտանգին յանձն կառնեմ։ Երբ ցաւոցս և վշտացս պատճառը կը հարցուէ ինձի, ղոր չեմ կրնար ծածկել, իրեն կ'ըսեմ՝ թէ հիւանդ եմ, թէ կլիման ինձի չը յարմարիր, և ուրիշ հաղար ու մէկ պատճառաբանքներ։ Ան տունն հրաժարական տալ կուզէ, ինձի հետ Զուիցերիա և Իտալիա մեկնելու համար։ Կը զոհէ այն ապագայն՝ որուն վաճառքած էր, ինքն անարդող հինոլ մը ջիղերը հանդարտեցնելու համար։ Ո՛հ, այս մարդը։

Լիզ՝ ղարհուրելով Մարթայի խօսքերէն՝ ըսաւ.

— Խելքերնիդ կորնցուցիք, լռեցէ՛ք։

— Երբեմն աչքերէն բարկութեան կայծեր կը ցայտուն, և կարծես իմ հետ կուռիլ կուզէ. Բայց քիչ մը վերջը, վատը, ծունկի վրայ դալով, ինձմէ ներում կը խնդրէ։ Ես ալ իրեն պէս վատ ըլլալով, սաստիկօսութիւնս կը չարունակեմ։ Չեմ համարձակիր էրիկէս վրէժ պահանջել՝ իմ սիրած և սպաննած մարդուս համար։

— Թողէ՛ք որ ես ձեզի հանճարեղ խօսքեր խօսիմ, ըսաւ Լիզ, Մարթային քով ծունկի վրայ դալով. ինձի մանիկ ըրէ՛ք, որովհետև շատ անդամ ըսած էք՝ թէ խօսքերդ ինձի աղէկ կուգան։

— Խօսեցէ՛ք, հրեշտա՛կս, բայց ոչ ոք կրնայ բժշկել սիրտս մաշեցնող վէրքը։

— Նախ սա՛ կ'ըսեմ՝ թէ ինչո՞ւ այդչափ խղճմտանք կ'ընէք։ Սարդիոսը ձեր հպատակութեան զոհեցիք. ճշմարիտ չէ, երեք տարի կրնէ։ բայց երկու տարի՛ վեր է որ կը զղջաք։ Ինչո՞ւ իր մահուան, ինքզինքիդ պատասխանատու կ'ընէք։ Այո՛, մահուանը պատճառ եղաք. բայց անուղղակի։ Եթէ մեկը տուն

մը չհնել տայ և դործաւոր մը բարձր տեղէ մը կ՚ինայ, չափազանցութիւն չըլլար ասոր մահուան վրայ սասիկ խիղճ ընելը։

— Ընուղղակի՛, կ՚ըսէր. ուրեմն բան մը չէք դիտեր։ Մեկնիլ չէր ուզեր. ես անարժան խորամանկութիւն մը բանեցունելով՝ զանիկա այն դժոխային արշաւանաց դրկեցի։

— Ա՛յ՛, բայց ձեր պարտքն էր. կը սիրեիք զանիկա, անոր համար ձեղնէ հեռացնել ուզեցիք։

Մարթա Լիղին դլխէն բռնեց և եւս զարնելով՝ ըսաւ.

— Ո՛չ, մեռցուցի զանիկա, որովհետև քու վրայ կը նախանձէի։

— Իմ վրա՞յ։

— Ա՛յ՛, հիմայ ամեն բան կը հասկնա՞ս։

Լիղ եղաւ, և հանդարտ, ծանր, վեհ և լչխանաքան ձեւով լեցուն ձայնով մը՝ ըսաւ.

— Մարթա՛, յանցանք մը ուրիշ յանցանքի թողութիւն չը համարուիր։ Երկանդ դեմ ունեցած ընթացքդ աւելի յանցաւոր կընէ զձեզ։ Ոչ թէ միայն մէկ, այլ երկու հոդի միասնդ թշուառացնելու պատճառ պիտի ըլլաք։

Լիղին վեհ կերպը կոմսուհւոյն աղդեց. բաղմոցին վրայ էյնալով՝ ըսաւ.

— Բայց, չեմ կրնար . . . . . ։

— Կարենալ պէտք է, քաւութիւնն ասիկա պիտի ըլլայ։

Դրան եռեւէն քըթիչ մը լսուելով՝ երկու կիներն ալ վախցան. վերջը դրան վարագոյրը վերցուելով՝ Մօլթիօֆ մտաւ. իրեն եւս Պասալըքի բարձրաձայն կը ծիծաղէր։

— Ա՛յս Սարթինները, կ՚աղաղակէր Մօլթիօֆ բոլոր ձայնովը, այնարհի կատարածը կը տեսնեն մեր չինած եկեղեցւոյն մէջ։

Այս ատրաժամ ուրախութիւնն ա՛լ աւելի տխրեցուց Մարթա և Լիղին հանգերութիւնն հատցուց։ Պասալըքի բան մը չը նշմարեց։

— Ժամանակն է, կ՚ըսեր Մօլթիօֆ Լիղին, երթանք։

Իրաքանչիւր անգամ որ Մօլթիօֆ կնոջը քով կը մնար, երկչոտ և անհանդարտ կերպարանք մը կունենար. իր չատուաժուհւոյն չրթանց վրայ ժպիտ մը տեսնելու կը վախնար՝ ծեր սիրահարներու յատուկ եղած կրքով։

Մարթա դթած երկանը վրայ՝ անոր դիմաց այլայլութիւնը տեսած աստեն. ժպտելու փորձ փորձեց, և ձեռքն անոր երկընդունելով՝ ըսաւ.

— Ա՛յսօր գիս չէք գրկեր.

Մօլթիօֆ Լիղին և Պասալըքին ներկայութիւնը մոռնալով, դեպ՚ի կինը վազեց, կատաղութեամբ զանիկա գրկեց, ծունկի եկաւ և կնոջ հանդերձը պագնելէն վերջը՝ ուրախութեամբ ոտքի վրայ ելլելով,

— Երջանկութեան ճանբան երթանք, ըսաւ, նչանաժնեորուն։

Մօլթիօֆ՝ Լիղին բազկէն բռնելով՝ ուրախութեամբ Պասալըքին ըսաւ.

— Պ. օգնական—զօրապե՛տ, այս իրիկուն երաւոնքդ կը յատկացնեմ։

Երբ դուռը փակուեցաւ, Մարթա թաշկինակով երեսը ծածկեց և յուզուց հանելով՝ կ՚ըսէր.

— Ձե՞մ կրնար, ո՛չ, չե՞մ կրնար։

Եկեղեցին բաղմութիւնը լեցուած էր. քահանայն հարսանեաց պատարագն ատարելէ վերջը՝ ժողովրդեան կողմը դառնալով, ըստ սովորութեան հարցուց.

— Ձեղնէ մէկը՝ Պասալըքի զօրապետին Լիղ Կօրէֆ օրիորդին հետ միաւորութեան կը հակառակի՞։

— Ե՛ս, աղաղակեց ուժգին ձայն մը։

Բոլոր ներկայ պանուհոները՝ ապշած, դեպ՚ի այն անկիւնը դարձան՝ ուսկից ձայնն եկած էր. Մուրատիկ

պէտՀ մը սեղանին առջև դալով՝ ըսաւ.

— Ես կը հակառակիմ այդ ամուսնութեան։

— Ո՞վ է այս խենդը, աղաղակեց Պասալըքի, թո՛ղ դուրս հանեն։

Բայց պէտՀը ձեռքը Պասալըքիին ուսին վրայ դնելով՝ ըսաւ.

— Պասալըքի զօրապետն իւր նախկին բարեկամը չճա՞նչնար. ո՛չ ալ դո՛ւք, ընկե՛րք.... Կալանաւորութեան վիշտերը դիս բոլորովին կերպարանափոխ ըրին։

— Ռըլիէ՛ֆը, աղաղակեց Մօլթօֆ. կենդանի՛ է.....։

ԳԼՈՒԽ ԻԲ.

ԼՐՏԵՍՈՒԹԻՒՆ

Ա.յն զգացումը՝ որով Մօլթօֆ իւր նախկին օգնականը—զօրապետն ընդունեց՝ մի միայն դնդապետին՝ ամուսնութեան հակառակելէն յառաջ եկած էր։ Երկայն աւելի՛ վեր կառավարչին հոգին խռովող կասկածները Պասալըքիէն վերցած և Ռըլիէֆին վրայ դարձած էին. Մօլթօֆ երևակայեց՝ թէ Ռըլիէֆ իւր հօր եղբօր որդւոյն սիրահարած ըլլալուն համար էր որ անոր՝ պաշտօնակալին հետ միաւորութեան ընդդիմացաւ։ Սպարապետն իւր կնոջ սիրահար և անոր իշխանութեան տակ նուաճուած ըլլալով՝ անոր բան մը հարցնելու չէր համարձակիր. բայց համոզուած էր՝ թէ Մարթա դառնապէս կ'ողբար զՌըլիէֆ. Արդեօք Մարթային ողբալն առ Ռըլիէֆ սիրոյն նշա՞նն էր՝ եթէ ոչ պարզապէս ջերմային կնոջ հաճոյք. սպարապետը կ'անդիտանար զայս. բայց սուրբի դէմ մաքառումն իրեն անկարելի կ'երևէր։ Սպարապետը խիստ կը նեղուէր, որովհետև իւր կնոջ դէմ չէր կրնար բարկանալ՝ անոր առ Ռըլիէֆ չափազանց սիրոյն և կրից համար, նոյն խակ զօրապետին

մահուանէն վերջն ալ : Հիմա դէրերը փոխուած էին : Մօ-
լօթօֆի կենդանի մարդու մը դէմ պիտի մաքառէր , և
այս մարդն ոչ թէ իւր կինը , այլ ուրիշ մը կը սիրէր :
Մօլօթօֆ իւր կնոջ բնաւորութիւնը ճանչցած կարծե-
լով , կը յուսար՝ թէ անոր անչափ հպարտութիւնը վի-
րաւորուելով , երջանիկ օրերու մէջ պիտի ապրին : Կա-
ռավարիչը , ծեր սիրահարներու պէս , խիստ անձնա-
պէր էր . Պասալըքին և Լիզին կացութիւնը մոռցաւ ,
որոց ամուսնութեան կապը յարկարծ խզուած էր . ար-
համարհեց պատշաճութեան և քաղաքավարութեան օ-
րէնքն , և առանց հանդիսականաց ակնութիւնը նչմա-
րելու , քանի մ'անգամ դրկեց ղՌըլիէֆ . յետոյ՝ առա-
ջարկեց անոր անմիջապէս պալատը դալ , հանդերձնե-
րը փոխել և իւր արկածալից ճանապարհորդութեան
պատմութիւնն ընել :

Արդէն ըսինք՝ որ Թուրքաստանի գինուորական դա-
սառաց կառավարիչք մեծ սիրողներ ունին : Ակնկեց
զատ , Ս. Բեդրսպուրկի կառավարութեան յոյժ նմանա-
տուն քաղաքականութիւնը կը հրամայէ այն կառավար-
չաց՝ որ փառաւոր և շքեղ հանդէսներով և ցոյցերով
երևին Թուրքաստանի բնիկ ժողովրդոց առջև : Այս դա-
սառի ժողովուրդք խիստ մեծ յարգանք կը պարտին
Ռուս կառավարչաց , որոց համար յատուկ օրէնք և կա-
նոն ալ սահմանուած են .

Ո՛չ Պասալըքի և ո՛չ Լիզ չըհամարձակեցան Մօլօ-
թօֆի՝ Ռըլիէֆին նկատմամբ ըրած ցոյցերն արդիլելու .
սակայն Ռըլիէֆ այս սեռսարանին անվայելչութիւնը հաս-
կըցաւ . ուստի մեծարանօք կառավարչին բաղուին իրմէ
հեռացնելով , կօրէֆ օրիորդին ըսաւ .

— Նորին Բարձրութեան սեղեկագիրս տալէս վերջ՝ անմիջապէս ձեր քով պիտի դամ , սիրելի՛ հօրեղ-
բօր որդիս , և պիտի խօսինք : Հաճեցէ՛ք ինձ սպասել :
Իսկ դուք , Պասալըքի՛ , յարևց , անոր դառնալով , վա-
ղը ձեր ինձմէ ուղևիլը բացատրութիւնները տալու

պատրաստ եմ :

— Լա՛ւ , պարո՛ն , վաղը կ'սպասեմ ձեզի :

Կօրէֆ յանկարծ յիշեց՝ թէ Հարսին հայրն է , ուս-
տի թօթովելով՝ ըսաւ ,

— Բայց . . . . . :

— Ամեն բան ձեզի այս երիկուն պիտի բացատրեմ , ժէկո՛ր Աղեքսանդրօվիչ :

Ծեր դիւանը հաւանութեան շարժում ընելով՝ ը-
սաւ .

— Է՜հ ,

Ծեր դիւանին է՜հ ըսելը կը նշանակէր՝ թէ որով-
հետև իւր աղջկան ամուսնութիւնը Տուրնեֆան և Իրա-
նեան ցեղերուն բաղդին վրայ և ոչ մէկ կերպով կ'աղ-
դեր , անոր համար անտարբեր կը դանուէր :

Ռըլիէֆ՝ հադիսականաց կողմը դառնալով ըսաւ ,

— Թէպէտ , առջի բերան ձեզի այնպէս կ'երևի՝ թէ բնաւ իրաւունք չունիմ այս ամուսնութեան ընդ-
դիմանալու , բայց խիստ մեծ պատճառներ ունիմ , ո-
րոց վրայ որու որ անկ է , պիտի խօսիմ : Իսկ եթէ այս
պատճառները բաւական չերևին , ամուսնութիւնը մի-
այն՝ քանի մ'օր ետ պիտի ձնայ : Ուրեմն ներեցէ՛ք
ինձ , պարոնա՛յք , դուք ալ , հա՛յր իմ , և հաւատացէք
որ պատուոյ և արդարութեան դգացումէ մղեալ՝ այս-
պէս դործեցի :

Մօլօթօֆին ղՌըլիէֆ ընդունելուն կերպը՝ ասոր
ըրածին լուելեայն հաւանութիւն տալ էր . կ'երեւէր՝ թէ
Հարսին հայրն ալ այս ընդհատումը կ'ուղէր : Փահա-
նային հանդիսականներն օրհնեց , որք չատ այլընդ-
մէնութիւններ տալով այս տարօրինակ դէպքին , եկե-
ղեցիեն դուրս ելան :

Մօլօթօֆ դնդապետին բազկէն բռնելով , երկուքն
ալ կառավարչին բնակարանին կողմը կ'ուղղեին : Հոն ըս-
պասեցած ձայնով իր ծառայներեն մէկն հրամայեց
որ Ռըլիէֆին նախկին բնակարանն երթալով , ուր ամեն

ինչ կնքուած էր , անոր Ամրզանա Թոզած համադգեսա-
նէրէն մին առնէ , քաղաքէն ալ դուդ մը լէօրընաճ ուղղել
ուսադիր դնելով՝ այն համադգեսային վրայ կարկ և ի-
րեն բերէ . — իւրաքանչիւր Ռուս կամ Ռուսաց տիրած
քաղաքին մէջ ամէն պատուոյ աստիճանի նշանները կը-
դանուին — : Յետոյ Ռըլիէֆին ըսաւ՝ որ հանդերձները
հանելով՝ լաւ մը մաքրուի . լուացուելէն վերջը՝ Մօլ-
թօֆ քովը նստաւ և խնդրեց որ իւր արկածից պատ-
մութիւնն ընէ .

Ռըլիէֆ՝ կրած վիշտերը , չարչարանքներն ու նե-
ղութիւնները նկարագրած առեն՝ ծեր ազատասէրին
աչքերէն արտասուաց գետեր կը հոսէին : Յետոյ , որով-
հետև Ռըլիէֆ Հաճի — Սաֆիէրին խօսք առած և պա-
տուոյն վրայ երդուընցած էր , կաշառաբեկ պահապանի
կեղծ պատմութիւն մը հնարեց՝ իւր ազատութիւնը բա-
ցատրելու համար :

— Ա՛յս մարդը , ըսաւ , դիս փերվէնէ կերպարանք մըտ-
ցուց , որով կրցայ անարգել անապատէն անցնիլ : Այ-
տուած դիս պահպանեց , որովհետև ճամբան մէկուն ալ
չհանդիպեցայ : Վերջապէս այս իրիկուն Ամրզանա հկայ ,
եւ հնթադրելով որ դուք դիս մեռած համարած էք, կա-
ռավարութեան պատասխն կողմն եկայ ինքզինքս ճանչ-
ցունելու համար :

Բաղմութիւնն այնչափ լեցուած էր պալատին բոլոր-
տիքը , որ չկրցայ ճամբայ բանալ : Այս բաղմութիւնը
դիս մինչեւ եկեղեցւոյ դուռը տարաւ . ներսը նայեցայ և
ձեզ հոն տեսնելով հառաչեցի . . . . : Ձեր վտմու-
թիւնը մնացածը դիտէ :

— Սիրելի՛ս , ձեզ տեսնալով այնչափ ուրախացայ ,
եւ այնչափ երջանիկ եղայ՝ որ տակաւին չհարցուցի ձե-
զի այն պատճառները՝ որոց համար այս տղայոց առաս-
նութեան հակառակեցաք :

— Պարարապե՛տ , եթէ կը նեղէք , պիտի չըսեմ ձե-
զի ասիկա : Իմ գաղտնիքս չէ :

— Ո՛հ , ինչպէս որ կուզէք : Միայն , որովհետև
հատանականաբար կ՚անդիտանաք՝ որ Պ. Պասալըքի օգ-
նական — զօրապետ է , եթէ երբեմն դէմ ծանր ամբաս-
տանութիւն մ՚ունիք ընելու . . . . . :

— Ո՛չ , պարարապե՛տ , ընդհակառակ Ռըլիէֆ , ասոնք
անձնական նկատումներ են , լոկ անձնական . կարելի է
որ հօրեղբօրդիս ալ չընդունի այս նկատումները :

— Պահեցէ՛ք գաղտնիքնիդ , պահեցէ՛ք , սիրելի՛ս ,
յարեց Մօլթօֆ , ուրախութեամբ ձեռքերն իրարու
շփելով :

Ռըլիէֆ բաղնիքէն ելլելով՝ նոր համազգեստը հա-
գաւ . Մօլթօֆ խորամանկ հայեցուած մը ձգեց վը-
րան . Ռըլիէֆ հայելւոյն մէջ նայեցաւ և խնդալով ը-
սաւ .

— Ղէօրընաճ — զօրավար մը հաճեր է իւր համազգեստն
ինձի փոխ տալու ,

— Բայց ո՛չ , սիրելի՛ս , կը խաբուիք , այս համազ-
գեստն ձերն է . ձեր նախկին բնակարանէն բերել
տուի :

— Ուրեմն համազգեստս փոխուած է՝ բացակայու-
թեանս միջոցին , որովհետև տակաւին զօրավար (գնդա-
պետ) չեմ :

— Կը կարծէք՝ թէ գնդապետ չէ՞ք :

Ռըլիէֆ զարմացմամբ Մօլթօֆին երեսը կը նայէր ,
սպարապետն ալ պզտիկ աղայի պէս՝ Ռըլիէֆի աիշու-
թեան վրայ կը խնդար : Մօլթօֆ անդամ մ՚ալ գրկեց
զՌըլիէֆ՝ անոր նոր աստիճանի հասնելը շնորհաւորե-
լով : Այս վայրկենին , սպարապետն իմացուց՝ թէ սպա-
րապետէն հրամայուած ընթրիքը պատրաստ է , նոր
գնդապետը յարատեւս չարժեցաւ իւր նախկին դիրա-
ւորին վախուկ խնամոց վրայ :

Ներկուսը լճնալէ վերջը՝ Մօլթօֆ դողդոջուն
ձայնով Ռըլիէֆին ըսաւ .

— Հիմա կինա տեսնելու երթանք , ձեր վերադար-

ձըն խնացած է, և անհամբեր ձեզի կ'սպասէ, որովհե-
տեւ քիչ մնաց սիտի մեռնէր՝ երբ ձեր մահուան
լուրը լսեց. զանիկա մխիթարելն բոլորովին անկարելի
եղաւ. ճիշդը խօսինք, մենք ալ զձեզ մեռած կը
կարծէինք:

— Իւրաքանչիւր անգամ որ Մօլօթօֆ իւր կնոջ վը-
րայ կը խօսէր Ռըլիէֆին առջեւ, սա կը դողար. բայց
այս անգամ հանդարտութեամբ պատասխանեց.

— Ներեցէ՛ք, սպարապե՛տ, Լիղին և իւր հօրը խօսք
տուի. վաղ առաւօտ յարդանքներս կոմսուհւոյն սիտի
մատուցանեմ. այսօր ներեցէ՛ք:

— Ինչպէս որ կամիք, սիրելի՛ս, ըսաւ Մօլօթօֆ,
ներքնապէս զարմացած Ռըլիէֆին յայտնի ցրտութեան
վրայ:

Երեկոյեան ժամն ութն էր. արդէն դիշեր եղած
էր՝ երբ Ռըլիէֆ իւր հօր եղբօրորդւոյն քովէն մեկնե-
ցաւ. Զուարթ դէմք ունէր, և յանկարծ դէպ'ի քաղա-
քին դրանց կողմն ուղղեցաւ: Յոգնութիւնը, յոյզերն
և երջանկութիւնը չէին մոռցուցած նոր դնդապետին,
իրեն՝ Սէրեարին ըրած խոստումը: Քաղաքին դրանց
միոյն կողմն գնաց. դրան առջեւ հասնելով, զարմացաւ
երբ փակուած գտաւ. պաշարման վիճակը չէր դիտեր:
Պահանորդ մը կանչելով, իրեն բանձրաստիճան պաշտօ
նակալ մ'ըլլալը իմացուց. բայց որովհետեւ ինքզինք
ճանչցունելու գաղտնի բառը (ծօ փ'օփոը) չէր դիտեր,
անկարելի եղաւ դուրս ելլել: Յուսահատած, քա-
ղաքին միւս դռները գնաց, բայց ամեն ուրեք դրա-
կան մեժումն ընդունեց, և ամեն տեղ դինուորք և
պաշտօնակալք զարմացմամբ հարց ու փորձ կ'ընեին ի-
րեն՝ երբ անունովմէ քաղաքէն դուրս ելլելու հրաման կը
խնդրէր:

Ռըլիէֆ իւր նախկին բնակարանը մտնելով՝ խիստ
ուրախացաւ ամեն բան չակուած զարդարուած տեսնե-
լով: Վայրկեան մ'ալ ինքզինք երջանիկ համարեց բո-

լոր կամ կարասիներն առաջուան պէս դնուեղուած դըտ-
նելով այնչափ արկածներէ վերջը: Յետոյ դրասեղանին
առջեւ նստաւ, և ինչպէս այս պատմութեան սկիզբը,
նոյնպէս հիմա ալ Ռուսաստան նամակ դրելու սկսաւ:
Քանի մը վայրկեան դրեց, բայց անմիջապէս բնութիւնն
իւր իրաւունքը պահանջեց. յոգնելով՝ դրիչը վար ձգեց
և անկողնոյն վրայ ինկաւ՝ նամակը կիսկատար թողլով:

Մարթա՝ Ռըլիէֆի վերադարձին լուրն առնելով՝ եր-
ջանկութեան իրական դգացում մը կրեց. բայց յետոյ
տակաւ առ տակաւ, քանի որ խորհրդածութիւնները
զանիկա կը պաշարէին, այնչափ ալ իւր ուրախութիւնն
կ'աներեւութանար՝ նախանձու և կասկածանաց տեղի
տալու համար: Մարթա ալ երկանը պէս խորհեցաւ.
այսինքն, կարծեց՝ թէ Ռըլիէֆին՝ Լիղին ամուսնութեան
հակառակելուն պատճառը, անոր՝ աղջկան սիրահարած
ըլլալն էր. այսպէս Մարթա անոտի ցնորքներով անձնը
կ'սիսիներ: Յետոյ խելքն և ուշադրութիւնը վրայ ե-
կաւ. գիտէր՝ թէ իւր նախկին խոստոյթը վերադարձած
էր, և ամեն վայրկեան կ'սպասէր՝ որ քովը դայ: Բայց
ամբողջ երիկունն անցաւ և Ռըլիէֆ չեկաւ: Յամբ տաս-
նին, կառավարիչը կնոջը քով մտաւ: Մարթա դնդա-
պետին դէմ դգացած բարկութեամբ՝ երկանը խիստ լաւ
ընդունելութիւն ըրաւ: Երկայն առեն իրարու հետ խո-
սեցան. Մօլօթօֆ իմացուց կնոջը՝ թէ վաղը Ռըլիէֆ և-
րեն այցելութեան սիտի դայ:

Մարթա չկրցաւ ամբողջ դիշերը քնանալ. բարկու-
թիւնն և նախանձը զանիկա կը լափէին. երկանը հետ
անցուցած քանի մի ժամերը — երկու տասէ՝ վեր այս-
պիսի բան մը պատահած չէր — միտքը դալով՝ սիրտը
ձանձրութեամբ կը յուղէին: Միայն առաւօտեան մօտ
քիչ մը քնացաւ.

Սուրսօտեան ժամն հնգին, Լիղ քովը եկաւ. բայց
աղախինը՝ դգուշութեամբ կոմսուհւոյն սենեկին վարա-
դոյրը վերցունելով՝ տեսաւ որ կը քնանար, ուստի չը-

համարձակեցաւ զանիկա արթընցնելու։ Մարթա՝ ժամն տասն և մէկին միջոցներն արթընցաւ, դլուխը ծանր և ջիղերը թուլցած։ Նախաճաշն ընելէ վերջը՝ խնդացուցին իրեն թէ Ռըլիէֆ գնդապետն եկած է։

Մարթա Ռըլիէֆին ներկայանալէ յառաջ՝ հայելւոյն մէջ նայեցաւ, տեսաւ որ ոգեղ, ծեր և յոգնած է։ Այս կինը՝ որ երբեմն գՌըլիէֆ կ'սատէր, հիմա խնդալու առիթ կը սիրէր զանիկա։ Ջուդեյ որ ոգեղ կերպարանօք երեւի Ռըլիէֆին. ուստի սենեկապետ կինը կանչելով՝ անդոյր քսեց երեսը, հերաց վրայ փոշի յաներ, հանդերձից ծալքերն ալ չինեց չիտեց։ Աղիկա քանի մը վայրկեան տեւեց. երբ սրահին դուռը բացաւ, դեռ նոր իւր երիկը հոն մտած՝ գնդապետին հետ կը խօսակցէր։

Մարթա այլ եւս այն ցուրտ կինը չէր՝ որ խիստ լաւ դիտէր իւր դժբաղդութիւնները և կրած տպաւորութիւնները ծածկել։ Ռըլիէֆը տեսած տեսնելով՝ դունատեցաւ, ապա բարեւին ներկայութիւնն ալ իրեն անհանգստութիւն պատճառեց։ Իրկու նախկին նշանածներուն՝ իրարու վրայ ձգած հայեցուածքը սիրով և ղջմամբ լի էր. յետոյ ընդհանուր, բռնի և դրեթէ պաղ խօսակցութիւն մը սկսաւ։ Մօրթօֆ մտերմաբար չը վարուեցաւ Ռըլիէֆին հետ՝ ի ներկայութեան կամուհւոյն։ Ռըլիէֆ խիստ կը նեղուէր այս ծերին՝ որ գինքը լաւ ընդունած էր, և այն հինոլ մէջ տեղ կեցած՝ որուն կ'երկրպագէր։ Մարթա խօսած տեսնելով կը թօթռալէր, երբեմն կը դողար և երբեմն կը դառնանար։ Անհանգստութիւն եկաւ վրան. որովհետև Ռըլիէֆին հետ գլուխ գլխի տալով՝ խօսակցութիւն ընել կուզէր. և կը դիտէր՝ որ իւր երիկը սրահէն մեկնելու յօժարութիւն չունի։

Այս ցուրտ և արարողական տեսակցութիւնն երկու ժամ երկարեցաւ։ Ռըլիէֆ Մարթային հայեցուածքով պատասխանելէ կ'զգուշանար, որովհետև Մօրթօֆ շատ նախանձ վրան կը նայէր։ Իւր արկածալից պատմութիւնը

նէն ըրած միջոցին՝ կամուհւոյն քանիցս դողալ, և թէ պէտ հինոլ այս դողերն իւր հոգւոյն երջանկութեամբ կը լեցնէին, բայց հասատատապէս միաքը դրած էր այլ եւս զանիկա չսիրել։ Ռըլիէֆ սրահը մտնելէն ի վեր, հասկցած էր՝ թէ Մօրթօֆին և հինոլը մէջ բան մը կայնէր։ Գնդապետն արդարատէր բնաւորութեան տէր ըլլալով, չուզեց աշխարհի մէջ պարապ տեղն այս հինոլ՝ որուն կ'երկրպագէր, և այն մարդուն՝ որ գինքը սիրել և յարգել սկսած էր, թշնաութեան պատճառ ըլլալ։

Սակայն Ռըլիէֆ՝ որ Սմրզանա թողլոյ նպատակ ունէր դործերը լմնցունելէ վերջը, Մարթային հետ վերջին անդամ տեսնուելու կը փափաքէր. այս բարեկամական տեսակցութիւնն ապադային՝ իրենց յարաբերութիւնները կանոնաւորելու համար պիտի ըլլար. որովհետև դնդապետն որոշած էր՝ որ այլ եւս Մօրթօֆին կինը չտեսնէ։ Տեսակցութիւնն տեղի երկարելը դժուարին պիտի ըլլար, ուստի Ռըլիէֆ ոտքի վրայ ելլելով՝ ըսաւ.

— Երեք օրէն կը մեկնիմ, տիկին, բայց կը յուսամ թէ տակաւին ձեզ տեսնելու բարեբաղդութիւնը կունենամ։

— Պարոն Ռըլիէֆ կը մտնայ՝ թէ ժամանակին հոս իրրև իրեն տանը մէջ էր, պատասխանեց Մարթա։ Ես թէ մեր բարեկամին ըլլար, որովհետև իւր նոր տասիճանն այլ եւս չներէր երկանս օդնակական — շօրտպետն ըլլալ, անշուշտ հոս իրրև իր տանը մէջ ըլլալը պիտի յիշէր և այս երեք օրը մեզի հետ այս տեղ պիտի անցունէր։ Ա, ինպես չէ՞ Ալեքսանդր։

— Պատդիւ պատասխանեց Մօրթօֆ։

Ռըլիէֆ սպարապետին խօսելուն կերպին մէջ դըժդոհութիւն նշմարեց։

— Ա՛հա՛ղ, տիկին, պատասխանեց Ռըլիէֆ, հոս իրենցինելիք դործեր ունիմ. որովհետև նախ թաշքանտ պիտի երթամ և վերջը թուրքաստանէն բոլովին պի-

ան մեկնիմ։ Ուրեմն խիստ քիչ պարապ վայրկեաններ պիտի ունենամ, ձեր վտիտքը լեցունելու համար։

— Հոս դուրս ունի՞ք։

— Կարծեմ երեկուընէ լսած ըլլալու էք։

— Ա՜հ, այո՛, ըսաւ Մարթա . . . . Լիկին ամուսնութեան ընդդիմութիւնդ։ Ինչո՞ւ ըրիք ասիկա։

— Ցիկի՛ն, խիստ երկար պիտի ըլլայ ասոր պատճառը ձեղի բացատրելը. բայց Լիլ՝ որ ձեր բարեկամն է — Ռըլիեֆ այս բառերուն վրայ կոթընեցաւ — ամեն բան ձեղի պիտի ըսէ։ Կարծեմ այս դուրսն աւելի լաւ պիտի կարդաղրուի։

Ռըլիեֆ այս ըսած առեն անբնական կերպարանք մ՚ունէր՝ որ Մարթային աչքէն չը վրիպեցաւ։ Անդամ մ՚ալ նախանձը կնոջ սիրտը խածաւ։

— Ա՜յսօր միատեղ ճաշենք, ըսաւ կամաւէն։

— Ա՜սա՛ղ, սիրելի՛ն, անկարելի է. աւելի շատ դուրս ունեցած ժամանակս այս իրիկուն է։

— Ա՜հ, եթէ ձեղի ազատ մը հոս կենաք, դուրս ձերնիդ ինձի պիտի չը դոհեի՛ք։ Դուք ըսա իս քիչ մը յանցաւոր էք, որովհետեւ երեկ դիս տեսնելու չեկաք. . . . . ։ Ի՛նչպէս եղաւ. . . . . հոս մնացի՛ք։

Ազատանայ ձեւ մ՚էր, որով տակ թէ հրաման և թէ՛ ազատնալիք կար։ Ռըլիեֆ պիտի ընդունէր, բայց հասանականաբար դէմքի յիշելով՝ յառաչեց։

— Անկարելի՛ է, ըսաւ։

Մարթա դէմքը խոժոռելով՝ ըսաւ.

— Ա՜հ,

Լերկանը կոզմը դառնալով՝ հարցուց.

— ի՞նչ մեծ դուրս կրնայ ըլլալ Սմիղանա։

Մօրթոֆ՝ կառապին համար իւր կինը խայթել և լռեն անուղղակի ճանչցունել ուղելով այն սերը՝ որ կենթադրէր՝ թէ Ռըլիեֆ ունի առ Լիլ,

— Անհոգեմ էք, սիրելի՛ս, ըսաւ. ի՞նչ դիտենք, սրտի գործ լինելս։

Ռըլիեֆ պատասխանել ուզեց և բողոքել՝ անոր ակնարկութեան դէմ։ Բայց սպարապետը՝ որպէս թէ Ռըլիեֆին նպատակը հասկցած ըլլար, յարեց.

— Մենք ամենքս ալ հոս դուրս պիտի չունենանք։ Այս առաւօտ թաղքանաէն մեր և Մուզաֆիրի մէջ խաղաղութեան դաշն կնքուելուն լուրն առի։

— Ա՜հ, հարցուց Ռըլիեֆ, խաղաղութի՞ւն եղեր է։

— Ա՜յ, Պուխարայի էմիրին հետ, որ կը խոստանայ դունդը թողուլ, և հրամայել որ իր օդնական զօրքերն ալ խանութեան երկրէն հեռանան։ Եւ եթէ թափառականք այս հրամանը չը պահեն՝ պիտի պատժուին. կըյուսանք՝ թէ ութ օրէն պաշարումը պիտի կարենանք վերցունել։ Վաղը չէ միւս օրը, արշաւանք մ՚ալ կ՚ընենք, և այս անդամ եթէ թափառականք ցրուին, այլ եւս պիտի չը կրնան ժողվուիլ։

— Այս ալ դադանիք է, հարցուց Ռըլիեֆ, որմէհետեւ ոչ ոք քաղաքին մէջ ասիկա կ՚ենթադրէ։

— Ես ալ նոր լսացայ. բայց ասիկա դադանիք չէ։ Իրիկունս այս լուրը պիտի հրատարակեմ։

— Ուրեմն կրնամ հս այս լուրը բարեկամի մը լսցունել։

— Ա՜յ՛։

— Չէ՞ք վախնար որ թշնամւոյն բանակին մէջ ալ այս լուրն լսնան։

— Հոգս չէ. եթէ թշնամիք լսնան, աւելի լաւ կ՚ըլլայ, թերեւս իրենք իրենց մէջ բաժնուին։

— Ուրեմն այս լուրն վրայ խօսելու հրաման կուտաք։

— Ուր՛ւ որ կ՚ուզէք, պատասխանեց Մօրթոֆ։

— Ուրեմն այսօրէս աղաչանքս կը մերժէք, ըսաւ Մարթա։

— Ա՜սա՛ղ, սիրելի՛ն, չէ՛մ կրնար։

Մարթա առանձին մնալով՝ արիւն հանելու չափ շրթունքները խածաւ։ Աղաչանքն անլսելի մնալուն հա-

մաը՝ զայրոյթը, նախանձն և կիղձն խարուելու դաղափարը, բոլոր այս դէշ կրքերը սրտին մէջ վառուելեան, բորբոքեցան, և հինգ արիւնը արագ շրջան առնուլ ըսկսաւ երակացը մէջ։ Քիչ մը դուրս ելլելու և օդ ծծելու հարկաւորութիւն զգաց, որովհետեւ դլուխը ծանր և տենդի բռնուած էր. հրամայեց որ կառքը կ՚ելլէ։ Մարթա դրեթէ տասն վայրկեան սպասեց. դիտեցինք՝ թէ անհամբեր է. ուստի խստիւ կառապանը յանդիմանեց, կառքը պատրաստելն ուշացնելուն պատճառաւ։

— Տիկի՛ն կոմսուհի, պատասխանեց կառապանը, յանցանքն իմն չէ. պ. Ռըլիեֆ դնդապետը առպաստանէն դեռ նոր դուրս ելաւ. հրամայեց օր կօրէֆ օրիորդին ձին թամբեմ՝ որպէս զի ես դուրս ելլէ. . . . . ։

— Ա՜հ, ընդմիջեց Մարթա. բաւական է, լա՛ւ։

Յետոյ կառքին մէջ նետուեցաւ։

Ա յն տանն Սմըղանայի մէջ պատանէյներէն դուրս միակ դբօսավայրը կազմախեաց այն մեծ պողոտայն էր. որոյ ծայրը մինչեւ հիւսիսային դուռը կ՚երկրննար։ Ցերեկ, մեծ պողոտայն, անմարդաբնակ միջոցը՝ որ այս կողմէն պարտէզները լերանցներէն կը զատէր, առաջուրչ հակոզութիւնը կը գրգռացուներ, և ո՛ր և է վտանգ կամ յարձակում այս կողմէն անկարելի էր։ Դարձեալ ամեն ուրեք յածող թափառականք արգելք կ՚ըլլային, որ բանակիչը նոյն իսկ ցերեկ տանն ալ քաղաքէն չելլէն՝ պատանէյներէն դուրս կեանքերնին վտանգի չդնելու համար։

Մարթա երկայն տանն ճեմից կառքով՝ այս պողոտային մէջ։ Մտախոհ և տխուր չարունակ կը մտածէր։

— Ռըլիեֆ աղջիկը (Լիզ) կը սիրէ, կ՚ըսէր ինքն իրեն կինը. այս պղտիկ աղջիկը դիս մինչև այս աստիճան խաբելու համարձակեցաւ. ծանր և պժդալի է. . . . ։ Ես բոլոր օրերը անոր (Ռըլիեֆին) հետ պիտի անցուցնէ, և ո՞վ դիտէ, թերեւս անոր հետևի։ Ա՜հ, ասիկա

անկարելի է, բնաւ պիտի չհանդուրժեմ ասոր։

Ա յս հինգ մտքին մէջ բարւոյն և չարին բնազդումները այնչափ աւրուած էին աւադութեան հասնելուն համար՝ որ մինչև անդամ՝ Ռըլիեֆին սիրոյն վրայ ալ իշխանութիւն ունենալ կը կարծէր։

— Ո՛չ, կ՚ըսէր ինքնիրեն, երբեք ասիկա պիտի չըլլայ։

Ա յս միջոցին Մարթային կառքն վերջին շրջան մ՚ալ ընելով, քաղաքը կը մտնէր եւ շարժուն կամուրջին կը մօտենար։ Իսկոյն կոմսուհին դողաց. տեսաւ Ռըլիեֆը որ ձիով կամարին ներքեւէն դուրս ելաւ, և երկուքն ալ իրարու հանդիպեցան. Ռըլիեֆի խորին մեծարանօք ողջունեց կոմսուհին. բայց Մարթա դլուխը դարձուց, դնդապետն ալ հոդուց հանեց. կառքը կամարին տակ մտաւ. Ռըլիեֆ քանի մը անդամ ետեւ նայեցաւ. բայց անմիջապէս կառքն աչքին առջևէն անհետացաւ Սմըղանայի փողոցներէն միոյն մէջ։ Ա յն տանն դնդապետան հանդարտութեամբ ճամբան շարունակեց։

Յակայն Մարթա տասն վայրկեան անցնելէ վերջը՝ մեկէն հրամայեց կառապանին որ կառքը ետ դարձնէ։

— Ա յս ժամուն, պատանէյներէն դուրս դնդապետեան ի՞նչ կրնայ ընել, կ՚ըսէր ինքնիրեն կինը. ա՜հ, պիտի իմանամ։

Իսկոյն ձին և հեծեալը տեսաւ. հրամայեց կառապանին որ կառքը կամաց քշէ։

Սրտին ըսած ենք՝ թէ պողոտային թոյլ և խոր աղաղը բնաւ ձայն հանել չտար. Մարթային կառքը Ռըլիեֆին հետևէն դնաց առանց ասոր կարենալ տեսնելու։ Քիչ հեռաւորութեամբ, Ռըլիեֆ պողոտային երկայնութիւնն եղած փողոց մը մտաւ. այն տանն Մարթա կառքը կեցուներ տալով իջաւ և դնդապետին մըտած փողոցին մօտ եղող պարտէզ մը մտաւ։ Մարթա առանց բանի տեղ դնելու իր հանդերձները պատռող

փուշերն, և առանց հոդ ընելու՝ որ կեանքը կրնայ վտանգել պատանէներէն դուրս այսչափ հեռի դանուելով, մայառները մէկ կոզմ ըրաւ, շնչասպառ և առանց անհանելու, կամացուկ կամացուկ Ռըլիէֆին հետևեցաւ։

Այսպէս կոմնուհին թիմոթէ Բոլորակ կոչը հասաւ, ուր Ռըլիէֆ իջնալով ձիէն, կենդանին ծառի մը կապեց. առանձին տեղ մը գտնելով՝ հոն խոտին վրայ պառկեցաւ և սպասեց։ Մարթա այն առեն չկրնար՝ թէ Լիլ իր ձին թամբել տուած էր։

— Ռըլիէֆ աղջկան կ'սպասէ, ըսաւ ինքնիրեն կատաղութեամբ, այ թշուառական։

Դէպ 'ի կառքը վազելով՝ հրամայեց կառապանին հոս դառնալ։

— Շուտո՛վ շուտո՛վ պալատը, աղաղակեց Մարթա։

Կառապանը չուարեցաւ, երբ կնոջ այլայլմէ եղած դէմքը դիտեց. բայց չկրնացաւ՝ թէ ինչո՛ւ կինն այսչափ սոսկալական հրաման ըրաւ կառքն արագ քշելու։

Հազիւ թէ պալատը մնած էր, ծառայներէն մէկն հրամայեց որ երթայ անմիջապէս Պասալըքի դղրապետը կանչէ։

ԳԼՈՒԽ ԻԳ.

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Պաշտօնակալին մնած առեն՝ Մարթա յանկարծ աղաղակեց։

— Պ. Պասալըքի՛, տեղւոյ ունեցած դէպքէն տեղեկութիւն ունի՞ք։

— Ո՛չ, սիրելի՛ն, միայն սա՛ դիտեմ որ երէկ դուստրս բացատրութիւն չընդունելիս, հրաժարականս տալու պիտի ստիպուիմ, և երէկուան եղելութեան համար ոչ թէ միայն Պ. Պասալըքիէն, այլ և Նորին Բարձրութենէն ալ դատ պիտի պահանջեմ։ Պարապ տեղը ամբողջ օրը դնդապետին սպասեցի, և երբ ձեր պատդամաւորութիւնն ընդունեցի, կարծեցի՝ թէ հոս գընդապետը տեղեկութիւն պիտի ունենամ։

— Պարո՛ն, հատանականաբար Ռըլիէֆի գնդապետն այս իրիկուն նշանածդ պիտի յափշտակէ, և դուք խիստ ծաղրական դեր մը խաղցած պիտի ըլլաք։

— Տիկի՛ն, այդ անկարելի է։

— Ա՜հ, անկարելի՛ է. գացէք թիմոթէ Բոլորակ կոչը

տեսնելու : Պասալըքի նստած տեղէն ցատկելով՝ պո-
ռաց .

— վրէ՜ժ պիտի խնդրեմ, վրէ՜ժ , այդ մարդէն , և-
տեսէն պիտի խնկնամ և իրեն կռուոյ հրաւէր պիտի
կարդամ : Ինձի այդպիսի թշնամի՞նք .

— Ա՛լ աւելի ծաղր և ծանակ պիտի ըլլաք , որով-
հետև մէկ քառով ձեր ամուսնութեան կապը խզեց :
Հրաժարականդ տալէ յառաջ ժամանակը կ՚անցնի : Չի-
մա ուղէ նէ խօսքերուդ կարևորութիւն չտար , որովհե-
տև դնդապետ է : Ա՛հ , շատ լաւ ծաղրեց զձեզ , ամբողջ
օրը ձեզ սպասեցուց :

— Ա՜յո՛ , Լիղն ալ մէկտեղ . այս աղջիկն ինձի ըսաւ
որ հանդարտ կենամ .

— Չա՛ , հա՛ , հա՛ , հիմա Ռըլիէֆ և Լիղ երկուքն
ալ Թիւռէն Բուրոյ-Կէոէ կը դանուին :

Պասալըքի ակռաները կրճտեց : Ոչ թէ զԼիղ կորս-
ընցնելու վշտէն՝ այլ ծաղրուելէն կատղած էր :

— Ա՛հ , ըսաւ , Բուրոյ-Կէոէ . լա՛ւ , ես ալ հոն պիտի
երթամ և ընկերանամ : Կառավարչին օգնական — ղօ-
րապետն եմ . այս կողմը պատերազմ պիտի եղնեմ : Ա՛հ ,
ես ծաղրելի՛ եմ . ա՜հ , ա՜հ , ա՜հ , տեսնենք : Մնաք
բարեաւ , տիկի՛ն : Ա՛հ , ամբողջ օրը սպասեցի :

— Հանդարտեցէ՛ք , պարոն Պասալըքի՛ :

Պասալըքի վազելով դուրս ելաւ և քաղաքին Թիւռ-
էի Բուրոյ-Կէոէն ամենէն մօտ դրան կողմն ուղեցաւ :
Ան տեղի պահանորդաց հրամանատար Պակրօֆ դըն-
դապետին , որ զինուորական կարգապահութեան խիստ
նախանձախնդիր էր , ինքզինք ճանչցուց : Գնդապետն
երիտասարդը ճանչնալով՝ սակաւիկ մի խռովեցաւ , ո-
րովհետև զանիկա պահակապանի պաշտօնեայներէն չէր
կարծեր : Գլխաւն եկած դէպքը հրամանատարին չէր
կրնար խնացունել . սա ալ պիտի չհաճէր առանց կառա-
վարչին հրամանին , նամաւորինակ դործոյ մը մէջ մտնել :

Իսկոյն Պասալըքին միտքը սատանայական դաղա-

փար մը բռնաւ :

— Գնդապե՛տ , ըսաւ . ստոյգ պղբիւրէ դիտենք՝ որ
այս գիշեր Թշնամի լրտեսներ Սմրղանտի բնակչաց հետ
հաղորդակցութիւն պիտի ընեն, արդէն իրարու ալ բա-
րեկամ են : Գժբաղդաբար մատնչաց անունները չենք
դիտեր : Ժամադրութեան տեղը Թիւռէի Բուրոյ կէոն
է : Ինդամ մը այն կողմն աչքէ անցուցէք , ես ալ ձեղի
կ՚ընկերանամ , կը յուսամ՝ թէ զանոնք թակարդը կը
ձգենք :

Գնդապետը Պասալըքին առաջարկութեան չընդ-
դիմացաւ . երկու պաշտօնակալներն վաչա մը ղրկով
անմիջապէս Թիւռէ Բուրոյ-կէոէն կողմն ուղղեցան :

Սմրղանտի բոլորտիքը դանուած Յարթիներուն թանձ-
րախիտ պարտէզները ալ աւելի կը նեմացունէին դի-
շերը : Զինուորները ղդուշութեամբ կը քալէին մացառ-
ներուն մէջէն : Գնդապետը շարունակ դաշտը կը դիտեր,
Պասալըքի իւր ընկերին վրայ կը մոռայէր , բարկու-
թիւնը սրտին մէջ կայծակի պէս կ՚որոտար , և ինքն
իրեն կ՚ըսէր .

— Ա՛յս կերպով յանկարծուստ անոնց վրայ պիտի
հասնինք . տեսնենք թէ ես ծաղրելի՛ եմ . Լիղ պիտի
անպատուի , ղՌըլիէֆ պիտի սպաննեմ . ա՜հ , ա՜հ :

Բուրոյ-կէոէն մօտեցան . ամենուսաեք միայնութիւնն
և լռութիւնը տիրած էր : Պակրօֆ դնդապետն ուշա-
դրութեամբ ականջ դնելով , Բուրոյ-կէոէն երկու ան-
սակ ձայն լսեց :

— Լռութի՛ւն , ըսաւ կէս ձայնով , օդնական—ղօ-
րապետին . հիմայ կը բռնենք զանոնք :

Զինուորաց շարժմամբ նշան ըրաւ որ կանգ առնուն,
ինքն ալ յառաջելով՝ ծառի մը բունին տակ պահուր-
տեցաւ . նշան ըրաւ որ Պասալըքի ալ քովը դայ :

Ան ատեն դնդապետն որոշակի էօղլէք լեղուով
եղած խօսակցութիւն մը լսեց : Ուշադրութեամբ մտիկ
ըրաւ , որովհետև այս լեղուն կը հասկնար—Թուրքաս-

տան դանուած ամէն Ռուս զինուոր այս երկրին բնակչաց լեզուները կը սորվին — ։

— Հապ՛ւ, վրադ վստահութիւն ունիմ, կ՛ըսէր ձայներէն մին. բայց հրահանգներս մի՛ մոռնար. Իմաստուր իրեն որ խաղաղութիւն եղած է, և այս նահանգն, այս քաղաքն և այս չքաղրամն իրեն յանձնէ ։ Շնորհակալ եղի՛ր իրեն և ըսէ որ յաւիտեան իրեն բարեկամ պիտի մնամ ։

— Կալանաւորութեանդ և քեզի ըրած դէշ վարմանցս կը ներէ՞ս ։

— Յամենայն սրտէ, Հապ՛ւ, բայց գնա՛, ժամանակը կ՛սպասէ. ո՞ւր է ձիդ, հարցուց Ռըլիէֆ ։

— Ասկէց քիչ հեռու տեղ մը թողուցի, որովհետև ուռուս զօրաց վաշտ մը նշմարեցի և կը վախնամ որ դիս կը տեսնեն ։

Պակրօֆ զինուորաց նշան ըրաւ, և պասալսքիին նայեցաւ անոր կարծիքն առնելու համար ։ Բայց օգնականը—զօրապետը Ռըլիէֆին ձայնը ճանչնալով, մեռելի պէս դեղնած էր. որովհետև կ՛դպար՝ թէ դժոխային բան մը դործած էր ։

Պասալսքի չնշմարեց որ դնդապետը վրան կը նայէր ։

— Մնաս բարեաւ, Հապ՛ւ, ըսաւ Ռըլիէֆ ։

— Մնաս բարեաւ, Աստուած ղքեզ պահպանէ ։

— Օ՛ն անդը յառաջ, պօռաց յանկարծ Պակրօֆ, այս յանդուգնները ձերբակալեցէք ։

— Մէկ մանրերկրորդի մէջ Թիմուրէ Բոլբոլ-Էֆը Ռուս զինուորներով լեցուեցաւ ։ Հապ՛ւ արհամարհանօք Ռըլիէֆին վրայ նայելով աղաղակեց.

— Մաո՞նի՛չ ։

Ռըլիէֆ՝ որուն զարմանքը քիչ մ՛անցած էր, դեռ բոլոր իւր ծառին կապած ձին ցցուներով՝ ըսաւ.

— Ա՛ռ ձիդ և փախի՛ր ։

Յետոյ Ռըլիէֆ՝ ձեռքերը խաչաձև բռնեց ։

Հապ՛ւ կայծակի արագութեամբ ձիոյն վրայ նետուեցաւ, դաշոյնով ծառին կապուած սանձը կտրեց և մթութեան մէջ մտաւ ։

— Հո՛ւր, հրամայեց Պակրօֆ ։

Հրացանի քանի մը հարուածներ որոտացին, բայց մթութիւնը սաստիկ և պարտէզներն ալ թանձրախիտ էին. Հապ՛ւ անհետացաւ ։

Սակայն զինուորները Ռըլիէֆ չէին կրնար ետ դարձնել. Պակրօֆ ձեռքն անոր ուսին վրայ դնելով՝ ըսաւ.

— Պարո՛ն, կը ձերբակալեմ ղձեզ ։

Պասալսքի յառաջելով՝ ըսաւ ։

— Դնդապե՛տ, խաբուեցանք. Ռըլիէֆ դնդապետն է, մեր ամենէն պատուաւոր և բարձրաստիճան պաշտօնակալներէն մին ։

— Կը ճանչնամ դնդապետը, պատասխանեց Պակրօֆ, բայց դիւները բռնեցի զինքը, պատանէիներէն դուրս և՛ խօսակցութեան Թիւրքմէնի մը հետ. պաշարման վիճակին այս երեք դէպքն ալ արգիլած է ։ Համոզուած եմ որ պարոնը բացատրութիւն պիտի տայ, բայց ես ստիպուած եմ զինքը ձերբակալելու ։

Ռըլիէֆ ըսաւ.

— Պարո՛ն Պասալսքի, զօրապետն իրաւունք ունի. պատերազմական ժողովոյն առեանը պիտի դատուիմ ։

Յետոյ Ռըլիէֆ ցուրտ ժպիտով մ՛ըսաւ.

— Լիւդ ձեզի լմնցուցած է, որովհետև քովէն մեկնելէս վերջը ձեր քով կ՛ուզար, թէ այլ ևս ձեր ամուսնութեան պիտի չընդդիմանամ. կարծեմ, գիտէք՝ թէ ինչո՛ւ առջի բերան ասիկա ըրի. բարեբաղդ եմ որ սըխալս ճանչցայ ։ Հիմա, դնդապե՛տ, յարեց, ես աւասիկ ձեր հրամանաց պատրաստ եմ ։

Պասալսքի տեսնելու և կարեկցութեան արժանի, դեղնած և զարհուրած էր, ճակտին քրտինքը ոլոռն ոլոռն կը թափէր. Ռըլիէֆին մօտենալով՝ ականջն ի՛ւր ըսաւ.

— Խօսեցէ՛ք, բացատրութիւն տուէ՛ք, այսպէս չեմ

կրնար ձեզ ձերբակալել տալ. միշտ անուանարկ պիտի ըլլամ։

— Պահ, ինչո՞ւ ասիկա ձեզի պիտի դպչի։

— Բայց, ինչ որ է նէ, ինչո՞ւ հոս եկաք։

— Ա՜հ, սիրելի՛ս, պիտի չըսեմ, դի ձերբակալելու և ոչ թէ հարց ու փորձ ընելու իրաւունք ունիք։

Պասալըքի յուսահատած՝ Պակրօֆին մօտենալով ըսաւ.

— Գնդապե՛տ, մի՛ այդչափ խստութիւն բանեցուցնէք. գնդապետն դեռ երէկ եկած ըլլալով՝ կանոններըը կ՚անգիտանայր. աղատ թողէք զանիկա։

Պակրօֆ դլուխը թօթռուելով պատասխանեց։

— Գնդապետին մը չատ դիւրին է ինք զինք արդարացունել. ես բան մը չեմ կրնար ընել. խիստ կը ցաւիմ, բայց պարտքս դիս կ՚ստիպէ որ զանիկա ձերբակալեմ, տեղեկագրեմ և իւր բնակարանը խուզարկեմ։

— Բայց ինչ որ կ՚ըսեմ, հասկցէ՛ք, կարծեցի՝ թէ նշանածիս հետ ժամադրութիւն ըրած են և . . . . .

Պակրօֆ՝ արհամարհանօք Պասալըքին վրայ նայելով ըսաւ.

— Ձեզի դէշ։

— Օ՜հ, աղաղակեց Պասալըք, պիտի ազատեմ ըզձեզ. երթամ և գամ. Լիլին է այս ամենուն պատճառը. պէտք է որ ըրած չարիքին հատուցումն ընէ։

Պասալըքի հեռանալ ուզեց.

— Ներեցէ՛ք, պարո՛ն, ըսաւ Պակրօֆ, պէտք է որ տեղեկագիրս ստորագրէք. պաշտօնապէս ձեզ ասոր կ՚ստիպեմ։

— Բայց, գնդապե՛տ . . . . . ։

— Ձինուորական դործ է։

— Ա՜հ, չատ լսիք, բաւական բնաւ տեղեկութիւն չունիք, բան մը չեմ ստորագրեր, և . . . . . ։

— Պարո՛ն, դիս կ՚ստիպէք որ ձեզի դէմ տեղեկագրեմ։

— Օ՜հ, Աստուա՜ծ իմ, Աստուա՜ծ իմ, աղաղակեց երիտասարդը, գլխուելիէն։

— Երկայն պիտի չըլլայ, պատասխանեց Պակրօֆ յուզեալ. արտաքուստ յուզեալ չէր երեւար։ Ռըլիէֆին մօտենալով՝ ըսաւ.

— Գնդապե՛տ, յանդիմայիլ ստիպեալ եմ ձեզնէ տուրերնիդ պահանջելու։

— Ա՜հաւասիկ, առէ՛ք, պատասխանեց Ռըլիէֆ, պարագաներնիդ կը կատարէք, ուստի չեմ կրնար մեղադրել ձեզ։

Ռըլիէֆ սուրը յանձնելէն վերջը՝ ըսաւ.

— Գնդապե՛տ, քալեցէ՛ք, ես ալ ձեր ետեւէն կուդամ։

Քաւորդ մ՚անցած չէր Պասալըքին երթալուն վրայ, երբ սպասաւոր մը Մօլօթօֆ կոմսուհւոյն իմացուց թէ կօրէֆ օրիորդն եկած է։

— Ա՜նկարելի՛ է, աղաղակեց Մարիա, կը խաբուիք։

— Տիկինը պիտի ներէ, օրիորդը սրահն է։

— Կանչեցէ՛ք, կանչեցէ՛ք, Լիլ հո՛ս է. ի՞նչ կը նշանակէ այս. ա՜հ, դո՛ւք, պօռաց Մարիա, Լիլին մեռած առեն, ա՜հ, դո՛ւք էք։

— Աստուա՜ծ, ինչո՞ւ այս զարմանքը, հարցուց Լիլ։

— Թէ՞ուէ Բուբուկ-հէոը չէ՞ք։

— Այս ժամուն Թէ՞ուէ Բուբուկ—հէոը, ա՜հ, կմսուհի, ի՞նչ կը պատահի։

— Աստուա՜ծ իմ, արդեօք խաբուա՞ծ եմ։

— Կոմսուհի՛, դէմքերնիդ տխուր է . . . . . տարօրինակ բան։ Երկու ժամ՝ի վեր քաղաքին մէջ կը ձիավարեմ՝ ամենուրեք բարի լուր տարածելու համար, բայց չեմ յաջողիր։ Խօսնատունս տունէն կուգամ, դինքը հոն չդտայ. ինձի ըսին՝ թէ ձեր քոյրն է, հոս եկայ, և ոչ միայն այս տեղ չեմ տեսներ դինքը, այլ դուք ալ տըխրեցաք՝ առջևնիդ ներկայացած առեն։ Ի՞նչ կայ։

— Պ. Պասալըքին քով դացի՞ք։

— Այո՛ ։

— Առանձի՞ն ։

— Այո՛, շատ պարզ է, որովհետեւ քանի մ՚օրէն երիկս պիտի ըլլայ ։ Սարդիսը կը հաճի ։ Որովհետեւ ինքզինքս երջանկութեան աւետաբեր կը կարծէի, անմիջապէս ձի մը թամբել տուի, և քալաւերեալ հօրեղբօրս ուղիէս, որ ինձի ըսաւ՝ թէ մեծ գործերու պատճառաւ հոս պիտի մնայ քանի մ՚օր, Պ. Պատալըքլին տունը վազեցի ։ Ո՜հ, այո՛, պարոնը բացակայ էր ։

— Ա՜հ, Թօթօվեց Մարթա, խելքը գլխէն թռուցած ։

— Այո՛ . . . . ։ Բայց ի՞նչ ունիք, և ինչո՞ւ քաղցկեղոտի վրայ կը խօսիք ։

— Ոչ ինչ . . . . . ։ Ա՜հ, պարոն Ռըլիէֆ ամուսնութեան կը հաճի ։ Ինչո՜ւ առջի քերան ընդդիմացած էր ։

— Այդ կեան ալ դաղանեացս երկրորդ մասն է, որ ձեզի կը վերաբերի ։ կը ներէ՞ք որ ձեզի յայտնի համարձակ խօսիմ ։

— Ըսէ՛ք, ըսէք շուտով ։

— Լա՛ւ . այս է՝ թէ . . . . . ի՞նչպէս քաղցրաբարոյ ձեզի, կը կարծէր՝ որ ապառնի երիկս ձեր առջեւ շատ հնարք գտած էր եւ թէ՝ դուք պիտ ձեր սուտին համար զոհած էիք ։ Ուրիշ դիտցածս խմացույց ինձի, այսինքն Պատալըքլին առ ձեզ ունեցած սէրը . . . . . ի՞նչ գիտնամ ։ Այն առեն իրեն հաւատաց դաւանութիւնս ըրի (գաղանիքներն երեւան հանել), զոր կը ճանչնաք, և ինձի ա՛լ պատասխանեց . « ընտանեաց խնամատուն էք, ուղածնուդ պէս ըրէք „ ։

— Ուրեմն ձեզ չըսիրեր ։

— Չի՜ս, ի՞նչ կ՚ըսէք, սիրելի՛ս, կատա՞կ կ՚ընէք . աղեկ գիտէք որ ձեզ՝ կը սիրէ, և . . . . . տեսնենք, լաւ ըրած եմ ։ Իրեն ա՛լ ըսի որ կոմսուհին ձեզ կը սիրէ ։

— Ո՜հ, Լի՛զ, սիրելի՛ աղջիկս, ա՜հ, ո՛րչափ թշուառեմ ։

— « կը մեռնիմ, ըսաւ ինձի Ռըլիէֆ, բոլորովին պիտի հեռանամ Ս՚ղուանաէն, բայց ինձի ըսածնիդ, Լի՛զ, բոլոր վիշտերս կը հանդարտեցուներ և բոլոր պիղծերս կը ջնջէ . երբէք գիտնալու չեմ սիրելի դադրած չեմ, և այլ ևս գանիկա չկարենալ յարդելէս շատ երկիւղ ունեցած էի . Ո՜հ, անգամ մ՚ալ գանիկա պիտի տեսնեմ, վերջին անգամ մ՚ալ . Ըսէք իրեն որ կը վստահիմ իւր ոսկոյ առջև խոնարհիլ և իւր քայլերուն հետքերը համբուրել ։ Ո՜հ, չնորհակալ կ՚ըլլամ իրեն՝ այն մեծ մխիթարութեան համար՝ զոր ապագայ առանձնութեանս մէջ կը չնորհէ ինձ ։ կրնաք այս ամենն իրեն ըսել, դո՞ւք, Լի՛զ, ըսէք իրեն ։ Ես գիտնքը շատ կը յարդեմ. սէրս իրեն ուրիշ կերպով՝ քան թէ առջևը ծունկ չոքելով կը յայտնեմ ։ Իրեն ըսէ՛ք, Լի՛զ, թէ առջևը ծունկ չոքելս վերջը պիտի մեռնիմ, և թէ իւր կնոջ վրայ այլ ևս պիտի չծանրանամ. բայց թո՛ղ լաւ գիտնայ թէ կայ մարդ մը, որ իւր մէկ նշանով՝ թէ՛ կեանքը, թէ՛ հոգին և մինչև պատիւն անգամ վրայ կուտայ ։ Այո՛, սիրելի՛ աղջիկս, ըսածնիդ՝ բոլոր ահաճութիւններս, վիշտերս և մինչև անգամ գանիկա ուրիշի մը հետ ամուսնացած տեսնելուս ցաւը կը մոռցունէ ինձ ։ Ինքը դիս կը սիրե՞ ։ Պարաքս կը հրամայեր ինձ որ առ ինքն ունեցած զգացումս մինչև արտիս ։ Խորը ապաւորեմ, և թերևս վայրկեան մը կարծած է՝ որ իրեն երկրպագելէ ետ կեցած եմ ։ Ո՜հ, ըսէք իրեն որ իւր պատկերը սրտէս պիտի չհեռանայ . Ուրիշի մը հետ ամուսնացաւ ։ Երջանկութիւնս՝ իրենին զոհելուս վրայ անբաւ գոհունակութիւն մը կ՚զգամ ։ Ըսէք իրեն որ լաւ ըրած է՝ եթէ երջանիկ է „ ։

— Բաւական է, բաւական, ընդմիջեց Մարթա . . . . . ։ Ձեզ գիտէր որ դիս կ՚սպաննէք ։

— Ճշմարիտ է, գոնատաեալ էք, և կը դողաք ։ Ա-

տուա՛ծ իմ, կոմսուհի՛, ի՞նչ ունիք ։

Մարթա Լիզին ձեռքէն բռնելով՝ պատասխանեց ։

— Սա՛ կայ որ անօրէն, դժոխային և թշուառ եմ, նախանձու ինչ ըլլալը գիտե՞ս ։ Թերևս ոչ ։ չես ալ գի՛տեր թէ նախանձն ո՞ր կառաչնորդէ ։ Այսօր, քու վրադ նախանձեցայ ։

— Ո՞հ ։

— Ըրածս գիտե՞ս ։

Աղախինն սենեակէն եկած աղմուկ մը զՄարթա ընդմիջեց ։ Պատալաքի՝ դեղնած, դունատած, հնչասպառ, և մաղերը քամմած, սրահը նետուելով՝ Մարթային երեսն ի վեր պօռաց ։

— Տիկի՛ն, պատուոյս համար ձեղնէ դատ պահանջելու եկայ, պատուոյս՝ զոր դուք ոտնակոխ ըրիք ։

— Ի՞նչ կայ, հարցուց Լիզ ։

— Սա՛ կայ որ տիկինը դէս զեկուցիչ և լրտես համբաւած է, սա՛ կայ որ Թէմ-ըլ Բուլըվէ-Կեոը Ռըլիէֆի զբօսավայրը ձերբակալել տուի, որ թշնամւոյն հետ յարաբերութիւն ունենալուն և դինուորական օրինաց դէմ գործելուն համար ամբաստանուած է ։ Սա՛ կայ որ բանտն է, և հիմա իրեն բնակարանը կը խուզարկեն, և պատերազմական ժողովոյն առջևը դատաստանի պիտի ենթարկուի ։

— Ո՛հ, կոմսուհի՛, աղաղակեց Լիզ, որ ամեն բան հասկնալով՝ Մարթային վրայ նայեցաւ յանդիմանական դիմօք ։

Մարթա չառադունեցաւ և կորացաւ ։

Պատալաքի խօսքը շարունակելով՝ ըսաւ ։

— Հիմա, տիկի՛ն, պատիւս կը պահանջեմ ձեղնէ ։ Թերթեւսօրիկ և անխելք եմ, բայց երբէք ոչ լրտես և ոչ վատ եղած եմ ։ Թերևս այնպէս պիտի կարծեն, յաջորդ հեծկլտալով ։

Մարթա անզգայ և սառած էր ։

Լիզ Պատալաքին ըսաւ ։

— Բայսարեցէ՛ք ըսածներդ ։ տիկինն ի՞նչ կրնայ ընել, ի՞նչ կայ ։

— Ի՞նչ կրնայ ընել ։ կրնայ հրամայել էրկանը՝ որ պաշարման առնն դրած բոլոր օբլիգասիոնները անդորձադրելի հրատարակէ ։ եթէ չընէ ամիկայ՝ պիտի անպատուեմ ։

— Բայց, ըսել ուզեց Լիզ ։

— Բայց չկայ ։ եթէ կոմսուհին ըրած չարիքին հատուցումն ընել չուզէ՝ նոյն ինքն սպարապետէն պիտի պահանջեմ որ ինծի պատահած դէպքն ընկերացս բացատրէ, որովհետև իր կնոջ յանցանաց բոլոր պատասխանատուութիւնը չեմ ընդունիր ։ եթէ սպարապետը մերժէ . . . . . ընելիքս ես գիտեմ ։

Մարթա կանգնած էր, և ակռաը խորհրդածութեանց մէջ ընկղմած կ՚երևէր ։ Պատալաքինն ըսաւ ։

— Սա՛ ձեզ մեղապարտ եմ ։ բայց սպառնալիքով դիմելու հարկ չկայ, որպէս զի պարտքս կատարեմ ։

Զանգակը զարնելով՝ եկող ծառային ըսաւ ։

— Աղաչեցէք Նորին վսեմութիւնն որ անյապաղ հոս գայ ։

Կառավարչին գալուստն սպասելով՝ Պատալաքի Ռըլիէֆին ձերբակալութեան զանազան հանգամանքներն պատմեց Լիզին ։ Մարթա ալ՝ որուն հետ Պատալաքի բնաւ չէր խօսեր, ուշադրութեամբ մտիկ կ՚ընէր, և երբ Մօլթոֆ մտաւ, Մարթա՝ առանց անոր խօսելու ժամանակ տալու, պօռաց ։

— Բարեկա՛մ, չնո՞րհք, Ռըլիէֆ դնդապետան աղատեցէք ։

Երբ կառավարիչն լմնցաւ թէ խնդիրը ի՛նչ բանի վրայ էր, ժպտելով՝ ըսաւ ։

— Ծանր բան մը չէ, պաշարման վիճակը պիտի վերնայ ։ Գնդապետը, որ կալանաւորութենէն նոր ազատուած է, կրնայ արդարանալ օրինաց անտեղեակ ըլլալը մէջ բերելով ։ բայսարութիւն կուտայ և ամեն բան

կը շտկուի։ Մարթա՛, յիրաւի չատ գունատեալ էք, յարեց սպարապետը ախուր ձայնով, մոռածել պէտք չէ։ Կը խոստանամ ձեզի որ Ռըլիէֆին բան մը պիտի չպատահի։

— Սպարապե՛տ, ըսաւ Պասալաքի, Պակրօֆ գըն֊դապետն իր տեղեկագիրը տուաւ, և հրամայեց որ Ռըլիէֆին բնակարանը խուզարկեն։

— Լա՛ւ, ինչո՞ւ կը վախնաք, ի՞նչ պիտի գտնեն հոն։ Ռըլիէֆ գնդապետը բանակին ամենէն լաւագոյն և ամենէն պատուաւոր պաշտօնակալներէն մին է։ Այս պայմաններով խուզարկութիւնն մը ցնտապակար չէ։ Դարձեալ, ես իրեն համար պատասխանատու կ'ըլլամ. հանդարտեցէ՛ք։

Մարթա ըսաւ.

— Ո՛հ, չնորհակալ եմ, բարեկա՛մ։

Էրկանը վրին պատատեցաւ, որ Թերեւս առաջին անգամ ընդունեց ցրտութեամբ այն համբոյրները՝ որոց սովրած չէր։

Գատաւարիչն ըսաւ.

— Պատերազմական ժողովոյն առեանը պիտի տեղա֊տուի, որովհետեւ օրէնքը յայտնի է. բայց, կը կրկնեմ, բնաւ իրեն բան մը պիտի չպատահի։ Ես կ'երաշխաւո֊րեմ, որովհետեւ իր կատարեալ անմեղութեան համո֊զուած եմ։

ԳԼՈՒԽ ԻԴ.

ԴԱՏԱՍՏԱՆ

Հաճի — Սոֆիէրին դատաստանին օրն եկած հասած էր։ Ընտաւտեան կանուխ, բազմութիւնը դունդա֊դունդ էմիրին պալատին բոլորտիքը կուգար կը խըտ֊նուէր՝ պայքարներուն ներկայ գտնուելու համար, ո֊րովհետեւ դատաստանը հրապարակական պիտի ըլլար։ Պալատին մեծ անդաստակը կարմիր և դեղին գամակ֊ներով զարդարեալ, ամբողջ անդաստակին վրայ ալ ըս֊պիտակ ծածկոց մը ձգուած էր։ Անդաստակին դրա֊նը դիմաց, պատին կից՝ ոսկեզօծ ծոպերով կարմիր մե֊տաքսեայ բազմոց մը չինուած էր տասն աստիճանէ բարձր տախտակամածի մը վրայ. այս բազմոցը դահու֊ձեւ ունէր, որուն մօտը չափակցութեամբ քանի մի բարձեր շարուած էին։

Դահուն դէմ, անդաստակին բաւական բարձր՝ դըլ֊խատուեան բեմ մը չինած էին, որոյ վրայ սեւազ֊գեստ մարդ մը, ձեռքը միասայրի մը բռնած, անսասա֊լեր դիմօք՝ փողոցներէն պալատին դրանց առջեւ հա֊

ւաքուոզ դոյնագոյն և անհեդեդս նկարեալ բաղմութիւնը կը դիտէր ։

Սէրոպէնէ-ն դունդ մը կարգաւ անդաստակին ներքին կողմը շարուած էր՝ պատերազմական երկայնութիւնը ։ Անդաստակին մէկ անկիւնը չհնձուած ցցապատանէչի մը ետեւ, հեծելազօրքերը բաղմութիւն մը խառնակելով ապմուկները կը հանէին ։ Ուրիշ անկիւն մ՚ալ, դէպ՚ի պարտէզ տանող դրանը կողմը, վանդակապատ պատուհաններով վայտեայ հիւղի մըմէջ չորս սէրոպ կ՚ապահէին՝ բազմութիւնը հիւղին մօտենալէ արգիլելու համար ։

Ժամը տասը զարկաւ ։ Թնդանօթի հարուած մը որոտաց ։ Սէրոպէնէ-ն դունները բացին և քան և մէկ ձիաներս մտնելով՝ դահուն մօտ բարձերու վրայ նստան ։ Մուշաներ-ն եռաւէն, քան և մէկ պէյ, կամ պուխաբայլ իշխանք, ոսկեայ ասպարօշներ դրած, և վերջաւորօք զարդարեալ և պաճուճեալ կարմիր մետաքսեայ դիմերազգեստներ հագած, յամրաքայլ յառաջեցին ։

Ա.յն տեղն թնդանօթին կրկին արձակուեցաւ ։ պատերին դուռը բացուելով՝ բոլոր հոն ներկայ եղողները ծունկի եկան, որովհետեւ Էմիրը պիտի գար ։

Վ.հհապետն անմիջապէս նստաւ, կամ մանաւանդ բազմոցին վրայ պառկեցաւ ։ Մուշաֆիֆեր խիստ աբանչելապէս հագուած էր, եւ իր մեծ զգեստն ոսկիւ և պատուական ակամբք կը փայլէին ։ Ձեռաց մէկին բարձրերէն միոյն վրայ կռթնցուց, մէւսովն ալ ոսկիէ գաւազանը բռնեց՝ զոր իւր ծառայներէն մին իրեն տուաւ՝ ծունկի գալով ։ Յետոյ նշան մ՚ըրաւ ։

Ա.յս նշանէն՝ Մերզա Մուհամմէտ գահին առջեւ շարուած պաշտօնակալաց խմբին մէջէն ելլելով՝ անդաստակին կէդրոնը գնաց ։ Իւր ետիոջ դիմաց հասնելով՝ ծունկի եկաւ, գետինը պագաւ, և յոտն կանգնելէն վերջն ալ՝ ձեռքերը կուրծքին վրայ դրաւ խաչաձեւ ։

Մուհամմէտ ուրախ և զուարթ էր, ամեն ինչ յաջողած էր իրեն համար ։ Ր.կ.ը՝ Մուհամմէտէն պղտոբուած և Էմիրէն ալ դատ առած, բոլորովին դիաֆէր երեսի վրայ թողած էր, խոստացած ալ էր որ դատաստանին ներկայ չը գտնուի ։ Ա.սիկա Մուհամմէտին գործն էր, որովհետեւ հասկցած էր գենպէեան որ երբեմն իւր պաշտպանութեան ներքեւ գտնուած մարդուն դատաստանին ներկայ չը գտնուի ։

Մուհամմէտ գիտեր որ Սէրոպէն սպասուած գէտերը եկած չէին, Հաճի — Յաֆէր Մերքելի Շեւէֆէն կին քը չուներ, միայն այս կը բաւէր զինքը՝ի մահ դատապարտելու, թէպէտ յաջողէր ալ իւր դէմ եղած ամբաստանութիւնները հերքելու և ինքզինք արդարացնելու ։ Բայց Մուհամմէտ խոհեմ էր և կրցած էր իւր թշնամին խիստ վարպետութեամբ լարուած որոգայթին մէջ ձգել, և չէր կարծեր որ անկէ կարենար ազատուիլ ։ Մուհամմէտ իւր վայրագ և անգութ ուրախութեանն չունել տուած էր գլխատութեան բեմը, որուն հաստատութիւն տուած էր նաև Էմիրն ալ ։

Սակայն, վերջին վայրկեանին, անակնկալելի խոչընդոտ մը ծագեցաւ ։ Մի և նոյն օրը խիվայի պատգամաւորութիւնն եկած էր դ.մինէ պահանջելու համար ։ Բայց Պարսիկը կը հսկէր շարունակ ։ առաջին անգամ ինք իմացաւ պատգամաւորութեան գալը, քաղաքին դռներէն դուրս պատգամաւորները դիմաւորելու գնաց, և պատիւներ ու կեղծաւորութիւններ ընելով՝ հաճեցուց զանոնք որ իրենց առաջարկութիւնը երկրորդ օրուան թողուն ։ Բատիկանութեան խորամանկ գլխաւորը պատգամաւորայ դործն ետ ձգեց ։ Բայց որպէս զի թէ՛ ինք և թէ՛ իւր տէրը պատասխանատուութենէ ազատ ըլլան, ըսաւ՝ որ հիմա Պուխարայի մէջ ծանրակշիռ դէպքեր պատահած են ։

— Տեա՛ր, ըսաւ պատգամաւորայ, ցաւալի դործ ը՛մը կայ՝ որ այսօր պիտի լսենայ. Հարկ չըկայ այս դործը

ձեղի իմացնելու , որպէս դի դուք ալ չը՛տխրիք . ապաս-
ցեք որ այս գործը լլինայ , և այնուհետև տիրոջս
ներկայացեք :

Պատգամաւորները՝ որք շատ անգամ ծեր կ՚ըլլան ,
ճանապարհութենէ յոգնած , և Պուխարայի էմիրին դո-
ծոց համար ալ հոգ չընող , մեծ դժուարութեամբ հա-
ւանեցան իրենց լանդիրն օր մը հոս ձգելու :

Հաճի—Սաֆէր՝ այն պատգամաւորաց և ոչ միոյն
գալը չը տեսնելով՝ դատաստանին նախորդ իրիկունը
յոյսը բոլորովին կորուսած էր , և մահուան կը պատ-
րաստուէր : Մուհամմէտ այնչափ լաւ նախապատրաս-
տութիւն ըրած էր՝ որ Հաճի—Սաֆէր և ոչ մէկուն հետ
կրցած էր հաղորդակցիլ , մինչև անգամ պատգամա-
ւորաց գալն ալ կ՚անգիտանայր : Միայն էմիրին պալա-
տէն երթալու միջոցին՝ իւր պահապան թիւրքմէննե-
րէն մին՝ ծպտուկեան ձևով ըսաւ իրեն .

— Խիվայի պատգամաւորութիւնն այս առաւօտ ե-
կաւ , չը՞ս գիտեր : կը կարծէիր՝ որ պատգամաւորու-
թիւնը քու առջև չնորհք և պատիւ պիտի գտնէր :

Սաֆէր՝ ըղձ պատգամաւորութիւնն այլ ևս չէր կըր-
նար աղատել , որովհետև սրբապղծութեան ամբաստա-
նութիւնը դէպքին էր ապացուցուիլը , քանի որ հաճոյքը
վրան չէր , ձեռքով անտարբերութեան նշան մ՚ըրած
էր :

Սաֆէր՝ պալատին մէջ բանտն եղած միջոցին , յան-
կարծ էմինէին գաղափարը մտաց մէջ բերաւ : Ո՞վ գի-
տէ՝ թէ էմիրը զէմինէ ալ մեռցնելու փորձ պիտի չը
փորձէը : Եթէ Սաֆէր մեռնէր , գոնե էմինէին կեան-
քը պիտի ազատէր :

— Ընկե՛ր , ըսաւ Հաճի , զինքը պահպանող հեծեալ-
ներէն միոյն , վերջին չնորհք մ՚ալ ըրէ՛ ինձի : Մէկը
ղրկէ խիվայի պատգամաւորաց՝ զանոնք աղաչելու հա-
մար՝ որ գան դատաստանիս ներկայ գտնուին :

— Ինչո՞ւս է , պատասխանեց Թիւրքմէնը դա-

նութեամբ : Այս իրիկուն մեր կրնկիք ամբողջ շատ մեծ
է : Ո՞վ չը գիտեր Պուխարայի մէջ՝ թէ այսօր Թիւրք-
մէնաց Սէրտարը պիտի դատուի :

— Պատգամաւորաց չը գիտնալը՝ քիչ մեղացս օգուտ
է : Կ՚աղաչեմ , ընկե՛ր , այս վերջին չնորհքն ըրէ՛ ինձի :

Սէրտարն ձևն աղաչողական էր . թամխաւաճանը ու-
սերը թօթուելով՝ պատասխանեց .

— Լա՛ւ :

Հրամայեց հեծեալներէն միոյն՝ որ երթայ խիվայի
պատգամաւորաց իմացունէ : Հաճի—Սաֆէր դլխով չը-
նորհակալ եղաւ Թիւրքմէնին , և այնուհետև բացար-
ձակ լռութիւն պահեց , այնպէս որ բերանը մինակ դա-
տաւորաց առջև բացաւ :

Մուհամմէտ ուրախութեան մէջ էր , և դոհ սրտիւ
իւր տիրոջ հրամաններուն կ՚սպասէր :

— Մուհամմէ՛տ , հարցուց էմիրը , ամբաստանեալը
մեր հաճոյից և կամքին կ՚սպասէ՞ :

— Այ՛ , տէ՛ր արքայ :

— Թո՛ղ հոս բերեն :

Գլխաւոր դուռը բացուեցաւ . Թիւրքմէնք՝ զինեալ
յոտից մինչև ցգլուխ , աղմուկով ներս մտան՝ սէրտարն
բռնած վրայ արհամարհոտ հայեցուածք արձակելով , և
տախտակամածին առջև կարգաւ չարուեցան . Սէրտարը ,
անդին , անոնց մէջ տեղն էր : Հաճի—Սաֆէր՝ Մու-
ջաֆիֆէրի վրայ նայեցաւ դժնեայ դիմօք , որով զայրա-
ցաւ կատաղի էմիրը :

— Սէրտարը մեր առջև երբև ամբաստանեալ չը դար ,
ըսաւ էմիրը . Թիւրքմէնք ասա՞նկ խօսք տուին մեզի :

— Ժողովն որոշեց՝ որ մենք ալ դատաւոր պիտի ըլ-
լանք , և եթէ Սէրտարը յանցաւոր գտնուի , այն ատեն
միայն զանկիա քեզի պիտի յանձնենք , պատասխանեց
ժողովոյն նախագահը , որ Թիւրքմէնաց հետ եկած էր :
Քեզի ասկէ աւելի բան մը չը խոստացանք :

Մուջաֆիֆէր՝ կատաղութենէն ինքզինք ուտելով՝

ըսաւ .

— Լա՛ւ , դուք ալ պիտի դառէք : Մուհամմէ՛տ , դատաստանական ժողովոյն լմնցուր այն մեծ յանցանքները՝ որոց համար մենք այս մարդը կ՚ամբաստանենք :

Մուհամմէտ՝ յառաջելով ըսաւ .

— Տէ՛ր արքայ , Ֆլաւիանէ , և դուք , ազնուական թիւրքմէններ . . . . :

Մօրուքը շոյելով՝ խօսքը շարունակեց .

— Յանուն Նորին վեհափառութեան , Էմիրի , կամ բաստանեմ Հաճի—Սաֆիէր , Թիւրքմէնաց Սէրտարը , վեհափառ տիրոջս ազատն ինոջ , Խիվայի իշխանուհւոյն հետ անարժան և անվայել յարաբերութիւններ ունենալուն համար . կ՚ամբաստանեմ Սէրտարը՝ արբասպծութեան յանցանօք : Դատաւո՛րք , լսեցէ՛ք : Էմինէ իշխանուհին , Էլ—Ումրա Էմիրին աղջիկը , զոր մեր իշխանն իրեն կնութեան ուզած է , բարեպաշտ երէսէն յանձնառած էր : Սէրտարը հանարձակած է այս յարդելի ծերունւոյն բնակարանը պղծելու , իշխանուհւոյն հետ մերձաւոր յարաբերութիւններ ընելով : Կ՚երդնում որ բաւական կրնամ ապացուցանել . հիմա կը պահանջեմ որ ամբաստանեալը մահուան դատապարտուի :

— Սէրտա՛ր , հարցուց Մուղաֆիֆէր , այս ամբաստանութեան պատասխանելու բան մ՚ունի՞ս :

Հաճի—Սաֆիէր՝ արհամարհանօք ծիծաղելով՝ պատասխանեց .

— Ո՛չ ինչ : Եթէ կ՚ուզես՝ դիս մեղցուր : Գերութիւն ամբաստանութեան մէջ խօսք մը կայ՝ որուն պիտի պատասխանեմ : Խիվայի իշխանուհին քու կինդ պիտի չըլլայ : Էլ—Ումրա Էմիրն , իւր հայրը , իշխան մը՝ զոր կը յարդեմ և կը պատուեմ , բնաւ պիտի չը հաճի՝ իւր աղջիկը քեզի պէս արիւնկզակ բռնաւորի մը ընծայել : Պատուամաւորութիւնը , զոր սարսափելի ատելօսութիւններովդ հեռացուցած ես ասկէ , բաւած խօսքերս պիտի հաստատէ , և քու դործերիդ խիստ մեծ հա-

չիւ պիտի պահանջէ : Ես արդէն մեռած և թշնամութեանդ զոհ դացած պիտի ըլլամ : Բայց զարհուրէ՛ , բռնաւո՛ր , պատիժդ մօտ է :

Մուղաֆիֆէր՝ ուսերը թօթուելով՝ ըսաւ .

— Ցանցաւորը պատասխանը կը նախատէ . էհ , այս ալ ըսա պատշաճի է . Ո՛չ , Սէրտա՛ր , զքեզ չեմ նախատեր , այլ կը պատժեմ , և հիմա պիտի ապացուցանեմ՝ որ կը սուտ . Պատուամաւորութիւնը հոս է , և եթէ բանան եղող և քեզի պէս ամբաստանուած Խիվայի իշխանուհին ինձմէ պահանջելու եկած ըլլար՝ պիտի պահանջէր . Բէյ-էն բնակարանը պղծած ես , և իշխանուհին , ենթադրելով որ կնութեան պիտի չառնում , ըզքեզ պիտի չընդունէր : Կը խոստովանիս՝ թէ զանիկա տեսած ես , այնպէս չէ՞ :

— Այրդէն քեզի ըսած եմ , իրաւունք ունէի ,

Բաղմութիւնը սկսաւ քրթմնջել՝ տհաճութեան նշանները ընելով :

— Այրդո՛ք սուտը ի՞նչ պատիժ սալ կ՚ուզէ Սէրտարէն , հարցուց Մուղաֆիֆէր :

— Մա՛հ , պատասխանեցին Ֆլաւիանէը :

— Մա՛հ , կրկնեցին պէյերը :

— Մա՛հ , քրթմնջեցին թիւրքմէնք :

Սաֆիէր անշարժ էր : Մուհամմէտ խօսքը շարունակեց .

— Այս յանցանքը բաւական չէ համարած . Աստուծոյ և Մարդարէին հանդերութիւնն ալ հատցունել ուզած է : Երդմնադո՞ղ և մատնի՛չ , մեր հայրենեաց և կրօնքին թշնամի Ռուսաց հետ մերձաւոր յարաբերութիւններ հաստատած է :

— Աւելի քու տէրդ մատնութեան յանցանօք պիտի ամբաստանես , պատասխանեց Սաֆիէր : Մեր խաբուած ընկերներդը օր մ՚ասիկա ձեզի պիտի խմցունեն :

Մուղաֆիֆէր ոտքի վրայ ելլելով՝ աղաղակեց .

— Շո՛ւն , կը համարձակի՞ն . . . . . :

Հաճի — Սաֆէր՝ Մուշաֆֆէրի խօսքն ընդմիջելով՝ պատասխանեց.

— Կը համարձակիմ. . . . . : Ցեռանենք, պարո՛ն կե՛շա Մուհամմէտ, առաւելն ի՞նչ բանով դիս կ՚ամո՛ բաստանես:

— Սրբապղծութեա՛ն յանցանօք, դոչեց Մուհամմէտ, լի ցասմամբ: Օր մը մեզի Մեքքեի չէրիֆէն կինքը ցցուցիր, և ամենքնիս ալ, մեր աչքն ալ միասեղ, այն նուիրական նշանին առջև խոնարհեցանք: Հիմա որ դու այսչափ յանցանքի համար մահուան դատապարտուած ես, կրնաս ինքզինքդ ազատել, որովհետև աչ ոք պիտի համարձակի խալամութեան գլխաւորին պատագանուած մը ըզդուն դպչելու: Թո՛ղ Հաճի — Սաֆէր, Թիւրքմէնաց Սէրոորը, Նաքշպէնտիներուն ղէնտասաւորը, Մեքքեի չէրիֆէն սիրելի և հատատարիմ ծառան, իւր տիրոջ կինքը՝ մեզի ցցունել, և ամենքնիս ալ իւր առջև պիտի խոնարհինք, ինչպէս կը խոնարհինք էմիրին առջև:

Սաֆէր պատասխանել չուզեց.

— Լռութիւնդ՝ դատապարտութիւնդ է: Համարձակեցար ամենքն ալ խաբել՝ մեր կրօնքը՝ հայհոյելով: Դատաւորնե՛ր և դպրա՛ն, այս մարդն ի՞նչ պատիժ կ՚արժանանայ:

— Մահուա՛ն, պատասխանեցին միաբերան բոլոր դատաւորները:

Մուշաֆֆէր՝ դատաստանը շարժելով՝ հարցուց.

— Թիւրքմէ՛նք, յանցաւոր կը ճանչնա՞ք ձեր Սէրոորը, և դանիկա մեր արդարութեան կը յանձնե՞ք:

Ամէն առեն նախադահը յառաջ գալով՝ ըսաւ.

— Սէրոորը ձեզի կը յանձնենք, կուրանանք և կանիծանենք զինքը:

Նախագահը՝ գեաւրը թքնելով՝ նշան մ՚ըրաւ: Թիւրքմէնք Հաճի — Սաֆէրի գլուխն հեռացան:

Ամենէն ծեր դպրան ոտքի վրայ ելլելով՝ ըսաւ.

— Միրզա — Մուհամմէտ՝ Պուխարայի աղնուական էմիրին գահուն առջև երած ամբաստանութեան վրայ՝ մենք, որ բարձրագոյն առեան կազմեցինք այս տուրքս տեղւոյն մէջ՝ Հաճի — Սաֆէր, Թիւրքմէնաց Սէրոորը դատելու համար, յանցաւոր կը ճանչնանք զինքը՝ մատնութեան, չնութեան և արբագործութեան յանցանօք, և խոնարհաբար կ՚աղաչենք մեր էֆէրը, Թագաւորն և էմիրը՝ որ իսլամին օրէնքը գործադրէ անոր վրայ:

Մուշաֆֆէր ոտքի վրայ ելլելով՝ ըսաւ.

— Օրէնքն ամենայն խստութեամբ պիտի գործադրեմ: Ուրեմն կը հրամայեմ՝ որ Հաճի — Սաֆէրի աչքերը վորուին՝ իբրև չնացող, լեզուն կտրուի՝ իբրև մատնիչ, իբրև արբագործ ալ ցկեցը հանուի, և իւր մարմինը՝ ամբողջ մեկ ամիս՝ ի տես բոլոր ժողովրդեան դրան. . . . . կը հրամայեմ:

Ծեր դպրան Սաֆէրին հարցուց.

— Ձքեզ հարուածող դատաստանը արդար կը ճանչնա՞ս, և առարկելու բան մ՚ունի՞ս:

Սաֆէր երբէք խռոված չէր՝ զարհուրելի վճիռը լսած առեն. կարծես, իրեն առջև անցած դէպքերէն և ոչ մեկը կը դիտեր. միայն երբեմն երբեմն գրան կողմը կը նայէր: Մուշաֆ իւր հարցումը կրկնեց.

Հաճի — Սաֆէր վեհ դէմքով ըսաւ.

— Պատասխանելու և առարկելու բան մը չունիմ. Աստուած և Մարգարէն մեզ երկուքս ալ պիտի դատեն, Մուշաֆֆէ՛ր: Իսկ դու, Մուհամմէ՛տ, դեռ կրնամ գլուխդ կտրել տալ, բայց չեմ ուզեր քեզի պես գեաւռ և անարդ գերիին վրէժ պահանջել: Մուհամմէ՛տ, կը ներեմ և կեանքդ կը շնորհեմ քեզի: Էմի՛ր, դահիճներուդ հրամայեմ:

Էմիրին մեկ նշանէն, սէրոաճները զՀաճի շրջապատեցին և ուզեցին զինքը չարչարելու տանիլ: Բայց Հաճի իշխանական ձևով և շարժմամբ զանոնք իրմէ հեռա-

ցուց, և դվխատուխեան բեմին կողմը դնաց՝ ըսելով.

— Մուշաֆֆէր, կը կարծես՝ թէ ես ինքնիրենս մահուան երթալ չեմ դիտեր։

Քաջասրտութիւնը միշտ թափառականներուն բնութեանց վրայ անբաւ ազատութիւն կ'ընէ. անդաստակին մէկ անկիւնը հաւաքուած թիւրքմէնք էֆին վերջին խօսքին հաւանելու ձայներ հանեցին։ Թերեւս Մուշաֆֆէր՝ էֆին կապել և քաշկըռտելով դվխատուխեան բեմը հանել ուզած էր, բայց չըհամարձակեցաւ։ Էֆի — Սաֆէր՝ յուրտ, հանդարտ և անվրկիւղ, հպարտ հայեցուածք մը ձգելով բազմութեան վրայ, դվխատուխեան բեմին եղաւ ոչխարընթերն չըջապատեալ։

Էն, դահճին ուսին զարնելով՝ ըսաւ անոր.

— Բարեկամ, ահա ես եկայ։

Բայց, յափշտակութիւն ամենուն, դահիճը՝ որ մինչեւ այն ատեն երեսը հրապարակին վրայ դարձուցած էր, յանկարծ ետ դարձաւ և էֆիին ոտքն խնկաւ։

Մի և նոյն միջոցին, պարապապատ անդաստակին դուռը բացուելով, ըէնը ներս մտաւ։ Իրեն ետեւ, հին դանուողները դառնէն տեսան՝ որ արտաքին հրապարակը թիւրքմէն նիզակներով լեցուն էր։

Մուշաֆֆէր բազմոցին վրայ կանգնած էր. Մուհամմէտ՝ երկիւղէն դեղնած, դեպ 'ի դրան կողմը կ'երթար. աննկարագրելի աղմուկ մը կը տիրէր թիւրքմէնաց խումբին մէջ, որք անդաստակին կեդրոնին կը մօտենային։ Դահիճը էֆի — Սաֆէրի ոտքերը կը դրկէր և կը պադնէր։

ԻԵ.

Ա Զ Ա Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ազատութեան, էսպիէ՝ ծանրատաղտուկ և ջնասաստկար ճանապարհորդութեան մը չատ օրերէն վերջը՝ Պուխարայի դիմաց հասած էր։ Էն գերին նստաւ և սկսաւ մտածել։ Իր տիրոջ վիճակն և Մուհամմէտի դէմ վրէժխնդրութիւնն իրմէ կախումն ունէին, որով հետեւ ըէնջէն կինքը վրան էր։ Ո՛չ ենթադրեր, այն ալ ոչ առանց իրաւանց, որ Մուհամմէտի առաջին գործը պիտի ըլլայ՝ հաշտելը ձեռք անցուներէն վերջը, անտանելի վկայէ մը ինքզինք ազատել։ Էսպիէ իր ծայրագաղ եղած ձեռքին վրայ նայելով, իր օրհնի մէջ՝ ոստիկանութեան դվխատուրին դէմ ոստոխ ատելութիւն մը զգաց։ Ուրիշ կերպ մը կար, և գերին հաստատութեամբ այս կերպն ընտրեց։ Միտքը դրաւ՝ որ ամեն բան Սէրուէն խոստովանի և ինքզինք նորա պաշտպանութեան տակ դնէ։

— Չես պիտի մեռցունէ՞, ըսաւ ինքնիրեն, դեպ 'ի թիւրքմէնաց բանակին կողմը գացած ատեն, ըրածիս

հատուցումը պիտի դանեմ, բայց դոնէ առանց վրէժխնդրութեան պիտի չը մեռնիմ։

Հապիպ բանակին մէջ Հաճիին ձերբակալութիւնն և դատաստանն իմացաւ. այն առեն մտածեց՝ որ իւր ազատելու համար՝ ամեն միջոց՝ ի գործ դնէ։

— Ընկե՛րք, ըսաւ, ինքը շրջապատող Թիւրքմենայ, վրաս Սէրոբը ազատելու և իւր ամբաստանողները ամօթահար ընելու բան մ՚ունիմ. ինձի պիտի չօգնէ՞ք։

Թափառականք յոյժ կը սիրէին զՀաճի — Սաֆէր, անոր համար օգնելու խօսք տուին։ Որովհետեւ Հապիպ լաւ գիտէր՝ որ Մուհամմէտ զինքն իւր ընթացքին մէջ պիտի արդիլէր, եթէ ուրիշներու հետ ընկերացած չըլլար, ուստի ամբողջ Թիւրքմէնաց բանակը ոտք հանեց և հաղար թափառականօք Պուխարա մտաւ։ Քաղաքն անապատացեալ էր. բոլոր բնակիչները պալատը կամ հրապարակին վրայ էին. Միայն քանի մը ծերեր և տըղայքներ, այս վայրենեաց անցած առեն վախնալով տուներնին կը քաշուէին. դուռնդը քաղաքին մէջէն անցնելով՝ Մեծ — Մզկիթին հրապարակին վրայ չարուեցաւ, բէյ-ին պարտիզին դիմաց։ Հապիպ Ի-լխանէրուան դլխաւորին դրանը զարկաւ. իւր ընկերները դուրսը սպասեցին. շէյխին կինքը դերսոյն առջեւ բոլոր դռները բացաւ։

Հապիպ բէյ-ին ներկայանալով՝ Մուհամմէտի մատնութիւնն և Էմիրին գաղտնի խորհրդակցութիւնները պատմեց ծերին. աղաչեց զբէյ-ն՝ որ դրպարտեալ և մատնեալ Սէրոբին օգնութեան գայ։

Սէ-ննէ դէնկեաը՝ շէյխ (1) պարսիկը կ՚արհամարհէր. առուդութիւնն իմացաւ, յակամայից հաճած էր զՍաֆէր երեսի վրայ թողլոյ, որուն երկիւղածութիւնն և քաղ-

(1) Սէ-ննէ եւ շէյխ՝ մահմմէտական կրօնքին հակառակ երկու աղանդ են։

րութիւնը շատ անգամ զբէյ-ն զարմացուցած էին։ Հապիպ պէտք չունեցաւ շէյխին կնքոյն դիմելու՝ համոզելու համար զբէյ-ն՝ որ իրեն օգնէ։ Ի-լխանէրուան դլխաւորը վշտացեալ՝ Մուհամմէտի խորհրդոյ ծառայելուն վրայ, ուզեց պալատը վաղել և դատաստանին հակառակիլ բայց Հապիպ մտքէն անցուց՝ որ խիստ մեծ աճապարանք մը կրնայ՝ ըստ պարագայից և առելութեան էմիրին, Հաճիին չահուց վնասել. ուստի ծրագիրը մ՚առաջարկեց բէյ-ն, սա՛ ալ առանց յապաղելու ընդունեց։ Ա.հաւասիկ թէ ծրագիրն ինչ բանի վրայ կը կայանար։

Կեդրոնական Ասիոյ մէջ՝ ուր օրէնքը միայն մահ կը հրամայէ, իւրաքանչիւր քաղաք չատ դահիճներ ունի։ Դահճի պաշտօնը կամ արհեստը միայն մէկ մարդու յատուկ չէ. ամեն մարդ կրնայ դատաւոր և կամ դահիճ ըլլալ. մահապարտին թշնամին, կամ վնասպահտին շորքորթը, կամ պարզապէս իւր ձեռքը վարժեցունել ուզողը կրնայ դահճութիւն ընել, բաւական է որ վարձ չը պահանջէ։

Սէրոբին համար որոշուած դահիճը անունցմէ էր՝ որք քաղաքին մէջ վարձով դահճութիւն կ՚ընէին, և հետեւաբար իւր գործոյն դժուարութեան համեմատ վարձք պիտի առնէր։

Հապիպ առաջարկեց բէյ-ն՝ որ այս պաշտօնը դրամով դնէ. դերին ածիլուած և Թիւրքմէնաց պէս հագուած և դլխարկ դրած էր, այնպէս որ ճանչցուիլն անկարելի էր. մէկ կողմանէ ալ, մեր ըսած պատճառներուն համար, դահիճն անձամբ ոչ էմիրէն և ոչ Մուհամմէտէն կրնար ճանչցուիլ։ Բէյ-ը մեծիկ դատմամբ մը տուաւ Հապիպին և խոստացաւ՝ որ Սէրոբին դլխատութեան բեմն եղած միջոցին՝ հոն դայ։ Յետոյ Հապիպ՝ բէյ-ին քովէն մեկնելով՝ Թիւրքմէնաց քով եկաւ. իւր յոյսերուն իրականանն անոնց պատմեց, և քովերնէն հեռացաւ՝ պատուիրելով որ արտաքին հրապարակը կենան՝ որպէս դի որ և է պէտքի պատրաստ ըլլան։

բազմութիւնը չատուր էր և դատաւորաց կ'սպասէր, երբ Հապիպ գահճին քով եկաւ, որ գլխատութեան բեմն ելլելու վրայ էր։ Խօսակցութիւննին երկայն չը տեւեց։ Հապիպ այնպես մը ձեւացուց՝ որպէս թէ Սէրոբէ դէմ խիստ տեսլութիւն ունի՝ անոր դործած մեկ անարդարութեան համար. խնդրեց գահճէն՝ որ բարեհաճի իւր պաշտօնն իրեն յանձնել. գահիճը դիւրաւ համաձուեցաւ եւ հարիւր թումանով՝ իւր պաշտօնն եւ դործը Սէրոբէն գերեզման յանձնեց։

Ուրեմն Հապիպ կը պատներ Հաճիէին ոտքերը։ Սաֆիէը վեհ եւ հպարտ կերպով աղաղակեց.

— Մուհամմէտ, ըսիր որ Մէքքէի ընտիրն կնիքն ուղղողին առջեւ պիտի խոնարհիմ. ուրեմն խոնարհէ՛ առջեւս, որովհետեւ ահա ընտիրն կնիքը։

Ոսկիէ զգաստրանը բարձրացուց՝ ղոր դերձին իրեն տուած էր, անոր փայլունութիւնը ներկայ եղողներուն աչքին մէջ թափանցեց։

Թիւրքմէնք գլխատութեան բեմին մօտեցած և «երոպէները, ֆելաներէը և պէյերը խոնարհած էին։ Մինակ Մուրաֆիէը, տեսնելով իւր խորհրդոց ոչընչանալը, ինքզինք չկրնալ չը խոստովանեցաւ. աչքով Մուհամմէտը վնասուհց՝ անոր բան մը հրամայելու համար, բայց ասիկա աներեւութացած էր։ Ուսերը ծռելով՝ ելլելու դրան կողմը կ'երթար։ Մուրաֆիէրի կատաղութիւնը չափ չունէր։ Իւր հպարտութեան և բռնապետութեան ամենէն բարձր աստիճանը հասած և իւր սիրելիէն ալ երեսի վրայ թողուած, կռիւը շարունակել ուզեց։

— Սէրո՛բ, ըսաւ, չը բաւեր որ յանցանքներդ կը ծանքին վերարկուովը ծածկես։ Ցակաւին չնութեան և մատնութեան ամբաստանութիւններէն ազատ չես։

— Մուրաֆիէ՛ր, աղաղակեց Սէրոբը, դո՞ւ ես մատնութեան վրայ խօսողը. պիտի լսենաս՝ թէ ինչպէս Աստուած մատնիչները կը պատժէ..... ընկե՛ր, ըսաւ, գլխատութեան բեմին շուրջը կեցող

թիւրքմէնաց, ահաւասիկ ընձի Սմրղանտէն եկած դիր մը, մատիկ ըրէ՛ք։

Մուրաֆիէը՝ կատաղութենէն այլ յայլմէ եղած «երոպէները պօռաց.

— Սպաննեցէ՛ք այդ մարդը, սպաննեցէ՛ք։

Բայց թիւրքմէնք ղէն չի ձեռին պատրաստ կեցած էին. «երոպէները՝ ղարհուրած և սարսափած, գլխատութեան բեմին կը մօտենային, առանց կարենալ կատարելու էմիրին հրամանները։

Հաճի—Սաֆիէը բացաւ դիրը՝ ղոր Հապիպ զբաղրամին հետ իրեն տուած էր։

— Մատիկ ըրէ՛ք, աղաղակեց որոտման ձայնով մը, ահաւասիկ ընձի Սմրղանտէն դրուածը.

«Խաղաղութիւն եղած է Փուխարայի էմիրին հետ, և էմիրը կը խոստանայ Էօզպէքաց և Թիւրքմէնաց վաճառական դունդերը առեղծին ղրկել։ Հետեւաբար, եթէ էմիրին՝ այս մասին հրատարակելիք հրամանը՝ վաճառականներէն անարդուի, որք պարտաւորեալ են իւր երկրին հետ առնելու, Մուրաֆիէր մեղի հետ միանալով պիտի դործէ։ Ահաւասիկ ճշմարտութիւնը, սիրելի՛ բարեկամ, ձեղի կ'իմացնեմ, որովհետեւ վաղը ասիկա և ոչ մեկուն համար դաղանիք պիտի ըլլայ, և խաղաղութեան դաշնադիրը քաղաքին մէջ պիտի կարդացուի։

«Այն՝ որ ձեղի յաւիտենական բարեկամութիւն ախտած է»։

Ստորագրութիւնը՝ Սմրղանտի Ռուս երեւելի պաշտօնակալաց մեկուն է։

— Սպաննեցէ՛ք, սպաննեցէ՛ք այդ մարդը, կը սաէ, դոչեց Մուրաֆիէը, որ տախտակամածին վրայէն վար նետուեցաւ «երոպէները մէջ դալու համար։

— Մեղի դէմ մատնութիւն, Թիւրքմէնք, աղաղակեց մտնելու դրան ամենէն մօտ եղող թափառականը։

Թիւրքմէնք բռնի դուռը բանալով՝ մէկ ակնթար-
թի մէջ անդաստակը լեցուեցան, որոց ամենուն աչ-
քէն ալ կատաղի բարկութեան նշոյլներ կը ցայտէին.
սերոպէները դեռին տապալելէ և ղէնքերնին վար ձգել
տալէ վերջը՝ Էմիրը, պէյերն և ֆլաշները չրջապատեցին:
Մուհամմէտ՝ որ արդէն մինչև դուռը գացած էր,
թափառականաց պատահելով՝ ոտից կոխան ըրին զա-
նիկա, և քաշկըռտելով՝ մինչև պարհուրած Էմիրին
քով բերին:

Այն առեն Հաճի—Սաֆեր դվխաւութեան բեմէն
իջնալով՝ իրեններուն քով եկաւ և Էմիրին ըսաւ.

— Մուղաֆիֆեր, ո՞ւր է հիմայ գահդ: Ձեռքիս
մէկ նշանով, կրնամ դլուխդ կտրել տալ այն դվխաւու-
թեան բեմին վրայ՝ զոր ինձի համար որոշած էիր, բայց
պիտի չընեմ: Բնաւ ձեռքս պիտի չը դպչի այն մար-
դուն՝ որոյ դվխուն վրայ Աստուած թագ մը դրած է:
Յարգելի ընծը դոյութիւնդ կը պահպանէ: Ուրեմն,
Մուղաֆիֆէր, կը ներեմ քեզի, և կը թողում դքեզ
այն պատժոյն՝ զոր երկինք քու յանցանացդ կը պահէ:
Տղայք, Խիվայի իշխանուհին առնենք, որ ականջ հաս
կ'ապասէ, և այս անհնազանդ քաղաքէն մեկնինք, ա-
ռից ամաններնուս փոշին թօթափելով:

Այս միջոցին մէկը պօռաց.

— Տէր, տէր Խիվայի պատգամաւորութեան:

Թիւրքմէնք կարգաւ շարուեցան և պատգամա-
ւորները մինչև գահուն մօտը գնացին, ուր Մուղաֆ-
ֆէր ամօթահար և պարհուրած՝ նստած էր:

— Պուխարայի Էմիր, ըսաւ առաջնին պատգամա-
ւորը, էլ—Ուզբա Էմիրն իմ միջոցաւ քեզնէ Էմինէ իշ-
խանուհին, իւր աղջիկը կը պահանջէ, զոր Թիւրքմէ-
նաց Սերոպէն պաշտպանութեան յանձնած էր. հի-
մա զանիկա խիվա տանելու պաշտօնով եկած ենք հոս:

Այն առեն աղմուկ մ'ելաւ. Թիւրքմէնք վազեցին
և խորտակեցին այն տեղւոյն դուռը՝ ուր Էմինէ բան-

տարկուած էր, և յաղթական կերպով զանիկա Սերոպէն
բերին, որ՝ յարդանօք անոր առջև խոնարհելէն վերջը՝
ըսաւ.

— Խո՛ն՛ն, հայրդ դքեզ կը պահանջէ, և քիչ ա-
տենէն հօրդ քով պիտի ըլլաս:

— Աստուած միայն մեծ է, պատասխանեց Էմինէ,
իւր երկիւղածները կը պահպանէ:

— Ընկե՛րք, հրամայեց Սաֆե՛ր, եաւէս եկէ՛ք:

— Ներեցէ՛ք, ա՛ր, ըսաւ Հապիպ, այս տեղ ընե-
լու բան մ'ունիմ տակաւին. եթէ դու թշնամացդ կը
ներես, ես իմ վրէժխնդրութիւնս չեմ մոռնար:

Հապիպ՝ Մուհամմէտին բոլոր շարժուձեները դիտած
էր, որ երկրորդ անգամ դառնէն փախչելու փորձ կը-
փորձէր: Պարսիկը կը կարծէր՝ թէ այն աղմուկին և
խուովութեան մէջ ոչ ոք իրեն վրայ կը մտածէր. դերին
անոր բազկէն բռնելով՝ մինչև Մուղաֆիֆերի դահուն
առջև բերաւ:

— Շնորհք, դթութիւն, Հապի՛պ, կ'աղաչակէր
Մուհամմէտ:

Հապիպ՝ մէկ ձեռքով դՄուհամմէտ ծունկի վրայ
նստեցունելով՝ Էմիրին ըսաւ.

— Որովհետև Թիւրքմէնաց Սերոպէն վճռանձնու-
թիւնը՝ կեանքդ և թագդ քեզի կը թողու, տակաւին
կրնաս վարձատրել և պատժել: Գահուդ առջև կ'ամ-
բաստանեմ մեղապարտ դերիներէդ երկուքը . . . . .
Պիտի դատես և պատժես, Մուղաֆիֆե՛ր. դիս կը ճանչ-
նա՞ս:

— Ո՞վ ես դու, թօթօվեց Մուղաֆիֆեր:

— Ա՛հ, չե՛ս յիշեր, բռնաւո՛ր. ես կատաղութեա-
նըդ զոհ գնացողներէն եմ: Ես այն դերին իմ՝ որուն
ականջները կտրել հրամայեցիր . . . . կը տեսնես որ հը-
րամաններդ միշտ չեն կատարուիր,

Մուղաֆիֆեր՝ ոտնկանութեան դվխաւորին վրայ
դժնեայ հայեցուած մ' արձակեց:

— Այ՛, չարուճակեց՝ Հապիպ, այս հրամանը Մուհամմէտ դերուդ տուիր, բայց ասիկա այլ ևս առաջուան պէս մտանիչ չէ։ Յարգելի՛ բէյ, ասոր պատգոյցը Նորին վեհափառութեան տո՛ւր, որպէս զի իւր սիրտը զուարճանայ՝ իմ և Մուհամմէտի պատիժը հրամայելով։

Բէյը Սեբաստէն վրայ նայեցաւ։

— Այս որդը մոռցած էի, ըսաւ Հաճի — Յաֆէր, Հապիպ ինձի յիշեցուց. ուղածիդ պէս ըրէ՛։

— Աստուած մեղանչողները պատժել կը հրամայէ, ըսաւ բէյը խիստ ձայնով մը։ Տէ՛ր արքայ, ահաւասիկ Թուղթը։

Երբ Էմիրը՝ Իւլմանեբաշ դվխաւորին ձեռքէն ամբաստանող ընկալագիրն առնելով՝ կարդաց, րորբոքեցաւ բարկութենէն և կատղեցաւ։

— Գոհ պիտի ըլլաս, ըսաւ Հապիպին։ Թո՛ղ երկուքն ալ ցիցը հանուին։

— Սպասէ՛, Մուղաֆֆէ՛ր, ըսաւ Հաճի — Յաֆէր, ինչ որ կուզես, Մուհամմէտին ըրէ՛. բայց Հապիպ պաշտպանութեանս տակ է։

— Իշխանութեանդ ներքև եմ, մրմնաց Էմիրը, շրթունքները ոլմելով, նախատէ՛ դիս, հոգ չէ։

— Ջեմ նախատեր դքեզ, դերիս կը պաշտպանեմ, Հապի՛պ, յարեց, մեռեյի՛ր։ Կը ներեմ քեզի և դքեզ պաշտպանութեանս տակ կ՚առնեմ։ Եաևես դալ կուզե՞ս։

— Ո՛հ, տէ՛ր, միշտ և ամեն ուրեք, պատասխանեց Հապիպ, Հաճիին հանդերձին քղանցները պաղնելով։

Յաֆէր՝ Թիւրքմէնները պատերազմի կարգաւ շարելով, դէպ ՚ի դրան կողմը գնաց։ Դրան առջև երկրորդ անգամ յետս դառնալով՝ ըսաւ.

— Մնացէ՛ք բարեաւ, Մուղաֆֆէ՛ր. այլ ևս դիւրաւ պիտի չը տեսնենք. Աստուած քեզի ներէ։

— Աստուած դքեզ անիծէ, Յաֆէ՛ր, պատասխանեց Էմիրը։

Յաֆէր առանց ետ նայելու՝ պատգամաւորներուն և Թիւրքմէնաց հետ, Էմինէ ալ միատեղ, անդաստակէն ելաւ և քաղաքին դրանց կողմն ուղղեցաւ։

Մուհամմէտի չարչարանքն երկու օր տեւեց։ Էմիրը նոր նոր խոշտանգանքներ հնարեց. այս տեսարանին ինքն ալ հանդիսատես եղաւ։ Էմիրը՝ թշուառին սրբատաճիկ և աղիողորմ աղաղակներուն կը պատասխաներ ծիծաղելով.

— Պօռա՛, պօռա՛, տակաւին այդ չարչարանքները քիչ են։

Պարսիկը կուզէր և կը խնդրէր՝ որ չուտով գինքը մեռցունեն. Էմիրը հրամայած էր գահճաց որ չարչարանքն երկարցունեն։ Մուհամմէտի մարմինը հրացեալ աքծանօք տանջած, աչքերը փորած, լեզուն կտրած և ոտքերն այրած էին։ Ա՛յս վիճակին մէջ հոր մը իջեցուցին, ուր՝ անընդարատ րջելի ցաւերով չարչարուելով՝ տասն եւ հինգ օրէն վերջը մեռաւ։

Մուհամմէտին մեռած օրը՝ Հաճի-Յաֆէր իր հրաժեշտի ողջոյնները կուտար Թիւրքմէնաց, որք իրենց տեղերը պիտի դառնային։ Սեբաստ իւր ընկերները խաբած չէր, ՚ի նպաստ Ռըլիեֆի՝ իւր միջամտութիւնը խոստովանած էր։

— Կը մեկնիմ ձեղնէ, ընկե՛րք, կ՚ըսէր, որովհետև ինձմէ կասկածած էք, և իրարու վրայ վստահութիւն չունինք։ Մեծ քաղաքներու մէջ բնակած եմ և ձեր հասկցածին պէս չեմ հասինար կեանք ըսուած բանը։ Թերեւս ձեր հասինալուն կերպն աղեկ է, բայց բնաւ մարդիկ նպատակներնին չեն փոխեր. Մնացէ՛ք բարեաւ։

— Իրաւունք ունիս, պատասխանեց ծեր նախագահը։ Այլ եւս դիւրաւ չենք հասինար։ Մենք անապատին մէջ, Աստուծոյ աչքին եւ Մարգարէին ձեռքին տակ կ՚ապրինք։ Ձեր խորագիտութիւններն եւ ճարտարութիւնները մեզի անհաճոյ կ՚երեւէին եւ կը զարհուրեցունէին

ղմեղ ։ Երթա՛ս բարեաւ , Սաֆիէ՛ր ։ Թիւրքմէնք միշտ ղքեղ պիտի յիշեն ։

Մուհամմէտ Ալիի կիսկատար մնացած ապարանքին և Ֆուատ Բաշայի պարտէզներուն մէջ տեղ , վրա վորի ասիական եղերքը , պարտիզի մը մէջ հոյակապ առուն մը կայ , որուն մէջ հարուստ մահմետական մը կը բնակի . այս մարդն Օսմանցի չէ , ոչ ալ դիտցուած թէ ուսկից եկած է ։ Շատ բարիքներ կ'ընէ , որովհետև խիստ երկիւղած և բարեպաշտ է . Ստամպօլի բոլոր իմամները զինքը կը ճանչնան և շարունակ քովը կը յաճախեն ։ Կ'ըսուի՝ թէ ինքն ալ միշտ Շէխ — իւլ — իսլամին տեսութեան կ'երթայ և յարգանօք կ'ընդունուի ։

Այս հարուստ օտարականը դլխաւոր ծառայ մ'ունի , որուն ձեռաց բոլթերը կարուած են ։ Շրջակայ դիւղերուն բնակիչք լիստ լաւ կը ճանչնան այս ծառային , որ երբեմն նաւակով ծովուն վրայ պտըտելու կ'ելլէ ։ (հաճախ Սաֆիէրը և հոպիկ Ֆրոնը)։

ԳԼՈՒԽ ԻԶ։

ՈՐԼԻԷՖԻ ՄԱՀԸ

Պատերազմական ժողովը իւր վճիռը տուած էր։ Որլիէֆի յաջող լուսթիւն պահած էր տեղեկագրող ըզրապետին և դատաւորներուն առ ինքն ուղղած նպաստաւոր հարցմունքներուն ։

— Եթէ դիս յանցաւոր կը կարծէք , ըսած էր Որլիէֆ , դատապարտեցէ՛ք դիս , որովհետև բան մը չեմ կրնար ըսել ։

Ժողովը ամբաստանեալին դէմ մահուան դատակնիքը արձակած էր ։ Այս որոշումը Մօլթօֆին հաղորդուած ատեն՝ ուսերը թօթուելով՝ ըսաւ .

— Պարոնա՛յք , չէք կրցած լաւ դատել Որլիէֆ , այս դատապարտութիւնը դիս շատ կը վշտացունէ ։ Բանտը Որլիէֆին քով պիտի երթամ , և հետը քաղցրութեամբ վարուելով՝ պիտի համոզեմ և յորդորեմ զինքը՝ որ այս ցաւալի կրօղութիւնը լաւ մը ինձի բացատրէ ։ Չկրցի դատաստանը ոչնչացունել հիւանդի , որովհետև իւրեն ներկայ ատիպութիւնս ինձի զգաստակաց և դժուարին պիտի ըլլայ ։

— Մենք ալ կ'ուզեմք, սպարապե՛տ, պատասխանեց ժողովոյն նախադահը, որովհետև աչքերնիս արտասուօք լեցուեցան՝ երբ իրեն դէմ մահուան վճիռն արձակեցինք։

Սակայն, որովհետև օրէնքն անխոտորելի էր և պատերազմական ժողովոյն առած դատապարտութիւնը քան և չորս ժամէն վերջը պիտի կատարուէր, նախադահը հրամայեց՝ որ երկրորդ օրը՝ յերեկին, ղօրայ փոքրիկ դունդ մ'երթայ Թալարի—Թխմուրը՝ ուր դընդապետին մահը տեղի պիտի ունենար։ Այսկա [պարզապես ձև մ'էր, դի Սմբղանտի մէջ ամեն մարդ ալ գիտէր՝ որ դնդապետը հրացանի պիտի չը բռնուի։

Երկրորդ օրը ժամը տասնին, Մօլօթօֆ բանտը դընաց։ Հոն հանդարտ և դրեթէ ծիծաղերես տեսաւ Ռըլիեֆ։ Բանտարկեալը քնացած էր, և սպարապետին մտած ատեն ձեռքը դիրք մ' առած կը կարդար։

— Սիրելիս, աղաղակեց Մօլօթօֆ, անպիտանութիւն մի՛ ընէք, յիրաւի խիստ յամառ էք։ Գիտէք՝ որ ժողովը ձեզ մահուան դատապարտած է։

— Լա՛ւ, պատասխանեց Ռըլիեֆ տժգոյն ժպիտով մը, ի՞նչ կ'ուզէք, դիս հրացանի պիտի բռնեն։

—Խե՞նդ էք, կատարեալ խե՞նդ, կապկու խե՞նդ։

— Ո՛չ, կեանքէ ձանձրացած եմ, ասկէ զատ ուրիշ բան չունիմ։ Թշուառ չեմ, ո՛չ ո՛չ. այլ բանէ մ'ալ չեմ յուսար, բանէ մ'ալ չեմ վախնար. այս պայմաններով կեանքն անտանելի է։

— Ա՜հ, բարեկա՛մ, ընդվիզեց կառավարիչը, կ'երեւակայէք որ պարապ տեղը ձեզ հրացանի բռնելու կը թողո՞ւմ։

Ռըլիեֆ՝ նորա ձեռքը սեղմելով ըսաւ.

— Ձեմ դիտեր՝ թէ ինչպես պիտի արդիլէք ասիկա։

— Ի՞նչպէս. կը յուսամ որ լինձի, ձեր բարեկամին և նախկին սպարապետին ճշմարտութիւնը պիտի խոստովանիք, և . . . . .

Ռըլիեֆ՝ Մօլօթօֆին խօսքն ընդմիջելով հարցուց.

— Տեսնե՞նք, սպարապե՛տ, դիս յանցաւորը կը կարծէք պատճառ թէ թշնամւոյն հետ յարաբերութիւն ունենալուս համար։

— Ո՛չ, ո՛չ, հաղար անդամ ո՛չ։ Տարօրինակ և այլանդակ բան, դուք այն անբաւականերուն հետ յարաբերութիւն ունեցած ըլլաք . . . . . Բայց ի՞նչ որ է, ինչո՞ւ լինք դինքնիդ չէք արդարացուներ։

— կը կարծէ՞ք որ ուուս դնդապետին մտաւոյն վրայ ըրած խոստումը դրժէ, թէ և ատով կեանքն ալ աղատուի։

— Ուրեմն մեկուն ձեր պատուոյն վրայ երդուընցած էք։

— Այո՛, սպարապե՛տ, միայն այսչափ կրնամ քսել ձեղի. այլ ևս ուրիշ բան մի՛ հարցունէք լինձի։

— Ա՜հ, բայց ևս հոս ամենակարող եմ. ձեղի մեռցունել պիտի չը տամ։

— Սպարապե՛տ, այնպէս կ'երեւի՝ որ ձեր ունեցած իշխանութեան զօրութիւնով լինձի պիտի չը նեղէք։

— Բայց, սիրելի՛ս, ... թոթովեց Մօլօթօֆ։

— Ա՜հ, ատիկա չեմ կրնար ընդունիլ. ևս ինքզինքըս պիտի մեռցունեմ. միայն յանցաւորներուն կը նեղուին։

Ծեր սպարապետը սաստիկ յուզեալ ըլլալով՝ ըսաւ.

— Տեսնե՛նք, տեսնե՛նք, դնդապե՛տ, մի՛ բորբոքիր։ կրնամ իշխանութիւնս ղործածել, դատաստանը ոչնչացունել և կրկին քննել տալ և անմեղ հրատարակել ձեղ. ժողովը յանհայից ձեղ դատապարտած է և լինձի պիտի օդնէ. Բայց դուք ալ ձեր կողմանէ ի՞նչ յամառութիւն ընելով՝ ժողովոյն չէք ըսեր՝ թէ պատուոյս վրայ երդուընցած եմ մեկուն։ Հիմա, լիազօր իշխանութիւն ունենալովս հանդերձ՝ միայն վերջին վայրկեանին կրնամ միջամտել։

— Ինչո՞ւ այս՝ ամենը։

— Երկայն մի՛ ընէք. կ'երդնում ձեզի որ՝ եթէ չը հաճեցունէք ալ ինձ՝ ձեր դատաստանը կրկին քննել տալու, ալիսի ներեմ ձեզի. բայց յետոյ ղձեզ՝ տեսու- թենէ պիտի պահեմ՝ որպէս զի ոչ ոք կարենայ ղձեզ մեռցունել։

Ռըլիէֆ՝ ուժգին Մօլթօֆին ձեռքը սեղմելով ը- սաւ.

— Շատ կը յոդնիք կեանքս աղատելու համար։ Ալ ի՛նչ որ է, ուղածնուդ պէս ըրէք, անարդուիլ չեմ ու- զեր, և որովհետև ուղղամիտ մարդիկ անմեղութիւնս դիտեն, ուստի մահը ինծ չը զարհուրեցուներ։ Ուրեմն աւելի լաւ է որ ինծ հրացանի բռնեն։

— Է՛հ, ալ շատ մի՛ խօսիք, մեկն ալ պիտի չիմա- նայ այս եղելութիւնը. բեդրըպուրի անդամ պիտի չը տեղեկացուի. ձեր դատաստանը կրկին պիտի քննուի։ Եթէ կը վախնաքիք, ձեր պատուոյն վրայ երդուելնա- լով՝ բանտը կը մնաք. ղձեզ մահուան տեղը տանելու ձևը միայն ինձի համար կարևոր է, որովհետև եթէ առանց պատճառի վճիռը չընկեմ՝ իշխանութեան ղեղ- ծումն դործած պիտի ըլլամ. Բայց եթէ բացարձակա- պէս պահանջէք ասիկա, որովհետև ասկէ ուրիշ յար- մար առիթ պիտի չը դանեմ ղեղծումն դործելու. . . . .

— Ո՛չ, ո՛չ, սպարապե՛տ, ընդմիջեց Ռըլիէֆ յու- զեալ, ամեն բանի ալ պիտի հնազանդիմ, բան մը չեմ պահանջեր. Յոտնդիս, չեմ դիտեր՝ թէ ձեր առ իս ցցուցած բարութեանց ի՛նչպէս չնորհակալ ըլլամ.

— Մնացէ՛ք բարեաւ, սիրելի՛ս, ղմեզ ամենքս ալ կը վախցունէք։

Ծեր սպարապետն անդամ մ'ալ իւր նախկին օդ- նական — զօրապետը բաղկացը մէջ դրկեց և բանտէն դուրս ելաւ։

— Ո՛չ, կ'ըսեր ինքն իրեն ճամբան քալած ատեն, կարելի չէ որ ես այս մարդուն վրայ չը զարմանամ։

Ի՛նչ քաջութիւն և ի՛նչ վեհութիւն սրտի։ Եթէ կարե- նամ գինքը մահուանէ աղատել. . . . . եթէ ըրած չը- նորհքս, ներումն ուղեր, ո՛րչափ իրերը պիտի պար- զուէին. բայց չընդունիր և իրաւունք ալ ունի. Սակայն չեմ կրնար ալ մէկ դրչով ժողովոյն առած վճիռն և ա- րոչումը չնչել. ասիկա դէշ օրինակ կ'ըլլայ, մեկ մ'ալ որ իրաւունք ալ չունիմ ըստ նոր կանոնաց. . . . . Ո՛չ, չեմ կրնար. ասիկա իւր յամառութեան պատիժը պի- տի ըլլայ, որովհետև թաչքանտ պիտի գրեմ և դաղտ- նիքը ընդհանուր կառավարչէն պիտի իմանամ։

Մօլթօֆ պալատին սանդուղքէն վեր կ'ելլէր՝ երբ յանկարծ յիշեց որ Ռըլիէֆին բնակարանը խուզարկ- ուած միջոցին՝ նորա դրասեղանին դարաններուն մէջէն դտնուած թղթոց ծրար մը բերած էին իրեն, և տա- կաւին կարդացած չէր այն թուղթերը, որովհետև դէն- դապետին կատարեալ անմեղութեան համոզուած էր։

— Ա՛հ, ըսաւ ինքն իրեն, ի՛նչ լաւ կ'ըլլայ՝ երբ իւր դաղտնիքն այն թղթոց մէջ դտնեմ, [անմիջապէս իւր անմեղութիւնը կը հրատարակեմ. Այն թուղթերը կար- դալ պէտք է։

Սպարապետը չուտով սանդուղքէն վեր ելաւ՝ իւր դրասենեակն երթալու համար՝ ուր էին այն թուղթերը.

Մարթա սանդուղքին դլուխը կեցած՝ Մօլթօֆին կ'սպասէր։

Մարթա մեռելի պէս դեղնած էր, չղաձգական ցնցմամբ բոլոր իւր անդամները կը դողային։

— Ի՞նչ ըրիք, հարցուց Մօլթօֆին։

— Մարթա՛, արդէն ձեղի խօսք տուի որ Ռըլիէ- ֆին բան մը պիտի չը պատահի։ Թողէ՛ք որ արդարու- թիւնը պարտեացս հետ հաշտեցունեմ։

— Պարո՛ն, մարդու մը կեանքը չատ թեթև կը նը- կատէք։

Մօլթօֆ կոմսուհին ետ մղելով՝ ըսաւ.

— Ո՛հ, Մարթա՛, արդեօք այդ ձեր ընթացքն՝ ին-

ձի լ՚ինչ դաղափար կուտայ։

Ցանկարծ դրասենեակը մնաւ։

Պասալըքի Մարիային պէս դեղնած՝ հոն սպարա-պետին կ՚սպասէր։

Մօլօթօֆ՝ համբերութիւնը հատած, բարկութեամբ Պասալըքիին ըսաւ.

— Կը կարծէք՝ թէ խօսքիս վրայ հաստատուն չե՞մ մնար։ Ձեզի ըսի որ Ռըլիէֆին բան մը պիտի՚ չը պա-տահի։ Հիմա դիս մինակ թողէ՛ք.

Ժամը տասն և մէկն էր՝ երբ Մօլօթօֆ դրասեղա-նին առջև նստաւ և սկսաւ դնդապետին թուղթերը խառնել։ Թալարի — Թիմուրին մէջ ղօրաց վրքրիկ դունդը կարդաւ կը շարուէր, Ռըլիէֆ պալատը բերուած էր, ուր իւր մահուան ժամուն կ՚սպասէր՝ [պահապան զինուորաց մէկ սենեկին մէջ։

Կառավարիչն ուշադրութեամբ Ռըլիէֆին բնակա-րանէն գանուած նամակները կարդաց. վերջը ոտքի վրայ կանգնելով՝ ժամացոյցը նայեցաւ. ժամը տասն և մէկ ու կէսն էր։ Մօլօթօֆ փոխ — պաշտօնակալ մը կանչելով՝ հրամայեց.

— Գացէք զինուորական ծառայութեան օդնական — ղօրապետը հոս կանչեցէք։

փոխ — պաշտօնակալը մեկնեցաւ։

— Բան մը չըկայ, կըսէր Մօլօթօֆ ինքն իրեն, վեր՚ի վերոյ կարդալով նամակները. ընելու բան մը չըկայ. միայն Ռըլիէֆին մահը՝ ուշացնել պէտք է։ Նո-ղէի որ պայծառ լոյս մը դաղանիքն երևան հանէր... ... Ալ ի՚նչ որ է..... Բայց սա ի՚նչ է։

Կառավարիչն այն թերթի մը թուղթին վրայ նա-յեցաւ՝ որուն մէջ Ռըլիէֆին միւս նամակները ծրա-րուած էին։ Անոր վրայ իւր անունը գրուած տեսաւ. կարծես այս անունը խոշոր տառերով գրուած էր. ա-ռաւ և կարդաց։ Ռըլիէֆին Սմըզնա վերադառնա-լուն օրը գրած և կնիկատար թողած նամակն էր։ Մօ-

լօթօֆ հետևեալ խօսքերը կարդաց.

« Սիրելի բարեկամ,

« Նա (Մարիա) դիս կը սիրէ..... և՝ գառնապէս կ՚ողբայ լինելի նկատմամբ բռնած ընթացքը։ Ո՜հ, այս խոտոռականութիւնը դիս ի՚նչ ասիճան դժուարին կա-ցութեան մէջ կը դնէ »։

Այս միջոցին՝ Պասալըքի դրան զարնելով՝ Մօլօ-թօֆին հարցուց.

— Ձեր բարձրութիւնը դի՞ս ուղեր է։

— Այո՛, այո՛, պատասխանեց Մօլօթօֆ, սպասե-ցէք։ Վերջը կարդալը շարունակեց.

« Նա Լիզին ըսած է՝ որ Մօլօթօֆին հետ ամուս-նանալուն համար յուսահատած է. թէ հիմա գործած յանցանքը կը հասկնայ, որովհետև հիմայ կը սիրէ դիս ..... Վաղը դիս տեսնել կուզէ։ Այո՛, սիրելի՛ բա-րեկամ, վաղը ..... »։

Այս տեղ նամակին ընդմիջեալ էր։ Մօլօթօֆ վայր-կեան մը դատարկութեան մէջ նայեցաւ, դէմքը կա-պուցաւ, աչքերը մթընցան և թիկնաթոռին մէջ ինկաւ։

Մօլօթօֆ զօրաւոր և կամուածական կազմուած-ք մ՚ունէր. դինքը զարնող հարուածը՝ իւր բոլոր արիւնը դլուխը ցատկեցուց. աչքերը խաւարեցան, դլուխը դա-ձաւ, և որպէս դի դեռինը չէ՛նայ՝ դլուխը երկու ձե-ռացը վրայ կռնչցուց։

Սակայն Պասալըքի տան վայրկեան սպասելէն վեր-չը՝ համբերութիւնը հատաւ, որովհետև դնդապետին մահուան ժամը կը մօտենար։ Նորէն զարկաւ, բայց պատասխան չընդունելով՝ աւելի ուժով զարկաւ։ Վեր-ջապէս համարձակեցաւ դրասենեակին դուռը կէս բանալ։

Մօլօթօֆ միշտ մի և նոյն դրից մէջ էր, երկու արմունկները նամակին վրայ կռնչցուցած, դլուխն ալ

երկու ձեռացը մէջ. Պասալըքիին մանելը չը լսեց։

Ան՛ն ատեն Պասալըքի զարհուրած և համրուած ըլլալով որ ազարապետն իւր խոստումը ՚ի դերեւ հանել կ՚ուզէ, խենդի պէս Մարթային սենեակը վազեց։ Երկուքն ալ անհանդիստ էին։

— Ազարապետն ինձի չը պատասխաներ, կոմսուհի՛. հոգինիդ կը սիրէք նէ, եկէ՛ք միջամտեցէք։ Ժամանակը կը ուշ է, քանի մը վայրկեանէն կէս օր կ՚ըլլայ. կերևի թէ ազարապետը Ռըլիեֆին մահուն ժամը մոռցած է։

— կարելի՞ է, աղաղակեց Մարթա, հեռա եկէ՛ք։

կոմսուհին հեռարձակ և չնչասպառ վազելով իւր երկան դրասենեակը մտաւ, որ իբր թէ իւր սիրած կընոջ գալն ելեքտրական զօրութեամբ լիսցած ըլլար, ուրկէ վրայ ելլելով և մատը Ռըլիեֆին նամակին վրայ դնելով՝ խիստ և սուր ձայնով մը հարցուց.

— Հոս ի՛նչ որ գրուած է, ճշմարի՞տ է։

կոմսուհին՝ երկանն իրեն ցցուցած նամակը կարդալէն վերջը՝ Մօրթօֆին վրայ նայեցաւ և պատասխանեց.

— Այո՛, ճշմարիտ է. ասիկա Ռըլիեֆի սպաննելու պատճառ է։

Մօրթօֆ պատասխանել ուզեց, բայց կսկղդը արեամբ լեցուած էր։ Թոթովեց, ձեռքերը տարածեց և գորգին վրայ ինկաւ։

Մարթա վրան նետուեցաւ, և բարկութեամբ լի զանիկա շարժեց։

— Պարո՛ն, կ՚ըսէր, Ռըլիեֆի մահուան յայտարա՛րը, յայտարա՛րը. հիմա ժամը կը մօտենայ։

Ազարապետը չէր կրնար պատասխանել. կաթուածէն կայծակնահար մեռած էր։

Ժամացոյցը տասն և երկուքը զարկաւ։ Մարթա էրկանը մարմինը թողլով՝ Պասալըքիին քով վազեց և յուսահատութեամբ նորա բազուկը սեղմելով՝ աղաղակեց.

— Եւ դո՛ւք, ի՞նչ կ՚ընէք հոս. ամեն մարդ ալ վա՞տ է։ վազեցէ՛ք, և յանուն կառավարչի՝ Ռըլիեֆին

մահն արդիլեցէք։

Պասալըքի Մարթային նայուածքէն վախնալով՝ անմիջապէս հնազանդեցաւ։

կոմսուհին դրսէն եկած ձայները մութ կընէր. քանի մը վայրկեան լուութեամբ անցաւ. յետոյ չոր ճայթիւն մը թիմուրի պալատին բոլոր պատերը դողացուց։

Երբ Պասալըքի վերադարձաւ՝ տեսաւ որ Մարթա էրկանը մարմնոյն քով ծունկի եկած, իւր գաժան աչքերը նորա անշարժ բիբերուն վրայ յառած էր, և ձեռքերովն ալ կուրծքը կը չփէր։

Պաշտօնակալը մեռելի պատանի պէս ՚դեղնած՝ և աչքերը արտասուօք լի էին։

— Խիստ ո՜ւշ հասայ, ըսաւ պաշտօնակալը։ Տիկի՛ն, թո՛ղ այս երկու մարդոց յիշատակը յաւիտեան ձեր խղճին վրայ ծանրանայ, որովհետև դուք մեռցուցիք զանոնք։

Երկու տարիէ ՚ի վեր Իտալիոյ հարաւային փոքրիկ քաղաքաց միոյն մէջ՝ տխուր, դունատ և հիւանդոտ օտարական կին մը կայ։ Տակաւին երիտասարդ է, և իւր ծիւրեալ դիմաց վրայ սքանչելի դեղեցկութեան քանի մը նշանները կ՚երևին, բայց մաղերը սպիտակ են։ Այս կինը միշտ սեւազգեստ է և մեկուն քով չը յաճախեր. ոչ ոք անոր ծիծաղելը տեսած է։ Գիւղացիք կարծելով՝ թէ նա դեշ կին մ՚է, անցած ատեն դէմքերնին անուշմէ կը ծածկեն։

Այսօր Լիլ և Պասալըքի իրարու հետ ամուսնացած են։

ՎԵՐՋ

1816 – 1819